

դրամատուրգիա

գրական-գեղարվեստական հանդես

44 ²⁰¹⁶ 45

ՊԻԵՍՆԵՐ

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ	2	ԵՐԳՈՒՄԻ ԳԻՆԸ
ՍԱՄՎԵԼ ԽԱԼԱԹՅԱՆ	30	ԾՆՈՒՆԴԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ ԿԱՄ happy million
ՀՐԱԶ ԲԵԳԼԱՐՅԱՆ	66	ԱՐԾՎԱԲՈՒՅՆ- 1991
ԱՆՈՒՇ ԱՍԼԻԲԵԿՅԱՆ	106	ՄԻ՛ ԼՈՒՐ, ՌԵՄԻ
ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ	144	ԳԻՇԵՐԱՅԻՆ ԳԵՂԱՏՈՒՆ

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Աննա ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երկիր իմ, քեզ հանդիպելու և ճանաչելու համար առանց վարանման քայլել եմ մացառներով պատված հիշողության արահետներով և երջանիկ եղել անչափ, երբ այդ արահետները լուսավորվել են մտածումներիս պայծառ բռնկումներով:

Ժամանակների հեռուներից գալով՝ ես իմ պատմությունը ավարտեցի 20-րդ դարի Հայոց վերջին պատերազմի ու հաղթանակի, Արցախյան փառավոր գոյամարտի էջերը գրելով: Արդյոք երկար ու դժվար ճամփա անցնելով կարողացա՞մ հանդիպել Հայոց ամբողջական ու ավարտուն բնավորությանը: Կարողացա՞մ պատասխանել՝ ինչ է Հայաստանը, հարցին: Ծանաչեցի՞մ այն իր բոլոր դրսևորումների մեջ, իր ինքնության ժառանգությունը, որը կտակեց սերունդից սերունդ և հաստատեց իր՝ հնամենի սրտոց ժամանակակից Երկիր լինելու փաստը:

ԵՐԴՈՒՄԻ ԳԻՆԸ

(Թարեհասք)

Գործող անձինք

ԿՈՀԱԿ - թանձրախիտ
անտառների տիրուհի
ՏԱՐԵՑ ՁԻՆՎՈՐ
ԱՌԱՋԻՆ ՁԻՆՎՈՐ
ԵՐԿՐՈՐԳ ՁԻՆՎՈՐ
ԵՐՐՈՐԳ ՁԻՆՎՈՐ
ՉՈՐԱՎԱՐ
ՄՅՈՒՍ ՁԻՆՎՈՐՆԵՐ
ՏԱՐԵՑ ԿԻՆ
ԱՌԱՋԻՆ ԿԻՆ
ԵՐԿՐՈՐԳ ԿԻՆ
ԵՐՐՈՐԳ ԿԻՆ
ՄՅՈՒՍ ԿԱՆԱՅՔ
ՁԻՆՎՈՐԻ ՄԱՅՐ
ՀԱՐՄՆՈՒԿ
ՆԱՆԵ

ՆՇԽՈՒՆ
ԱՐՓԵՆ
ԵՍԱՅԻ
ԱՐՏԱԿ
ԳՐԻԳՈՐ
ԱՐԱՄ
ՆՈՒՆԵ
ԵՐՎԱՆԳ
ԲԺԻՇԿ ԲՈՒԲԵՆ
ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԳԱՅԱՆԵ
ԳՈՒՐԳԵՆ
ԱՇԽԵՆ
ԱՐԾԻՎ-ՄԱՀԱՊԱՐՏ-
ՆԵՐ
ԱՎԵՏԻՔ

ԳՐՎԱԳ ԱՌԱՋԻՆ

Հեռվից խլացած արձագանքներով լավում են պատերազմի ձայներ՝
զենքերի կրակոցներ, պայթյուններ, ծանր ռազմատեխնիկայի հռնդյուն:
Դանդաղ բացվում է վարագույրը: Բեմը ողողված է լուսաբացի մշուշոտ
լույսով: Ետնամասում հազիվ նշմարվող լեռան ուրվագիծն է,
տարբեր բարձրությունների քարակոշտեր: Բեմի առաջամասի մի անկ-
յունում կիսաքանդ տնակն է: Տնակի երևացող մասի մի կողմում քանդված
պատի բացվածքն է՝ ծածկված զինվորական թիկնոցով: Դիմացք՝ առանց
ապակիների պատուհանն է: Բեմի ետնամասի բարձունքից հայտնվում է
Կոհակը՝ կանաչի տարբեր երանգներով երկարափեշ զգեստով ու գլխանո-
ցով: Պատերազմի խլացած ձայներին միանում է նրա խոսքը:

ԿՈՇԱԿ - Մարտերի ծանր հևոցը, ցավի ճիչերը և հաղթանակի խնդրության աղաղակները նորից պայթեցին ճիշտ սրտիս ներսում՝ դուրս բերելով ինձ թանձրախիտ անտառի իմ բացատ-ապաստարանից: Եկա ծանաչեմ կռվող զինվորին, նրան, որ երդվել է ետ բերել Հայրենիքի արժանապատիվ ազատությունը: Եկա, որ հոգիս թափանցի մաշկի տակ վիրավոր, մեռնող զինվորի, զգամ նրա ծանր ափսոսանքը, որ չի կարող ներկա գտնվել ազատագրված երկրի ցնծուն շնորհանդեսին: Ապրել եմ Հայոց բոլոր պատերազմների հիշատակները, որոնք պահվել են արյանս ու ավիշներիս հիշողության մեջ... Պիտի ապրեմ հիմա հնամենի ցեղիս ժառանգների կյանքի ու մահու այս գոտեմարտն էլ, որով պիտի վերականգնեն ճշմարտությունն ու արդարությունը Հայոց Աշխարհի: Նրանք՝ ուխտապահ իրենց արյան երդումի:

ԳՐՎԱԳ ԵՐԿՐՈՐԳ

Հեռվից արձագանքվող կռվի ձայները, մարտատեխնիկայի հռնդյունը քիչ ավելի է լսելի դարձել: **Տարբեր կողմերից գալիս եմ 17-60 տարեկան տղամարդիկ, Կամավորներ՝ որոնց կամվա-**

նենք Ձինվորներ: Նրանք գալիս, հավաքվում են բեմի կենտրոնում: Նրանց մուտքն ուղեկցվում է Տղամարդկանց հուժկու, անբառ երգածայնով:

ՏԱՐԵՑ ԶԻՆՎՈՐ - Մենք եկանք, որ ելնենք կռվի և Արցախ մեր աշխարհը ազատենք ստրկության կրկնակի բեռից: Ամոթալի այդ բեռը մենք հանդուրժել ենք չափազանց երկար՝ խորհրդային կարգերի անարգ բռնությամբ... Մենք խաղաղորեն փորձեցինք վերականգնել արդարությունը. անջատել տալ Արցախը Ադրբեջանից՝ նորից Հայաստան Հայրենիքի հետ լինելու համար: Պիտի մոռանանք, թե ինչպես թունոտ ծաղրվեց և արյան հեղեղների մեջ խեղդվեց մեր արդարացի պահանջը...

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ - Ազերիների պատասխանը Սումգայիթի հայերի ահավոր ջարդն էր... Սումգայիթը հիմա մխում է մեր երակներում: 20-րդ դարասկզբի Մեծ եղեռնը ավարտվեց դարավերջի սպանդով: Պիտի մոռանանք...

ԵՐԿՐՈՐԳ ԶԻՆՎՈՐ - Թուրք-ազերիների ցեղը դեռ չի հազեցել Հայոց արյունը լախելուց... Նա դեռ հայության համար պահել է իր խելքից-մտքից դուրս անակնկալը: Պիտի մոռանանք...

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ - 88-ի փետր-

վարի 29-ը պիտի մոռանանք...
Սումգայիթ քաղաքը ոչինչ տե-
ղում կառուցել էին նաև շինարար
հայերը, որոնք հայտնվեցին ար-
յան տեսքից գազագաճ ազերի-
ների ջարդարար ձիրանների
մեջ, պիտի մոռանանք...

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Որ երեք օր և
երեք գիշեր ազերի գազանը լա-
կում էր անգեն, պաշտպանվելու
չնչին իսկ կարողությունից
գրկված հայերի արյունը ու չէր
հագենում՝ պիտի մոռանանք...

ԵՐՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Իսկ զավեշտն
այն էր, որ այդ նույն ժամանակ
Երևան մտցվեց խորհրդային
բանակի հինգ հազար զինվոր՝
սեփական քաղաքը սեփական
բնակիչներից պաշտպանելու
համար: Երևանը շփոթել էին
Բաքվի հետ... Ջարդը այնտեղ,
զորքերն այստեղ... Այս ծաղրը
պիտի մոռանանք...

ՏԱՐԵՑ ԶԻՆՎՈՐ - Նա, ով վստահ
է, թե բոլորիս հետ միասին իր
քաջությամբ ապահովելու է ար-
դարության մեծ հաղթանակը,
թող միանա մեզ...

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ - Դու արդեն
ձեր ես, ինչո՞ւ մնացորդ կյանքդ
անցկացնես թեժ մարտերի
մեջ: Գուցե ետ դառնաս...

ՏԱՐԵՑ ԶԻՆՎՈՐ - Եթե պիտի ետ
դառնայի, չէի միանա կամա-
վորներիդ... Որպես խոստովա-

նություն ընդունեք խոսքս...
Ծխապատ սրճարաններում
բարբաջում էինք անվերջ, պա-
հանջում արդարություն համայն
աշխարհից, որ եղեռական
սառնասրտությամբ սրբազան
նախահայրերի արյունն են քա-
մել սգավոր մեր հողի վրա:
Բայց դանդաղորեն հեռանում
էինք ինքներս մեզնից, ծխա-
պատ սրճարանների գաղջ
մթնոլորտում ծնված մեր երազ-
ներից՝ կորցրած Հայրենիքը
գտնելու մասին: Իսկ դուք ժա-
մանակ չունեցաք բարբաջելու
ձեր մեծ ու հանձարեղ գաղա-
փարները: Դուք պարզապես
որսորդական հրացաններ ու-
սած հավաքվեցիք Արցախ աշ-
խարհին զենք ու զրահով
սպառնացող թշնամու հետ Հա-
յոց հին ու նոր հաշիվը մաքրե-
լու համար: Դուք հիմա, այստեղ
ձեր ներկայությամբ խրատում
եք մեզ նմաններին, թե կա ըն-
դամենը երկու ճանապարհ՝ կամ
պետք է թևեր առնել վերև սլա-
նալ, կամ հոգու գահավիժումով
դժոխքի խորին ընդերքը չափել:
(Դադար:) Ես ձեզ հետ հավա-
սար պիտի մարտի ելնեմ: Իմ
որսորդական հին հրացանը
դեռ կրակում է:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Դու էլ, հայ-
րիկ, կլինես մեր առաջնորդը:

ՏԱՐԵՑ ԶԻՆՎՈՐ - Տարեց եմ արդեն, թող առաջնորդ լինի ջահել ձեզնից մեկը: Իսկ ես որպես զինվոր կկռվեմ և չեմ խնայի մնացորդ կյանքս: Երդվում եմ:

ԲՈՒՈՐԸ - Երդվում ենք:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ - Հրամանատար ընտրելը հետաձգենք: Ուրիշ ջոկատներ դեռ պիտի միանան մեզ: Հետո պիտի գա իսկական Ջորավարը մեզ առաջնորդելու:

ՏԱՐԵՑ ԶԻՆՎՈՐ - Վաղ լուսաբացին ծամփա պիտի ընկնենք, միանալու համար արդեն մեր կռվողներին: Զարերին թիկնած քիչ հանգստանանք:

Զինվորները գնում են դեպի խորքի քարակտորները: Մարտի ձայները լռել են: Զինվոր-կամավորները, որը նստած քարերին, որը թիկնած՝ անշարժացել են: Թվում են քնած: Կոհակը հայտնվելով, դանդաղ քայլում է նստած կամ կիսապառկած Զինվորների մոտով: Երբեմն կանգնելով մեկի կամ մյուսի գլխավերևում, զգույշ թեքվում է դեպի նա, ապա շարունակում է իր քայլը: Նրա առաջանալով միջավայրը դառնում է մեղմ կանաչավուն: Իսկ քնած Զինվորներին թվում է, թե երազ են տեսնում և խոսում են այնպես, կարծես քնի ընդերքից է գալիս նրանց ձայնը:

ՏԱՐԵՑ ԶԻՆՎՈՐ - Ո՞վ ես, կին:

ԿՈՇԱԿ - Ես նա եմ, որ կամ մշտապես:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ - Մեզանից մեկի մայրն ես, անշուշտ...

ԿՈՇԱԿ - Ո՛չ:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Մեզանից մեկի մայրը չես, բայց ինչ-որ մեկի մայրն ես, ձի՛շտ է:

ԵՐՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Որդո՞ւղ ես փնտրում:

ԿՈՇԱԿ - Ես պահապան մայրն եմ Արցախ աշխարհի թանձրախիտ անտառների: Ապրում եմ հեռու լեռների խիտ անտառների սոսյաց պուրակի բացատում: Անունս Կոհակ է: Բացատիս անունը նույնպես Կոհակ է: Ժամանակի սկզբից ես կամ մշտապես: Իմ բացատում որքան փորձել են տաճար ու վանք կառուցել՝ փլվել են: Հարցնում ես՝ ինչո՞ւ: Բնությունն ինքը ամբողջական տաճար է:

ՏԱՐԵՑ ԶԻՆՎՈՐ - Դու հեթանոսի նման ես խոսում:

ԿՈՇԱԿ - Ես կայի առաջ՝ քան հեթանոսները: Սրբազան բացատներից միայն Կոհակ բացատն է մնացել անձեռնմխելի: Դեռ շատ դարերից անդին այն Արևի, Զրի, Հողի Անտառի պահապանն էր. բացօթյա տաճար: Ես՝ նրա միակ տիրուհին...

ԶԻՆՎՈՐՆԵՐ - Հեքիաթ ես պատմում: Գուցե ձի՛շտ է... Մենք գնում ենք պատերազմ, որ

պաշտպանենք մեր անտառը, ջուրը, հողը, քաղաքը, գյուղը: Երկիրը ամբողջ...

ԿՈՇԱԿ - Երբ պատերազմ է, մշտապես դուրս եմ եկել սոսի- ների իմ բացատից, որ հասնեմ քաջերի երազներին և սրբա- զան օրհնությամբ նրանց ճա- նապարհի դնեմ:

ՏԱՐԵՑ ԶԻՆՎՈՐ - Ծնորհակալ ենք: Պատմությունը, սակայն, ար- տառոց է: Անհավանական:

ԿՈՇԱԿ - Հավանական, թե անհա- վանական՝ քո մտածելու բանն է, Զինվոր... Հավատաս, թե չհա- վատաս Բնության Ոգու հավեր- ժությանը՝ ես կամ և եկել եմ նորից սրբազան օրհնության ծես կատարելու... (Զգեստի ծալքերից հանում է Թուրը): Այս թուրը պահվում է Կոհակ բացատի խո- րին ընդերքում և դուրս է գալիս հողի շերտերից, երբ պատերազ- մի ահագնացող ձայները հնչում են հայրենի քաջերի հոգիներից ներս: Այս թուրը փայլել է մեծ Հայկի ձեռքին, Մհերի ու Դավթի ձեռքին: Փայլել է բոլոր քաջերի ձեռքին, որոնք հաղթել են: Եկա, որ ձեզ ի մարտ ձանապարհեմ՝ նրա կիզանուտ ոգին նվիրելով ձեզ իմ օրհնության հետ:

Զինվորները դեռ լրիվ չսքափված իրենց երազներից՝ դանդաղ ոտքի են կանգնում: Կոհակը

պարզում է թուրը նրանց գլխա- վերևում: Զինվորները կիսաշը- քանի մեջ են առնում Կոհակին:

ԿՈՇԱԿ - Օն անդր, քաջեր, ձեզ արծվի թռիչք և առյուծի սիրտ, որ գալիքը ձեր դառնա ազատ օրերի անընդմեջ շարան: Թույլ տուր նորոգեմ հինավուրց կան- չը հին հայրենիքիս. «Ելեք իմ որդիք, ցասման ժամ է, ելեք: Հողս, անտառիս կանաչությունը, պաղ աղբյուրներիս ջրերը բոլոր, որոնք բխում են երկրիս ընդերքից, ձայն են տալիս ե- րակներիս մեջ փակված հինա- վուրց արյանս ահեղ գոչումով: Ելեք, իմ որդիք, ձեզ արծվի թռիչք և առյուծի սիրտ»:

ԳՐՎԱԳ ԵՐՐՈՐԳ

Կանայք հայտնվում են տարբեր կողմերից, դանդաղ գնում դեպի Զինվորները և մտնում նրանց շար- քի մեջ: Սա Զինվորների և Կա- նանց հրաժեշտի տեսարանն է:

ԶԻՆՎՈՐՆԵՐ - Մնաք բարով, մայ- րեր, սիրասուն մայրեր...

ԿԱՆԱՅԶ - Որդիս, զավակս, հաղ- թանակով տուն վերադարձիր...

ԶԻՆՎՈՐՆԵՐ - Մնաք բարով, թան- կագին կանայք... Մնաք բա- րով...

ԿԱՆԱՅԶ - Վերադարձեք... Վերա- դարձեք... Ձեզ հետ բերեք հաղ- թանակի լուրը...

ԶԻՆՎՈՐՆԵՐ - Մնաք բարով, հա-
րազատ քույրեր...

ԿԱՆԱՅՔ - Ձեր ողջությունը պարզև
բերեք ձեր զավակներին...

ԶԻՆՎՈՐՆԵՐ - Իմ անուշ սերս,
սպասիր դու ինձ...

ԿԱՆԱՅՔ - Վերադարձիր, որ
Գնդեվանքի սուրբ պատերից
ներս մեր պսակի ծեսը կատար-
վի...

ԶԻՆՎՈՐՆԵՐ - Ձեր դժվար կյանքի
օրերը մեզ հոգևոր հաց...

ԿԱՆԱՅՔ - Վերադարձեք... Վերա-
դարձեք... Սև չղարձներ մեր օր
ու արևը...

ԶԻՆՎՈՐՆԵՐ - Կվերադառնանք, որ
հարսանիքների ու ծնունդների
սեղաններ բացենք...

ԿԱՆԱՅՔ - Սոսականաչ մյուռոն
ձեր վերադարձի ճանապար-
հին...

**Ձինվորները հեռանում են: Կա-
նայք նրանց ճանապարհում են:
Բեմում մնում են Երբորդ Ձինվո-
րը, հղիության վերջին ամիսն
ապրող մանկամարդ Հարսնուկը
և Մայրը: Երբորդ Ձինվորը ծունկ
է խոնարհում, գլուխը դնում
Հարսնուկի սրտին և հմայված
լսում զավակի խաղը նրա կրծքի
տակ:**

ԵՐՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Մանչուկս, դու
պահիր, պահպանիր քո մորը:
Երբ լույս աշխարհի գաս՝ շատ
ցավ մի պատճառի նրան: Նե-
րիր, որ չեմ սպասում քո ծնուն-

դին: Զեզ ազատ Հայրենիք եմ
ուզում նվիրել: Թե ընկնեմ
կռվում...

ՀԱՐՍՆՈՒԿ - Մի ասա խոսքեր
կռվում ընկնելու մասին: Մի
հրապուրիր մահվանը նման
խոսքերով: Երդվիր, որ պիտի
հաղթես: Երդվիր, որ պիտի վե-
րադառնաս:

ԵՐՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Խոստանում
եմ: Բայց եթե հանկարծ զոհվեմ
մարտերում, իմացիր. արյունս
իմ որդու համար ազատ ապրե-
լու անսուտ երաշխիք...

ՀԱՐՍՆՈՒԿ - Վերադարձիր, ես սի-
րում եմ քեզ... Որ ապրենք եր-
կար օրերի մեր կյանքն ու սերը:

**Մայրը մոտենում է, գրկում որ-
դուն:**

ՄԱՅՐ - Գիշեր ու զօր աղոթքս քեզ
հետ, զավակս: Վերադարձիր:

ԵՐՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Մնաս բարով,
մայր, մնաս բարով, իմ զավակի
սուրբ խորան իմ կին:

**Կանայք Ձինվորներին ճանա-
պարհելուց հետո դամոզաղ վերա-
դառնում են:**

ԵՐՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ - Մնաք բարով,
մայրեր, քույրեր: Կռիվն ա-
վարտվի՝ պիտի ետ դառնանք ու
ձեր անհանգիստ հոգին սփո-
փենք հաղթանակի ու խաղա-
ղության լուրը բերելով: Թե
մարտում ընկնի մեզանից մեկը՝

հոգին ընկածի պիտի մշտապես պահապան լինի իր տուն ու տեղին, իր զավակներին: Աղոթեք մեզ համար հավատի մտածումներով՝ առանց արցունքի: Մնաս բարով, որդիս: Երբ վերադառնամ՝ քեզ կպատմեմ հաղթանակած քաջերի մասին, որոնք քեզ նվիրեցին պայծառ օրերի խաղաղությունը:

Երրորդ Ձինվորը արագ հեռացում է: Մայրը ծունկի է իջնում և աղոթում:

ՄԱՅՐ - Տեր, կեցոցո և ապրեցո, Տեր... Որդիներին քո, Տեր...

Կանայք ևս ծունկ են խոնարհում և միանում Մոր աղոթքին:

- Տեր, Կեցոցո և ապրեցո, Տեր... Որդիներին քո, Տեր...

Կանայք ավարտելով աղոթքը՝ ոտքի են կանգնում: Խմբից անջատվում է 16-ամյա աղջիկ Նանն:

ՆԱՆԵ - Մնաք բարով:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Դու ո՞ր ես գնում:

ՆԱՆԵ - Մնաք բարով:

Տարեց կինը փակում է նրա ճանապարհը:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Պատասխանիր, դու ո՞ր ես գնում:

ՆԱՆԵ - Գիտես, ինչո՞ւ ես հարցնում:

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ - Տասնվեց տարիդ երեկ լրացավ, Նանն աղջիկ:

ՆԱՆԵ - Ճիշտ ժամանակն է:

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՆ - Ժամանակը այրերին է և ոչ քեզ նման աղջնակների:

ՆԱՆԵ - Թշնամին, այն էլ բարբարոս թուրք ցեղից սերված, երբ մտնում է տունդ, չի հարցնում այր ու կին, ծերունի ու մանուկ:

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՆ - Դու դեռ պիտի հատունանաս զավակներ ծնելու համար:

ՆԱՆԵ - Ես գնում եմ, որ իմ դեռ չծնված զավակներին կարողանամ հպարտությամբ լույս աշխարհ բերել:

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ - Դեռ մնա, մեծացիր, քիչ էլ մեծացիր:

ՆԱՆԵ - Կարծում եք՝ տարիներով է մարդը մեծանում: Մարդը մեծանում է ապրած կյանքի խրատներով: Ես մեծ եմ արդեն իմ սեփական կռիվը կռվելու համար: Մնացեք բարով, ձեր աղոթքներում հիշեք նաև ինձ:

Նաննն դուրս է գալիս Կանանց շրջապատումից և արագ հեռացում է:

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՆ - Բարով տուն դառնաս, հարսանեկան առագաստ մտնես, ծնես զավակներ և մոռանաս, որ մարտադաշտերի արյունն է քամվել քո սրտի վրա:

Եվ նորից Կանանց երգ-աղոթքն է նույն «Տեր, կեցոցո և ապրեցո, Տեր... Որդիներին քո, Տեր...» բա-

ռերի զգայուն կրկնությամբ:
Հեռավոր կովի արձագանքները
ավելի ու ավելի հստակ են դառ-
նում:

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ - Ինչո՞ւ մենք էլ զենք
չենք վերցնում ու գնում կռվելու
մյուսների հետ:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Պատերազմի ժամա-
նակ տան հոգսերը՝ կրկնակի
հոգս... Տան տղամարդիկ կռվում
են, նրանք պիտի վստահ լինեն,
որ իրենց թիկունքը, իրենց տունն
ու գերդաստանը ապահով են կա-
նանց շնորհիվ: Անկախ մեր ապ-
րումներից՝ մենք պիտի հոգանք
տանը մնացած երեխաների, ծե-
րերի չնչին դարձած ապրուստը:
Պիտի հոգանք ավերված տները
նորից ապրելու տեղ դարձնել:
Պիտի հոգանք, որ մանուկները
դաս առնեն, անգետ չմնան:
Բժիշկների հետ վիրավորներին
խնամող է պետք, արնաքամ
զինվորին արյուն տալ է պետք:
Մեր տառապանքը պահենք մեր
հոգիներում առանց արցունքի և
օրհնության խոսքեր շնջանք
կռվող այրերին: *(Խիստ:)* Մոռա-
նանք կանացի մեր թուլությ-
յունները. նախանձը, քենը,
բամբասանքը, որոնք սողոսկում
են մեր սիրտն ու խեղում կանա-
ցի մեր բնույթը: Մենք պարտա-
կան ենք մեր այրերին... Մենք
արժանի ենք մեր այրերին...

ԳՐՎԱԳ ՉՈՐՐՈՐԳ

Հայտնվում է Նշխուն նանը:

ՆԾԵՈՒՆ ՆԱՆ - Դուք իմ թոռանը
տեսա՞ք, Ավետիքին... Թո-
ռանս... տաս տարեկան: Անունն
Ավետիք է, անունին մեռնեմ...
Տեսա՞ք... Գետաշենցի Նշխուն
նանն եմ: Իմացա՞ք մեր գլխի ե-
կածը: Ծահումյանի, Գետաշենի
ու գյուղերի վրա կարկ թափվեց:
Հունվար ամսին... Հա, 92-ի
հունվար ամսին: Կմոռացվի՞...
Իմ Գետաշենը... Կրակի օրը եր-
կարեց մինչև սև աշուն: Տները
ավերակ, տեղ, դադար չկար
փախստականին... Կարաչի-
նար, Մանասաշեն, Գաղթութ,
Զանգիկ, Մատաղիս, Մոխրա-
թաղ... Լեզուս չորանա, 20-ից
ավելի գյուղեր: Հասան Ղարա,
Թալիշ, Չայլու... Ավետիք, ո՞ր
ես, բալաս, ձայն տուր, ձայնի-
կիդ մեռնեմ... Մոսկովներից
հրաման էր եկել. ջնջել Ծահում-
յանը, Գետաշենը, բոլոր գյուղե-
րը: Ռուսական բանակը
տանկերով, գրադներով, ինք-
նաթիռներով. միանգամից բո-
լոր տեղերի վրա կրակ
թափեցին... Տղերքը, մատաղ
նրանց չարչարանքին, վերջին
հուսահատ կռիվն էին տալիս ու
նահատակվում: Իմ որդին էլ, իմ
մինուձարն էլ ընկավ... Մեռնեմ
նրա խավարած արևին... *(Կա-*

նանց.) Խավարած արև, տեսել եք խավարած արև, խավարած արև...

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Տեսել ենք, քույրս, տեսել ենք: Շատերիս սրտի մեջ մի-մի խավարած արև է... Մխիթարվիր, որ հերոսի մայր ես:

ՆՇԽՈՒՆ ՆԱՆ - Մխիթարվեմ... Տանս վրա ռումբ պայթեց, փլատակների տակ՝ ամուսինս, հարսս, երկու թոռներս... Ես դրսում էի՝ ազատվեցի: Ո՛չ ազատվեի... Օրեր, օրեր պրծոկեցի ավերակները, հանեցի իմ մեռելներին, փորեցի գերեզման, ծածկեցի հողով, պառկեցի վրան ու սպասեցի, թե երբ կմեռնեմ... Հանկարծ շանթահար եղա՝ մեծ թոռնիկս, իմ Ավետիքս նրանց հետ չէր, տակնուվրա էի արել տանս քանդ ու քարափը, հանել էի մեկիկ-մեկիկ հոգուս հատորներին, Ավետիքին չէի գտել: Ո՛վ կհասկանա Աստծո բան... Այդքան ժամանակ չէի հիշել իմ անուշ բալին... Հասկացա՝ Ավետիքս ողջ է, իրավունք չունեմ մեռնելու, մինչև չգտնեմ իմ քաղցր թոռանս: Ավետիք, դու ո՞ր ես, ձայն տուր... Ձայնիկիդ մատաղ...

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Գետաշենից մինչև այստեղ ինչպե՞ս անցար: Ամեն լեռան վրա, ամեն ձայնի մեջ,

դաշտերում ու քարափներում կյանքի ու մահու կռիվ է:

ՆՇԽՈՒՆ ՆԱՆ - Հենց էդ գիշեր ելա գերդաստանիս գերեզմանի վրայից ու ճամփա ելա: Լուսաբացին հասա փախեփախի ելած գաղթականներին: Քանի՞ հազար են... Ո՛վ է հաշվողը... Ձեր մեջ կա՞ մեկը, որ անցած լինի գաղթի ծանապարհներով: Ես գետաշենցի Նշխուն նաննեմ, փնտրում եմ թոռանս, նահատակ որդուս վերջին զավակին: Ես շատ եմ ուզում ընկնել ու մեռնել... ինչպե՞ս կմեռնեմ, երբ իմ սուրբ զոհերը ասում են՝ գնա, որ գտնես... ողջ է, ասում են, պիտի թողնե՞ս, որ անտեր, անպաշտպան մնա մեր տան միակ ծրագր: *(Աղաղակում է:)* Ավետիք, հոգիս, ձայն տուր: Ետ դարձիր, բալաս, արի, բալաս, քանդուքարափ աշխարհի մեջ տունդ շինիր... Ես քար բերեմ, ես ջուր բերեմ... Ու դու հողիս մեջ տանդ հիմքերը փորես, ախ, պատ շարես... Արի, բալաս, ես աղոթեմ իմ Աստծուն... Տեր, Տեր, ասեմ, խոռով չեմ քեզանից, օրհնիր, տանս ծրագի ձեռքով շարված տան պատերն ամուր լինեն, որ չփլվի գերդաստանիս գլխին նորից... Արի, բալաս, արի... Դու կաս, գիտեմ... Աստված հո չի՞ փակում

տան դուռն ընդմիջտ... Ախ, Տիրամայր, կանչիր՝ տանս ծրագորդուս որդին վերադառնա: (Բայլ է գցում հեռանալու:)

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Մնա մեզ հետ, քույր, կռիվների արահետով ո՞ր պիտի երթաս, մենիկ-մենավոր տանջահար ոգի...

ԼԵՆՈՒՆ ՆԱՆ - Իմը երթալն է, Ավետիքս ինձ կսպասե: Երթամ հասնեմ իրեն... (Գնում է կթոտ քայլերով:)

ԿԱՆԱՅՔ - Գնաս բարով... Օրինված լինես, տառապանքիդ խավարի մեջ թող աստղ ցոլա...

ԳՐՎԱԳ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Լավում են փլուզումների ահավոր դղիքներ:

ԿՈՇԱԿ - Բավ է, բավ է, Չարի զարհուրանք: Զի՛ն էր պատերազմը, քի՛ն էին ջարդերը Բաքվի, Սումգայիթի ու հարազատ հողում, քի՛ն էր փախստականների խելագար վազքը, որ ահեղ երկրաշարժով ցնցում ես Հայոց Աշխարհը: Ուզում ես փորձել համառող հայի համբերությո՞ւնը... Մի քանի վայրկյանում քանդուքարափի վերածեցիր ծաղկուն Երկիրս: Չարի զարհուրանք, դու քրքջում ես հայի երեսին, որ ելել է իր ազատության, կյանքի ու մահու կռիվը մղելու: Եթե կարծում ես, որ

դու հաղթեցիր՝ խիստ սխալվում ես:

Փլուզումների ճայնը խլանում է Ձինվորների հզոր երգածայնով:

ԿՈՇԱԿ - Լսիր նրանց: Խեղված Երկրիս ցավը սեղմած սրտերում՝ նրանք գալիս են, որ կռիվը կենաց ու մահու նոր ուժով տանեն:

Հայտնվում են Ձինվորները: Նրանց հետ նորերը և Չորավարը:

ՋՈՐԱՎԱՐ - Ամեն ինչ մեր դեմ է: Բայց մենք մեր դեմ չենք: Մենք մի բռունցք ենք հիմա, որի ամուր սեղմումից մատների ծայրերից եռացող արյուն է կաթում մեր կամքի վրա ու կոփում այն ավելի ուժգին: Երկրաշարժի քանդուքարափից ելած, վիշտը սեղմած ատամների տակ, գալիս են նրանք՝ հաջորդները, հաղթելու, որ վերադառնան կառուցելու քանդված տունն ու օջախը:

ՏԱՐԵՑ ԶԻՆՎՈՐ - Երբ մեր համբերության բաժակն է լցվում, զարթոնքի մոլեգնությունն է պայթում մեր մունջ ու տանջալից սպասումի մեջ: Եվ հիմա նույնպես: Դեռ չլինելով բանակ՝ մարտի էինք նետվել թշնամու հզոր բանակների դեմ: Փառք Աստծո, հիմա բանակ ենք արդեն:

ԶՈՐԱՎԱՐ - Դյուրին չէր պատե-
րագմի թոհուրոհի մեջ հայրենա-
կան բանակ-ամրոցի առաջին
քարերը դնել:

ԶԻՆՎՈՐՆԵՐ - Օն, հայոց բանակ,
առաջ առանց նահանջի...

ԶՈՐԱՎԱՐ - Դեռ պիտի մռայլվենք
հնարավոր պարտություններից,
դեռ պիտի լսենք մեռնողների
հառաչանքները, հաղթողներիս
ցնծության աղաղակները: Սա-
կայն ահեղ օրերի կարմիր եր-
դումն է մեր ոգու ներսում.
ազատագրել Արցախ աշխար-
հը: Չպե՞տք է լինենք այդ երդու-
մի տերը...

ԶԻՆՎՈՐՆԵՐ - Առաջնորդիր մեզ,
Զորավար, տար մեզ դեպի
մարտ և հաղթանակի ցանկալի
ուղին գծիր մեր առաջ:

**Զորավարը և Ձինվորները հեռա-
նում են:**

ԿՈՇԱԿ - Ձեզ արծվի թռիչք և առ-
յուծի սիրտ:

ԴՐՎԱԳ ՎԵՅԵՐՈՐԳ

**Մտնում է Նանեն՝ քարշ տալով
զինվորական քիկնոցին պատկած
վիրավոր Ձինվորին:**

ՆԱՆԵ - Քիչ էլ դիմացիր, քեզ
կհասցնեմ բուժկետ, բժիշկների
մոտ... Ցամաքող արյանդ փո-
խարեն կտամ իմը... Ու ետ
կդառնամ, որ կիսատ կռիվս

շարունակեմ: *(Թեքվելով Ձին-
վորի վրա՝ կարծես լսում է
նրան:)* Չէ... քեզ չեմ թողնի կես
ճանապարհին, մի համոզիր...

Ծանր ես, ձիշտ է, բայց իմ ուժը
կրկնապատկվել է կռիվների
մեջ: Գիտե՞ս, դժվարն առաջին
վիրավորին օգնություն ցույց
տալն էր: Արյան գույնը, հոտը,
մահվան ներկայությունը ծանր
էր տանել... Ծանր էր նրա վի-
րավոր մարմինը զգույշ տեղա-
փոխել... Հետո սովորեցի: Ուժ
առա: Առաջին վիրավորին վի-
րակապելուց ու կրակից դուրս
բերելուց հետո մեծացա: Իմ
տարիքը հիմա օրերով է չափ-
վում, արդեն շատ մեծ եմ... Ես
քեզ տեղ կհասցնեմ, եղբայր,
հավատա, միայն դիմացիր: Մի
քիչ էլ որ առաջ գնանք, գուցե
հանդիպենք վիրավորներին
հավաքող բուժակների մեքենա-
ներին: Հրամանատարն ինձ ա-
սաց. Նանե, կարո՞ղ ես կրակի
գծից հանել մեր վիրավոր եղբո-
րը: Հրամանատարը գիտեր, որ
կարող եմ, թե չէ չէր ասի... Մի
խոսիր, խնդրում եմ, խնայիր
ուժդ... Իսկ ես ուժեղ եմ, խիղճս
ինձ հետ է... Խղճի ուժը, գիտե՞ս,
սահմաններ չունի... *(Նորից
ծունկի է իջնում վիրավորի
մոտ:)* Վիրակապդ նորից
արյունոտվեց: Տեր Աստված,

կանգնեցրու արյունը... (Սանի-տարական պայուսակից հանում է վիրակապը, փորձում է կանգնեցնել արյունը:) Օգնիր, Տեր Աստված, տեղ հասնեմ: (Տեսնելով Ջինվորի նվաղումը՝ գրկում է նրա գլուխը և սեղմում սրտին:) Ապրիր, մի քիչ էլ... Ես քեզ տեղ կհասցնեմ: Որ տեղ հասնենք... (Լալիս է:) Կապրես... Գիտեմ, կապրես... Ճիշտ եմ ասում... Որ ապրեցիր՝ կապրես... Հիմա խնդրում եմ, լսիր ինձ, ապրիր... Անձանոթ եղբայր... Ինչ պատասխան տամ իմ խղճին ու քո ընկերներին:

Աղջկա լացը փոխվել է անմխթաբար հեկեկոցի: Նա գիտե, որ վիրավոր Ջինվորը մահացել է:

Թշնամու դիպուկահարի գնդակը խոցում է աղջկան: Խոր լուռության մեջ Նանե աղջկա վերջին, մանկորեն մեղավոր, խոսքերն են հնչում:

ՆԱՆԵ - Ես քեզ թողեցի կես ճանապարհին...

Ետնաբեմից հայտնվում է Կոհակը, ծունկի է գալիս և հանելով թուրը՝ մեկնում է նրանց մարմինների վրա:

ԿՈՀԱԿ - Ծանր փորձությունից բացձակատ ելած իմ զավակներ, դուք չեք պարտվել: Դուք հաղթանակի ձեր բաժինը թողեցիք ապրողներին ու հեռացաք:

Ձեր ճանապարհը անդեականով լույսերի մեջ, թանկագին զոհեր:

ԴՐՎԱԳ ՅՈԹԵՐՈՐԴ

Բեմի անկյունում ժամանակավոր բուժկետի վերածված կիսաքանդ տնակի սրահում Եսային, Արտակը, Գրիգորը, Արամն են: Հեռվից լսվում է ծանր հրետանու կրակոցներ: Տասներկուամյա Արամը նայում է երկնքին: Արտակը՝ նստած հատակին, բռնել է աջ ուսը և փորձում է զսպել ցավի տնքոցը: Գրիգորը վիրակապված գլխով նստած է նրա մոտ, ծխում է: Եսային, քիկնոցով ծածկված դռան մոտ, հագիվ է զսպում իրեն, որ չմտնի վիրահատարան: Վիրահատարանից դուրս է գալիս բուրժուրյր Նունեն:

ՆՈՒՆԵ - Եսայի, նստիր Արտակի մոտ, մի կանգնիր դռանը, մեզ խանգարում ես:

ԵՍԱՅԻ - Ես ձեզ ինչի՞ եմ խանգարում...

ՆՈՒՆԵ - Վախեցած ես, քո վախը թիկնոցից անցնում ու հասնում է իմ ձեռքերին: Ձեռքերս սկսում են դողալ, չեմ կարողանում օգնել բժշկին, հասկացա՞ր:

ԵՍԱՅԻ - Չէ, չեմ հասկանում:

ՆՈՒՆԵ - Ասում եմ՝ դռնից հեռու գնա: (Օգնում է Եսայուն նստել տղաների մոտ:) Ո՛ւմ տափաշում է օղի մնացել:

Գրիգորը և Եսային իրենց տա-

վաշտերը տալիս են Նունեին: Արտակը ցնցում է կողքին դրված տափաշիչը:

ԱՐՏԱԿ - Դատարկ է:

ՆՈՒՆԵ - Արամ, պահանկ ես կանգնել

ԱՐԱՄ - Չէ, աստղերին եմ նայում, շատ սիրուն են:

ՆՈՒՆԵ - Երանի քո տիրոջը. աստղերին է նայում: Աստղերը վաղուց չքացել են: Ինչի՞ն ես նայում...

ԱՐԱՄ - Ես, մեկ է, տեսնում եմ:

ՆՈՒՆԵ - Համ... Տափաշիչդ մեջ օղի մնացել է:

ԱՐԱՄ - Լիքը: Ինձ չի թույլատրվում օղի խմել: Միայն ծայրահեղ դեպքում:

ՆՈՒՆԵ - Ծայրահեղ դեպքը ո՞րն է:

ԱՐԱՄ - Արտակի պես: Վիրավորվել է, ցավին դիմանալու համար տափաշում եղածը գլխին քաշեց:

ՆՈՒՆԵ - Արտակ, վիրավոր ես... Ինչո՞ւ ձայն չես հանում:

ԱՐՏԱԿ - Մահացու չէ:

ՆՈՒՆԵ - Տեսնեմ:

ԱՐՏԱԿ - Գնա, Մուշեղով զբաղվեք, իմը՝ հետո:

ՆՈՒՆԵ - Թող տեսնեմ: *(Զգույշ շոշափում է Արտակի ուսը):*

Գնդակը մնացել է ոսկորի մեջ:

Մուշեղի վիրահատությունն ավարտենք, բժիշկ Ռուբենը քեզանով կզբաղվի: Կդիմանամ:

ԱՐՏԱԿ - Կդիմանամ:

ՆՈՒՆԵ - Դո՛ւ, Գրիգոր....

ԳՐԻԳՈՐ - Կդիմանամ:

ՆՈՒՆԵ - *(հազիվ զսպելով լացը):*

Ես ձեր ցավը տանեմ... *(Եսայուն.)* Դռանը չմոտենաս:

ԵՍԱՅԻ - Նունե, ո՞նց չես հասկանում, սարերով, ձորերով շալակած բերել եմ Մուշեղիս: Իրար կողքի կռվում էինք... Էն անտեր գնդակն ինչո՞ւ ինձ չկապվ, իրեն կապվ, այսր, իրար կողքի էինք...

ՆՈՒՆԵ - *(մեղմ):* Դռանը չմոտենաս, Մուշեղը վիրավոր է, Մուշեղը ողջ է: Մեր բժշկի ձեռքերը մեռելների կկենդանացնեն: Մուշեղը ծանր վիրավոր է, բայց ողջ է: Բժիշկն ասաց՝ ողջ էլ մնալու է: Դռանը չմոտենաս: *(Գնում է վիրահատարան:)*

ԱՐԱՄ - Տեսնես աստղերի վրամարդիկ ապրում են: Տեսնես, աստղերի վրայի մարդիկ որ նայում են երկրին, սա է՛լ է պսպղում իրենց նման: Որ տեսնում են՝ պսպղում է, ի՞նչ են մտածում: Ասում են՝ երանի էստեղ ապրողին... Պատերազմն ավարտվի, Արցախն ազատագրենք, խաղաղություն լինի, պիտի տիեզերագնաց դառնամ:

ԱՐՏԱԿ - *(հազիվ զսպելով ցավի տնքոցը):* Գնաս տեսնես՝ ինչ կա-չկա էն կողմերը...

ԱՐԱՄ - Գնամ տեսնեմ... Թե չէ պսպղում են իրենց համար: Ի՞նչ իմանաս, ի՞նչ կա-չկա: Կարող է՝ պսպղոցը կապ չունի իրենց իրական կյանքի հետ: Կարող է՝ դրսից պսպղում են, ներսից խավար են: Պիտի պարզել...

ԱՐՏԱԿ - Պարզողը դու պիտի լինես, չէ՞:

ԱՐԱՄ - Ես ումի՞ց եմ պակաս... *(Երեխայի վիրավորվածությամբ:)* Կռվողներից վամտ եմ կռվում, ես չէի կռվում, իմ կրակոցով էն մեկին շանսատակ չարի՞... Մեզ զենք չէք տալիս, հեռու եք պահում կռվից, իբր՝ երեխա եք: Մենք ի՞նչ երեխա ենք, մենք վաղուց մեծացել պրծել ենք: Ես ոնց հրացան ունեցա, հը՞... Տեսա մեր դիրքերից ահագին հեռու մի ազերի սատկած-ընկած, սողալով գնացի-գնացի... Չորս կողմից ազերիները կրակում էին, ես սողում էի, չվախեցա, հետ չփախա, զենքն առա ու նոր ետ սողացի: Մեր տղաներն ինձ պահում էին պատասխան կրակոցներով, մինչև հասա մեր դիրքերը: Հիմի էլ էստեղ եմ, որ ծխախոտ ու հաց տանեմ տղերքին, ներքևից պիտի բերեն, սպասում եմ: Տղերքը երեք օր է՝ ծխելու բան չունեն, էլ չեմ ասում հացի մասին: Նրանք էլ կարող

էին գաղտնի արահետներով իջնել, ոնց որ ես իջա, բայց երդվել են, որ ետ չպետք է գան: Կմնան ու առաջ կգնան, մեզանով կանեն էդ տարածքը... *(Հազիվ լացը զսպելով:)* Մեր ջոկատի տղերքը ծխելու բան չունեն:

ԱՐՏԱԿ - Բեզ ի՞նչ եղավ, ի՞նչ ասի, որ էդպես նեղացար:

ԱՐԱՄ - Չհավատացիր, որ պատերազմն ավարտվի, տիեզերագնաց կդառնամ:

ԱՐՏԱԿ - Ախր, ո՞նց ես դառնալու, լսել եմ, որ դպրոցում հազիվ միջակ ես սովորել:

ԱՐԱՄ - Հետո ի՞նչ, ի՞նչ կապ ունի տիեզերագնաց դառնալը իմ սովորելու հետ: Ես միջակ եմ սովորում, էն Հակոբանց Կարենը գերագանցիկ է: Ո՞ր է, ինչի՞ չի գալիս կռվի, հը՞...

ԱՐՏԱԿ - Դե, լավ, Արամ, գիտես, որ բոլորս քեզ սիրում ենք ու հպարտանում ենք, որ քաջ ես, բայց քաջությունը կապ չունի անխոհեմության հետ: Դու որ գնացիր մեռած ազերիի զենքը բերելու՝ անխոհեմություն էր: Կարող էիր զոհվել, չէ՞... Հանգստացիր, ուր որ է՝ հաց ու ծխախոտ կբերեն, կտանես տղաներին: Բայց լավ կլինի՝ շվշվացնելով չգնաս, կուզեկուզ գնաս, գաղտնի արահետներով

գնաս, որովհետև չգիտես, թե ազերի դիպուկահարը որտեղ է թաքնված: Զեզ վախեցնելու համար չեմ ասում... Որովհետև անխոհեմ քաջը երբեք չի հասնում իր նպատակին: Չես նեղանում, չէ՞, որ ասում եմ սրանք:

ԱՐԱՄ - (մռայլ): Չէ:

ԱՐՏԱԿ - Ապրեն:

ԳՐԻԳՈՐ - Ինձ դուր է գալիս, որ նայում ես աստղերին ու սիրում ես աստղազարդ երկինքը, ուզում ես անպայման էնտեղ հայտնվել: Դու երևի կարդում ես աստղերի մասին պատմություններ...

ԱՐԱՄ - Ժամանակ չեմ ունեցել, պատերազմն ավարտվի՝ կկարդամ:

ԳՐԻԳՈՐ - Իհարկե, կկարդաս: Հիմա կուզեն լսել պատմություն էս տեղի մասին:

ԱՐԱՄ - Էս տեղը ո՞րն է:

ԳՐԻԳՈՐ - Մենք Զթիշի հին ամրոցի շրջանում ենք...

ԱՐԱՄ - Հետո՞:

ԳՐԻԳՈՐ - Հիմա կպատմեմ մի պատմություն, որ Եսայի հայրիկին էլ կհետաքրքրի, որովհետև Զթիշի իշխան Եսայու և նրա որդի Մուսեի մասին է:

ԱՐԱՄ - Մուսե անունն էլ ինչքան նման է Մուշեղ անունին: Նրանք էլ են միասին կռվել: Եսայի իշխանն ու իր որդի Մուսեն:

ԳՐԻԳՈՐ - Կռվել են:

ԱՐԱՄ - Էդ էրբ, էրբ են կռվել:

ԳՐԻԳՈՐ - 830-840 թվականներին:

ԱՐԱՄ - Էդքան առա՞ջ:

ԳՐԻԳՈՐ - Արաբները ԼՂՎԷԼ էին Հայաստան և հարկահանության պատրվակի տակ շարունակում էին ասպատակություններն ու թալանը: Երբ դանակը ոսկորին հասավ, հայերը սրընթաց հարձակումներով կոտորում էին արաբ հրոսակազորքերը... Մարամասն չեմ ասում, խոստացիր, որ պատերազմը վերջանա, վերցնում ես հայոց պատմության մասին գրքեր ու կարդում ես, ինչպես պիտի կարդաս աստղերի մասին:

ԱՐԱՄ - Ես կկարդամ, բայց դու մի քիչ պատմի Եսայի իշխանի ու Մուսեի մասին:

ԳՐԻԳՈՐ - Բուղան՝ արաբների զորապետը, հասավ Արցախի Եսայի իշխանի տիրույթները: Եսայի իշխանն ու իր որդի Մուսեն իրենց զինական ուժն ու ժողովրդին ավաքեցին լեռան բարձունքի Զթիշ ամրոցում: Բուղան իր հսկա բանակի վրանները խփեց լեռան ստորոտին և հոխորտանքով լեցուն հրաման ուղարկեց իշխաններին, որ անմիջապես գան իր մոտ՝ հնազանդություն հայտնելու և Զթիշ ամրոցն արաբական կալազորի տրամադրության տակ

դնելու համար: Մուսե իշխանն այսպես պատասխանց. «Թող հայտնի լինի քեզ, որ ինչքան բավականանա իմ զորությունը, քեզ տեսնելու եմ գենքով, աղեղով ու սրով, քաջ տղամարդկանցով ու երիվարներով: Դու կդառնաս թիրախ, իսկ իմ աղեղը խոցոտող, դու՛ ախոյան, իսկ իմ զինվորները՝ հաղթանակող, դու՛ ոսոխ, իսկ իմ զորքը՝ քեզ դատապարտող, քո պատերազմը և մեր հաղթությունը»: Բուղան պաշարեց Զթիշը և մեկ տարի մնաց նրա պատերի տակ: Իշխան Մուսեն քսանութ անգամ դուրս գալով իր ամրոցից, ընդամենը 20 զինվորի հետ կարողացավ պատասխանել Բուղայի հարձակումներին և հաղթելով՝ ետ շարտել: Արաբները վերջին ծակատամարտը սկսեցին զորագնդերի նոր հավելումներով: Նրանց զորքերը փողհարությամբ, թմբուկների դղրդոցներով բարձրանում էին լեռն ի վեր: Մուսե իշխանի փոքրաթիվ ջոկատը դուրս էր եկել ամրոցից և կանգնել նրա փակ դարպասների դիմաց լուռ, սառնասրտորեն, անշարժ: Երբ արաբները հասան բարձունքին, հայերը մեկ մարդունման հարձակվեցին թշնամու վրա և սկսվեց ահեղ ծակատամարտը: Բուղայի պարտությունն ահավոր էր: Նա արդեն գիտեր,

որ անհնար է նվաճել Զթիշն ու նրա հերոսական պաշտպաններին և դիմեց իր մշտական նենգ խորամանկությանը: Հրավիրեց անպարտ արցախցի իշխանին բանակցության: Մուսեն պատասխանեց, թե կշարունակի կռիվն այնքան, քանի դեռ ինքը՝ խալիֆ Մուֆավաքիլը չի ուղարկի պատգամավորներ՝ հավաստիացնելու, թե իր ժողովուրդը և երկիրը գերծ կմնան գերեվարությունից ու կործանումից: Խալիֆը Մուսե իշխանին տվեց երդմնագիր խոստումը և խաղաղության պայմանագիրը անձամբ կնքելու համար հրավիրեց Բաղդադ: Մուսեն՝ դիվանագետ ու քաջ, անպարտելի ու հպարտ արցախցի իշխանը, որը հաղթել էր Բուղայի անհամար զորքերին, առանց զենքի, առանց ուղեկիցների իջավ իր անառիկ Զթիշ ամրոցից: Բուղան նրան շղթայեց և ուղարկեց խալիֆին՝ դաժան հոշոտումով կնքելու համար մահկանացուն: Քաջարի հայրենասերը, իր երկրի ազատությունը անսահման գնահատող մարդը չկռահեց, որ պարտված թշնամուն հաղթողի կամովի հանձնվելը պիտի նրա կատաղությունն ավելի սանձազերծի: *(Դադար:)*

ԱՐԱՄ - Հետո՞...

ԳՐԻԳՈՐ - Եսայի իշխանը, որն ար-

դեն բավական ծեր էր, տարավ Բթիշի զորականներին արաբների դեմ և վերջին մարտում զոհվեց: Թշնամին, որ մինչ այդ շարունակ պարտվել էր, անտեր մնացած երկրից ու ժողովրդից սարսափելի վրեժ լուծեց:

ԱՐՏԱԿ - Բթիշի պատմությունը մեր պատմությունը չէ:

ԳՐԻԳՈՐ - Մերն է: Մանրամասն կարդա Հայոց պատմությունը: Դարեր շարունակ կրկնվել է նույնը. հաղթանակներից հետո խաբվել թշնամու շողոմ խոսքերից և անգեն հանձնվել նրա կամքին:

ԱՐՏԱԿ - Բթիշի իշխանների պատմությունը մեր պատմությունը չէ: Մենք կհաղթենք: Հաղթելուց հետո չենք ենթարկվի թելադրանքի, ժամանակի դիվանագիտական նենգ խաղերին...

ԳՐԻԳՈՐ - Հիշելու համար իմանալ է պետք: Մեր հաղթանակի կշեռքի մի նժարին կյանքն է, մյուսին՝ մահը: Բայց մենք գնում ենք կռվի հանուն կյանքի և չենք մտածում մահվան մասին:

ԱՐՏԱԿ - Վախկոտներ չկա՞ն կռվողների մեջ:

ԳՐԻԳՈՐ - Կան, վախկոտն ավելի վախկոտ է դառնում կռվի գնալիս, բայց վախկոտներով չէ, որ հաղթում ենք: Կարծում ես, Մու-

շեղը որ ոտքի կանգնի, չի՞ նետվելու մարտի, կամ երբ հանեցին գնդակը ուսիցդ, չէ՞ն գնալու նորից կռվելու:

ԱՐՏԱԿ - Գիտես, որ գնալու եմ:

ԳՐԻԳՈՐ - Բժիշկ Ռուբենը կկանգնեցի գլխիս արյունը, կփոխի վիրակապը ու ես կհասնեմ իմ դասակին: Բայց խոսքս ուրիշ բանի մասին է... Մեր վաղվա հաղթանակի իրավունքը աշխարհի օտար տերերը պիտի քննարկեն, դնեն ու վերցնեն, թե մեր Հայրենիքը ազերիներից ազատելու իրավունք ունե՞ինք, թե՞ պիտի շարունակեինք գլխիկոր ապրել սուտ բարեկամության լծի տակ: Եվ այդ իմաստուններից ոմանք իրենց հեղինակավոր խոսքը կասեն հայերի մասին, որոնք սխալ են հաղթել, իսկ մեր ղեկավար, քաղաքական գործիչ տերերը գուցե և ներքուստ համաձայն չլինելով նրանց կարծիքին և մոռանալով, որ հազարավոր զոհերի գնով է հայրենիքը ձեռք բերել իր ազատությունը, տմբտմբացնեն գլուխները որպես համաձայնության նշան կամ, լավագույն դեպքում, լռեն... Լռեն:

ԱՐԱՄ - Էդպես չի՞ լինի:

ԳՐԻԳՈՐ - Ես էլ եմ ուզում, որ էդպես չլինի, բայց պատմությունը

գրանցել է բազում օրինակներ:
Կասկածն այստեղից է:

ԱՐԱՄ - Էդպես չի լինի, մենք
կհաղթենք, էլ ո՛վ պիտի մեր դեմ
խոսի:

ԳՐԻԳՈՐ - (գրկելով տղայի ուսե-
րը): Հանգստացիր, ո՛վ է կաս-
կածում, որ պիտի հաղթենք:
Ներող կլինես, գուցե ավելորդ
բաներ ասացի, գլուխս ցավում
էր, երևի պատժառը դա էր:

ԱՐՏԱԿ - Ավելորդ բաներ չասա-
ցիր:

ԳՐԻԳՈՐ - Հաղթելուց հետո արժա-
նապատիվ հաղթությամբ մնալու
խնդիրն է կարևորը, խաղաղու-
թյան մեջ ուժեղ լինել այնքան, որ-
քան մարտերում էինք:

ԱՐԱՄ - Ես պիտի գնամ հասնեմ
դիրքերը, տղերքը ծխախոտի են
սպասում... Ինչո՞ւ չեն գալիս, իջ-
նեմ ներքև, տեսնեմ՝ ինչ եղան
բերողները...

ԱՐՏԱԿ - Դու զինվոր ես, պարտա-
վոր ես ենթարկվել հրամանի:
Ասել են՝ այստեղ սպասիր, ու-
րեմն պիտի այստեղ սպասես:

**Դուրս է գալիս բժիշկ Ռուբենը,
մտառում աքռակլին, ծխում է:**

ԱՐԱՄ - Աթոռը խախուտ է, բժիշկ,
զգույշ...

ՌՈՒԲԵՆ - Ոչինչ, ինձ կդիմանա:

ԵՍԱՅԻ - Բժիշկ ջան, Ռուբեն ջան,
Մուշեղս...

ՌՈՒԲԵՆ - Հանգիստ, Եսայի հայ-

րիկ, վիրահատությունը հաջող
անցավ, Մուշեղը հիմա քնած է:
Սիրտը կանոնավոր է, ծնշումն
իր վիճակի համեմատ՝ համա-
պատասխան է: Ներքևի հոսպի-
տալից կգան, կտանեն:
Հավատա, Մուշեղը պիտի ա-
պաքինվի: Գնա, տես... շատ
չմոտենա: Նունեին ասա՛ ես եմ
թողել:

**Եսային մտնում է վիրահատա-
րան: Գալիս են Երվանդը և Ար-
փենը: Երվանդը ծանր պարկն
իջեցնում է հատակին և փլվում
նրա մոտ: Արփենը՝ մույնպես:**

ԱՐԱՄ - Ինչո՞ւ ուշացաք, չգիտե՞ք,
որ տղերքը դիրքերում երեք օր
է՝ ծխելու բան չունեն:

ԱՐՓԵՆ - Դու ո՞վ ես, պիճիկ:

ԱՐԱՄ - (վիրավորված): Ե՛ս եմ
պիճիկը, էդ ի՞նձ ես ասում պիճ-
իկ...

ԱՐՓԵՆ - Լավ, մի հերսոտիր:
Ճիշտ ես ասում, ուշացանք: Ա-
զերիները շրջապատումն ավե-
լի են նեղացրել, հազիվ եմ
մացառների մեջ արահետ գտել:
Ներող կլինես, բալաս...

ԱՐԱՄ - Ես հո բան չեմ ասում... ա-
սում եմ՝ տղերքը երեք օր է...

ԱՐՓԵՆ - Գիտեմ... ախր, կարող էի
իսկի տեղ չհասնել, բայց, փառք
Աստծո, հասա: Մոտերքում էլ էս
լավ տղեն պատահեց, օգնեց:
Բժշկական ինստիտուտի երկ-

րորդ կուրսի ուսանող է, կռվող է, գալիս էր էստեղ, որ դեղեր հասցնի դիրքերը: Անունը Երվանդ է:

ԵՐՎԱՆԴ - Բժիշկ, արագ տվեք, ինչ որ պետք է, առավոտյան մեր ջոկատը հարձակում պիտի սկսի: Մեզ դեղորայք, վիրակապեր են պետք, բժիշկ...

ՌՈՒԲԵՆ - Ծատ քիչ բան է մնացել: Մտածում եմ՝ Արտակին ու Գրիգորին վիրակապելիս կհերիքի: Ներքևում մարդիկ քիչ են, մեզ չեն կարող օգնել, բոլոր կողմերից այնտեղ են տանում վիրավորներին: Եթե իջնես ներքև՝ հոսպիտալ ու ձեզ էլ, մեզ էլ բերես ինչ հարկավոր է, կարող ես, Երվանդ...

ԵՐՎԱՆԴ - Կարող եմ, կհասցնեմ:

ՌՈՒԲԵՆ - Ապահով արահետ գիտնա:

ԱՐՓԵՆ - Ես էլ հետը կգնայի, երևանցի տղա է, որտեղից պիտի մեր գաղտնի արահետներն իմանա, բայց պարկը պիտի տղաներին հասցնեմ:

ԱՐԱՄ - Պարկը ես եմ տանելու, էդ պարկի համար եմ դիրքերից իջել:

ԱՐՓԵՆ - Այ բալա, էս ծանր պարկը դու ո՞նց ես տեղ հասցնելու:

ԱՐԱՄ - Կհասցնեմ: Կկապեմ մեջքիս, որ ձեռքերս ազատ լինեն, ազերիի հանդիպելիս կարողա-

նամ ատրճանակի կրակոցով փորը թափել: *(Հպարտ:)* Ես ատրճանակ ունեմ:

ՌՈՒԲԵՆ - Արփեն մայրիկ, վիրահատված զինվոր ունենք, կարող եք պատգարակով գաղտնի արահետով հոսպիտալ հասցնել:

ԱՐՓԵՆ - Ծանր է վիրավորված:

ՌՈՒԲԵՆ - Վիրահատությունը հաջող է անցել, բայց այստեղ անհնար է պահել, հոսպիտալի խնամք է պետք:

ԱՐՓԵՆ - Կտանենք: *(Օգնում է Արամին պարկը կապել մեջքին:)* Ծանր է, բալաս, ծանր է, հաց է, ծխախոտ, մի քիչ շաքար: Տեղ կհասցնես...

ԱՐԱՄ - Կհասցնեմ:

ԱՐՓԵՆ - Զգույշ պիտի գնաս, մեռնեմ արևիդ:

ԱՐԱՄ - Անտառի միջով, անձանապարի տեղերով... գիտեմ ձամփան:

ԱՐՓԵՆ - Գետաշենցի չես:

ԱՐԱՄ - Չէ:

ԱՐՓԵՆ - Անունդ Ավետիք չէ՞:

ԱՐԱՄ - Անունս Արամ է:

ԱՐՓԵՆ - Հա՛...

ԱՐԱՄ - Չես հավատում, ծննդականս ցույց տամ:

ԱՐՓԵՆ - Չէ, պետք չէ...

ԱՐԱՄ - Ավետիքն ո՞վ է, որ խառնում ես ինձ հետ:

ԱՐՓԵՆ - Գետաշենցի Նշխուն ա-

նունով մի պառավ կին կա, թոռանն է փնտրում, տաս տարեկան Ավետիքին: Ասի՝ դու կլինես...

ԱՐԱՄ - *(վիրավորված):* Ես տասներկու տարեկան եմ:

ԵՐՎԱՆԴ - Մեր վաշտում մի տղա կա, անտեր է, բոլորով խնամում ենք... Ինչքան համոզում ենք, վաշտից չի հեռանում...

ԱՐՓԵՆ - Անունն ինչ է...

ԵՐՎԱՆԴ - Անունը չի ասում: Ասում է՝ կռվից հետո կիմանաք: Տաս տարեկան է:

ԱՐՓԵՆ - Հաստատ Ավետիքն է, որ տեղ հասնես, հարցրու անունը:

ԵՐՎԱՆԴ - Ծատ ենք հարցրել, չի ասում:

ԱՐՓԵՆ - Դու ասա՝ ես քեզ ծանաչում եմ, դու Ավետիք Սամսոնի Հայրապետյանն ես, Նշխուն նանի թողը, գետաշենցի: Ասա՝ նանդ քեզ է փնտրում, մեղք է...

ԱՐԱՄ - Ես գնացի, մնաք բարով: *(Գնում է, վերադառնում է:)* Մեկ է, տիեզերագնաց պիտի դառնամ: *(Հեռանում է:)*

ԱՐՏԱԿ - Ծվշվացնելով չզնաս:

ԱՐՓԵՆ - Բոռանամ ես, էս էրեխեքը ինչի՞ են խառնվել մեծերի կռվին... Լավ, մենք էլ արդեն շունչ առանք՝ գնանք:

Վիրահատարանից դուրս է գալիս Եսային:

ՌՈՒԲԵՆ - *(Եսայուն):* Երեքով, ա-

ռանց շտապելու կիջնեցնեք Մուշեղին: Աշխատեք պատգարակը չցնցել: *(Երվանդին.)* Ճանապարհին Մուշեղը որ արթնանա, կարո՞ղ ես ցավագրկող սրսկել:

ԵՐՎԱՆԴ - Կարող եմ:

ՌՈՒԲԵՆ - Ներս եկեք: *(Արտակին ու Գրիգորին.)* Մուշեղին ծանապարհեմ՝ ձեզանով կգրաղվեմ:

ԳՐՎԱԳ ՈՒԹԵՐՈՐԳ

Ձինվորները խաչված հրացաններից սարքված պատգարակով քերում են Չոհվածին: Բեմի տարբեր կողմերից հայտնվում են կանայք և ծուճկ խոնարհում:

ԿՈՇԱԿ - Գալիս են նրանք: Հոգնած կռիվներից, վշտահար, որ կորցրել են իրենցից մեկին: Նրանց մոռալ հայացքներից ներս, սեղմված շուրթերին վրեժի ծանր երդումի փակ լռությունն է: Գալիս են նրանք՝ ուսերին դրած իրենցից մեկին: Վերջին մարտերի բոցերից խանձված քո որդիները, որ հողիդ հանձնեն քո սուրբ զոհվածին և նորից նետվեն կռիվների մեջ, դաժան մարտերում հաստատեն իրենց ժշմարտությունը:

Ձինվորներն դանդաղ հեռանում են: Քիչ հեռվից նրանց է հետևում Կոհակը: Կանայք ոտքի են ելել և լարված լսում են պատերազմի հեռավոր ձայները:

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ - Լսում եք, ազերիներին նվիրած ռուսների մի ծանր տանկ էլ պայթեց մեր սակրավորների արկերի վրա:

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՆ - Ծուշիի ազատագրումից հետո թշնամու կատաղությունը հասել է գագաթնակետի, բայց միևնույն է, հաղթությունը երես է թեքել նրանցից:

ԵՐՐՈՐԴ ԿԻՆ - Մերոնք երբեմն նահանջում են...

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ - Նահանջում են, որ նորից հարձակվեն: Նահանջում են, որ վիրավորներին, զոհվածներին հանեն կրակի գծից, իրենց վերքերը վիրակապեն ու նորից առաջ գնան:

ԵՐՐՈՐԴ ԿԻՆ - Մերոնք շատ քիչ են թշնամուց: Ռուսներ, ուրիշ օտարներ, կաշառված վարձկաններ ազերիների հետ գալիս են ոտնատակ տալու, ձգմելու մերոնց դիմադրությունը:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Թշնամին մղվում է դեպի Ստեփանակերտ: Մերոնք նահանջելու տեղ չունեն այլևս:

ԵՐՐՈՐԴ ԿԻՆ - Հայաստանի սահմաններն էլ մեծ վտանգի մեջ են:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Պիտի դիմանանք:

Հայտնվում է ծանր բեռ շալակած Արփենը: Կամայք շրջապատում են նրան: Նստում է մի քարի՝ առանց բեռը շալակից իջեցնելու:

ԱՐՓԵՆ - Ծունչ առնեմ, գնամ, հասնեմ մերոնց...

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ինչ ես տանում, քույր:

ԱՐՓԵՆ - Հաց, դեղորայք, ծխախոտ, վիրակապ, իմ բեռը միշտ դա է: Բայց մյուսները զինամթերք էլ են տանում:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Մյուսները շամ են:

ԱՐՓԵՆ - Ծատ:

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՆ - Իսկ մենք մեզ համար՝ մեր տուն ու տեղին...

ԱՐՓԵՆ - Դուք էլ ձեր զավակների ու ծերերի դժվար հոգսի տակ:

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ - Ինչո՞ւ եք շալակով տանում կռվողի հացն ու զենքը:

ԱՐՓԵՆ - Երբեմն տեղ չեն հասնում սննդամթերքով ու զինամթերքով բեռնված ավտոմեքենաները, թշնամուց գնդակոծվում են: Թե իմանաք՝ ինչքան է եղել, երբ մերոնք տանջվել են քաղցից ու ծարավից: Բայց ոչ ոք չի լքել դիրքերը:

ԵՐՐՈՐԴ ԿԻՆ - Բայց նահանջում էլ են...

ԱՐՓԵՆ - Երբ վերջանում է զինամթերքը, երբ կրակում են վերջին փամփուշտը, ստիպված նահանջում են, որը նրանց համար մահից էլ վատ է: Մենք ճարը գտել ենք...

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ - Մենք՝ ովքեր...

ԱՐՓԵՆ - Մենք՝ արցախցի կանայք, տարեց տղամարդիկ, ե-

րեխաներն անգամ: Սնունդ ու զինամթերք շալակած արահետներով հասնում ենք նրանց:
ԱՌԱՋԻՆ ԿԻՆ - Եվ մի՛շտ եք հասնում:

ԱՐՓԵՆ - Երբեմն տեղ չի հասնում մերոնցից մեկը, զոհվածի փոխարեն նորերն են գալիս: Երբ տեղ ենք հասնում, օգնում ենք բուժակներին կրակի գծից հանել վիրավորներին ու շալակած ետ դառնալ նույն արահետով:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ծանր է ձեր վիճակը:

ԱՐՓԵՆ - Կռվողների վիճակը ծանրից էլ ծանր է... Դե, ես գնացի:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Բիչ էլ հանգստացիր:

ԱՐՓԵՆ - Չէ, շտապ է գնալս:

Արվեհը հեռանում է: Խմբից անջատվում է Երբորդ Կիմը:

ԵՐՐՈՐԴ ԿԻՆ - Մնաք բարով:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Դու ո՞ր ես գնում:

ԵՐՐՈՐԴ ԿԻՆ - Միանալու շալակով բեռ տանողներին:

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ - Ես էլ քեզ հետ, քույր: (*Տարեցին.*) Երկու երեխաներիս կնայնս, մայրիկ:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Խո՞սք էր, որ ասացիր... Գնացեք, ողջ վերադառնաք:

ԳՐՎԱԳ ԻՆՆԵՐՈՐԳ

Գանձասարի մշուշապատ տեսարանը: Եկեղեցու զանգերի անհանգիստ դողանջին խառնված ծանր զենքերի դղիրը: Չորսը՝ քա-

հանա Տեր Հովհաննեսը, նրա կին Գայանեն, կնոջ մայրը՝ Աշխենը և հայրը՝ Գուրգենը զինված հսկում են վանքի մատույցները: Նրանցից հեռու, մի անկյունում Կոհակն է, հնամենի թուրը սեղմած կրծքին:

ԳՈՒՐԳԵՆ - Առաջաճոր ու Վանք գյուղերի կողմից կռվի ձայները շատ են թեժացել:

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Առաջաճորի ու Վանքի ժողովուրդը չի զիջի դիրքերը:

ԱԾԽԵՆ - Ձինված ազերիների բանակի դեմ ինչ պիտի անեն խեղճ գյուղացիներն իրենց ինքնաշեն հրացաններով:

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Նրանք պաշտպանում են իրենց գյուղերը, Գանձասար վանքը, Ստեփանակերտ տանող ճանապարհը:

ԳՈՒՐԳԵՆ - Գանձասարը միշտ էլ պաշտպանվել է ավերումներից կենաց ու մահու կռիվ տալով, հիմա էլ Գանձասարի շուրջը փռված գյուղերը նույնն են անում ու մենք էլ...

ԱԾԽԵՆ - Չորսիս մասի՞ն ես ասում՝ մենք:

ԳՈՒՐԳԵՆ - Դու չէի՞ր ասում՝ կմեռնենք ու չենք տեսնի թշնամու մուտքը Գանձասար:

ԱԾԽԵՆ - Մեր դիակները կոխկրտելով չի՞ կարող թշնամին մտնել Գանձասար:

ԳՈՒՐԳԵՆ - Ինչո՞ւ ես հիմա կաս-

կածանքով խոսում, երբ հրացանը երեքիս նման ձեռքդ ես առել՝ վստահ, որ թշնամին չի հասնի Գանձասար:

ԱԾԽԵՆ - Ես ասացի՝ կմեռնեմ ու չեմ տեսնի բարբարոսների ներխուժումը վանք: Խոսքը մեր մահից հետո է...

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Մենք պիտի մտածենք կյանքի մասին և ոչ՝ մահվան...

ԳԱՅԱՆԵ - Սպասեք, գիտե՞ք ում տեսա հիմա... Խենթանալ կարելի է... Տեսա նրան այնքան կենդանի, իր փառահեղ անձով, խաչը կրծքին ու սուրը՝ մեջքին... դուրս եկավ մշուշների միջից, խաչակնքեց մեզ ու անհետացավ, կարծես լուծվեց մշուշների մեջ: Բայց ես զգում եմ նրա ներկայությունը: Կարծես հայտնվեց ասելու, որ Աստված մեզ հետ է, մեզ հետ է Գանձասարի քաջության անմեռ Ոգին...

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Դու խոսում ես Եսայի Հասան-Ջալալյան հայրապետի մասին:

ԳԱՅԱՆԵ - Հովհաննես, հիշում ես, ասում էիր, թե քահանա դարձար նրա անձի ոգևորությունն ունենալով քո սրտում:

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Ես ուզում էի դառնալ հոգևորական, բայց ուզում էի նաև զավակներ ունենալ

և ժողովրդիս կենսական հավերժությանն իմ զավակներով ու նրանց զավակներով մասնակից լինել: Ես ընտրեցի հոգևոր դասի քահանայի պաշտոնը: Դու ինձ սիրեցիր՝ քո քահանային, և մենք մեր ազգի հավերժությանը պարզեցինք երեք որդի և մեկ դուստր, նրանք հիմա Վանք գյուղի կռվողներն են:

ԳԱՅԱՆԵ - Դու ի՞նչ ես ասում, նրանք Երևանում չե՞ն... Նրանք կռվելու համար դեռ շատ փոքր են, մեծը՝ 16, փոքրը՝ 13... միջնեկ տղաս՝ 15 տարեկան... Իսկ դատրիկս... Նա Երևանում է, չէ՞...

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Նա էլ է Վանքում, արդեն կարող է առաջին օգնությունը ցույց տալ վիրավորներին:

ԳԱՅԱՆԵ - Իմ աղջիկը... 14 տարեկան... կրակների մեջ... Ինչպե՞ս թույլ տվեցիր...

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Ամբողջ Արցախը և Հայաստանի սահմաններն են կրակների մեջ... Որքան պատանիներ մեծերի կողքին... Հավատա, մերոնք իրենց կորովով չեն զիջում իրենց եղբայրներին:

ԱԾԽԵՆ - *(ծունկի իջնելով)*: Տեր Աստված, պահիր, պահպանիր զավակներին հայոց աշխարհի... Հիսուս Քրիստոս, հավատավոր քո աջը լինի կռվող

զավակների վրա... Տիրամայր,
օգնական եղիր...

ԳԱՅԱՆԵ - *(ծնկելով մոր մոտ)*: Բո-
լորին օգնության փութա ու իմ
զավակներին էլ, Տեր... Ո՛վ
սուրբ հայրապետ, որ երևացիր
հոգուս աչքերին, քո կրծքի խա-
չը, քո ձեռքի սուրը հովանի լի-
նի Հայոց կռվող զավակներին...

ԿՈՇԱԿ - *(մեկուսի)*: Ես այստեղ եմ,
ես՝ թանձրախիտ անտառների
ու արևային իմ բացատի Կոհակ
տիրուհիս: Հրձվում է սիրտս
նրանց լսելիս, մեր պաշտա-
մունքները երբեք տարբեր չեն
եղել միմյանցից, ընդհանրա-
կան մի պաշտամունք, որով
դառնում են մտերիմ հին ու նոր
աստվածները: Հայոց հայրենի-
քի անմեռ պաշտամունքը, որը
հեռու ժամանակներից հասել է
մինչև 20-րդ դար ու դեռ անդին,
հավերժության մեջ պիտի շա-
րունակի իր ճանապարհը:

ԱԾԽԵՆ - *(որ հեռադիտակով նա-
յում էր ներքև՝ սաստիկ
հուզված)*: Տեսեք, տեսեք... Հա-
յաստանի համարանիշերով
բեռնատարներ հայտնվեցին
Վանքի ու Առաջածորի մա-
տույցների մոտ: Թափքերից
ցած են ցատկում հայ զինվոր-
ներ ու դատարկում զինամթերք,
ինքնաձիգեր, հրանոթներ... Ա-
րագ փորում են խրամատներ...

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - *(վերցնելով հե-
ռադիտակը)*: Արծիվ-մահա-
պարտների ջոկատն է, որ
Զորավարի կանչով հավաքվել և
հասնում է այնտեղ, ուր ամենից
դժվար է: Նրանք հիմա այստեղ
են, նրանք կփակեն Կճողատի,
Դրմբոնի, Չլորանի ձեղքվածքը,
կծզմեն Գանձասարն օղակած
վիշապի գլուխը: Մտնենք վանք,
վառենք կերոններ ու աղոթենք
քաջորդիների հաղթանակի հա-
մար: Գանձասարը շրջապա-
տող գյուղերն ազատելուց հետո
պիտի բարձրանան վանք:

**Չորսը գնում են ետևաբեմ: Դեռ
հնչում են եկեղեցու զանգերը և
հեռվից արձագանքվող, թռռանը
փնտրող Նշխուն նանի ողբերգա-
կան կանչը.**

- Ավետիիք, բալաս, անունիդ մա-
տաղ... ո՛ր ես, Ավետիիք...

ԴՐՎԱԳ ՏԱՄՆԵՐՈՐԳ

Եկեղեցու խորանը: Այստեղ են
**Տեր Հովհաննեսը, Գայանեն, Աշ-
խենը, Գուրգենը և Արծիվ-մահա-
պարտները, յուրաքանչյուրի
ձեռքին՝ վառվող կերոն:**

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Արծիվ քաջոր-
դիներ, ձեր այս կռիվը նույնպես
պսակվեց մեծ հաղթանակով:
Բրաբիոն պսակ ձեր ծակատնե-
րին և օրհնություն, և փառք: Լու-
սադեմից մինչև մայրամուտ

առանց հոգնության դուք խիզախեցիք և հաղթեցիք:

Եկեղեցի են մտնում Զինվորի մայրը՝ նորածնի բարուրը գրկին և Հարսնուկը:

ԶԻՆՎՈՐԻ ՄԱՅՐ - Օրինեա, Տեր հայր:

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Աստված օրինե:

ԶԻՆՎՈՐԻ ՄԱՅՐ - Իմ Զինվոր որդու որդուն սեղմած կրծքիս, անուշ հարսնուկիս հետ սարեր ու ձորեր եմ անցել, որ գանձս բերեմ հանձնեմ Գանձասար ու նրա սուրբ ավազանի մեջ մանուկիս կնունքը լինի:

ՆԵՐԿԱՆԵՐ - Ամեն...

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Մայր, մանկան ու հարսնուկի հետ կրակների միջով, մահվան անդաստանների միջով հասել ես Գանձասար իր կնունքի սուրբ ավազանում կնքելու մանուկդ. արդար է գալի և սիրո, հավատի, հույսի մեծագանձ, աստվածային կամեցողության խորհուրդ ունի:

ՄԱՀԱՊԱՐՏ ՄԵԿԸ - Տեր հայր, ես էլ կնքված չեմ պարզ մի պատճառով: Խորհրդային իշխանությունը չէր ընդունում ու արգելում էր նման ծեսերն ու խորհուրդները: Խնդրում եմ, ինձ էլ կնքիր Գանձասարի սուրբ կամարների ներքո, որ եթե նոր մարտերում զոհվեմ՝

մյուռոնված հայտնվեմ Աստծո դատաստանի դեմ:

ՄԱՀԱՊԱՐՏ ՄՅՈՒՍԸ - Տեր հայր, ես էլ կնքված չեմ:

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Մանուկից հետո կկնքվեն նաև չկնքված մեծերդ: Բայց պետք չէ մտածել զոհվելու մասին: Աղոթենք մշտապես վերին մեր դատավորին, որ ողջ վերադառնանք դաժան մարտերից: Միաձայն աղոթքից հետո սկսենք ձեր մկրտությունը:

Տեր Հովհաննեսը և մյուսները ծունկ են խոնարհում:

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Ընկա՛յ, մարդասեր Տեր, զընծայեալս քեզ գերեխայս գայս, եւ սրբեա եւ զխորհուրդս սօրա յամենայն ներգործութեանց հակառակորդին: Եւ արժանի արա՛ զսա ի ձեռն սուրբ աւազանին լուանալ զհնութին մեղաց մերոց, եւ նորոգիլ լուսով շնորհաց քոց... Լցո՛ զսա երկնային շնորհօքդ եւ զուարճացո՛ ամենաբարի կոչմամբ քրիստոնեայ անուանելով, եւ արժանի արա՛ զսու մկրտութեան վերստին ծննդեան սուրբ Ավազանին...

Տեր Հովհաննեսի ձայնը դանդաղ մարում է և նույն դանդաղությամբ տեսարանն ընկղմվում է խավարի մեջ:

Տեսարանը լուսավորվում է:
Հայտնվում են Արծիվ-մահա-
պարտները և Տեր Հովհաննեսը,
որ հանել է փարաջան և զինվո-
րական զգեստով է, ինքնաձիգը
ուսից կախ: Հեռվում Գայանեն է:

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Ես միանում եմ
մահապարտներին:

ԳԱՅԱՆԵ - (*հեռվից*): Բայց դու քա-
հանա ես, հոգևորական...

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Ես էլ պարտք
ունեմ տալու Արցախին ու Գան-
ձասարին:

ԳԱՅԱՆԵ - (*համառ*): Բայց դու քա-
հանա ես, հոգևորական...

ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ - Եսայի Հասան-
Ջալալյան հայրապետն ինձ
սրբազան օրինակ... Քրիստոսի
երուսաղեմի տաճարն աղտո-
տողներին մտրակով դուրս վա-
նելը ինձ խրատ... Քանզի
հայրենիքն այն տաճարն է, որն
Աստծո կամեցողությամբ ըն-
ծայվել է մեզ արարչագործու-
թյան ամենասկզբից: Ես էլ
մյուսների հետ կոչված եմ մաք-
րել Հայրենիք-Տաճարիս հողը
պղտորողներից: Թե կռիվնե-
րում չկնքեմ իմ մահկանացուն՝
նորից կհագնեմ իմ փարաջան
և Գանձասարի կնունքի սուրբ
ավազանում կմկրտեմ նորից
նորածիններին:

ԳՐՎԱԳ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԳ

Լռել են պատերազմի ահարկու
ձայները:

Բեմի ետնամասում լեռան ուրվա-
գիծն է: Կոհակը երկու ձեռքով
գլխից վեր պարզած թուրը դան-
դաղ իջեցնում է և համբուրում:

ԿՈՇԱԿ - Էլ քեզ երբեք չեմ թաղի
հողի ընդերքում, քեզ կկախեմ
իմ բացատի ամենաբարձր սո-
սի ծառի գագաթին, որ դու
մշտապես շողշողաս արևի
հանգույն և քո փայլը երբեք
չխամրի իմ որդիների ազնիվ
սրտերում: Ավարտվեց այս պա-
տերազմը նրանց հաղթությամբ:
Բայց օտարի նեխածին հոգին
ազատ-անկաշկանդ դեռ թևա-
ծում է Հայոց հայրենիքի մեծ
մասի վրա: Սակայն վկա
մշտնջենապես ապրող իմ հոգու
թելադրանքը, թե դեռ պիտի
գան իմ մյուս որդիները, որ Հա-
յոց աշխարհը դարձնեն մի ընդ-
հանրական հայրենիք ազատ:
Փառք իմ քաջերին և մշտապես
հիշատակի ու պաշտումի ան-
լռելի շարականներ նրանց ան-
մահ հոգիներին: Իսկ ողջերը
հիմա իմ գաղտնի ներկայու-
թյան կարիքը չունեն: Գնամ հաս-
նեմ իմ թանձրախիտ անտառի
մաքուր բացատին ու 20-րդ
դարի վերջին այս կռիվը հանձ-
նեմ հազարամյակների իմ հի-

շողության մատյանին: Բայց, ոչ: Չսպասեմ քաջերիս, որ հաղթանակած իջնում են լեռներից...

Երկու ծանր հրացան շալակած մտնում է արդեն 12 տարեկան դարձած Ավետիքը: Անցնելով Կոհակի մոտով, առանց նրան նկատելու, առաջ է մղվում՝ ծանրությամբ քայլերը գցելով:

ԱՎԵՏԻՔ - Լեռն առանք: Տղերքը հիմա գոհվածներին ու վիրավորներին են բերում: Լեռն առանք առանց Վարդանի ու մյուս տղերքի... *(Անզոր հեկեկում է:)* Չէ, նրանք չեն գոհվել, նրանք քնել են Ամուր լեռան լանջերին... Տատ, լեռն առանք առանց նրանց, բայց նրանք չլինեին, դժվար թե հաղթանակ լիներ: Տատ, ես գիտեմ, դու ինձ փնտրել ես, ես կարող էի էնպես անել, որ դու ինձ գտնեիր, բայց ես պիտի իմ բաժին կռիվը կռվեի, տատ: Իմ բաժին կռիվը, որ դառնայի Վարդանի նման տղամարդ... Բայց ես ի՞նչ տղամարդ եմ, իսկական տղերքը լաց չեն լինում... Հրացանի վրա Վարդանի արյունն է՝ ո՞նց լաց չլինեմ, Վարդանն իմ մեծ ախ-

պերն էր, ինձ ո՞նց էր պահում իր թևի տակ: Վարդանը քնել է Ամուր լեռան գագաթին, Վարդանը չի գոհվել, Վարդանը գոհվողը չէր, Վարդանը քնել է, տատ: Որ ընկավ՝ նրան շալակս առած սողալով հանեցի կրակի գծից... Հետո հաղթեցինք: Տղերքը հիմա բերում են Վարդանին ու մյուսներին... Մեր դրոշը ծածանվում է լեռան կատարին: Արցախն արդեն ազատ է, տատ, մնաց Գետաշենն ու Շահումյանը, մնաց իմ տունը, իմ հոր ու մոր, իմ պապի, իմ ախպերների գերեզմանը: Գնամ ազատեմ ու գամ քեզ գտնեմ, տատ: Ավետիք թոռանդ խոսքին հավատա...

Լեռան բարձունքից իջնում են Ջինվորները: Նրանց ընդառաջ են գնում Կանայք: Կանանց խմբի հետ է Նշխուն մանր: Նատենում է հեռացող Ավետիքին:

ՆԾԵՆՈՒՆ ՆԱՆ - Ավետիք, բալան...
ԱՎԵՏԻՔ - *(շրջվելով դեպի տատը):* Համբերիր, տատ, Գետաշենն ազատեմ՝ ես քեզ կգտնեմ: *(Գնում է Ջինվորների հետ:)*

Գրվել է 1999 թվականին

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Սամվել ԽԱԼԱԹՅԱՆ

*Անկեղծ սասած, լիաթոք ծի-
ծաղող մարդկանց կարոտել
եմ... Նստում ես դահլիճի
օթյակում, հետևում ես ներ-
կայացմանը, և դու՝ պիեսի
հեղինակը, գիտես, որ հի-*

*մա, այդ վայրկյանին, դերակատարի խոսքի կամ նրա շարժ-
ման հետ դահլիճն այնպես վերելու է, անզուսպ ծիծաղ է
պայթելու: Նման պահերի ես հանդիսատեսին եմ նայում
ու, ինչ մեղքս թաքցնեմ, հոգեկան մեծ բավարարվածություն
եմ ապրում: Վաղուց չի եղել այդպիսի բան: Մարդիկ մտա-
մոլոր են, նյարդային, տխուր: Էդ մթնոլորտում օդը չի բա-
վարարում, թթվածին չկա, օդում վիրուսները շատ են,
ընչաքաղցության, հալոռելու վիրուսը: Բայց մենք մարդկա-
յին էն ազգ-տեսակն ենք, որ անզամ այն ժամանակ, երբ
որոտում են թնդանոթները, մուսաները չեն լռում:
Ես կարոտել եմ ծիծաղող մարդկանց ու որոշեցի նրանց
տալ այդ ծիծաղը, գոնե ժամ-ժամուկետով նրանց դուրս
բերել առօրյա հոգսերից:
Պարզապես՝ ծիծաղ մեր «անմեղ» էության վրա:*

Ծնունդդ շնորհավոր կամ happy million

(Կատարակերգություն երկու գործողությամբ)

Գործող անձինք

ԳՈԳԻ

ՋԱՐԱ - Գոգիի կինը

ՎԻԿԱ - Գոգիի սիրուհին

ԱՐՄՈ - Գոգիի ընկերը

ԻՌԱ - Արմոյի մորաքրոջ աղջիկը

ՍԱՀԱԿ - հարևան

ՅՈՒՂԱԲԵՐ - հարևանուհի

ԺԻՐԻԿ - հաղթանդամ տղամարդ

ՋԱՐՉԱՆԴ - փոքրամարմին տղամարդ

ԺՈՐԺԻԿ - Ժիրիկի երիտասարդ ուղեկիցը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Միայնակ ապրող տղամարդու սենյակ: Բազմոցի ու բազկաթոռների վրա անփույթ շարված են տանտիրոջ՝ Գոգիի շավարը, վերնաշապիկը, նաև՝ կանացի շրջագգեստ ու ներքնաշորեր: Սեղանիկի վրա՝ կիսով չափ լցրած կոնյակի երկու բաժակ: Պայմանականորեն՝ աջակողմում են գտնվում բնակարանի նախամուտքի, լոգարանի և խոհանոցի, ձախակողմում՝ պատշգամբի և ննջարանի դռները:

Լոգարանից՝ խալաթով, սրբիչով մազերը չորացնելով, մյուս ձեռքով բջջայինի վրա համար հավաքելով, բարձր տրամադրությամբ մտնում է Գոգին:

ԳՈԳԻ - (երգելով): Подари эту ночь
подари-, повтори эту ночь, повтори...

ՎԻԿԱ - (ննջարանից): Կյա՛նք,
սպասում ե՛մ...

ԳՈԳԻ - Գալիս ե՛մ... (Հեռախոսով՝

գաղտնախոս:) Արմո՞... ես եմ՝
Գոգին: Լսիր, խնդրում եմ մո-
րաքրոջդ աղջկան՝ Իռային հա-
ղորդիր, որ այսօրվա մեր
հանդիպումը տեղի չի ունենա...

Ոչ թե իմ ու քո հանդիպումը, այլ ի՛մ ու նրա՛ հանդիպումը: Մոռացե՛նք Ես, երեկ միասին էինք, որ պայմանավորվեցինք... Ես չեմ կարող նրան զանգել, որովհետև տանը մենակ չեմ... Մի բան մոգոնիր, ասա, որ հանկարծակի գյուղ եմ մեկնել: Լավ, լավ, երկար չեմ կարող բացատրել, իմ նոր գայլուհին ննջարանում իրեն կտրատում է... (Դռան զանգ): Կապի վերջը, դուռը զանգում են: (Շտապում է նախամուտք:)

ՎԻԿԱ - (ննջարանից): Յի՛կս, սպասո՞ւմ եմ...

ԳՈԳԻց առաջ ընկած մտնում է **Յուդաբերը**, մախկին գավառաբնակ, ով մշտապես ծամոն է ծամում ու սովորություն ունի ավերով, պարբերաբար, վեր հրել պարարտ կուրծքը:

ԳՈԳԻ - (առաջն ընկնելով՝ փորձում է ծանապարհը փակել): Մի բոպե, մի բոպե... Հեչ հարմար ժամի չես եկել, հասկանո՞ւմ ես...

ՅՈՒՂԱԲԵՐ - (չլսելու է տալիս): Վա՛յ, էլի մենակ ե՛ս, քոռանամ, բա քեզ պես տղամարդը մի տաք ճաշի էլ չի արժանի՛...

ԳՈԳԻ - Յուդաբեր, կներես, բայց տեսնում ես՝ բաղնիքից նոր եմ դուրս եկել ու...

ՅՈՒՂԱԲԵՐ - Բա չեմ տեսնո՞ւմ,

բաղնիքդ անո՛ւշ:
ԳՈԳԻ - Հիմա պետք է հագնվեմ ու շտապեմ...

ՅՈՒՂԱԲԵՐ - (հիասթափված): Հագնվե՛ս...

ԳՈԳԻ - Հա: Էս տեսքով հո փողոց դուրս չե՛մ գա:

ՅՈՒՂԱԲԵՐ - Բայց քեզ ո՞վ ա ասում, որ դուրս գա՛ս:

ԳՈԳԻ - (համբերության ծիգով): Յուդաբեր, ես քեզ խնդրում եմ...

ՅՈՒՂԱԲԵՐ - Լա՛վ, լավ: Ուղղակի քեզ բան ունե՛ի ասելո՞ւ:

ԳՈԳԻ - Ասա, միայն թե՛ կարծ:

ՅՈՒՂԱԲԵՐ - Դու ինձ բան չունե՛ս ասելո՞ւ...

ԳՈԳԻ - (դեպի ննջարան հայացք գցելով): Չէ: Ի՞նչ պիտի ասեմ: Դու քո ասելիքն ասա:

ՅՈՒՂԱԲԵՐ - Վա՛յ... Դե ասի, էլի՛...

ԳՈԳԻ - Ե՛րբ ասիր, որ չլսեցի:

ՅՈՒՂԱԲԵՐ - Բա չասի՞, դու ինձ բան չունե՛ս ասելո՞ւ...

ԳՈԳԻ - (բարկացկոտ): Ես քեզ ոչինչ չունեմ ասելու:

ՅՈՒՂԱԲԵՐ - Բա երեկ էն ինչե՛ր էիր ասո՞ւմ, թե՛ մենակ ես մնացե՛նք, ամուսնանալ ես ուզո՞ւմ, քեզ վատ ես զգո՞ւմ, ինձ հավանում ե՛ս, թե՛ ըսե՛նց-ընե՛նց...

ԳՈԳԻ - (դեպի ննջարան հայացք գցելով): Յուդաբեր... Յուդաբեր ջան, երեկ... կներես... մի խոսքով, երեկ քեֆս լավ էր: Հիմա գնա, խնդրում եմ:

ՅՈՒՂԱԲԵՐ - (ուղղվելով դեպի ելքը): Ես դրության մեջ մտնող եմ: Թե քեզ վատ զգաս, ասա՛:

ԳՈԳԻ - (կիպ՝ ուղեկցելով): Կասեմ, կասեմ:

ՅՈՒՂԱԲԵՐ - Բան պետք լինի, ասա՛:

ԳՈԳԻ - Կասեմ, կասեմ:

ՅՈՒՂԱԲԵՐ - Որ քեֆդ լավ ըլնի, ասա՛:

ԳՈԳԻ - Կասեմ, կասեմ: (Շտապ ետ գալով՝ հեռախոսահամար է հավաքում:)
Ալո, Արմո, զանգեցի՞ր Իռային...

ՎԻԿԱ - (ննջարանից): Փղի՛կս, սպասո՞ւմ եմ...

ԳՈԳԻ - (Վիկային): Գալիս ե՛մ... (Հեռախոսով:) Եկողը Յուդաբերն էր... Ինձ յուղ պետք չի, Յուդաբերն իմ հարևանուհին է, իսկ դու Իռային զանգիր:

ՎԻԿԱ - Վագրի՛կս, ի՞նչ եղա՛ր...

ԳՈԳԻ - Եղնի՛կս, սպասիր քո վագրիկի՛ն... (Հեռախոսով:) Զեզ չեմ ասում... Արմո ջան, ախպոր պես, անպայման շտապ հաղորդիր, որ հանկարծ չհայտնվի այստեղ...

ՎԻԿԱ - Արջո՛ւկս, կարոտում ե՛մ...

ԳՈԳԻ - Ընձո՞ղտս... (Հեռախոսով:) Ի՞նչ գազանանոց, փաղաքույշ անուններ եմ ասում: Ընծուղտը ննջարանում է... այո, նույն գայլուհին է... եղնիկն էլ է ինքը... (Երկար, առանց ընդմիջումների

հնչում է դռան զանգը:)
Այ քեզ անասո՞ն... (Հեռախոսով:) Զեզ չեմ ասում, ինչ-որ մեկը դռան զանգին է կպել ու չի պոկվում: (Լախամուտք գնալով:) Ի՞նչ կա չհասկանալու, ընծուղտը ննջարանում է, իսկ անասունը միջանցքում զանգի կոճակն է սեղմում... Ես սենյակում եմ: (Գնում և անմիջապես, այլայլված վերադառնում է: Արագախոս:) Այ քեզ հրե՛շ... հրե՛շ... (Հեռախոսով:) Սպանեցիր, էլի՛... քեզ հետ չեմ, հրե՛շը կինս է, որ զանգի կոճակից չի պոկվում: (Սրբիչը մի կողմ շարտելով ետ ու առաջ է քայլում, չնկատելով ներս մտած, սավանով փաթաթված, հովհարը դեմքի մոտ տարուբերող Վիկային, շարունակում է հեռախոսագրույցը:) Ի՞նչ Յուդաբեր... Տեր Աստված, չգիտեի, որ այդքան անհասկացող ես... Ոչ թե տեր Աստվածն է անհասկացող, այլ դու՝ Արմո Վեքիլյանդ: (Նյարդային:) Բացատրում եմ՝ անասունը կինս էր, քանի դեռ չգիտեի, որ կինս է, հրե՛շը կինս է, քանի որ արդեն գիտեմ, որ կինս է, ընծուղտը ննջարանում է, Յուդաբերն իր տանն է, ես հյուրասենյակում եմ... Հասկացա՞ր:

ՎԻՎԱ - (վախեցած): Լնջարանում ընծո՞ղտ կա:

ԳՈԳԻ - (նկատելով Վիկային): Արդեն չէ... (Հեռախոսով:) Ի՞նչ բազմակնություն, վեց օր է, ինչ ամուրի եմ: Մենք վերջնականորեն բաժանված ենք, բայց նա սարսափելի խանդոտ է ու անընդհատ հետևում է ինձ:

ՎԻՎԱ - (վախեցած ընկրկում է՝ ձեռքից օգելով հովհարը): Տե՛ր Աստված... նա ինձ կսպանի...

ԳՈԳԻ - (Վիկային): Լա քեզ երկրորդ հերթին կսպանի, իսկ ինձ կգլխատի քո աչքի առաջ:

ՎԻՎԱ - Ես զգվում եմ անգուլիս տղամարդկանցից...

ԳՈԳԻ - Լա ոչ թե քեզ կսպանի, այլ... (Վիկային.) անունդ ի՞նչ էր...

ՎԻՎԱ - Չեմ ասի:

ԳՈԳԻ - (հեռախոսով): Մի խոսքով, նա կսպանի ընծուդ տին... չէ, նա մոլագար չէ, ուղղակի խանդոտ է: Նրան թաքցնել է պետք... խոսքը ընծուդ տի մասին է՝ գայլուհու... թաքցնել է պետք... ի՞նչ խմբակային սեքս, ես նրա փաղաքույշ անուններ եմ տալիս, որ քեզ համար հասկանալի լինի... իսկական անուն ունի, բայց չի ասում...

ՎԻՎԱ - (լացակումած): Տուն եմ ուզում գնալ:

ԳՈԳԻ - Լռի՛ր խնդրում եմ, լռի՛ր... (Հեռախոսով:) Արմո... ալո... ա-

լո, Արմո, ի՞նչ եղար, ձայն հանի... Ես գայլուհուն ասի՝ լռի՛ր, ոչ թե քեզ: Չի ոռնում, զոռում է, այսինքն՝ լաց է լինում: Արմո, օգնի՛ր, ես վառվում եմ... ի՞նչ... ի՞նչ հրդեհ... ոչ մի հրդեհ էլ չկա, ոչ թե ֆիզիկապես, բարոյապես եմ վառվում: Ինձ օգնել է պետք... նրանցից մեկն ու մեկին պետք է այստեղից տանել, քանի դեռ չեն հանդիպել... Ոչ թե ընծուդ տին կամ գայլուհուն տանել, այլ՝ կնոջս կամ գայլուհուն, այլապես նա կհոշոտի ինձ... Ոչ թե գայլուհին ինձ կհոշոտի, այլ կի՛նս, կինս կհոշոտի երկուսիս էլ... Եղբայր, քեզ ինչո՞ւ պիտի հոշոտի, նա քեզ չի էլ ծանաչում: Երկուսիս, այսինքն՝ ինձ ու գայլուհուն կհոշոտի, ոչ թե ինձ ու քեզ... Գրողը տանի, գայլին ու ընծուդ տին հանգիստ թող ու շտապ արի... Տաքսի եմ պատվիրել, ծանրոցներս շատ են ու վարորդը բարձրանում է տուն՝ ինձ օգնելու համար, հասկացա՞ր... (Չանգի հետ լսվում են ոտքի հարվածներ:) Տե՛ր Աստված, նա արդեն ոտքերով է խփում դռանը... (Հեռախոսով:) Ոչ թե տաքսիստն է խփում, այլ կինս: Տաքսու վարորդը դու ես ու գալիս ես մեր տուն: Գիտեմ, որ ինձեներ ես, բայց որպես տաքսու վարորդ արի: Արմո, ու-

շաղիր լսիր ինձ, ես ոչ մի տեղ
չեմ մեկնում, դու նրանցից մեկ-
նումեկին պետք է այստեղից
տանես՝ ինձ փրկելու համար...
Գրողը տանի, կարևոր չէ, թե
ում կտանես, մտիր ներս ու
առաջին հանդիպած կնոջը
առևանգիր այստեղից... Հաս-
կացա՞ր, արագացրո՛ւ: *(Բքջջա-
յինը դնում սեղանիկին,
փորձում է խաղաղվել: Հեծկլ-
տացող Վիկային:)* Վերջ տուր
լացիդ: *(Վախեցած դռան կողմը
նայելով:)* Մի վախեցիր, չեմ
թողնի, որ քեզ նեղացնի: *(Մո-
տենում, շոյում է աղջկա մազե-
րը:)* Անունդ ի՞նչ է:

ՎԻԿԱ - Վիկա:

ԳՈԳԻ - Վիկա, ուշադիր լսիր, ինչ եմ
ասում: Ննջարանը ընդհանուր
դուռ ունի պատշգամբի հետ,
պատշգամբն էլ՝ խոհանոցի հետ,
խոհանոցն էլ՝ միջանցքով, այս
սենյակի հետ, հասկացա՞ր: *(Աղ-
ջիկը գլխով է անում:)* Եթե կինս
մտնի ննջարան, դու անմիջա
պես անցիր պատշգամբ, եթե գա
պատշգամբ՝ թաքնվիր խոհանո-
ցում, իսկ եթե խոհանոց գա՝ այս
սենյակը մտիր, հասկացա՞ր...
(Աղջիկը գլխով է անում:) Սենյակ
ներով աննկատ կֆոռաս:

ՎԻԿԱ - Իսկ ինչքա՞ն եմ ֆոռալու:

ԳՈԳԻ - Եթե չնկատի՝ կարծում եմ,
մեկ անգամ:

ՎԻԿԱ - Իսկ եթե նկատի՞:

ԳՈԳԻ - Իսկ եթե նկատի, կֆոռաս
այնքան, մինչև որ կբռնի քեզ:

ՎԻԿԱ - Կսպանի՞:

ԳՈԳԻ - Բեզ՝ չգիտեմ: Ինձ՝ հաս-
տատ կսպանի:

ՎԻԿԱ - Վախենում եմ:

ԳՈԳԻ - Էլ ոչ մի խոսք: Արագ,
մտիր ննջարան: *(Նրան հրում է
ննջարան:)*

*Դռան զանգի ու հարվածների
հետ լսվում է Ջարայի ձայնը.
«Դուռը բաց, վախկո՛տ, դավա-
ճա՛ն, սրիկա՛ ... դուռը բա՛ց»:*

ԳՈԳԻ - Գալիս եմ, գալի՛ս... *(Ըն-
թացքից ծանկում է սրբիչը,
նկատելով Վիկայի շրջազգես-
տը, վերցնում, բարձրացնում է
բազմոցի նստատեղն ու սրբիչն
է խցկում ներս, իսկ շրջազգես-
տով փաթաթելով գլուխը՝ դարձ-
յալ մղվում է դուռը բացելու,
սակայն, կեսձամփից նկատում
է Վիկայի զուգազուլպաները,
կրծկալն ու դրանք էլ է տանում
բազմոցում թաքցնելու և հայտ-
նաբերում է սրբիչը:)* Գրողը
տանի... *(Դեպի դուռը:)* Գալի՛ս
եմ... *(Վիկայի զգեստները
թաքցնելով բազմոցում, սրբի-
չով գլուխը փաթաթելով շտա-
պում է նախամուտք, նկատելով
հատակին ընկած հովհարը՝
ծալում, խցկում է վարտիքի
գոտկատեղում:)* Գալի՛ս եմ...

ԶԱՐԱ - *(մտնելով՝ ստուգողական չորս կողմն է նայում):* Ինչո՞ւ չես դուռը բացում, ո՞վ կա տանը... Խոստովանիր, քանի դեռ ինքս չեմ պատռել դիմակդ:

ԳՈԳԻ - *(կռվարար):* Նախ՝ մի գոռա, ամուսինդ չեմ, որ քեզ հաշվետու լինեմ: Երկրորդ՝ լուգարանում էի, երրորդ՝ տաքսի եմ պատվիրել ու կարծեցի՝ վարորդն է զանգում: Իմանայի՛ դու ես, դուռը չէի էլ բացի ու չէիր էլ իմանա՝ տա՞նն եմ, թե՞ չէ: *(Շինծու ինքնավստահությամբ նստում է բազմոցին, ոտքը ոտքի վրա է գցում:)*

ԶԱՐԱ - Զէի՞ր իմանա... *(Պայուսակից սարք է հանում:)* Ա՛յ, սա ասում է տեղդ:

ԳՈԳԻ - Էդ ի՞նչ է...

ԶԱՐԱ - Ոսկեխույզ սարք: Ճապոնական:

ԳՈԳԻ - Ոսկի՞ թողիր, որ... բոլորը հավաքեցիր տարար:

ԶԱՐԱ - Բացի մեկ կտորից:

ԳՈԳԻ - Ոչ մի կտոր էլ չի մնացել:

ԶԱՐԱ - Մնացել է, Գոգի տղա, բերանդ որ լավ բացես ու կանգնես հայելու առաջ, կտեսնես, որ ատամներիցդ երկուսը ոսկի է: Մոռացե՞լ ես, որ իմ չերվոնի մատանին տարար՝ ծամիչներդ սարքեցիր: Այնպես որ, յոթը շերտ գետնի տակն էլ անցնես՝ կբացահայտեմ քե՛զ էլ, սիրուհո՛ւդ էլ:

ԳՈԳԻ - Տո, քեզ ի՞նչ... Մենք ամուսնալուծվել ենք, քեզ հաշվետու չեմ, թե ում հետ եմ հանդիպում:

ԶԱՐԱ - Հաշվետու չե՞ս: Փաստաթղթով դեռ ամուսնալուծված չենք:

ԳՈԳԻ - Թքա՛ծ փաստաթղթի վրա: Էդ թղթի կտորը ոչ մի կապ չունի:

ԶԱՐԱ - Ունի, թե չունի, բայց քանի դեռ էդ թղթի կտորը կա, ես թույլ չեմ տա, որ քո պիղծ վարքով սև բիծ գցես իմ անաղարտ, ազնիվ, կրիստալնի հեղինակության վրա: Այ, հիմա կբռնացնեմ սիրուհուդ, քեզ աշխարհքով մեկ խայտառակ կանեմ ու կտեսնենք՝ էդ թղթի կտորը կապ ունի՞, թե՞ ոչ:

ԳՈԳԻ - *(ծաղրով):* Հա՛, քեզ թվում է, իմ սիրուհիների ատամներն ու եղունգները ոսկուց են ու դու քո էդ տծվժիկով կհայտնաբերես նրանց:

ԶԱՐԱ - Ես սիրուհիներ հայտնաբերող սարք էլ ունեմ: *(Փնտրում է պայուսակում:)*

ԳՈԳԻ - *(հեզնական):* Ճապոնական:

ԶԱՐԱ - Ամերիկյա՛ն: *(Պայուսակից ատրճանակ է հանում:)* «Կո՛լտ», յոթ կրականի, 45 միլիմետր տրամաչափի փամփուշտով, գնդակի արագությունը 260

մետր՝ մեկ վայրկյանում: (Ձենքը լիցքավորելով:) Այնպես որ, սիրուհուդ ասա, եթե չի ուզում հանուն քո սիրո նահատակվել, թող փախչի գոնե 261 մետր/վայրկյան արագությամբ, թե չէ գնդակի փայ կդառնա:

ԳՈԳԻ - Դու խելագարվել ես...

ԶԱՐԱ - Ընդհակառակը, խելքի եմ եկել: (Մի ձեռքում՝ ատրճանակ, մյուսում՝ բջջային հեռախոս պարզաժ:) Առաջ անցիր:

ԳՈԳԻ - Չհասկացա...

ԶԱՐԱ - Կհասկանաս, երբ քո և սիրուհուդ կիսամերկ նկարները ֆեյսբուքում ու յուրաքանչյուրում կհայտնաբերես: Առա՛ջ:

ԳՈԳԻ - (ակամա ձեռքերը վեր է բարձրացնում): Դու իրավունք չունե՛ս...

ԶԱՐԱ - Մտի՛ր ննջարան:

ԳՈԳԻ - (առաջ ընկնելով՝ բարձր, որպեսզի Վիկան լսի): Մենք գնում ենք ննջարա՛ն... Դու իրավունք չունե՛ս... Մենք ննջարան ենք մտնո՛ւմ... նա ինձ ստիպում է ննջարան մտնե՛լ...

ԶԱՐԱ - (կասկածով): Էդ ինչո՞ւ ես գոռում:

ԳՈԳԻ - Ոպեսզի քո յուրաքանչյուրում ու ֆեյսբուքներում արձանագրվի, որ ինձ ստիպել ես քեզ հետ ննջարան մտնել:

ԶԱՐԱ - Ծա՛տ կերպագե՛իր, որ ինձ հետ նորից ննջարան մտնե՛իր:

Մտի՛ր ննջարան, ննջարանից՝ պատշգամբ, պատշգամբից՝ խոհանոց, խոհանոցից՝ այստեղ ու էլի՝ ննջարան... արա՛գ:

ԳՈԳԻՆ ԵՆՔԱՐԿՎՈՒՄ Է: Առժամանակ հյուրասենյակում ոչ ոք չկա, լսվում է միայն ԳՈԳԻԻ գոռոռոցը՝ «Իսկ հիմա մտնում ենք պատշգա՛մբ... թեքվում ենք խոհանո՛ց...»: Հայտնվում է սավանով փաթաթված, սարսափահար Վիկան ու վազքով անցնում է ննջարան:

ԳՈԳԻ - (ձեռքերը վեր պարզած ներս մտնելով): Հյուրասենյակ մտա՛նք... Մտանք հյուրասենյա՛կ...

ԶԱՐԱ - (ատրճանակը պարզած՝ նրան հետևելով): Ի՞նչ ես ձայնդ գլուխդ զցել, չեմ հասկանում:

ԳՈԳԻ - Լավ եմ անում, թող հարևանները լսեն, որ տանջում ես ինձ: Թող լսեն, և իմացած լինես, որ կգան դատարան ու վկայություն կտան:

ԶԱՐԱ - Այ-վա՛յ քո հալին, տանը մնացած Յուդաբերն է՞ վկայություն տալու: (Լստում, զենքն ու հեռախոսը պայուսակի մեջ է դնում:) Ձեռքերդ իջեցրո՛ւ:

ԳՈԳԻ - Ի՞նչ...

ԶԱՐԱ - Ձեռքերդ իջեցրո՛ւ:

ԳՈԳԻ - (հայացքը բարձրացնում է ձեռքերին): Սադի՛ստ, այսքան ժամանակ ձեռքերս բարձրացրա՞՞ծ եմ եղել... Չեմ իջեցնելու

մինչև տաքսու վարորդը չգա ու չտեսնի արածդ: Իմացած լինես, որ դատարանում նա էլ կվկայի տեսածի մասին: Սրա՛ն տես, ամուսնուն ռազմագերի է վերցնում:

ԶԱՐԱ - Նախկին՝ ամուսնուն:

ԳՈԳԻ - Առավել ևս: Դու ոչ մի բարոյական, ֆիզիկական, իրավական, հասարակական ու քաղաքական իրավունք չունես...

ԶԱՐԱ - Վերջ տուր: Ավելի լավ է ասա, թե որտեղ է քո գանձը: Հիշիր, որ անկեղծ խոստովանությունը մեղմացնում է պատիժը:

ԳՈԳԻ - Տո, քեզ ի՞նչ, թե որտեղ եմ թաքցրել: *(Կեղծ անհոգությամբ նստում է բազմոցին:)* Դրանք իմ վաստակած փողերն են:

ԶԱՐԱ - Թքել եմ քո վաստակած կոպեկների վրա: Խոսքը կտուրը մի զցիր, որտե՞ղ ես թաքցրել սիրուհուդ:

ԳՈԳԻ - Սիրուհի՞... քեզ հետ ապրելուց հետո խելքով տղամարդը էլ կնոջ անուն կտա՞... Աստված հեռու պահի: *(Իրադրության տեր զգալով՝ ոտքը ոտքին է զցում, վերցնում կոնյակի բաժակը:)*

ԶԱՐԱ - Գոգի տղա, դերասանություն մի անի...

ԳՈԳԻ - Ես քեզ համար Գոգի չեմ, այլ՝ պարոն Հակոբյան, կամ ամենաքիչը՝ Գրիգոր Միսակիչ:

ԶԱՐԱ - Ամենաքիչը Գրիգոր Միսակիչ, դերասանություն մի անի, եթե տանը մենակ ես, ո՞ւմ համար է կոնյակի երկրորդ բաժակը:

ԳՈԳԻ - Բ... բաժակը՞... ի-ի՞նչ բաժակ...

ԶԱՐԱ - Ա՛յ, սա, երկրորդը:

ԳՈԳԻ - Ախ երկրորդը... ի՞նչ երկրորդ:

ԶԱՐԱ - Բաժակը:

ԳՈԳԻ - Ախ բաժակը... *(Ոտքի է ելնում, պտտվում սենյակում՝ ժամանակ շահելու, հավաստի բացատրություն գտնելու համար:)* Կոնյակի՞ բաժակը... Կոնյակի երկրորդ բաժակը... բաժակի երկրորդ կոնյակը...

ԶԱՐԱ - Երկրորդ բաժակը, երկրորդ:

ԳՈԳԻ - Ես էլ հենց դա եմ ասում՝ բաժակը... երկրորդ բաժակը... կոնյակի... Հա՛, իմ ծննդյան օրն է... ընկերս էր հյուր եկել... շնորհավորեց, գնաց:

ԶԱՐԱ - Գոգի տղա, մոռացել ես, որ նույն օրն ենք ծնվել և իմ ու քո ծնունդը վաղն է:

ԳՈԳԻ - Է, ծնվի՛ր, քեզ ո՞վ է խանգարում: Դու էլ ինձ մի խանգարիր: *(Ցասկոտ:)* Ես իրավունք ունե՛մ ծնվեմ՝ երբ ուզեմ, հյուր ընդունեմ՝ երբ ուզեմ, ում ուզեմ, որ ժամին ուզեմ: Բո ջգրու ամեն օր եմ ծնունդս նշելու, ամեն

օր եմ հյուր ընդունելու: Չույզ-
զույզ եմ ընդունելու, հինգ-հինգ
եմ ընդունելու: Տաս-տաս եմ ըն-
դունելու, քե՛զ ինչ...

ԶԱՐԱ - Ընդունի՛ր, ընդունի՛ր:
Բայց մեկ-մեկ էլ տունդ հավա-
քի... Հալա սրա պահած տանը
տես՝ շորերը թափթփա՛ծ, մի
մատ փոշի նստա՛ծ: Ու դու կար-
ծում ես, թե կարող ես ապրել ա-
ռանց կնո՞ջ:

ԳՈԳԻ - Վեց օր ապրել եմ, վեց ա-
միս էլ կապրեմ, վաթսուն տարի
էլ կապրեմ... Վեց հարյուր տա-
րի էլ կապրեմ, վեց հազար տա-
րի էլ կապրեմ... Վեց միլիոն
տարի էլ կապրե՛մ, միայն թե դու
կողքիս չլինես, դո՛ւ...

ԶԱՐԱ - Ախ, այդպե՛ս... *(Ձեռքը
մտցնում է պայուսակի մեջ:)*

ԳՈԳԻ - *(կարծելով՝ զենքն է հա-
նում, ձեռքերը վեր պարզած
վազում է դեպի միջանցք):* Օգ-
նեցե՛ք...

ԶԱՐԱ - *(թաշկինակը հանում, ա-
դիողորմ արտասվում է):* Ի՛-
իիիի՛...

ԳՈԳԻ - *(ապշած):* Ի՛:

ԶԱՐԱ - Ի՛-իիիի՛...

ԳՈԳԻ - Ի՛...

ԶԱՐԱ - Իիիիի՛...

ԳՈԳԻ - Էդ դու... դու լաց լինել էլ
գիտե՛ս...

ԶԱՐԱ - *(ողբաձայն):* Ա՛խ, մամա
ջան... Իմ խեղճ մեր...

ԳՈԳԻ - *(հեզանքով):* Խեղճ...

ԶԱՐԱ - Իմ սո՛ւրբ մեր...

ԳՈԳԻ - Սո՛ւրբ...

ԶԱՐԱ - Իմ հրեշտա՛կ մեր...

ԳՈԳԻ - Հրեշտա՛կ...

ԶԱՐԱ - Գոնե մի վերջին անգամ
գրկեի, սեղմեի կրծքի՛ս...

ԳՈԳԻ - *(հրճվանքով):* Չլինի՞ մեռել
է:

ԶԱՐԱ - Ախ, իմ մամա ջա՛ն...
Միշտ ասում էիր, որ էդ այլան-
դակը քեզ ապագա չի՛... դրան
մի ուզի՛...

ԳՈԳԻ - Իմաստուն բան է ասել:

ԶԱՐԱ - Ա՛խ, ինչո՞ւ, ինչո՞ւ քեզ
չլսեցի՛...

ԳՈԳԻ - Տո դու ո՞ւմ ես լսում, որ
հարազատ մորդ լսեիր:

ԶԱՐԱ - Բայց վերջին պահի՛ն,
վերջին պահի՛ն, մամա ջան, հե-
ռավոր Լոս Անջելեսում հիշել ես
ու խղճացել ես էս այլանդակի՛ն,
անունը գրել ես կտակիդ մե՛ջ...

ԳՈԳԻ - *(չընկալելով):* Անունս է
գրե՛լ... չլինի՞ թուղթուզիր է ա-
րել:

ԶԱՐԱ - Հիշել ես ու կարգին մար-
դու տեղ ես դրե՛լ...

ԳՈԳԻ - Մի փորձանք սարքած
կլինի:

ԶԱՐԱ - *(կտրուկ թողնում է լացը,
կռվազան):* Իհարկե, քեզ պես
այլանդակի համար կտակած
մեկ միլիոն դոլարը փորձանք է:

ԳՈԳԻ - Մըմըմըմը... մի... մի-մի-

մի... մի-մի՞... (Լստում է կնոջ դիմաց:)

ԶԱՐԱ - Հենց՝ մի-մի՞: (Պայուսակից թուղթ է հանում, մեկնում է նրան, բայց միտքը փոխելով, որպես հովհար սկսում է տարուբերել:)

ԳՈԳԻ - (հայացքը թղթին, գլուխը մեկ աջ, մեկ ձախ թեքելով): Բբայց... ո-որտեղի՞ց նը-նրան մ-մեկ մի՞-մի՞... նա հարուստ, միլիոնատիրոջ տան մեջ հիվանդապահ չէ՞ր:

ԶԱՐԱ - (կռվազան): Հետո ի՞նչ... Կյանքն առաջ է ընթանում, հիմա էլ ինքն է միլիոնատեր:

ԳՈԳԻ - Չլինի՞ իր հիվանդին թունավորել ու թալանել է:

ԶԱՐԱ - Չհամարձակվե՛ս: Իմ մայրը բարոյականության տիպար է... (Լացակումած:): Ես իր կյանքի գնով է վաստակել էդ միլիոնը...

ԳՈԳԻ - Բա որ էդքան թանկ կյանք ուներ, ընչի՞ ընկավ Ամերիկաների դռներն ու անդամալուծ միլիոնատեր էր խնամում: Էդ թանկ կյանքը էստեղ նաղդեր, էլի՞... թե՞ սահմանի վրա ռաստամոժկա անելուց է մորդ տիպարը թանկացել:

ԶԱՐԱ - Ես իր կյանքն էր ապահովագրել ու ենթարկվել է վթարի:

ԳՈԳԻ - Այսի՞նքն...

ԶԱՐԱ - Ի՞նչ կա չհասկանալու,

խնամարկյալ պարոն Ջորջի միջնորդությամբ ու երաշխավորությամբ կյանքն ապահովագրել էր մեկ միլիոն դոլարով:

ԳՈԳԻ - ԱՊՊԱ է արե՞լ:

ԶԱՐԱ - Չգիտեմ՝ դա ինչպես է կոչվում, բայց մեկ շաբաթ առաջ... (Թաշկինակը հպում է աչքերին:): Մեկ շաբաթ առաջ խեղձ մերս ընկել է ավտոյի տակ...

ԳՈԳԻ - (հրձվանքով ծափ է տալիս): Ա՛յ, հաջողություն եմ ասե՛լ...

ԶԱՐԱ - Դե-դե... Զեզ հավաքի: Ի վերջո քո զոքանչն է... նախկին:

ԳՈԳԻ - Չհամարձակվե՛ս: Մենք փաստաթղթով դեռ ամուսնալուծված չենք:

ԶԱՐԱ - Թքա՛ճ փաստաթղթի վրա: Էդ թղթի կտորը ոչ մի կապ չունի:

ԳՈԳԻ - Ո՞նց թե կապ չունի... Ուրեմն էնքան կապդ կտրած ես, որ հարազատ ամուսնո՞ղ, ով աշխարհի չափ քեզ սիրում է...

ԶԱՐԱ - Սիրում է՞...

ԳՈԳԻ - Սիրում ու երազում է՞...

ԶԱՐԱ - Երազում է՞...

ԳՈԳԻ - Երազում ու կարոտում է՞... (Կանգնում է նստած Ջարայի դիմաց:): Հե՛նց՝ կարոտում է:

ԶԱՐԱ - (հայացքն ընկնում է Գոգիի գոտկատեղին, խալաթի տակից ցցվել է հովհարը): Ա՛...

ա՛-ա՛հ... Գոգի... դու... դու իսկապես... ինչքա՛ն ես կարոտել ինձ...

ԳՈԳԻ - (խռովկան ամաչկոտությամբ): Բա որ ասում ե՛մ...

ԶԱՐԱ - (հայացքը նրա գոտկատեղից չկտրելով, հիացած): Իսկ ես, հիմարս, չէի հավատում խոսքերիդ:

ԳՈԳԻ - (հաշտվողական մեղմությամբ տեղում օրորվում է): Խոսքերն անգոր են արտահայտելու՝ թե ինչքա՛ն եմ քեզ կարոտել:

ԶԱՐԱ - Պետք չէ, պետք չէ բացատրել, տեսածս էլ հերիք է:

ԳՈԳԻ - (թևատարած): Ընձո՛ղտս...

ԶԱՐԱ - (ոտքի ելնելով): Վագրի՛կս...

Գրկախառնվում են: Հնչում է ֆոքստրոտը, երջանիկ պտտվելով գնում են դեպի մնջարան:

ԳՈԳԻ - (կնոջից ծածուկ հովհարը գոտկատեղից հանում, շարտում ու գոռում է): Մենք ննջարա՛ն ենք մտնում... Մտնում ենք ննջարա՛ն...

ԶԱՐԱ - (կանգ առնելով): Հիմա՞ ինչու ես գոռում:

ԳՈԳԻ - Որովհետև կատարվեց երազանքս, թող հարևաններն իմանան, թե որքա՛ն երջանիկ եմ: (Գոռում է:) Մենք մտնում ենք ննջարա՛ն...

ԶԱՐԱ - Մենք ննջարան ենք մտնում...

Պարելով գնում են: Կարճ դարար: Դռան զանգ, որը դադարներով կրկնվում է, ապա մտնում է Արմոն:

ԱՐՄՈ - (շուրջը նայելով): Դուռը բաց են թողել ու ոչ ոք չկա՛... Է՛յ, տաքսի պատվիրե՛լ եք... Կարո՞ղ է, արդեն հոշոտել են իրար... (Գնում է ննջարան:)

Արմոնի գնալուն պես խոհանոցից հայտնվում է սավանով փաթաթված Վիկան:

ՎԻԿԱ - Սրիկայի մեկը... Ինձ տնով մեկ ֆոռացնում է, իսկ ինքը կնոջ հետ անկողին է մտնում: (Փնտրում է շրջագզեստը:) Ծորերս ի՞նչ եղան... (Գնում է խոհանոց:)

Լանջաբաց գիշերախալաթով մտնում է Յուդաբերը:

ՅՈՒՂԱԲԵՐ - Էս ո՞ր գնաց... Երևի հագնվում է: (Զննում է բազկաթոռը:) Բա լավ, սրա գլխից մի մազ չի ընկնո՞ւմ, տանեմ թուղթուզիր անեմ:

Ետ-ետ քայլելով, ապշած, մտնում է Արմոն:

ԱՐՄՈ - Ա՛յ քեզ հոշոտում... Փշրանքներն էլ հետն են ուտում: (Գայթելով նստում է բազմոցին ու նկատելով Յուդաբերին՝ ոտքի է ելնում:) Բարև ձեզ:

ՅՈՒՂԱԲԵՐ - (զարմացած): Բարև:

ԱՐՄՈ - *(կարծելով՝ Վիկան է):* Ձեր հետևից եմ եկել, արագացրեք, գնանք այստեղից:

ՅՈՒՂԱԲԵՐ - Իմ հետևի՛ց...

ԱՐՄՈ - Հա, քանի Գոգիի կինը ձեզ չի բռնացրել:

ՅՈՒՂԱԲԵՐ - Զարան ետ ա գալի՞:

ԱՐՄՈ - Նա արդեն եկել է, Գոգին զանգահարեց ու ասաց, որ գամ՝ ձեզ առևանգեմ:

ՅՈՒՂԱԲԵՐ - Բռնաբարե՛ս...

ԱՐՄՈ - Ոչ թե բռնաբարեմ, այլ՝ առևանգեմ:

ՅՈՒՂԱԲԵՐ - Հա՛, ի՞նչ տարբերություն...

ԱՐՄՈ - Դե, ոնց բացատրեմ... մի խոսքով, մեզ շտապ հեռանալ է պետք այստեղից:

ՅՈՒՂԱԲԵՐ - Միասի՛ն...

ԱՐՄՈ - Միասին, միասին: Ծտապեք: Մեքենան դրսում է:

ՅՈՒՂԱԲԵՐ - *(խանդավառված):* Մեքենա պետք չի, ջա՛ն, տունս երկու քայլի վրա է: Գնացի՛նք: *(Արագաքայլ դուրս է գնում:)*

Արմոն ստուգողական չորս կողմը մայելով, ոտնաթաթերի վրա, անձայն, փորձում է դուրս գալ, բայց Վիկայի մուտքը ստիպում է գամվել տեղում:

ՎԻԿԱ - *(Արմոյին չնկատելով):* Վախկոտի մեկը, կնգա ահից շորերս գյոռել է... սրան տես, ինձ է ֆոռացնում...

ԱՐՄՈ - Բարև ձեզ:

ՎԻԿԱ - *(ինքնաբերաբար):* Բարև: Էնպես ֆոռացնեմ, որ անունդ մոռանաս... *(Սթափվելով՝ շրջվում է Արմոյին:)* Դուք... դուք ո՞վ եք...

ԱՐՄՈ - Արմոն:

ՎԻԿԱ - Տաքսու վարո՞րդ:

ԱՐՄՈ - Հա, վարորդ, վարորդ:

ՎԻԿԱ - Ինձեներ:

ԱՐՄՈ - Ինձեներ:

ՎԻԿԱ - Գոգիի ընկերը:

ԱՐՄՈ - Հա, ընկերը:

ՎԻԿԱ - Եկել ես նրան օգնության:

ԱՐՄՈ - Եկել եմ: Բայց որտեղի՞ց գիտեք, որ...

ՎԻԿԱ - Ես ամեն ինչ գիտեմ, բացի այն բանից, թե որտե՞ղ են իմ շորերը:

ԱՐՄՈ - Կարծում եմ՝ ննջարանում:

ՎԻԿԱ - Ի՞նչ ննջարան... ես այստեղ եմ հանվել:

ԱՐՄՈ - Դե... երբ ուղեղն անջատվում է ու միայն զգայարաններն են գործում...

ՎԻԿԱ - Ոչ մի զգայարան էլ չի գործել, մանավանդ ձեր ընկերոջ զգայարանը:

ԱՐՄՈ - Որովհետև նա չի հասցրել իրեն դրսևորել:

ՎԻԿԱ - *(հեզնական):* Դրսևորեց, տեսանք: *(Հավաքում է Գոգիի շարտված շորերը:)*

ԱՐՄՈ - Կներեք... իսկ դուք հրե՞ջն եք, ընձո՞ղտը, գա՞յլը, թե՞ անասունը:

ՎԻԿԱ - Հրեշն ու անասունը ննջարանում են, իսկ ես Վիկան եմ:

ԱՐՄՈ - Ուրեմն՝ ընծուդուն եք:

ՎԻԿԱ - Անալի խոսելու փոխարեն, նախկին ինժեներ, սպասիր ինձ այստեղ, մինչև զամ ու կատարես ընկերական պարտականություններդ: *(Դուրս է գնում):*

Արմոն կանգնում, զննում է սենյակը: Մտնում է Իռան և նկատելով թիկունքով կանգնած տղամարդուն, ոտքերի թաթերի վրա, չարածճի մտտեմում, ափերով փակում է նրա աչքերը:

ԻՌԱ - *(կոշտ ծայնով):* Գուշակիր՝ ի՞նչ է սպառնում մեզ:

ԱՐՄՈ - Եթե քո կինը մեզ չբռնացնի՝ ոչինչ էլ չի սպառնում:

ԻՌԱ - Իմ կի՞նը... *(Ետ է քաշվում ու շրջված Արմոյին տեսնելով՝ ապշում):* Արմո՞...

ԱՐՄՈ - Իռա՞...

ԻՌԱ - Ինձ թվաց, թե Գոգին է...

ԱՐՄՈ - Ինձ էլ թվաց, թե Գոգին է...

ԻՌԱ - Բայց նրա կինն ի՞նչ գործ ունի այստեղ: Գոգին ինձ ասել է, որ վաղուց ամուսնալուծված է:

ԱՐՄՈ - *(ծամծամում է):* Ճիշտն ասած, այդպես գիտեմ, բայց... ինչե՛ր չեն պատահում: Կարող է հանկարծ խանդից կուրացած մտնի ներս ու...

ԻՌԱ - Բռնացնի՞:

ԱՐՄՈ - Ըմմ... հա, բռնացնի:

ԻՌԱ - Բայց ի՞նչ վատ բան կա, որ դու եկել ես ընկերոջդ մոտ:

ԱՐՄՈ - Գիտես... ըմմ... դա մի պատմություն է, որ... Մի խոսքով, ցանկալի չէ, որ նա իմանար, թե ինչ նպատակով եմ եկել այստեղ:

ԻՌԱ - Լպատակո՞վ... Դու վատ նպատակով ե՞ս այստեղ:

ԱՐՄՈ - Դե... նայած որ տեսակետից... իմ և Գոգիի տեսակետից դա բոլորովին էլ վատ չի, բայց... քո, կամ նրա կնոջ համար... ինչպես ասեմ... մի խոսքով, դա քեզ ասելու բան չի:

ԻՌԱ - Ինձ ասելու բան չի՞...

ԱՐՄՈ - Իռա, ուզում եմ քեզ անկեղծորեն խոստովանել... Այսօր պետք է քեզ զանգեի, նախագուշացնեի, որ հանկարծ այստեղ չգաս:

ԻՌԱ - Ինչու՞...

ԱՐՄՈ - Ինչպե՞ս ասեմ, որ քեզ համար վիրավորական չլինի... Գոգին այսօր զբաղված է: Ինձ կանչեց...

ԻՌԱ - Կնոջից գաղտնի՞...

ԱՐՄՈ - Հա, իհարկե, կնոջից գաղտնի:

ԻՌԱ - *(արհամարհական):* Գոնե դուռը ներսից կողպելիք, բա որ կի՛նը ներս մտներ:

ԱՐՄՈ - Փառք Աստծո, որ չի մտնում:

ԻՌԱ - (*զզվանքով*): Եվ վաղո՞ւց է, որ դուք... մտերիմներ եք:

ԱՐՄՈ - Վաղուց:

ԻՌԱ - Այդքանից հետո, դու ինձ՝ քո հարազատ մորաքրոջ աղջկան, ծանոթացրիր, բարեխոսեցիր, որ նրա հետ ամուսնանամ:

ԱՐՄՈ - Դե, ես մտածում էի, որ... ամեն ինչ իր տեղը կընկնի, կամուսնանաք, կբախտավորվես:

ԻՌԱ - Դա բախտավորությունն ես համարում:

ԱՐՄՈ - Ի՞նչ, Աստծու սիրուն, խնդրում եմ ինձ ձիշտ հասկանաս...

ԻՌԱ - Աստծուն հանգիստ թող, պի՛ղծ...

ԱՐՄՈ - Բայց նա ինձ զանգահարեց ու ասաց... ասաց, որ վառվում է... Ես չէի կարող նրան մերժել:

ԻՌԱ - (*ծաղրանքով*): Դու նրա հրշե՞ջն ես:

ԱՐՄՈ - Չէ... տաքսիստն եմ:

ԻՌԱ - Դա արդեն տաքսիստ է կոչվում:

ԱՐՄՈ - Ի՞նչ, մտիր իմ դրության մեջ...

ԻՌԱ - Զո դրության մեջ... (*Սպանիչ ծաղրով*): Դու արդեն իմ դրության մեջ ես, էլ ինչպե՞ս մտնեմ:

ԱՐՄՈ - Լրիվ հակառակը... հիմա կնկարագրեմ ու դու կպատկերացնես: Ուրեմն...

ԻՌԱ - (*ծջում է*): Վե՛րջ տուր: Ձեր այլանդակությունների մանրամասներն ինձ չեն հետաքրքրում: (*Կտրուկ դուրս է գնում, շեմին շրջվելով*): Հայտնիք... մտերիմին, որ վաղն իսկ իր նվերը կվերադարձնեմ:

ԱՐՄՈ - Ի՞նչ, սպասիր բացատրեմ...

ԻՌԱ - Մարեք ձեր հրդեհներն առանց բացատրությունների: Տաքսիստ: (*Գնում է*):

Արմոն փվում է բազկաթռոհն, գլուխն առնում ափերի մեջ: Ննջարանից մտնում է սավանով փաթաթված Ջարան, չնկատելով Արմոնին, սեղանիկից վերցնում է սիգարետի տուփը, ծխախոտ է վառում, հաճույքով ծխում է:

ՋԱՐԱ - Ա՛խ, ինչպիսի՛ հանդիպում...

ԱՐՄՈ - (*կարծելով՝ դարձյալ Վիկյան է, հեզնում է*): Իսկապե՞ս....

ՋԱՐԱ - Ա՛հ, լռիր... մի խոսիր... մոտեցիր ինձ... մոտեցի՛ր... մոտեցի՛ր, ասում եմ: (*Արմոն վարանոտ մոտենում է*): Գրկիր ինձ... առ ինձ քո առնական թևերի մե՛ջ... (*Արմոն թիկունքից գրկում է նրան*): Համբուրիր ինձ... փշրի՛ր ինձ... (*Արմոն, աճող կրքոտությամբ, սկսում է համբուրել*): Վագրի՛կս...

ԱՐՄՈ - Ընձո՞ղտս...

ՋԱՐԱ - Ա՛հ... ինձ կոպիդ բառեր ասա... դե ասա՛, ասա՛...

ԱՐՄՈ - (ծարահատ): Ժայռ...

ԶԱՐԱ - Ա՛հ... էլի՛... էլի՛ ասա...

ԱՐՄՈ - Անտաշ քար...

ԶԱՐԱ - Հայհոյի՛ր ինձ... հայհոյի՛ր...

ԱՐՄՈ - Թաղեմ բոյդ...

ԶԱՐԱ - Ա՛հ... էլի՛... էլի՛... (Շրջվում է Արմոյին, անակնկալի եկած՝ հրում:) Ա՛հ... դուք... դուք ո՞վ եք...

ԱՐՄՈ - (շփոթված): Արմոն:

ԶԱՐԱ - Արմոն ո՞վ է...

ԱՐՄՈ - Հրշեջ... ըմմ... տաքսիստ...

ԶԱՐԱ - Հետո ի՞նչ, որ՝ տաքսիստ... Սա քեզ համար տաքստպարկի սերվիսը չի, դո՛ւրս այստեղից:

ԱՐՄՈ - Բայց... բայց դուք եք պատվիրել...

ԶԱՐԱ - Ես ոչ մի բան էլ չեմ պատվիրել:

ԱՐՄՈ - Ձեր ամուսինն է պատվիրել... անձամբ ինձ հետ խոսեց:

ԶԱՐԱ - Նա պատվիրել է, որ գաք ինձ գրկեք, համբուրե՛ք...

ԱՐՄՈ - Ոչ, ոչ... նա ասաց, որ ձեզ պետք է մի տեղ տանեմ:

ԶԱՐԱ - Ո՛ւր:

ԱՐՄՈ - Ուր որ կուզեք:

ԶԱՐԱ - Ես ոչ մի տեղ էլ չեմ ուզում գնալ: Մեզ մեքենա պետք չի, դո՛ւրս... (Գնում է ննջարան:)

ԱՐՄՈ - Ա՛յ քեզ փորձանք... Հիմա ինչ անեմ, գնա՛մ, թե՞ մնամ: Երևի իրեն հարցնեմ: (Զանգում

է, սեղանիկին դրված Գոգիի հեռախոսը զանգահարում է: Հեռախոսը վերցնում, մոտենում է ննջարանի դռանը, հատակին դնելով հրում է ներս:)

Հագով մեծ շալվարը երկու ձեռքով բռնած, Գոգիի վերնաշապիկը հագած, մտնում է Վիկան:

ՎԻԿԱ - (չնկատելով Արմոյին): Հե՛յ, տաքսի՛ստ...

ԱՐՄՈ - (կարծելով, թե Զարան է): Գնում եմ, գնում... (Ուղղվում է դեպի ելքը:)

ՎԻԿԱ - Ո՛ւր ես գնում, մոտ արի, շալվարդ արձակիր:

ԱՐՄՈ - Տե՛ր Աստված, հիմա էլ սա... Ի՞նչ դրա ժամանակն է, շտապեք, գնանք այստեղից:

ՎԻԿԱ - Մո՛տ արի, ասում եմ:

ԱՐՄՈ - Կամա՛ց, մի՛ գոռա: (Մոտենում է:)

ՎԻԿԱ - Արձակի՛ր շալվարդ:

ԱՐՄՈ - Ես... ես դեմ չեմ, բայց մի ուրիշ տեղ գնանք...

ՎԻԿԱ - Ի՞նչ ուրիշ տեղ, գոտիդ հանիր, ինձ տուր, չե՞ս տեսնում վրայիցս ընկնում է:

ԱՐՄՈ - Ախ, հա՛... (Գոտին արձակում, մեկնում է նրան:)

Շուտ արեք, խնդրում եմ:

ՎԻԿԱ - (արհամարհական): Ձեր շուտ անելը չտեսանք: (Գոտին վերցնում, դուրս է գնում:)

Մտնում է Յուզաբերը:

ՅՈՒՂԱԲԵՐ - Վա՛յ, պառապեցի սպասելով... էս ինչի՞ չես գալի՛ր...

ԱՐՄՈ - (անցուդարձից գլուխ չհանելով, մոլորված): Ախր, ո՞ր գամ:

ՅՈՒՂԱԲԵՐ - Բա չասի՞, դիմացի դուռն ա՛... (Բռնելով Արմոյի ձեռքից՝ դուրս է տանում:)

Նրանց դուրս գալուն պես մտնում է **ԳՈԳԻ** շորերը հագած Վիկան:

ՎԻԿԱ - Տաքսի՛ստ, ո՞ր կորար...

Բջջային հեռախոսը ձեռքին մտնում է **ԳՈԳԻ**:

ԳՈԳԻ - (թիկունքով կանգնած Վիկային Արմոյի տեղ ընդունելով): Արմո ջա՞ն, եկե՛լ ես: (Դեպի ննջարան:) Կյա՛նք, այստեղ ոչ մի տաքսիստ էլ չկա:

ՎԻԿԱ - (կտրուկ շրջվելով՝ հեզնում է): Կյա՛նք, այստեղ մի ուղևոր կա:

ԳՈԳԻ - (անակնկալի եկած): Վիկա՞...

ՎԻԿԱ - Ոչ թե Վիկա, այլ՝ ընծուղտ, եղնիկ, գայլուհի, ավանակ...

ԳՈԳԻ - Ավանա՞կ... այդպիսի բան չեմ ասել:

ՎԻԿԱ - Դա ե՛ս եմ քեզ ասում:

ԳՈԳԻ - Դե, գիտե՞ս ինչ... չափո՞ ձանաչի, թե չէ...

ՎԻԿԱ - Թե չէ՛՝ ի՞նչ, կնկանդ կմատնես, թե որ սենյակներով եմ ֆռֆռո՞ւմ: Ծորերս ո՞ր են:

ԳՈԳԻ - Ծորե՞րդ... բազմոցի մեջ են: (Մոտենում, բազմոցից հանում է Վիկայի շորերն ու նույն պահին աչքն ընկնում է ննջարանի կողմը: Վախեցած:) Վա՛յ...

ՎԻԿԱ - Ի՞նչ պատահեց:

ԳՈԳԻ - Վա՛յ-վա՛յ-վա՛յ, այստեղ է գալիս: (Վիկային.) Ծուտ արա, գնա այստեղից, խնդրո՞ւմ եմ...

ՎԻԿԱ - Վախկո՞տ: (Ծրջվում ու դռների մեջ շփոթվելով՝ մտնում է խհանոց:)

ԳՈԳԻ - (շորերը օգուս է բազմոցի ետևը: Չնկատելով, որ Վիկայի շրջազգեստը մնաց բազմոցի թիկնակին, շրջվում, գրկաբաց ընդառաջ է գնում): Էն ո՞ւմ երկինքն ա գալի՛... Էն ո՞ւմ երկիրն ա գալի՛... Էն ո՞ւմ արևն ա գալի՛... Էն ո՞ւմ լուսինն ա գալի՛... Էն ո՞ւմ...

ԶԱՐԱ - Գոգի՞, էդ ինչ կնոջ ձայն է, ո՞վ էր եկել:

ԳՈԳԻ - Ո... ոչ ոք էլ չի եկել... ի՞նչ ձայն, ի՞նչ բան...

ԶԱՐԱ - Ես պարզ լսեցի, խիստ վրդովված անկապ բառեր էր ասում՝ ընծուղտ, եղնիկ, գայլ, ավանակ...

ԳՈԳԻ - Հա՛... ես էի հայիոյում:

ԶԱՐԱ - Հայիոյում... կնոջ ձայնո՞վ...

ԳՈԳԻ - Հուզմունքից... բարկությունից ձայնս խզվեց: (Իբր կրկին

հուզվում է, կանացի ծայնով:) Էդ անամոթ ընծուղտը... դաժան գայլը... խոտակեր եղնիկը... էդ-էդ ավանակը... մտնելով մեր տուն, գողացել է շորերս...

ԶԱՐԱ - (վախվորաժ): Չորս հոգով...

ԳՈԳԻ - Մենակ... սրիկան տաք-սիստի անվան տակ տունը թալանել էր ուզում: Լավ է, ներս մտա... ինձ տեսնելով՝ շորերս ծանկեց ու փախավ:

ԶԱՐԱ - (տղամարդու ծայնով): Վա՛յ ես դրա տիրոջ մերը... (Նկատելով շրջագետսը՝ դավադիր:): Ասում ես՝ հուզմունքի՞ց...

ԳՈԳԻ - Հ-հուզմունքից, ս-սիրելիս, հուզմունքից...

ԶԱՐԱ - (սպանալից առաջանում է: Տղամարդու ծայնով): Բա սա ո՞ւմ շրջագետսն է:

ԳՈԳԻ - (կանացի ծայնով): Ծրջա... շրջագետսը... ահա, այս շրջագետսը...

ԶԱՐԱ - Որտե՞ղ ես թաքցրել լրբիդ:

ԳՈԳԻ - Ոչ մի լիբ էլ չկա... դու... դու մի հուզվիր... ես... ես հիմա կբացատրեմ:

ԶԱՐԱ - Հիմա նրան կգտնեմ, Գոգի տղա, ու դու հուզվելը կտեսնես: (Գնում է խոհանոց:)

ԳՈԳԻ - Սպասիր՝ բացատրեմ... (Հետևում է նրան՝ գոռալով:): Խոհանոց... խոհանոց է մտնում...

(Ձայնը՝ ներսից:) Հիմա էլ պատշգամբ... պատշգամբ է մտնում... (Ննջարանից սարսափահար դուրս է վազում Վիկան ու մտնում է խոհանոց:): Մտնում է միջանցք... հիմա էլ ննջարան... ննջարան է մտնում...

ԶԱՐԱ - (ձայնը՝ ներսից): Միևնույն է, կգտնե՛մ... (Սենյակ մտնելով՝ շարունակում է հետապնդումը:): Կգտնե՛մ, Գոգի տղա... (Մտնում է խոհանոց:)

ԳՈԳԻ - (շրջագետսն ու բջջայինը ձեռքին, ննջարանից դուրս գալով): Էս ինչ կրակ էր... (Հետևում է կնոջը՝ գոռալով:): Գալիս է դեպի պատշգամբ...

Միմյանց հետապնդելով ու հալածվելով նրանք, հերթով, հայտնվում ու դուրս են վազում:

ԶԱՐԱ - (նրա ձեռքին արդեն ատրժանակ կա, որը վեր պարզած կրակում է): Կանգնե՛ք, կկրակե՛մ...

ԳՈԳԻ - (ներս մտնելով, շունչը մի կերպ ետ բերելով, հեռախոսով): Ալո՞... Արմո, խնդրում եմ, շտապ մեր տուն գաս... որպես բժիշկ, իբր՝ շտապօգնություն... Ի՛նչ տաքսիստ, ի՛նչ ինժեներ, դու հիմա բժիշկ ես... արագացրու... (Ծարունակում է վազքը:)

ՎԻԿԱ - (մտնում ու դուրս է վազում): Օգնեցե՛ք...

ԶԱՐԱ - (օդ կրակելով): Մա՛հ դավաճանների՛ն...

ԳՈԳԻ - (հեալով մտնում, կանգ է առնում, հեռախոսով): ...Մտիր դիմացի մայթի ռեստորանն ու շեֆ խոհարարից սպիտակ խալաթ վերցրու, որ բժշկի տեսք ունենաս... ո՛տքն է կոտրել, ո՛տքը... ձա՛խը, թե ա՛ջը... նշանակություն չունի, մինչև գալը կկոտրվի՝ կիմանանք, արագացրո՛ւ... (Շարունակում է վազքը:)

ՎԻԿԱ - (մտնում ու դուրս է վազում): Փրկեցե՛ք...

ԶԱՐԱ - (մտնում ու դուրս է վազում): Մա՛հ անբարոյականների՛ն...

Գոգին, հերթական անգամ մտնելով, կանգնում ու հետևից վազքով եկող Ջարային ոտք է գցում: Ջարան փռվում է հատակին:

ԳՈԳԻ - (վրա հասնելով՝ գրկում է): Վախ, Ջար ջան, ո՞ր ոտքդ կոտրեցիր...

ԶԱՐԱ - (փորձում է ազատվել): Բա՛ց թող... բա՛ց թող, դավաճա՛ն...

ԳՈԳԻ - Վա՛յ, հաստատ կոտրել ես... Չշարժվես, ցավդ տանեմ, կարող է՝ ողնաշարդ էլ վնասված լինի: Հաստատ՝ ողնաշարդ էլ ես վնասել: (Գրկում, տեղափոխում է բազմոցին:)

ԶԱՐԱ - (դերի մեջ մտնելով): Վա՛խ... վախ, ո՛տքս... վախ, ողնաշա՛րս...

ԳՈԳԻ - Պառկիր, ցավդ տանեմ, կտրուկ շարժումներ չանես: (Բազմոցի ետևից հանում է Վիկայի հագուստն ու դրանցով «վիրակապում է» կնոջ ոտքը՝ վրայից փաթաթելով բազկաթռնի ծածկոցը:) Հիմա բժիշկ կկանչեմ, չանհանգստանաս, ամեն ինչ լավ կլինի...

ԶԱՐԱ - Ա՛խ... վա՛խ... վա՛խ...

ԳՈԳԻ - (զանգում է): Ալո, շտապօգնություն, ի՞նչ եղաք, շտապե՛ք, Մետալուրգների փողոց, 15 շենք, բնակարան 17... կնոջս ոտքն է կոտրվել...

ԶԱՐԱ - Նաև ողնաշարը:

ԳՈԳԻ - Նաև ողնաշարը:

ԶԱՐԱ - Անտանելի ցավում է:

ԳՈԳԻ - Անտանելի ցավում է:

ԶԱՐԱ - Արագացրեք:

ԳՈԳԻ - Արագացրե՛ք... (Ջարայի ոտքը գրկում, համբուրում է:) Ցավդ տանեմ, շատ է՞ ցավում:

ԶԱՐԱ - Ա՛խ, անտանելի ցավ է, բայց մյուս ոտքս գրկիր, մյուսն է կոտրվել... ա՛խ...

ԳՈԳԻ - («չվիրակապված» ոտքն է գրկում, համբուրում): Ուր որ է բժիշկը տեղ կհասնի, ասաց՝ արդեն փողոցում է: (Չնկատելով, որ խոհարարի թասակ դրած ու գոգնոց կապած Արմոն

սենյակ է մտել՝ բջջայինով:) Ալո, բժիշկ, ո՞ր հասաք, եկեք, է՛...

ԱՐՄՈ - *(հեռախոսն ականջին հպելով):* Ես արդեն ձեր տանն եմ:

ԳՈԳԻ - *(նկատելով նրան՝ հանդիմանանքով):* Նախ պետք է դռան զանգը տալ:

ԱՐՄՈ - Ախ, հա... ներեցեք: *(Ետ է գնում, հնչեցնում է դռան զանգը, միջանցքից:)* Ալո՞, կարելի՞ է ներս մտնել:

ԳՈԳԻ - Ո՞վ է:

ԱՐՄՈ - Արմոն է... այսինքն՝ բժիշկը: *(Մտնում, կանգնում է այնպես, որ պառկած Ջարան չտեսնի իրեն: Չայնը փոխած:)* Բժիշկ կանչե՛լ եք, ի՞նչ է պատահել:

ԳՈԳԻ - Իհարկե, կանչել ենք, համեցե՛ք, համեցե՛ք:

ՋԱՐԱ - Հա, բժիշկ ջան, ա՛խ... կանչել ենք... ոտքս...

ԱՐՄՈ - *(շոշափում, զննում է Ջարայի ոտքը):* Բայց ինձ ասացին, որ նաև ողնաշարն է վնասվել:

ՋԱՐԱ - Հաստատ վնասվել է, բժիշկ ջան, ախր, շատ անհարմար դիրքով ընկա:

ԱՐՄՈ - *(շարունակելով զննումը):* Խոր, շատ խոր կոտորվածք է...

ՋԱՐԱ - Բժիշկ, դուք ազդրս եք շոշափում... ներքև իջեք, սրունքս է կոտորվել... ա՛խ...

ԱՐՄՈ - *(ձեռքերն իջեցնում է ներքև):* Խոր, շատ խոր կոտորվածք է... *(Գործնական:)* Լավ, ամեն ինչ պարզ է: Չշարժվեք, քանի դեռ ոտքի և ողնաշարի համապատասխան մասնագետը չի զննել և իր եզրակացությունը չի տվել: Ամենակարևորը՝ շտապ պետք է փակեք ձեր աչքերը:

ՋԱՐԱ - Փակեմ աչքե՞րս... ինչո՞ւ փակեմ:

ԱՐՄՈ - Ըմմմ... Նման դեպքերում լույսը վնաս է հասցնում կլինիկական պաթոլոգիային և առաջացնում ողնաշարի չբուժվող հիվանդություններ՝ արտոս, պորտոս, արամիս...

ՋԱՐԱ - Ա՛խ, անտանելի ցավ է... Գոգի, շուտ արա, աչքերս կապիր: *(Ափերով փակում է աչքերը:)* Իսկ ոտքի ու ողնաշարի մասնագետը շո՞ւտ կգա... ա՛խ...

ԱՐՄՈ - Ես հայտ կներկայացնեմ և վաղն իսկ նա կայցելի ձեզ: *(Գոգիին.)* Ասացի՛ կապեք հիվանդի աչքերը: *(Հատակից բարձրացնում, մեկնում է Վիկայի կրծկալը, որը վրիպել էր Գոգիի ուշադրությունից:)* Ահա աչքերի կապը:

ԳՈԳԻ - *(ժանկելով կրծկալը՝ կապում է կնոջ աչքերը):* Բժիշկ, իսկ բուժումը քանի՞ օր կտևի: Բանն այն է, որ մեր սիրելի մայ-

րիկը վթարի է ենթարկվել և մենք պատրաստվում ենք մեկնել Լոս Անջելես՝ նրա կտակած մեկ միլիոն դոլարն ստանալու:

ԱՐՄՈ - Մը...մը... մմեկ մի-իլիոն...

ԳՈԳԻ - Հա, ինչ մի զարմանալու բան կա որ... Միլիոն է, էլի: Նա իր միակ դստերը՝ Ջարային ու նրա ամուսնուն է կտակել իր կյանքի ապահովագրական գումարը:

ԱՐՄՈ - Ջար-զար-զար..ամուսնո՞ն...

ԳՈԳԻ - *(ինքն իրեն ցույց տալով):* Ամուսնուն, իհարկե, ամուսնուն:

ԱՐՄՈ - Իսկ ս-ս-սիրելի մ-մ-ա-յ-րիկը... մը... մը... մը...

ԳՈԳԻ - *(հուշում է):* Միլիոն:

ԱՐՄՈ - Չէ: Մը... մը... մը...

ԳՈԳԻ - Մե՛կ, մեկ միլիոն:

ԱՐՄՈ - Չ-չէ... մը... մը...մահացե՛լ է, թե՞ ծանր վիրավոր է:

ԳՈԳԻ - Դե... ինչպես ասեմ... մայրիկը հանուն մեր նկատմամբ ունեցած անկեղծ սիրո... պատրաստ է ամեն վայրկյանի, երբ էլ մենք ցանկանանք...

ԱՐՄՈ - Դա հրա՛շք է:

ԳՈԳԻ - Ասիր ու թողի՞ր, կտակի կրկնօրինակն էլ մեզ է ուղարկել:

ԱՐՄՈ - Բո անունը գրա՞ծ է:

ԳՈԳԻ - Կոնկրետ իմ անունը չկա, բայց սևով սպիտակի վրա գրված է՝ ա-մուս-նուն:

ՋԱՐԱ - Ա՛խ, ա՛խ...

ԳՈԳԻ - Ի՞նչ եղավ:

ՋԱՐԱ - Ոտքս...

ԳՈԳԻ - Ոտքդ՝ ի՞նչ... *(Հիշելով):* Ա՛խ, հա՛, ոտքդ, շա՛տ է ցավում, կյա՛նք:

ՋԱՐԱ - Ողնաշարս էլ...

ԳՈԳԻ - *(բարկացած):* Բժիշկ, վերջապես դուք օգնելո՞ւ եք իմ սիրելի կնոջը, թե՞ ոչ:

ԱՐՄՈ - Անշուշտ, անշուշտ: Ես միայն առաջին բուժօգնությունն եմ ցույց տալիս: Վաղն իսկ... բայց... բայց ինչո՞ւ վաղը, հենց այսօր... այսօր իսկ ես ոտքի և ողնաշարի մասնագետ կիրավիրեմ:

ԳՈԳԻ - *(բազմանշանակ շարժումներ անելով):* Այդ դեպքում բուժքրոջ հետ գնացեք և անմիջապես այստեղ ուղարկեք ողնաշարի մասնագետին:

ԱՐՄՈ - *(գլխի չընկնելով):* Բուժքրոջ... Բուժքրոջ հե՛տ...

ԳՈԳԻ - *(ավելի եռանդագին շարժումներով):* Հա, բուժքրոջ... նա, որ ձեզ հետ ներս մտավ:

ԱՐՄՈ - Ինձ հետ ներս մտա՛վ...

ԳՈԳԻ - Իհարկե, քեզ հետ, գրողը տանի... ներս մտաք, իսկ նա վատ էր զգում ու փորը բռնած մտավ տուալետ... *(Դեպի ննջարան ձգվելով):* Բուժքրոյր, բուժքրոյր Վիկտորիա, ձեր գնալու

ժամանակն է, դուք արդեն
զննում եք:

ԱՐՄՈ - *(վերջապես գլխի է ընկե-
նում):* Հա՛... *(Ոտքի է կանգ-
նում:)* Բուժքոյր... Բուժքույր
Վիկտորիա՛...

ԳՈԳԻ - Բուժքույր Վիկտորիա...

Մտնում է Յուդաբերը:

ՅՈՒՂԱԲԵՐ - *(մյուսներին անտե-
սելով՝ Արմոյին):* Վա՛յ, էս ի՞նչ
եղա՛ր, էս ո՞ր վազ տվի՛ր:

ԶԱՐԱ - *(հիվանդի հետո):* Ո՞վ է,
բուժքոյրն է:

ԳՈԳԻ - *(ձեռքի շարժումով Յուդա-
բերին հասկացնում է, որ նա լոխ
ու հեռանա: Զարային):* Բուժ-
քույրն է, էլ ո՞վ պիտի լինի, քեզ
ասում է՝ իզո՞ր վազ տվիր...
*(ժեստերով Արմոյին հասկաց-
նում է, որ Վիկային պետք է
կանչել, ու հեռանան այդտեղից:
Դեպի ննջարան՝ բարձր կան-
չում է:)* Բուժքույր Վիկտորիա՛...

ԱՐՄՈ - Բուժքույր Վիկտորիա՛...

ԶԱՐԱ - *(հիվանդի հետո):* Բուժ-
քույրը խո՞ւ է:

ԳՈԳԻ - Չէ, խուլ չէ:

ԶԱՐԱ - Բա ինչո՞ւ եք գոռում:

ԳՈԳԻ - Հուզմունքից... իհարկե,
հուզմունքից:

ԶԱՐԱ - Իսկ բժի՞շկը: Նա էլ է՞ հուզ-
վում:

ԳՈԳԻ - Բժիշկը... *(Արմոյին.)*
Բժիշկ, դուք ինչո՞ւ եք գոռում:

ԱՐՄՈ - Ըմմմ... Միթե՞ գոռացել եմ:

ԳՈԳԻ - Այո, ես էլ լսեցի, որ գոռա-
ցիք: *(Իբր կրկնում է նրան և դե-
պի ննջարան կանչում է:)*
Բուժքույր Վիկտորիա՛...

ԱՐՄՈ - *(ըմբռնելով ընկերոջ հնար-
քը):* Անկեղծ ասած, չեմ հիշում,
որ այդպես ասած լինեմ: *(Դեպի
ննջարան՝ բարձր:)* Բուժքույր
Վիկտորիա՛... ընդամենը նրա
հոգատարության համար ցան-
կացա ասել: *(Յուդաբերին՝ ցած-
րածայն ու սիրալիր:)* Բուժքույր
Վիկտորիա, շնորհակալություն
ձեր հոգատարության համար:

ՅՈՒՂԱԲԵՐ - Վա՛յ... մերսի ակամ-
պամիսնետի համա՛ր...

**Ննջարանի կողմից վախվորած
ծիկրակում է Վիկան:**

ԱՐՄՈ - *(նկատելով նրան՝ Արմո-
յին):* Ահա նա...

ԳՈԳԻ - *(խրախուսում է):* Մոտե-
ցեք, բուժքույր: *(Վիկան վախ-
վորած առաջանում է:)*

ԱՐՄՈ - Գնանք, բուժքույր, մեր
գործն ավարտեցինք, մնացա-
ծը՝ համապատասխան մասնա-
գետը կգա և ինչպես հարկն է
կզննի:

ԶԱՐԱ - Ա՛խ... սիրտս, բժիշկ ջան,
խնդրում եմ մի... մի վայրկյանով
մոտեցեք: *(Մինչ Արմոն ծարա-
հատ մոտենում է, Զարան քան-
դում է աչքերի կապն ու ընդոստ
նստելով՝ ատրձանակն ուղղում*

է նրանց վրա: Անակնկալի ե-
կած՝ չորսն էլ ձեռքները վեր են
տնկում:) Բուժքույրեր եք կան-
չում, հա՛, համապատասխան
մասնագետ եք կանչում, հա՛,
պաթոլոգիա՛, երեք հրացանա-
կիրնե՛ր... անբարոյական շա-
նորդիք: (Զենքը լիցքավորելով):
Հիմա ձեզ էնպես գննեմ, որ ձեր
մոր հարսանիքը հիշեք:

ՎԻՎԱ - Օգնեցե՛ք... (Փախչում է
ննջարան:)

ՅՈՒՂԱԲԵՐ - Վայ, մամա ջա՛ն...
(Հետևում է Վիկային:)

ԱՐՄՈ - (ընկրկելով): Չկրակես...
հան... հանձնվում եմ... (Խուժա-

պահար հետևում է Յուդաբե-
րին:)

ԳՈԳԻ - Զար ջան, խնայի՛...
(Հետևում է Արմոյին:)

ԶԱՐԱ - (օդ կրակելով): Մա՛հ
դավաճանների՛ն... (Նետվում է
նրանց հետևից:)

ՎԻՎԱ - (մտնում ու դուրս է վա-
զում): Փրկեցե՛ք...

ԱՐՄՈ - (մտնում ու դուրս է վա-
զում): Օգնեցե՛ք...

ՅՈՒՂԱԲԵՐ - Հասե՛ք...

ԳՈԳԻ - (մտնում ու դուրս է վազում՝
բջջայինը ականջին սեղմած):
Այր՛... ոստիկանություն... օգնե-
ցե՛ք...

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԳ

Նույն սենյակը: Բազմոցը կենտ-
րոն է բերված, որի կեսից դեպի
բեմառաջ ձգվող փշալարը
խորհրդանշում է ամուսինների
միջսենյակային սահմանը: Փշա-
լարերից կախ են թիթեղյա դա-
տարկ տուփեր: Բազմոցի
հետևում ցուցանակ՝ «ՉԵՁՈՔ
ԳՈՏԻ», դրա ներքո տարբեր ուղ-
ղությունների սլաքներով մակագ-
րություններ՝ «Ճոհանոց», «WC»,
«Ննջարան», «Պատշգամբ»:
Դրանց կողքին գունավոր քառա-
կուսիներ կան, որոնք խորհրդան-
շում են տվյալ տարածքի՝ այդ
պահին ազատ կամ զբաղված լի-
նելը (երբ վարագույրը բացվում է՝
«Ճոհանոց» և «WC» մակագ-
րությունների մոտ կարմիր քա-

ռակուսի է, իսկ «Ննջարանին»
ու «Պատշգամբին»՝ կանաչ):
Յուրաքանչյուրի հարկաբաժ-
նում՝ սեղանիկ, բազկաթոռ և այլ
կահույք՝ ըստ հայեցողության:
Գոգիի հարկաբաժնում աչքի է
զարնում «Շնորհավոր իմ 36-ամ-
յակը» պաստառը:
Առավոտ է: Թափանցիկ խալա-
թով, բարձր տրամադրությամբ,
երգ մնմալով, ձայնից մտնում է
Զարան՝ սուրճի բաժակը ձեռքին:
Նա «Ճոհանոցի» մագնիսով ամ-
րացրած կարմիր քառակուսին
պոկում, փոխարենը կացնում է
կանաչը, ապա կողմ դրած «Շնոր-
հավոր իմ 18-ամյակը» պաստառը
վերցնելով՝ տեղադրում է աչքի
ընկնող տեղում: Նույն պահին

«WC» հարկաբաժնից լավում է բաց թողնված ջրի ձայնն ու աջից մտնում է պիժամայով Գոգին, ով «WC»-ի կարմիր քառակուսին նույնպես փոխում է կանաչով, ապա սեղանիկից վերցնելով ձողիկով հյութը՝ նստում է բազմոցի աջ ծայրին, ձեռքն առնում նվազարկչի վահանակը: Ջարան անմիջապես, բազմոցի ձախ ծայրին նստելով՝ նույն կերպ է վարվում: Նրանք միաժամանակ սեղմում են կոճակները: Աջակողմից հնչում է «Յարխուշտան», ձախակողմից՝ ոռք երաժշտություն: Ի հեճուկս ամուսնու՝ Ջարան բարձրացնում է երաժշտության ձայնը, Գոգին նույնն է անում: Միմյանց թշնամական հայացքներ նետելով՝ ավելի ու ավելի են բարձրացնում երաժշտությունը, ապա սկսում են խելահեղ պարել՝ ամեն մեկն իր երաժշտության հանգույն:

Ակնոցն ու լրագիրը գլխից վեր թափահարելով, գիշերազգեստով ներս է խուժում ահաբեկված Մահակը: Նա գոռոռում, բողբոլում է, բայց ձայնը խլանում է ժխորում: «Յարխուշտայի» հանգույն Գոգին խոյահարում է նրան, Մահակը նույն կերպ պաշտպանվելով մահանջում է ձախ հարկաբաժին, որտեղ Ջարան պարի մեջ է քաշում նրան: Պարային անկամոն շարժումներ անող Մահակին վերջապես հաջողվում է նրանց ձեռքերից խլել վահանակներն ու անջատել երաժշտություն: Նախակին ամուսինները հևալով փվում են բազմոցին:

ՍԱՀԱԿ - Աս ի՞նչ կընեք, բարա՛մ,

աս ի՞նչ թեռոր է հարևաններու նկատմամբ: (Լրագիրը թափահարելով:) Ձեր վարմունքը մեծահարուստներուն չի վայելե՛ր: Առտու կանուխ լրագիրը կկարդամ, կհրժվի՛մ, կցնծա՛մ, որ հարևաններս միլիոնատեր դարձած են և հանկարծ՝ երկրաշա՛րժ, ցունամի՛, յարխուշտա՛... ԳՈԳԻ - Էդ մասին թերթում է գրա՞ծ:

ՍԱՀԱԿ - Մեկ միլիոն դոլար ժառանգելու մասին՝ այո, լրագիրը կհայտնե, սակայն ցունամին ես կսեպեմ և խստորեն կդատապարտեմ ձեր ահաբեկչական վարմունքը հարևաններու նկատմամբ:

ԳՈԳԻ - (ծողիկով հյութ խմելով): Դատապարտումն ու ցունամին քեզ պահի, էդ թերթը բեր, տեսնեմ՝ ի՞նչ է գրած:

ՋԱՐԱ - (ձեռքերը կանթելով՝ փակում է ծանապարհը): Պարոն Սահակ, չգնա՛ս: Էդ թերթը ինձ է հասնում:

ԳՈԳԻ - Սահակ, խելքդ կնգա մի տուր, արի: Ես քեզ վիզա եմ տալի, սահմանն անցի, բեր, տեսնեմ՝ ի՞նչ է գրած:

ՋԱՐԱ - Ոչ մի դեպքում: Միլիոնն էլ է իմը, թերթն էլ, Սահակն էլ:

ԳՈԳԻ - Իյա՛... Ո՞նց թե՛ Սահակն էլ...

ՋԱՐԱ - (սեթևեթ ընկնում է Սահակի թևը): Ի՛մ հարևանն է:

ԳՈԳԻ - Մե՛ր հարևանն է:

ԶԱՐԱ - Մենք ընդհանուր ոչինչ չունենք ու չենք կարող ունենալ:

ԳՈԳԻ - Մենք ընդհանուր ՉԱԳՍ-ի վկայական ունենք: Աստված հաջողի՝ մերդ մեռնի, ուզես-չուզես, որպես օրինական ամուսին՝ միլիոնի կեսն իմն է:

ԶԱՐԱ - Իմ օրինական ամուսինը կլինի նա, ում հետ նորից կզագասավորվեմ:

ԳՈԳԻ - Անամոթ, կես կվարտիրայում երկու մա՛րդ ես ուզում պահել:

ՍԱՀԱԿ - Պարոն Գրիգոր Միսակի, սկզբունքորեն և վճռականորեն պիտի խնդրեմ, որ իմ ներկայությամբ վսեմաշուք, պարկեշտ, գեղեցկատես և նազելի տիկնոջը վիրավորանք չհասցնեք: Ատիկա իմ սկզբունքներուն դեմ է:

ԳՈԳԻ - Պահո՛... Իմ դեմ խունտա եք ստեղծո՞ւմ:

ՍԱՀԱԿ - *(Չարային):* «խունթա» ի՞նչ ըսել է:

ԶԱՐԱ - Նրա ասածներին բանի տեղ մի դիր, պարոն Սահակ ջան, էն ի՞նչ էիր ասում... Դու խոսքդ շարունակի:

ՍԱՀԱԿ - *(աքլորացած):* Եվ պիտի ըսե՛մ: Անարգանքի սյունին պիտի գամեմ սա մարդը...

ԶԱՐԱ - *(հիացած):* Մեռնեմ անարգանքի՛ դ:

ՍԱՀԱԿ - Առավոտ կանուխ, խախտելով բոլոր տեսակի...

ԶԱՐԱ - Էդ չէ, էդ արդեն ասեցիր, պրծար: Ուրիշ բան էիր ասում, խոսքդ շարունակի:

ՍԱՀԱԿ - Անարգա՞նքը...

ԶԱՐԱ - Չէ:

ՍԱՀԱԿ - Սյո՞ւնը...

ԶԱՐԱ - *(կոտրատվելով):* Դե չէ՛... հիշիր՝ ինչե՛ր էիր ասում իմ մասին:

ԳՈԳԻ - Սահակ, «գեղեցիկի» ու «նազելիի» հետ է:

ՍԱՀԱԿ - Պիտի խնդրեմ, որ դուք մեր խոսակցությանը չխառնվի՛ք:

ԳՈԳԻ - Դե արի՛ լավություն արա:

ՍԱՀԱԿ - *(Չարայի ձեռքը համբուրելով):* Ո՞ր մէ խոսքս կփափագեք կրկին լսել, տիկին:

ԶԱՐԱ - *(տեղում ամոթխած օրորվում, գլխով Գոգիին է ցույց տալիս):* Էն որ ասա՛վ:

ԳՈԳԻ - *(Սահակին):* Ասի, չէ՞... Ես սրա կաշին դաբաղխանից գիտեմ:

ՍԱՀԱԿ - *(Գոգիին):* Կրկին պիտի խնդրեմ, որ մեր խոսակցությանը չխառնվի՛ք:

ԶԱՐԱ - *(Սահակին քնքշորեն իրեն դարձնելով):* Սիրտդ շուռ մի բեր, պարոն Սահակ ջան, նրա խառնվելուն ո՞վ է բանի տեղ դնում:

ՍԱՀԱԿ - *(նկատում է ցուցանակը):* Ամմա՛ն... Այսօր ձեր ծննդյան օ՞րն է:

ԳՈԳԻ - Ոչ ըլներ...

ՍԱՀԱԿ - (*Գոգիին*): Անկիրթ: (*Ձառային՝ խոնարհումով*;) Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքը:

ԶԱՐԱ - Ընդունելի է՝

ՍԱՀԱԿ - Սակայն... 18 տարեկա՞ն:

ԳՈԳԻ - Ծչոտչիկը ետ է տվել:

ԶԱՐԱ - Լա՛վ եմ արել:

ԳՈԳԻ - Բան չասի, մի երկու տարով էլ ետ տայիր՝ ինձ կդատեին անչափահասի հետ ամուսնանալու մեղադրանքով:

ՍԱՀԱԿ - (*ասպետաբար*): Տիկին Զարուհի, այլևս չկարողանալով դիմադրել ձեր զմայելի և գեղանի կախարդանքին, կխնդրեմ ընդունեք հրավերս, երեկոյան երթանք ռեստորան:

ԶԱՐԱ - Վա՛յ, մերսի՛, մերսի՛...

ՍԱՀԱԿ - Այժմ թույլ տվեք աճապարեմ՝ տրամադրվելու այսօրվա տոնակատարությանը:

ԶԱՐԱ - Աճապարի, բա ո՞նց...

ԳՈԳԻ - (*մոտեցող Սահակին կանխելով*): Սահմանը չխախտե՛ս: (*Ձեռքով ցույց է տալիս, որ չեզոք գոտով դուրս գա*;) Մաքսանենգ շանորդի:

ՍԱՀԱԿ - Փիսին մեկը:

ԳՈԳԻ - Գնա, գնա՛, դեռ գլխիդ գալիքը չգիտես: (*Հյուրը վերցնում, «Պատշգամբի» կանաչ քառակուսու փոխարեն կարմիր գույնի մագնիս կպցնելով՝ դուրս է գնում*;))

ԶԱՐԱ - (*համար է հավաքում*): Ալո՛... Թանկ ջան, բարի լույս, հոքնաժ չէի՞ր: Թանկ ջան, այսօր անպայման ուզում եմ քեզ հանդիպել, արդեն քանի օր է չեմ եկել: (*Ուրախացած*;) Գալիս եմ, ջան, հենց հիմա գալիս եմ: (*Ծտապում է ննջարան՝ ցուցանակի կանաչը կարմիրի փոխելով*;))

Համար հավաքելով մտնում է Գոգին:

ԳՈԳԻ - (*հայացքը ննջարանին՝ կիսաձայն*): Արմո՞, բարի լույս, ես եմ, Գոգին... Լսիր՝ ինչ եմ ասում: Ուրեմն, առավոտ շուտ մեր հարևան բեյրութցի Սահակը ներս մտավ՝ թերթը ձեռքին... Արդեն գիտե՛ս: Էդ որտեղի՞ց գիտես, որ Սահակը մեր տուն մտավ... Հա՛, թերթի մասին գիտես: Բա որ գիտեիր, ինչո՞ւ չէիր ասում... Ի՞նչ է գրված: Տունը կռիվ է ընկել ու ոստիկանությունն է միջամտե՛լ... ռադիոյով էլ են հաղորդե՛լ... ինչի՞նչ՝ տելեվիզորով է՛լ... Ա՛յ խայտառակությունը... Հերքում եմ: Ոչ թե կախարդվել եմ ու միլիոնի պատճառով եմ բաժանվում, այլ միլիոնից եմ բաժանվում՝ կախարդ կնոջս պատճառով: Այսօր իսկ թերթին էլ, ռադիոյին էլ, տելեվիզորին էլ հերքում պիտի տալ: Արմո, հեր-

քումը ես կտամ, դու շտապ արի մեր բակը: *(Ավելի գաղտնախոս:)* Լսիր, ուրեմն Ջարան հեռախոսը վերցրեց ու «թանկ ջան, թանկ ջան» էր ասում... Հեռախոսին չէր ասում: Հեռախոսը էժանագին «Նոկիա» է: Սահակին էլ չէր ասում, Սահակն արդեն գնացել էր: Ինձ էլ չէր ասում... Այ տղա, ես չգիտեի, որ էդքան անհասկացողն ես, հեռախոսով ասում էր նրան՝ ում հետ հեռախոսով խոսում էր... Ես ի՞նչ գիտեմ, ում հետ էր խոսում, դրա համար էլ քեզ եմ զանգում: Գիտեմ, որ դու գրբաց չես, դրա համար էլ զանգել եմ, որ շտապ գաս մեր բակը, թաքնվես աղբանոցի հետևում ու երբ Ջարան տնից դուրս գա, հետևես, պարզես՝ ո՞ւմ մոտ գնաց: Արմո ջան, դա իմ պատվի գործն է, ախր, որպես իմ հավատարիմ ընկեր, քո պատվին էլ է կայչում: Երկու տղամարդու քթից բռնած՝ ֆոռացնում է էդ անամոթը: Զո քիթն ի՞նչ կապ ունի... Իմ ու Սահակի քթի մասին է խոսքը... *(Նայելով ննջարանի կողմը, կիսաձայն:)* Օբյեկտը զգեստափոխվում է: Արագացրու: Կապի վերջը:

Հեռախոսն անջատում ու տեղը չգտնելով, ետուառաջ քայլելով մենախոսում է՝ ջղաճիգ շարժում-

ներով արտահայտելով. «Հեռախոսով է ժամադրվում... «Քանկ ջան»... ես քեզ «Քանկ ջան» ցույց կտամ... Ինձ հիմարի տեղ է դրել... Բա էն Սահակը, Սահակը... «Իմ մագելի՛, իմ գեղեցկատե՛ս...» Ես ձեր հախից կգա՛մ»: Նկատելով «Չեզոք գոտի» մտնող Ջարային՝ քարանում է: Ջարան նրան հայացքի չարժանացնելով, բարձր տրամադրությամբ դուրս է գնում՝ դուռն ամուր շրխկացնելով, որից ցած է ընկնում Գոգիի ինքնաշնորհավորանքի պաստառը:

ԳՈԳԻ - Տո, դու տեսա՞ր դրան: *(Շտապում է պաստառն ուղղել:)* Տո, բա ծիշտ չե՞ն ասել, որ կնիկը լավ բան լիներ՝ Աստված էլ կունենար: *(Մատնացույց է անում կարմիր քառակուսին:)* Մուտքն արգելվում է... Դուրս գալուց չի էլ բարեհաճում համակեցության կանոնները պահպանել ու վերացնել արգելքը: *(Պոկում է քառակուսին, կանաչն է փակցնում:)* Սահակի հետ ժամադրվում է, մեկ ուրիշին՝ «թանկ ջան»: Սպասիր Սահակին խաբար տա՛մ... *(Դռան զանգ: Դեպի դուռը:)* Դուռը չեմ բացելու: Ես քո դռնապանը չեմ: Բարի եղիր, բանալին հետոյ ման տուր: *(Չանգը կրկնվում է, ստիպված գնում է բացելու:)* Ջարա աղջիկ, քթիցդ եմ հանելու...

Կարճ դադար: Ծանրաքայլ մտնում է ժիրիկը, առաջանում, զննում է տունը:

ԺԻՐԻԿ - *(իր հետևից եկող, զարմացած Գոգիին):* Մետալուրգների փողոցի 15 շենքի 17 բնակարանը սա՞ է:

ԳՈԳԻ - Սա է, բայց... բայց չի վաճառվում:

ԺԻՐԻԿ - Հընգեր, ըստե ի՞նչ կա, որ ի՞նչ վաճառես:

ԳՈԳԻ - Խոսքը կահույքի մասին չի: Տո՛նը չի վաճառվում:

ԺԻՐԻԿ - Վա՛յ, հորս արև, արա՛... այ ախպեր, ո՞ր ա ըստե տուն... էսի բուն ա՛:

ԳՈԳԻ - Դե, գիտեք ի՞նչ...

ԺԻՐԻԿ - Գիտեմ, ախպե՛ր, էդ էլ գիտեմ: Զու անունը Գոգի ա, էդ էլ գիտեմ: Դու էն ասա, Զարա Սարգսյանը դեռ ըստեյա՞ ապրըմ:

ԳՈԳԻ - Այստեղ... ըմմ... *(Ցույց տալով):* Սահմանից այն կողմ: Լա իր տանը չէ:

ԺԻՐԻԿ - Էնի արտասահմանն ա՞... մալադեց, հումորդ սպանում ա, ախպեր: *(Լստում է բազմոցին):* Լստի, հընգեր, նստի՛ էրկու բերան բան խոսանք: *(Գոգին նստում է բազկաթռռի եզրին):* Համ էլ՝ ցավակցում եմ, նախկին զոնքաչդ ա մեռե:

ԳՈԳԻ - Սուտ լուրեր են:

ԺԻՐԻԿ - Ռադիոյով լսանք, ախպեր:

ԳՈԳԻ - Ի՞նչ ռադիո:

ԺԻՐԻԿ - Ավտոյի՛, ախպեր:

ԳՈԳԻ - Ի՞նչ ավտո...

ԺԻՐԻԿ - Վայ, մորս արև, արա՛, կռոմե «Մերսեդեսը» ուրիշ ավտո ըլնում ա՞, ախպե՛ր...

ԳՈԳԻ - *(նոտքի ելնելով):* Լսեք, դուք ի՞նչ եք ուզում:

ԺԻՐԻԿ - Դու նստի, նստի, ոչ մի բան պետք չի: *(Գոգին ակամա նստում է:)* Ռադիոյով լսանք, որ ամերիկահայ տիկին Սաթենիկ Սարգսյանը կյանքն ապահովագրել ա ու մաշինի տակ ա ընգե՛ միլիոնը թողնելով Հայաստանում բնակվող աղջկան: Դու էլ, ախպեր, չիմանալով էդ մասին, քու էշ խելքով՝ կնգադ հետ կռվել ու բաժանվել ես:

ԳՈԳԻ - *(սպառնալից նոտքի է ելնում):* Իմ էշ խելքո՞վ...

ԺԻՐԻԿ - Զու էշխո՞վ, ախպեր, էշխո՞վ...

ԳՈԳԻ - Իսկ ձեր էդ ռադիոն չի՞ ասել, որ ամերիկահայ տիկին Սաթենիկ Սարգսյանը չի մահացել, ընդամենը ոտքն է կոտրվել:

ԺԻՐԻԿ - Չի մեռել, ախպեր, մի օր կմեռնի, ո՞ր մեկս ենք անմահ:

ԳՈԳԻ - *(ցասկոտ նոտքի է ելնում):* Դուք ինչո՞ւ եք եկել:

ԺԻՐԻԿ - Այ, դա արդեն քո գործը չի՛: *(Համար է հավաքում:)* Բաժանվել ե՞ք, ախպեր, յա՛ն տուր:

(Շեռախոսով:) Ներս բեր:
 (Հսկա ծաղկազամբյուղով ներս է մտնում Ժորժիկը:) Տար, դիր էն յանի վրա: (Ցույց է տալիս Զարայի հարկաբաժինը: Ժորժիկը կանացի շարժումներով անխոս ենթարկվում է ու սահմանն անցնելիս քսվում է փշալարերին, որից թիթեղյա տուփերն իրար բախվելով աղմկում են:) Արա՛, ա՛յ չուչել, սահման ես անցնում, հո՞ծ գի՞ծ հո չի՞, որ տուգանքով պրծնես: (Ոտքի է ելնում:) Լավ ա՛ մեր ախպերը տրիվոգա չտվեց, հեչի պես սոռկի տակ էիր մտնում: (Զամբյուղը տեղադրելուց հետո հապաղող, չորս բոլորն ուսումնասիրող Ժորժիկին:) Ի՞նչ կախվար, արա՛, քըստըվի ըստուց: (Ժորժիկը սեթևեթելով դուրս է գնում: Գոգիին:) Միլիոնը, ախպեր, թան չի, ամեն մարդու բան չի: (Նրա ուսին թփթփացնելով:) Իրար հասկացանք, հայրենիքը քեզ չի մոռանա: (Ծանրաքայլ դուրս է գնում:)

ԳՈԳԻ - Ծը... Սը... Բը... Զը... Դը...
 Փիսի՛ն մեկը՛... սրան տե՛ս...
 «Միլիոնը թան չի՛... Տուն չի՛ բուն է՛... Թերթում էր գրա՛ծ...
 (Կատաղած նետվում է դեպի զամբյուղը, բայց փշալարի մոտ մեխվում, ծար է մտմտում, փռվում է գետնին, սողալով

անցնում է սահմանը: Հասնելով զամբյուղին՝ պառկած դիրքից ձեռքը մեկնում, վերցնում է ծաղիկների արանքում դրված ծրարն ու բացելով կարդում է:) «Զարա ջան, ազիզ»... իյա՛... «...ես վաղուց սիրում եմ քեզ... Միշտ երազել եմ, որ իմ կինը դառնաս...»: Ախմա՛խ: «Ուրախ եմ, որ բաժանվել ես էդ հարիֆից»: Վա՛յ, ես քու... «Գրում եմ իմ հեռախոսի համարը... միշտ քեզ կարոտող՝ Ժիրիկ»: (Պատառոտում է թուղթը, շարտում օդ: Բջջայինը զանգում է: Ցատկելով մղվում է դեպի հեռախոսը, բայց փշալարի մոտ դարձյալ մեխվում է, աջ ու ձախ ելք է փնտրում ու գլխի ընկնելով՝ «Չեզոք գոտով» անցնում, վերցնում է հեռախոսը:) Արմո՛... լսում եմ: Վարսավիրանո՞ց... ի՞նչ վարսավիրանոց: Թանկիկի վարսավիրանոցը՞... հա՛, ես էլ զարմացա՛ «թանկ ջա՛ն, թանկ ջա՛ն», նա իսկի ինձ պես տղամարդուն չի «թանկ» ասել, ուր մնաց... Բա հիմա ի՞նչ է անում: Խանութներն է չափչփո՞ւմ: Թող չափչփի՛, հետո շատ է փոշմանելու, որ պատահած մեկի ռեստորանի հրավերն է ընդունում, մյուսը ծաղիկներ է բերում, ամուսնության առաջարկ են անում... ո՞վ... ինչ-որ մի Ժիրիկ:

Միլիոնի հոտ է առել շանորդին: Արմո ջան, ես քեզնից շատ շնորհակալ եմ: Դու ազատ ես, իհարկե, ազատ ես: Ինչո՞ւ պիտի նեղանամ, այ տղա, զբաղվիր քո գործով... Հասկանալի է, որ դու էլ հոգսեր ունես: Հաջող, ախպեր ջան, հաջողություն եմ մաղթում: *(Հեռախոսն անջատում, մի կողմ է դնում:)* Ինչ հավատարիմ ընկեր է, է... *(Դռան գանգ:)* Թե ժիրիկ կոչեցյալն է՝ մորթելու եմ: *(Մարտական գնում է դուռը բացելու:)*

Մտնում է կարճահասակ Ջարգանդը՝ հսկա ծաղկազամբյուղը գրկած:

ԶԱՐԶԱՆԴ - *(զամբյուղը մի կերպ ցած է դնում, ուղղում թիթեռնիկ փողկապը):* Թույլ տվեք ներկայանալ՝ կոնտրաբասահար Ջարգանդ Բոլոյան:

ԳՈԳԻ - *(բազկաթոռին նստելով, հեզնոտ):* Հետո՞:

ԶԱՐԶԱՆԴ - Ըմմ... Միջազգային մրցույթների դափնեկիր:

ԳՈԳԻ - Հետո՞:

ԶԱՐԶԱՆԴ - Էլ ի՞նչ հետո: Կարգը պահանջում է, որ հիմա էլ դուք ներկայանաք:

ԳՈԳԻ - Էդ ո՞ր կարգն է պահանջում, որ ես իմ տան մեջ ներկայանամ:

ԶԱՐԶԱՆԴ - Իսկ տիկին Ջարան տանը չէ՞:

ԳՈԳԻ - Տիկին Ջարան ի՞ր տանը չէ: *(Ցույց է տալիս սահմանից այն կողմ:)* Իսկ դուք, բաս կիթառահար, միջազգային մրցույթների դափնեկիր սերժանտ Բոլոյան...

ԶԱՐԶԱՆԴ - Զարգանդ Բոլոյան, կոն-տրա-բասահար:

ԳՈԳԻ - Իսկ դուք, կոն-տրա-բասահար, միջազգային մրցույթների դափնեկիր Ջարգանդ Բոլոյան, ի՞մ բնակարանն եք ներխուժել:

ԶԱՐԶԱՆԴ - *(զարմացած մոտենում, շարժում է փշալարը, տուփերի չրխկոցից կնճռոտում է դեմքը, ծոցագրպանից հանելով կամերտոնը՝ խփում է ձեռքին, մոտեցնում ականջին, կրկին շարժում է փշալարն ու ցուցամատը վեր է տնկում):* Ֆալշ, ուսուցիչներս ֆալշ: Իսկ դուք երևի նրա նախկին ամուսինն եք:

ԳՈԳԻ - Իսկ դուք այդ մասին ուղիղտե՞ղ լսեցիք, հեռուստացույցով եք դիտել, թե՞ թերթերում եք կարդացել:

ԶԱՐԶԱՆԴ - Ձեր նշած բոլոր երեք աղբյուրներն էլ այդպես են հաղորդում:

ԳՈԳԻ - Դե, եթե այդպես են հաղորդում, ուրեմն, այո՛, մենք երևի նրա նախկին ամուսինն ենք:

ԶԱՐԶԱՆԴ - Ահա թե ինչի՛ է հասցնում կնոջը չգնահատելը:

ԳՈԳԻ - Ահա թե ինչի՛ է հասցնում կնոջը չգնահատելը:

ԶԱՐԶԱՆԴ - Փշալարերի, ընկեր ջան, փը՛-շա՛-լա՛-րե՛-րի՛: (*Պաթետիկ:*) Մինչդեռ, ինչպես ասել է գերմանացի փիլիսոփա, գրող, լուսավորիչ Յոհան Գորֆրիդ Հերդերը՝ յուրաքանչյուր կնոջ փոքր սխալի մեջ կա տղամարդու մե՛ծ մեղքը: (*Դռան զանգը ընդհատում է նրա խոսքը:*)

ԳՈԳԻ - Տեղիցդ չշարժվես, հիմա գալիս եմ: (*Գնում է դուռը բացելու:*)

Նյարդային ու փութկոտ մտնում է Վիկան:

ՎԻԿԱ - Որտե՞ղ են շորերս: Արագացրու, քանի դեռ հրեշդ չի հայտնվել, շորերս բեր:

ԳՈԳԻ - Ի՞նչ շորեր... Ինչե՞ր ես խոսում:

ՎԻԿԱ - (*պայուսակից թուղթ է հանում, կարդում է*): Կրծկալ, սպիտակ գոյնի, 3-րդ չափսի՝ մեկ հատ: Զուգագուլպա, սև գոյնի, 46 չափսի՝ մեկ հատ: Կոշիկներ, բարձրակրունկ, սև, լաքապատ, 36 չափսի՝ մեկ գույգ: Ծապկընկեր, կարմիր գոյնի...

ԳՈԳԻ - Ի՞նչ... շափ... շապ...

ՎԻԿԱ - Ծապկընկե՛ր:

ԳՈԳԻ - Դա՞ ինչ մեղքս էր, քո հագին էդպիսի բան չի եղել:

ՎԻԿԱ - Ո՞նց թե՛ չի եղել, էդ քո կոտրած ձեռքով վրայիցս չհանեցի՞ր: Հանող ուրացողի մեկը:

ԳՈԳԻ - Տոուսի՞ր...

ՎԻԿԱ - Անգրագետ, հենց՝ տոուսիկը:

ԳՈԳԻ - (*բազկաթռռին բազմելով*): Հա՛... Ուրեմն տեղեկացնեմ, որ էդ քո ցուցակում գրածը, գումարած՝ քո շապկընկերը, ուզվա՛վար է վերցված (*բութ մատով ցույց է տալիս Զարայի հարկաբաժինը*) որպես իրեղեն ապացույց:

ԶԱՐԶԱՆԴ - (*կարծելով, թե Զարան է, Վիկայի առջև ծնկի է գալիս*): Տիկին, ընդունեք իմ ամուսնական առաջարկը և ես ձեզ համար հարյուր շապկընկեր կգնեմ:

ԳՈԳԻ - Խելքիդ աղ անեմ... Էդքանը լցնել կլինի՞:

ՎԻԿԱ - Դուք... դուք ո՞վ եք, ի՞նչ եք ուզում:

ԳՈԳԻ - Զարգանդն է, ուզում է քեզ հետ ամուսնանալ:

ՎԻԿԱ - Ինձ հե՛տ... Էլի քո սարքած խաղե՞րն են:

ԳՈԳԻ - Ի՞նչ խաղ, ի՞նչ բան, չե՞ս տեսնում, մարդը սիրուց տոչորվում է:

ԶԱՐԶԱՆԴ - Այո՛, ես սիրում եմ ձեզ:

ՎԻԿԱ - Բայց ես... բայց մենք ծանոթ չենք:

ԶԱՐԶԱՆԴ - Արդեն քանի տարի ես հետևում եմ ձեզ, սակայն չէի համարձակվում մոտենալ: Ես երջանիկ եմ, որ առիթն այսպես ներկայացավ:

ԳՈԳԻ - *(Վիկային):* Չես փոշմանի, լավ տղա է:

ՎԻԿԱ - *(կոտրատվելով):* Ես նույնիսկ ձեր անունը չգիտեմ:

ԶԱՐԶԱՆԴ - Թույլ տվեք ներկայանալ՝ միջազգային մրցույթների դափնեկիր, կոնտրաբասահար Զարգանդ Քոլոյան: *(Գրպանից փոքրիկ տուփ հանելով:)* Ահա, սա էլ՝ նշանի մատանին:

ԳՈԳԻ - Մի բարձի ծերանաք:

ՎԻԿԱ - *(վարանոտ մատանին վերցնում, մատին փորձում է: Երջանկացած):* Այնպես անսպասելի է...

ԶԱՐԶԱՆԴ - Վաղն իսկ կարող ենք մեկնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ հարսանեկան ծանապարհորդության:

ԳՈԳԻ - *(ծափ զարկելով):* Գո՛ր-կա, գո՛ր-կա, գո՛ր-կա...

Զարգանդը ոտքի ծայրերին բարձրանալով ձգվում, Վիկային համբուրում է:

ՎԻԿԱ - *(Գոգիին, երջանկացած):* Ես անչափ շնորհակալ եմ քեզնից:

ԶԱՐԶԱՆԴ - Ես՝ նույնպես: Ինչպիսի՜ր ասպետականություն, ազնիվ վեհանձնություն: Ընդունեք

իմ խորին երախտագիտությունը:

ԳՈԳԻ - Չարժի՛, Չարզանդ ջան, չարժի՛:

ՎԻԿԱ - Չարզանդ, սիրելիս, կարելի՞ է, ես քեզ փաղաքույշ կերպով Ջրոզո ասեմ:

ԶԱՐԶԱՆԴ - Իհարկե, հոգյակս, իհարկե:

ՎԻԿԱ - Ջրոզո, սիրելիս, այս ամենն այնքան անսպասելի էր: Թույլ տուր հիմա վազեմ ու մայրիկիս հաղորդեմ այս ուրախ լուրը:

ԶԱՐԶԱՆԴ - Ա՛ն-պա՛յ-մա՛ն, ա՛ն-պա՛յ-մա՛ն: Ես կարող եմ տալ իմ անձնագրի պատճեն, կարծում եմ... ըմմ... փաստաթղթերը ձևակերպելու համար իմ տվյալներն անհրաժեշտ կլինեն:

ՎԻԿԱ - Բայց ինչո՞ւ պատճեն, մենք քեզ կիրավիրենք և, ինչպես հարկն է, օրիգինալ փաստաթղթերով կձևակերպենք մեր միությունը:

ԶԱՐԶԱՆԴ - Օ՛, իհարկե, իհարկե... *(Գրպանից հանելով:)* Ահա իմ այցետոմսը:

ՎԻԿԱ - Սպասիր իմ զանգին, վագրիկս: *(Վերցնելով քարտը՝ օղային համբույր է ուղարկում ու երջանկացած շտապում դուրս:)*

ԶԱՐԶԱՆԴ - Անհամբերությամբ կսպասեմ, իմ տո՛նիկա... *(Հիացմունքով՝ Գոգիին:)* Ինչպիսի՜ դաստիարակություն:

ԳՈԳԻ - Իմ շկոլան է, է՛:

Դռան զանգ և, անմիջապես, ծաղկեփունջը ձեռքին, գործնական, արագաքայլ մտնում է Սահակը:

ՍԱՀԱԿ - *(Զարգանդին):* Պատիվ ունեմ: *(Գոգիին.)* Բարի եղեք, տիկին Զարուհուն լուր տվեք, որ... *(Հանդիպելով Գոգիի ցատումնալից հայացքին:)* Օ՛, պարզոն... *(Դեպի Զարայի հարկաբաժինը:)* Տիկին Զարուհի՛... Տիկին Զարուհի, Սահակն է, կարելի է հրամմե՛լ: *(Պատասխան չստանալով փորձում է առաջ գնալ:)*

ԶԱՐԶԱՆԴ - *(մարտական տեսքով փակում է նրա ծանապարհը):* Տիկին Զարուհին արդեն նշանված է:

ՍԱՀԱԿ - Պատիվ ունեմ, Սահակ Թերձիբոյուկբաշինձանյան: Այս արտու տիկին Զարուհին ընդունել է ռեսթորան երթալու իմ հրավերը:

ԶԱՐԶԱՆԴ - *(պաթոսով):* Նա չգիտեր, որ այսօր երեկոյան ես նրան հրավիրելու եմ Վոլֆգանգ Ամադեուս Լեոպոլդովիչ Մոցարտի 40-րդ սոլ մինոր սիմֆոնիան ունկնդրելու:

ՍԱՀԱԿ - Սակայն... ներեցեք, դուք ո՞վ եք:

ԳՈԳԻ - Զարգանդն է, քո չանգյալ բաջանաղը:

ՍԱՀԱԿ - Ներեցեք, կաղաչեմ, ի՞նչ ըսել է «չանքյալփաջանաղ»:

ԳՈԳԻ - Այսինքն՝ միլիոնիդ 333 հազարն իրենն է:

ՍԱՀԱԿ - Ինչու՞ 333...

ԳՈԳԻ - Որովհետև մյուս 333-ն էլ ժիրիկինն է:

ՍԱՀԱԿ - Ժիրիկն ո՞վ է, բե՞... *(Ծաղկեփունջը սեղանիկին դնելով՝ գրպանից լրագիրը հանում, մատնացույց է անում հողվածը:)* Կտակին մեջ ժիրիկ-միրիկ, Ամադեուս-մամադեուս չիկա: Ահավասիկ՝ Սաթենիկ մայրիկի կտակով մեկ միլիոն դոլարի ժառանգորդը դուստրն է և անոր ամուսինը... *(Դռան զանգը ընդհատում է նրան:)*

ԳՈԳԻ - *(ուղղվելով դեպի դուռը):* Ոնց երևում է՝ բաժինդ ավելի է փոքրանում:

Մեկ ծաղիկ ձեռքին, վալսի սահուն պտույտներ կատարելով մտնում է Ժորժիկը: Նա մի պահ կանգ է առնում, զնահատում է իրավիճակը:

ԺՈՐԺԻԿ - *(ռևերանսով ներկայանում է):* Ժորժ Զնարունի, բանաստեղծ, համատեղությամբ՝ առաքիչ, «Կապույտ մանուշակ» ծաղկի սրահում: Պարոնայք, նկատի ունենալով մեր ջերմ բարեկամությունը, կարող եք ինձ Ժորժիկ ասել: *(Դարձյալ պտույտներ գործելով, ձեռքի*

թղթին նայելով ու երգեցիկ արտասանելով, շարունակում է ծանապարհը՝ «Չեզոք գոտով» մտնելով Ջարայի հարկաբաժին:» Ես ծարավ եմ, դու իմ ցայտադրյալը,

Թող, որ խմեմ ես քո ջուրը,

Հանգստեմ իմ սրտի հո՛րը...

ԳՈԳԻ - Արա, այ՛ չուչել, շուտ արա, դրսից փակիր դուռը, քանի դեռ չեմ հանել մուռը...

ԺՈՐԺԻԿ - (նկատելով ցրիվ սված նամակի կտորները): Օ՛-հո՛, Ժիրիկն իմանա, որ իր նամակը պատռել ես՝ կջարդի քո երկու կուռը:

ԳՈԳԻ - Իսկ որ իմանա՛ դու էլ ես նամակ բերել, քեզ կկոխի վառման փուռը:

ԶԱՐԶԱՆԴ - Ա՛յ կտրվի ձեր աբուռը՛... (Անմիջապես լրջանում, զգաստանում է:)

Դռան զանգ:

ՍԱՀԱԿ - Ահա և ինքը՝ զմայլելի տիկին Ջարուհին: Անիկա վերջ կուտա բոլոր տեսակի ինթերվենցիաներուն: (Ջարզանդին.) Նամանավանդ՝ անհարկի հնչող սիմֆոնիաներուն: Ես ինքս կդիմավորեմ նրան: (Գլուխը բարձր պահած՝ գնում է ընդառաջ:)

ԶԱՐԶԱՆԴ - (Սահակի հասցեին): Պրովինցիա՛լե... Չի կարող պատահել, որ տիկին Ջարան

դատարկ դիող գերագնահատի կոնտրաբասից: (Շտապում է՝ ինքը դիմավորի:)

ԺՈՐԺԻԿ - Մի՞թե բանաստեղծի սիրո նուրբ լարերը կկտրվեն, և նրա սիրտը ավերակների կվերածվի դատարկ դիողի և կոնտրաբասի գռեհիկ գոռում-գոչուններից: (Մղվում է նախամուտք:)

ԳՈԳԻ- (նրանց հետևից): Ախմախ, շանորդիք... (Բազմոցին նստելով՝ բացում է Սահակի բերած թերթը:)

Կարճ դադար: Միջանցքից տղամարդիկ մահանջում են ձեռքերը կոնքերին կանթած, ահարկու տեսքով ներս մտնող Յուդաբեռից:

ՅՈՒՂԱԲԵՐ - (Սահակին վրա քշելով): Այլանդակ, ուրեմն երեկ ինձ էիր ծաղիկ նվիրում, էսօր Ջարային խնամախոս ես գալի՛:

ՍԱՀԱԿ - (նրա հետապնդումից խույս տալով): Թող տուր, բե՛... ուր երթամ՝ ետքես կուգա: Բեզի չեմ ուզեր, տիկի՛ն, չեմ ուզե՛ր...

ՅՈՒՂԱԲԵՐ - Բա որ չէիր ուզելու, ինչի՞ գիշերն իմ տանն անցկացրիր:

ՍԱՀԱԿ - (խույս տալով): Ես ամուրի եմ և ընտրության իրավունք ունիմ:

ՅՈՒՂԱԲԵՐ - Հողեմ գլուխդ, իմ տունը քեզ համար ընտրական

տեղամաս է՞, որ գաս ու փակ-
գաղտնի քվեարկությամբ ա-
նունս ջնջես:

ՍԱՀԱԿ - (պաշտպանություն
փնտրելով՝ դիմում է ներկանե-
րին): Ահավասիկ, պարոնայք,
ահավասիկ, դուք վկա եք, որ
սա կինը ինձի՝ հայրենադար-
ձիս, կստիպե իմ երկրեն փոնա-
գաղթված ըլլամ:

ՅՈՒՂԱԲԵՐ - Բռնագաղթված... Ես
քեզ արտագաղթած եմ դարձնե-
լու, հալա դու ուր ե՛ս: (Հարձակ-
վում է:)

**Դռան զանգ, որին ոչ որ ուշադ-
րություն չի դարձնում, տարված
են նրանց վեճով:**

ՍԱՀԱԿ - (հարձակումից խույս
տալով՝ սենյակում պտտվում է):
Օգնեցեք, բե՛, աս տեղացի կի-
ները առյուծի կնմանի՛ն...

**Մտնում է Արմոն՝ վարդերի փուն-
ջը ձեռքին: Ներկաները քարա-
նում, սևեղծվում են նրան:**

ԳՈԳԻ - (ապշած քայլ է անում դե-
պի ընկերը): Ա... Ա... Ա-Ա՛ր-մո՞...

ԱՐՄՈ - Հա, Գոգի ջան, բա դու
չասի՞ր, որ չես նեղանա, որ ես
ազատ եմ, որ իմ անձնական
հոգսերով զբաղվեմ... Բա թող-
նենք, որ միլիոնը էս շուն ու գե-
լերի բաժինը դառնա՞:

ԺՈՐԺԻԿ - (Արմոյին չանչ անելով):
Անհրապո՛ւյր:

ՍԱՀԱԿ - (Արմոյին): Պարոն, ան-
չափ զգուշորեն և կիրթ ընտրեք
ձեր բառերը:

ԶԱՐԶԱՆԴ - (աքլորացած, Սահա-
կին): Էդ մեզ էր ասո՞ւմ:

ՍԱՀԱԿ - Հապա էլ ո՞ւմ:

ԶԱՐԶԱՆԴ - Վայ ես քու, ֆալշ
հերն եմ անիծե՛լ... (խոյահարում
է Արմոյին, վերջինս վարդերի
փնջով հարվածներ է տեղում
Զարզանդի գլխին: Գլորվում են
հատակին:)

ԺՈՐԺԻԿ - О, какой темперамент!
(Նետվում է կռվողների մեջ:)

ՍԱՀԱԿ - Օ՛ն, առա՛ջ... (Նետվում է
դեպի կռվողները, բայց Գոգին
ոտք է զցում նրան ու ինքն էլ
նետվում է տապալված Սահա-
կի վրա:)

ՅՈՒՂԱԲԵՐ- Էդ ում հարազատ
մարդուն եք ծեծո՞ւմ... (Խառն-
վում է կռվողներին:)

**Թավալվող ու միմյանց քաշքռո-
ները տապալում են փշալարերը,
ցուցանակները, շաղ են տալիս
ծաղիկները: Ներս մտած Իռան
քարանում է՝ այդ ամենը տեսնե-
լով:**

ԻՌԱ - Վե՛րջ տվե՛ք, գարշելիներ՛ր:

**Կռիվը դադարում է: Պառկածնե-
րը զարմացած նայում են նրան:**

ԳՈԳԻ - Իռա՞...

ԻՌԱ - Գոնե դուռը ներսից կող-
պեք: (Պայուսակից հանում է

գեղեցիկ փաթեթավորված տուփը, դնում է սեղանիկին: Գոգիին:) Վերցրեք ձեր նվերը, ձեր հեռախոսից ջնջեք իմ համարը, ձեր հիշողությունից՝ իմ անունը: (Արմոյին.) Իսկ քո մասին ստիպված եմ մորաքրոջս ասել, որ դու ոչ թե իմ զարմիկն ես, այլ զարմուհի՛ն: (Գետնին փռվածների.) Այսասերվածներ՝: (Դուրս է գնում:)

Մթնեցում: Դանդաղ լուսավորվում է: Մենյակում միայն ծննդյան օրվա պատռներն են կանգուն մնացել: Ծաղկազամբյուղների արանքում, շաղ տված վարդերի մեջ, հատակին ծալապատիկ նստած է Գոգին՝ գլուխն ավերի մեջ առած: Պայուսակն ու գեղեցիկ փաթեթավորված տուփը ձեռքին մտնում է Ջարան: Տեսնելով տան տեսքը՝ քարանում է, ապա զգուշորեն, որպեսզի վարդերը չարքրի, առաջանում, կանգնում է Գոգիի դիմաց:

ԳՈԳԻ - (խեղճացած): Ջարա...
ՋԱՐԱ - Գոգի...
ԳՈԳԻ - Ես քեզ էի սպասում, ասելու, որ...
ՋԱՐԱ - (օգնում է, որ բարձրանա): Գոգի, սիրելիս, այդպես էլ գիտեի, որ այսօր սպասելու ես

ինձ, վարդեր ես շաղ տալու իմ ոտքերի տակ, ծաղիկներով ես ինձ դիմավորելու: Ես համոզված եմ, որ դու շա՛տ, շատ ես սիրում ինձ:

ԳՈԳԻ - (խռովկան ամաչկոտությամբ): Բա որ ասում ե՛մ...
ՋԱՐԱ - Իսկ ես, հիմարս, չէի հավատում:
ԳՈԳԻ - (զլխահակ, հաշտվողական մեղմությամբ): Խոսքերն անգոր են արտահայտելու, թե ինչքա՛ն եմ քեզ կարոտել:
ՋԱՐԱ - Պետք չէ, պետք չէ բացատրել, տեսածս էլ հերիք է... (Ձեռքի տուփը մեկնելով:): Ահա, քո ծննդյան օրվա առթիվ իմ նվերը, վագրի՛կս...
ԳՈԳԻ - Ընծնողս... (Գրկախառնվում, Ջարայի թիկունքում գտնվող սեղանիկից գողտուկ վերցնում է Իռայի բերած տուփը:): Ես էլ քեզ համար եմ նվեր պատրաստել, իմ սե՛ր...

Հնչում է ֆոքստրոտը: Սկսում են պարել: Առաջանում են ու այտեքով միմյանց հպված, հանդիսատեսին հառված կանգ են առնում:
ԳՈԳԻ և ՋԱՐԱ - (միասին, հնչեղ շշուկով): Մենք գնում ենք ննջարա՛ն...

Եվս մեկ պտույտ գործելով, մնջարանի ճանապարհին քարանում են՝ ինչպես ստուպ-կաղրում, իսկ ֆոքստրոտն ուժգնանում է:



Հրաչ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Բակը ջրջնքել, ավել էինք թաղի տղաներով, Սեդա արայի լվացքի պարանը կապել էինք երկու ծառերից, Հայաստան մորքուրի քուրսի ծածկելու կանաչ կարպետը դարձրել էինք վարագույր ու սպասում էինք, թե մեր մայրերը, տատերը, հայրերն ու հորեղբայրները երբ բանթող արած կգան սար ու դաշտից, որ վարագույրը բացենք: ...Չէ, ես դերասան չդարձա, դերասան չդարձան նաև իմ մյուս ընկերները, որ ամառնավերջի այդ օրը սրտատրուի սպասում էին վարագույրի բացվելուն, որպեսզի խաղան

այդքան երկար պատրաստված ներկայացումը: Վստահ եմ, սակայն, որ աշխարհի և ոչ մի հանճարեղ դերասան նման բռուն ու ջերմ ծափերի չէր արժանացել իր կյանքում, ինչպես մենք՝ այդ օրը... Հետո: Ամեն մեկս գնաց իր ճանապարհով, բայց թատրոնը մնաց յուրաքանչյուրիս հոգում որպես արբազան ու չխոստովանած սեր, որպես գաղտնի երազանք... Թատրոնը մնաց մեր սրտերում, չնայած, որ մեզնից ամեն մեկն իր կյանքի ճանապարհը գծեց աշխարհի ձախուծուռ ճանապարհների վրա: ...Մեր փեսա Սամվելն, ինքն էլ չհամաձայնում, ամեն ինչ վերակենդանացրեց իր մի պատմությամբ: Եկել էր Արցախից, եկել էր մազ ու մորուքի մեջ կորած: Բույր, լաց ու ծիծաղ իրար խառնած, լվացել ու ժալել էր դրել նրա շորերը: Սամվելը լողացել, սափրվել ու նստել էր բազմոցին: Ձեռքի մատներով թեթևակի շոյում էր դեռևս կարգին չսպիացած վերքը և չուզելով ու չկարողանալով, մի կերպ իրար էր կցում բառերը: Պատմում էր պատերազմից: Այդ օրն իմ մեջ ծավեց նրա պատմությունը դրամայի վերածելու միտքը: Այն տարիներ շարունակ պոտովեց իմ ներսում, իսկ հետո ծավեց միանգամից: Հիմա «Արծվաբույնը» «Իրամատուրգիային» ներկայացնելով, ուզում եմ, որ այն յուրահատուկ նվեր լինի իմ մանկության ընկերների՝ Հայկի, Մեթի, Անդրյի, Հովոյի, ինչպես նաև մեր փեսա Սամվելի համար: Իսկ եթե երբևէ բեմ բարձրանա, և նրանցից որևէ մեկը հանկարծ նայի այն, թող ինձ ների, եթե իր երազանքի թատրոնը մի քիչ աղարտված ու ոչ այն տեսքով տեսնի իմ գրվածքի մեջ:

ԱՐԾՎԱԲՈՒՅՆ- 1991

Դրամա

Գործող անջինք

**ԱՄԱՅԻ (ՀԵՐԻՔՆԱԶ ԱԿՈՒՆՑ) - 80 տարեկան սևագգեստ
ղարաբաղցի կին, Քարակապի միակ բնակիչը**

**ՍՈՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ - ռադիոյի թղթակցուհի, մոտ 40 տա-
րեկան**

**ԿԱՄՈ - ռաբերից վիրավոր ու ցնցակաթված ստացած, մոտ
40 տարեկան զինվոր, որին խնամում է Ամային**

**ԳՎՎԻԹ - մականունը՝ «Լոպազե, 40-42 տարեկան, պար-
ծենկոտ զինվոր**

ԱՐՄԵՆ - 18-20 տարեկան զինվոր

ՍԻՄՈՆ - 50-55 տ. ջոկատի հրամանատար

**ԿՈՐՅՈՒՆ - 30-32 տարեկան ջոկատային, մականունը՝
«Տրուբաե**

ՄԱՐԳԱՐ - 40-ին մոտ ջոկատային, գնդացրորդ

**ՈՒՐԲԱԹԱԽՈՍ ՎԱՀՐԱՄ - 60-ին մոտ, թավ, ծխելուց դեղ-
նած բեղերով զինվոր**

**ՍԱՄՎԵԼ - 18 տարեկան Սոնայի որդին, նոր զորակոչված
1-ին զինվոր - 20-22 տարեկան**

2-րդ զինվոր - 30 տարեկանին մոտ

3-րդ զինվոր - անորոշ տարիքի

Տեսարան 1

Գործողությունը կատարվում է Քարակապ գյուղում: Բեմում՝ ունբա-
կոծված գյուղական տան բակ: Աջ կողմում երևում է պատշգամբի մի
մասը: Բանջարանոցի ցանկապատ, արևածաղիկ՝ գլխին թանգիֆ
հագրած: Փայտե նստարան: Գնդակներից քերծված ու կիսաքանդ
դաշնամուր:

Աշնանային մթնշաղի մեջ լսվում է բուխ կռինչը: Խորքում՝ մշուշի
մեջ, աղոտ գծագրվում են ջոկատի տղաների ուրվագծերը:

ՍԻՄՈՆԻ ձայնը - Հրաման կա Զարակապը պահել, իսկ հետո գրավել բարձունքը... Դժվար խնդիր են դրել մեր առաջ, բայց պատերազմ է, հայրենիքի ու հողի համար մղվող պատերազմ.... Մեր ջոկատի համար մեր հայրենիքի ամենակարևոր մասը աշխարհի ոչ մի քարտեզի վրա չեն չված էս փոքրիկ գյուղն է՝ Զարակապը, էս տունը, էս բակը, էս սարերը, ձորերն ու դիմացի բարձունքը, որի վրա նստել է թուրքը... *(Բեմ է գալիս:)* Ժամանակը ոչ մի անգամ էսքան թանկ չի էղել, ինչքան հիմի: Մենք պիտի էս քարերի հետ մեջք-մեջքի տանք ու պահենք դիրքերը...

Միմոնի խոսքի ընթացքում անշարժ թվացող ջոկատը կենդանություն է առնում. ոմանք զինամթերքի արկղերն են ստուգում, վերադասավորում: Կորյունը վիրակապում է 2-րդ զինվորի թևը, 3-րդ զինվորը հաշվում է փամփուշտները, 1-ին զինվորը զենքն է մաքրում, Արսենը հեռադիտակով զննում է չորս կողմը: Տղաների մեջքներին սպիտակ խաչեր են նկարած:

Լույսի փունջը պատվում է դահլիճում, կենտրոնացնում է Սոնայի վրա: Նա բարձրանում է բեմ: Ձեռքի ձայնագրիչը միացնում ու հարց է տալիս Միմոնին:

ՍՈՆԱ - Հայրենիքը քաղցր է, իսկ մահը սարսափելի չէ: Չէ՞ որ

պատերազմը էսքան երիտասարդ կյանքեր է խլում:

ՍԻՄՈՆ - Կյանքը... կյանքն ամենաքաղցր բաներից մեկն ա, որ կյանք Ստեղծողը տվել ա մարդուն, բայց աշխարհում սեփական կյանքից ավելի քաղցր բաներ էլ կան, որոնց համար մարդ չի ափսոսում իր կյանքը: Հիմի կհարցնես, էդ ի՞նչ բաներ են: Ասեմ. մտերիմ, հարազատ, սրտակից մեկի կյանքը, օրինակ՝ քո որդու, թոռան... ընկերոջդ կյանքը: Հետո հողը... հետո էն հիշողությունը, որ կապված է էդ հողի ու քո կյանքի հետ: Էդ բոլորը մի բառով հայրենիք է կոչվում: Ու էդ հայրենիքի համար կյանքը տալը ափսոս չէ: *(Ժպտում է:)* Մենք ուշանում ենք: Հետո, մի լավ ժամանակ կխոսենք:

Մոման անջատում է ձայնագրիչը, արագ մտնում է տուն: Ամային ուտելիքով լի խոշոր կապոցը տալիս է Միմոնին:

ՍԻՄՈՆ - *(տղաներին):* Ծարժվեցի՞նք: *(Կապոցը վերցնելով:)* Լավ էլի, Ամայի...

Ձինվորները տուփերով փամփուշտներ են բաժանում իրար, ոմանք մոտենում են Կամոյին հրաժեշտ տալու:

ԴԱՎԻԹ- Կամո ջան, լավ մնա, ինչ ես քիթդ կախել, արա:

Թուրքի հետ էնքան կռիվ ունենք, ինչքան էլ կռվենք, քեզ էլի բաժին կմնա, մի մտածի:

ԿԱՄՈ - Էհ...

ՄԱՐԳԱՐ - Կամո ախպեր, պինդ կաց, դու ըստեղ Վիետնամ արա, մենք՝ ընդեղ: Հըլը կհանդիպենք:

ՎԱՀՐԱՄ - (սեղմում Կամոյի ձեռքը): Արխային:

Սոնան կարճփեշ ծաղկավոր շորը հագած դուրս է գալիս տնից՝ գրավելով տղաների ուշադրությունը:

ՍՈՆԱ – (Սիմոնին): Մի հարց կարելի՞ է:

ՍԻՄՈՆ - (կտրուկ ու խիստ): Հարցերը հետո, հիմա ժամանակ չկա:

Սոնան կանգնում է Ամայու կողքին ու անգործությունից սկսում է մատները կոտրատել: Տղաները գնում են: Արսենը համբուրում է Ամայու այտը, Սոնայի ձեռքը, մի մատով ծնգացնում է դաշնամուրի վրա, ապա հրաժեշտ է տալիս Կամոյին ու վազում է տղաների հետևից: Հեռացող բեռնատարի ձայնը: Ամային նրանց հետևից ջուր է ցանում, խաչակնքում ու մտնում է ներս: Սոնան նայում է Արսենի համբուրած ձեռքին, տարուբերում է գլուխը, մոտենում, նստում է Կամոյի կողքին: Քիչ անց Կամոն սկսում է պատմել, Սոնան միացնում է ձայնագրիչը:

ԿԱՄՈ - Չնայած Դավթի մականունը Լոպազ են դրել, բայց տղեն

պարծենալու տեղ ունի: Քաջ ա, հնարամիտ, խոսք չկա: Մի կռվի ժամանակ թուրքը ներքևում էր, մենք՝ վերևում: Մոտներս կարգին զենք էլ չկար, մենակ մի ավտոմատ էր, էրկու մագագինով: Նրանք շատ էին, մենք՝ քիչ: Ու գիտե՞ս ինչ արեց Լոպազս:

ՍՈՆԱ - Ինչ:

ԿԱՄՈ - Սկսեց ռուսերեն գոռալ “Дайте гранаты!” Էդպես էր ասում, որ թուրքը հասկանար: Գետնից մի քար վերցրեց ու շարտեց՝ իբր նոնակ ա շարտում: Թուրքերը պառկեցին գետնին, իսկ ինքը կանգնեց ամբողջ բոյով ու ավտոմատով գոռացրեց... (Հենակները թևի տակ հարմարեցնելով ոտքի է կանգնում ու ցույց է տալիս:) Բա՛: Նրան Դավո կասեն, էդպես չնայես:

ՍՈՆԱ - (Կամոյին անխոս հասկացնում, որ լռի): Հարգելի ռադիոլսողներ, ձեր թղթակիցը գտնվում է Արցախի Քարակապ գյուղում, որը ռազմաճակատից հեռու է ընդամենը մի քանի հարյուր մետր: Մեր տղաներն այսօր նորից բարձրացան դիրքեր: Նրանք ծանր, արյունոտ մարտեր են մղել երեկ ու առաջին օրը և թշնամուն կանգնեցրել են գյուղի մոտ: Հիմա թշնամին լուռ է, բայց այդ լուռ-

յունը դավադիր է: *(Կարծես նրա ասածը հաստատելու համար լսվում են հրաձգության ծայներ: Լա երկու ձեռքով բռնում է գլուխը, բայց արագ վերագտնում է ինքնատիրապետումն ու մեղավոր ժպտում:)* Այդպես էլ չսովորեցի կրակոցներին: Միշտ կարծես առաջին անգամը լինի: Տեսնես էսօր քանի կյանք պիտի խլի:

ԿԱՄՈ - AKC ա, մի չորս հարյուր մետրից են կրակում: *(Լսում է:)* Գրիգորի կալի կողմից են կրակում: Ո՛ր է, մեր տղերքն էսօր դրանց թիկունքը կտրեն: Ախր, ես...

ՍՈՆԱ - Դու էլ քիչ չես կռվել:

ԿԱՄՈ - Էհ, շատ, թե քիչ՝ էս ա: *(Ներքին խոսվքով:)* Չլինի՞ մտածում ես, թե իմ կռիվն արդեն տվել, պրծել եմ: Չորս գնդակ են խփել: Երեքը մի ոտիս, մեկը՝ մյուս: Չհաշված՝ կանտուզիան: Հենց ոտքի կանգնեմ՝ միանալու եմ տղերքին:

ՍՈՆԱ - Ասա՝ մինչև այդ պատերազմը վերջանա:

ԿԱՄՈ - Ես էլ պատերազմը չեմ սիրում, բայց թշնամուն չեմ ներելու: Թե կռվի մեջ խփեին՝ ոչինչ: Գնում էինք, որ իրանց առաջարկով հրադադարի մասին բանակցեինք: Մոտներս զենք չկար: Մտանք չեզոք գոտի ու

դեռ իրանց չհասած՝ կրակեցին: Գազոն ու Վահանը տեղում մնացին, իմ ոտքերը վիրավորվեցին: Հինգ ժամ արնաքամ լինելով մնացի մերոնց ու նրանց կրակի արանքում: Էդ ժամանակ կողքիս սնարյադ տրաքեց ու Աստծուց էր, որ թմբի տակ էի: Էրեխեքիս բախտից էր, որ մարմինս բզիկ-բզիկ չեղավ: Մենակ կանտուզիա ստացա:

ՍՈՆԱ - Բա ո՞նց ողջ մնացիր:

ԿԱՄՈ - Իրիկվա դեմ տղերքը մի կերպ դուրս հանեցին կրակի տակից...

ԱՄԱՅԻ - *(բակի խորքից):* Կամո:

ԿԱՄՈ - Հա՛, ցավդ տանեմ:

ԱՄԱՅԻ - Մեկը լինի՞ քո ցավը տանի: Արի դեղերդ խմի...

ԿԱՄՈ - Գալիս եմ, Ամայի ջան: *(Հենակների վրա ցատկելով մտնում է ներս:)*

Մոման մնում է մեռակ, ականջը՝ կրակոցի մեկ ուժեղացող, մեկ թուլացող ձայներին: Ցանկապատի վրայով բակ է ցատկում Արսենը, նկատելով կնոջը՝ անակնկալից քարանում է, հետո կարգի է բերում շորերն ու քայլում է նրա կողմը: Ամային քանդում է Կամոյի վիրակապը: Կամոն տնքում է:

ԱՄԱՅԻ - Ցավե՛ց: Դիմացի, բալա ջան, դիմացի:

ԿԱՄՈ - Չէ, Ամայի ջան, հեչ էլ թե չի ցավում: Դու ինձ մի նայի, քո

գործն արա: (Կամաց:) Ջահելը էս կնոջը տեսել, խփնվել է:

ԱՄԱՅԻ - Ինչ իմացար:

ԿԱՄՈ - Աչք ունեմ, Ամայի ջան:

ԱՐՄԵՆ - Բարև ձեզ: (Բարևում է ընդհանուր և մոտենում է Սոնային:)

ՍՈՆԱ - Բարի լույս: (Ակնարկելով կրակոցները:) Այնտեղից ես գալիս:

ԱՐՄԵՆ - Ճիշտ այդպես: Մի բուսակով եկա:

ՍՈՆԱ - Ինչ կա:

ԱՐՄԵՆ - Մերոնք թխում են:

ՍՈՆԱ - Երևանից ես:

ԱՐՄԵՆ - Ինչ իմացաք:

ՍՈՆԱ - Իմացա, էլի:

ԱՐՄԵՆ - Դուք է՛լ եք քաղաքից: Էն ժամանակ չկարողացա կարգին ծանոթանալ:

ՍՈՆԱ - Այո: (Գրպանից հանում է ձայնագրիչը:) Պատմեք ձեր մասին:

ԱՐՄԵՆ - (անակնկալի եկած): Ինչ պատմեմ... Ծնվել եմ Երևանում, 1976 թվականին, անունս Արսեն է, ավարտել եմ դպրոցը, ընդունվել եմ համալսարան, առաջին կուրսեցի եմ: Երկու ամիս սովորել եմ ու եկել եմ Ղարաբաղ: Հիմա կռվում եմ: Բայց ինչի՞ եք ձայնագրում:

ՍՈՆԱ - Ռադիոյի համար:

ԱՐՄԵՆ - Հա՛... Բայց դուք շատ գեղեցիկ եք:

ՍՈՆԱ - Դա ասելու համար եք դիրքը թողել:

ԱՐՄԵՆ - Դիրքը չեմ թողել, հրամանատարն է ուղարկել, որ Ամայուն զեկուցեմ իրավիճակի մասին: (Մոտենում է Ամայիին:) Ամայի ջան, Սիմոնն ասաց, որ ամեն ինչ կարգին է, չանհանգստանաս:

ԱՄԱՅԻ - (ոտից-գլուխ նախ Արսենին է չափում, հետո Սոնային, դեղն ու վիրակապերն տանում է ներս, հետո դուրս է գալիս, հավաքում պարանին փռած չորացած վիրակապերը: Սոնային:) Բալա, տեսնում եմ՝ պարապ ես, օգնիր:

ՍՈՆԱ - (Ամայիի հայացքից զգաստացած): Ասա, Ամայի ջան:

ԱՄԱՅԻ - Մի էս արյունոտ բինտերը լվա: Նորը չկա... (Արյունոտ վիրակապերով ամանը տալիս է Սոնային:)

ՍՈՆԱ - (փորձում է ցույց չտալ, որ զզվում է: Ինքն իրեն հանդիմանելով): Ինչ ես շշմել, արյուն է, էլի: (Սկսում է լվանալ:) Էսպիսի բան մեկ էլ Հայրենական պատերազմի ժամանակ են արել՝ օգտագործած վիրակապերը լվացել ու նորից են օգտագործել:

ԱՐՄԵՆ - (մոտենալով Սոնային): Իսկ ձեր անունն ի՞նչ է:

ՍՈՆԱ - Ինչի՞դ է պետք անունս: Դասից փախել ես, որ կռվես: Հիմա էլ կռվից փախել ես, որ անունս իմանաս:

ԱՐՄԵՆ - Ո՛վ է կռվից փախել:

Թշնամուն լցրինք ձորը, փախավ: Սիմոնն էլ ինձ ուղարկեց, որ գամ, Ամայուն ասեմ՝ չանհանգստանա, ամեն ինչ լավ է: Իսկ դո՞ւք...

ՍՈՒԱ - *(ձեռքը սրբում է ու պարզում է նրան)*: Լավ, մի նեղացիր: Անունս Սոնա է:

ԱՐՄԵՆ - Սոնա, ինչ լավ անուն է: Լոր եք ավարտել համալսարանը:

ՍՈՒԱ - *(ծիծաղում է)*: Քսան տարի առաջ:

ԱՐՄԵՆ - Ի՞նչ: Չի կարող պատահել: Դուք... դուք...

ՍՈՒԱ - Կյանքում ինչ ասես պատահում է, դա ի՞նչ է, որ չի կարող պատահել:

Սոնան վիրակապերն փռում է պարանիճ ու մտնում է տուն: Արսենը կարճ երկրնորանքից հետո մի ցատկով անցնում է ցանկապատը: Կամոն զարմացած մայում է Արսենի հետևից, զենքը դնում է նստարանի վրա, հեռակների վրա ցատկոտելով գնում է տան կողմը: Հայտնվում է Արսենը՝ այս անգամ հանդիսավոր բանջարանոցի դռնակով, ձեռքին մոր քաղած սոխի կապուկ է:

ԱՐՄԵՆ - Տիկին Սոնա... Սոնա:

ՍՈՒԱ - *(ներսից)*: Լսո՞ւմ եմ:

ԱՐՄԵՆ - Ձեզ մի թուրքով կարելի է:

ՍՈՒԱ - *(դուրս է գալիս)*: Ասեք:

ԱՐՄԵՆ - Ա՛յ... *(Երան է պարզում սոխի կապուկը)*:

ՍՈՒԱ - Էդ ի՞նչ է:

ԱՐՄԵՆ - Սողան: Ղարաբաղի բարբառով:

ՍՈՒԱ - Սոխն ի՞նչ անեմ առավոտ կանուխ:

ԱՐՄԵՆ - Տես, ինչ գեղեցիկ, մաքուր ու անարատ է առավոտվա սոխը: Տողը վրան, ուղիղ, մատղաշ: *(Սոնան նրա ձեռքից վերցնում է կապուկն ու ուշի- ուշով նայում)*: Մեղքս գալիս էր, որ քաղեի: Երա համար ոչ պատերազմ կա, ոչ արյուն, ոչ թշնամի:

ՍՈՒԱ - *(հոտ է քաշում սոխից)*: Արսեն, դու խենթ ես: Այնպես ես ներկայացնում, կարծես քաղածդ ոչ թե սոխ է, այլ ծաղկեփունջ:

ԱՐՄԵՆ - Ի՞նչ տարբերություն: Սոխն էլ է գիշերը մաքրագործվում, կակաչն էլ, մեխակն ու ձնծաղիկն էլ: Գիշերվա ցողը դնում է բույսի վրա, նրա միջից քաշում, հանում է հողի, արևի, ջրի ու օդի հետ մտած չարությունն ու միայն բարին է մնում բույսի մեջ: Առավոտվա սողանը ծաղկի արժեք ունի, մի բան էլ՝ ավելի:

ՍՈՒԱ - Դու բանաստեղծություններ չե՞ս գրում:

ԱՐՄԵՆ - Ի՞նչ իմացաք...

ՍՈՒԱ - Հիմա էս սոխը պահեմ որպես ծաղկեփո՞նջ, թե՛ կարելի է նաև ուտել:

ԱՐՄԵՆ - *(զտնում է ելքը)*: Կարևո-

րը նվիրելու առաջին պահն է, հետո... հետո ինչ էլ լինի՝ ոչինչ: Սինձը ճանաչում ես: Վայրի բույս է, բայց լրիվ ուրիշ համ ունի: Ծաղկած ժամանակ սինձը համ ծաղիկ է, համ էլ ուտելիք: *(Նայում է սոխ ուտող աղջկան, մոտենում է դաշնամուրին, սկսում է ծնգծնգացնել, մեկուսի:)* Խեղճ մորդ հոգին դուրս եկավ քեզ համոզելով, որ դաշնամուրի գնաս: Գնացիր մի տարի ու Բախը քեզ հոգնեցրեց:

Կրկակոցների ձայն: *Տնից դուրս է գալիս Կամոն, նստում է, հենակները դնում է կողքին, ինքան-ձիզը՝ ծնկներին:*

ՍՈՆԱ - *(մոտենալով Կամոյին):* Ասա՝ պատերազմը շուտ ավարտվի:

ԿԱՄՈ - *(սրտնեղած):* Ծուտ ավարտվի, շուտ ավարտվի... Էնպես ես ասում, ոնց որ հիմի էլ ենք մենք պարտվում: Թող ջարդեն, էլի: Թող մի լավ խփենք, որ ցավի հիշողությունը թշնամու միջով անցնի մի քանի սերունդ ու շարունակվի: Թե չէ՝ ավարտվի, հա ավարտվի: Կասես՝ մենք ենք սկսել: *(Զգացնել է տալիս կոնտուզիան: Ծոցագրպանից հանում է կիսաջարդված տղա տիկնիկ:)* Գիտես ինչ ա:

Արսեն դաշնամուրի մոտ կանգնած նայում է:

ՍՈՆԱ - Ինչ է:

ԿԱՄՈ - Չե՞ս տեսնում:

ՍՈՆԱ - Տեսնում եմ, տիկնիկ է:

ԿԱՄՈ - Գիտես՝ ընչի եմ պահել...

Մտածում էի, խելք ունես, դու էլ ես մյուսների նման: Չեք հասկանում: Ամերիկայի գորքերը Վիետնամի պատերազմի ժամանակ կուկլա էին քցում վիետնամցիների գյուղերի մեջ: Բայց հո կուկլա չէր, մեջը ումբ էր դրված: Վայ վեկալողին:

ՍՈՆԱ - Այդպես եղել է Վիետնամում, բայց Ղարաբաղի հետ ի՞նչ կապ ունի:

ԿԱՄՈ - *(չլսելով):* Էս կուկլեն Բարակապից գտա: Էդ ժամանակ հըլը վիրավոր չէի ու ամեն օր ման էի գալի տնետուն, որ դատարկված տները մարդու բացակայություն չզգային ու հուսահատությունից չքանդվեին: Հենց էդ ժամանակ էր, որ մանկապարտեզի հայաթից էս դաշնամուրը բերեցինք: Կրակի տակ էր, ասինք՝ ավիսոս է: Կուկլեն էլ գտա մի տան հայաթից: Մտածեցի՝ կարո՞ղ ա էս էլ Վիետնամի կուկլեքից ա: Կռացա, վերցրեցի, տեսա՝ չէ, ու հմի պահում եմ:

ՍՈՆԱ - *(աննկատ անջատելով ձայնագրիչը):* Հետո՞:

ԿԱՄՈ - Գիտես ընչի եմ պահում...

(Արագախոս:) Տանելու եմ աղջկաս, արդեն տասնչորս տարե-

կան ա, մի քանի տարի հետո մարդու պտի էթա ու մարդու էթալուց առաջ լավ կլինի՝ սրանով խաղա:

ՍՈՆԱ - Ինչի՞:

ԿԱՄՈ - Ինչի՞, ինչի՞... Չե՞ս հասկանում, որ էսի պատերազմ տեսած կուկլայա, վառողի հոտ առած: Աղջիկը որ սրա հետ խաղա, ամուսնանալուց հետո տղա կունենա: Ու էդ տղեն գեներով էկած քաջություն կունենա: Էդ քաջությունը ո՞ւմ ա հարկավոր: Զինվորին: Զարմացած մինայի: Հայի ու թուրքի կռիվը ոչ նոր ա սկսվել, ոչ էլ էդքան շուտ պրծնելույա: *(Հենակներին հենված կռվում է երևակայական թշնամու դեմ:)* Արա՛, ինձ Կամո կասեն, արա՛: Ընենց Վիետնամ անեմ ձեր մորը, որ մինչև մահ ու գերեզման չմոռանաք...

Մոնան կարկամել է, Արսենը վազում է Ամայուն կանչելու, բայց նա արդեն մոռանում է Կամոյին:

ԱՄԱՅԻ - Վայ, կուրանա մերդ, Կամո տղա, վայ, կուրանամ ես... *(Արձակում է մահապարտի գլխաշորը, շոշափում իրեն հայտնի երակները:)* Բալա, գնանք տուն, մի քիչ պառկի, արի, քո մոր լուսը քոռանա, քոռանա քեզ էսպես դարձնողի լուսը... Արի:

Ամային ինքնաձիգը տալիս է Արսենին, նա ակամա փոխանցում է Մոնային:

ՍՈՆԱ – Ինչո՞ւ ինձ տվեցիր, ի՞նչ անեմ...

ԱՄԱՅԻ - *(Արսենին կանխելով):* Տանը պահի, որ ձեռքը չընկնի, մինչև խելքը գլուխը գա: Տղերքն ուզեցին դիրք տանեն, չտվեց, թե իմ զենքից բաժանվողը չեմ: Ու տես հիմի...

Մոնան ինքնաձիգը տանում, վերադառնում է:

ԿԱՄՈ - *(ասես արթնանալով քնից):* Ամայի՛... հա, մեր ջան... ախր, մեր քրոջ հետ կարևոր բաներից ենք խոսում: Մեր քուրը էս ձայնագրիչի մեջ մեր արածներն ա գրում... թող մի էրկու բան էլ պատմեմ՝ հետո կեթամ, կպառկեմ:

ԱՄԱՅԻ - Ախր, բեզարել ես, բալա:

ԿԱՄՈ - *(լիովին ուշքի եկած):* Այ Ամայի, էնպես ես ասում, կասես տղերքի տեղ ես եմ կռիվ տալի: Ես ձրի հացակեր եմ, թող գոնե մեր Սոնային օգուտ տամ: *(Սոնային.)* Ի՞նչ կասես, քուր: *(Սոնան անորոշ ժպտում է: Ամային քաշվում է մի կողմ:)* Երբ ընկերոջս խփեցին, աչքերիս դեմը սևացավ, ոտքի թռա՝ ուղիղ թշնամու վրա: Չեմ իմացել, ոնց եմ դուրս թռել դիրքից: Տղերքը թռան հետևիցս, զարկեցինք: Թուրքը հոր հարսանիքը հիշեց: *(Տեսնելով, որ Սոնան միացրել է ձայնագրիչը:)* Էդ ի՞նչ ես անում, էլի ձայնագրում ես: Մեկ

ասում ես՝ հետո, մեկ էլ գաղտնի...

ՍՈՆԱ - (չնկատելու տալով նրա նեղվածությունը): Լավ ես պատմում:

ԿԱՄՈ - Ո՛նց էի մոռացել, որ թղթակից ես:

ՍՈՆԱ - Լավ, անջատում եմ: (Նկատելով, որ Կամոն անսպասելի քնել է, անջատում ծայնագրիչը:)

ԱՐՄԵՆ - Ես գնացի, տղերքը սպասում են: (Հեռվից:) Սոնա, միևնույն է, գեղեցիկ ես:

ԿԱՄՈ - (բացում է աչքերը, ժպտալով): Խեղձ էրեխեն սիրահարվել է:

ՍՈՆԱ - (նրան դուր է եկել Արսենի վերաբերմունքը, ժպտում է, բայց կեղծ զայրույթ է ցույց տալիս): Գնա՛, խենթ տղա: (Մեկուսի:) Եթե իմանայիր, ո՞նց եմ սիրում Սամվելին, հաճոյախոսություն չէիր անի: Եթե Սամվելն իմանար, թե իրեն ո՞նց եմ կարոտել, չէր հեռանա ինձնից, չէր գա էստեղ: Գիտեմ, որ սիրում է հայրենիքը, բայց գիտեմ նաև, որ պատերազմ է եկել ինքն իրենից հեռանալու, ինձնից հեռանալու, ծնողների՝ իմ մասին անընդհատ չարչրկող բամբասանքներից հեռանալու համար...

ԱՐՄԵՆ - (ավելի հեռվից): Սոնա, ես քեզ սիրեցի:

Սոնան ժպտում է անորոշ: Տնից դուրս է գալիս Ամային, ձեռքին բրինձով լիքը սկուտեղ է, որը դնում է Սոնայի կողքին:

ՍՈՆԱ - Էդքան բրինձն ինչի՞ ես մաքրում:

ԱՄԱՅԻ - Ասում եմ՝ քիչ կլինի:

ՍՈՆԱ - (աննկատ միացնում է ծայնագրիչը): Ո՛ւմ համար քիչ կլինի: Մենակ դու էդքանն ուտելո՞ւ ես:

ԱՄԱՅԻ - Վա՛յ, աղջի, բա տղերքը:

ՍՈՆԱ - Տղերքին ծաշ չեն տալիս:

ԱՄԱՅԻ - Իրանք են էփում, բայց տղամարդու էփած ծաշն ի՞նչ ա: Զինվորին մոր ձեռի հաց ա պետք: (Այլ տոնով:) Աղջի, քեզ ինչի՞ ես բացել: Էսքան տղամարդու մեջ ծնկներդ ինչի՞ ես բացել:

ՍՈՆԱ - (փեշը ներքև քաշելով): Ի՞նչ անենք, ծունկ է, էլի...

ԱՄԱՅԻ - Ախր, էդ տղամարդիկ են մեղք, թշնամուն դիմադրեն, թե՛ քեզ:

ՍՈՆԱ - (ծիծաղելով): Համ ինձ, համ թշնամուն:

Ամային գնում, իր հին շորերը բերում, տալիս է Սոնային:

ԱՄԱՅԻ - Առ, հագո՛ր գցի... ամոթ է:

ՍՈՆԱ - (շորերը դնում է մի կողմ): Ամայի ջան, հետո կհագնեմ: (Սկուտեղը դնում է ծնկներին, բայց ձեռքերը դողում են ու բրինձը մի քիչ թափում է:) Վա՛յ...

ԱՄԱՅԻ - *(չնկատելու տալով նրա վրիպումը):* Մենք մեր ժամանակին շատ նեղություն տեսանք, ասինք՝ գոնե ջահելներն ապրեն, բայց Սստված հայի ամեն սերունդի պատերազմ է տեսցնում, որ հայը գենք բռնելը չմոռանա: Մոռացավ՝ տուն ու տեղից կզրկվի, մոռացավ՝ ո՛չ կյանքի տերը կլինի, ո՛չ հայրենիքի:

Դադար:

ՍՈՆԱ - *(ցույց է տալիս Սամվելի լուսանկարը):* Ամայի, ճանաչում ես:

ԱՄԱՅԻ - *(նայում է ուշադիր):* Հո՛վ ա...

ՍՈՆԱ - Ամուսինս է, Ամայի ջան, տեսած կամ: Ասում են՝ էստեղ է եղել:

ԱՄԱՅԻ - Սամոն է, աղջի, Մահապարտ Սամո են ասում: Էն Լոպազ Դավիթն էլ անունը Լևիտան է դրել: Էստեղ էր, բայց գնացել է: Չիմացա՝ ինչի՞ գնաց, կամ ուր: Չիմացա՝ Սիմոնը տեղ ուղարկեց, թե՛ ինքն իրանով գնաց: Չիմացա: *(Չգացվում է, որ ավելին գիտի, քան ասում է:)* Ո՞վ գիտե, գուցե Սիմոնը մի բան իմանա:

ՍՈՆԱ - *(լուսանկարը դնում է գրպանը, վեր է կենում տեղից):* Ես գնացի:

ԱՄԱՅԻ - Ո՞ր:

ՍՈՆԱ - Դիրքերը: Տղերքի մոտ:

ԱՄԱՅԻ - Վա՛յ, կնկա տեղը դիրքերում չի: Կինը պիտի սպասի, պիտի համբերություն դառնա ու սպասի:

ՍՈՆԱ - Երևանից էստեղ եմ հասել, որ ձեր տանը նստեմ-մնամ: *(Գնում, հետո վերադառնում է:)* Երբ պիտի ամուսնանայինք, բայց բաժանվեցինք... Էդ ժամանակ մի անգամ ամուսնացած էի ու բաժանված: Առաջին ամուսնության ժամանակ երեխա չունեցանք: Մեղքն ինձ վրա գցեցին... Բաժանվեցինք:

ԱՄԱՅԻ - Վրո՛յ հող գա գլխիս, էս ինչ ես ասում, ախչի:

ՍՈՆԱ - Սամվելի հետ ռադիոյում էինք աշխատում: Ինձանից հինգ տարով փոքր էր, բայց... իրար սիրում էինք: Ծնողները համաձայն չէին, որ իրենց տղան բաժանված կնոջ հետ ամուսնանա: Ամեն առիթով խառնվում էին... Չգիտեմ որտեղից էին իմացել, որ չբերեմ, ամեն առիթով աչքս էին խոթում: Սամվելի կյանքն էնքան կերան, որ թողեց հեռացավ: Ասենք, թույլ էր, իր ներսում ամուր չէր: Ինքը չէր որոշողը, այլ մերը...

ԱՄԱՅԻ - Աման...

ՍՈՆԱ - Քանի քաղաքում էր, դիմանում էի, երբ իմացա, որ կռիվ է եկել... Գործուղում վերցրեցի ու առաջին ուղղաթիռով հասա

Ղարաբաղ: Հիմա դիրքից-դիրք, ջոկատից-ջոկատ Սամվելին եմ ման գալիս: Դու իմ մերն ես ու քեզ ասում եմ՝ առանց Սամվելի ապրել չեմ ուզում ու չեմ կարողանա: Էս շորը նրա սիրածն էր: Ծանո էր սիրում, որ հագնում էի... Թե տեղը գիտես կամ լուր ունես՝ ասա...

ԱՄԱՅԻ - *(շփոթված):* Չէ, բալա, չէ... *(Սոնան հեռանում է: Խաչակնքում է նրա հետևից:)* Աստված պահպանի: Իրեն մոռացած՝ մարդու հետևից է էկել: Ո՞վ կհասկանա սիրող կնկա սիրտը: Թե հասկանա՝ մենակ էդ սիրտն Ստեղծողը:

Տեսարան 2

Բեմի կենտրոնում խրամատն է: Տղամերից ամեն մեկն իր դիրքում է: Կրակոց չկա, բայց տղամերն աչալուրջ են: Մարգարը նստել է գնդացրի մոտ: Դավիթը սրինգ է նվագում: Ավարտվում է նվագը:

ՄԱՐԳԱՐ - Տրուբա՛, այ՛ Տրուբա: *(Կորյունը ծայն չի հանում:)* Արա, Կորյուն:

ԿՈՐՅՈՒՆ - Հը՛:

ՄԱՐԳԱՐ - Ինչի՞ ձեն չես հանում: Գիտեմ, որ ականջներիդ մեջ բամբակ կա, բայց հո չե՛ս խլացել:

ԿՈՐՅՈՒՆ - Ի՞նչ ասեմ: Բո ամեն ասածին որ պատասխանեմ...

ՄԱՐԳԱՐ - Ուրեմն ախպորս ա-

սեմ... *(Որևէ մեկին չդիմելով:)* Էն ժամանակն էր, որ թուրքերը գնում էին Հայաստանից: Բարձում էին ունեցած-չունեցածներն ու գնում: Մի մասը հայ էր ձևանում: Ի՞նչ անեինք, որ իմանայինք՝ անցնողը Հայաստանում ապրող թու՛րք է, թե հայ: Ու ձևը գտանք: Կանգնեցնում էինք ու հարցնում՝ ասա տրուբա: Ոչ մի թուրք տրուբա ասել չի կարողանում: Ասում են թուրուբա: *(Քրքջում է:)* Թուրուբա, այ՛ Թուրուբա...

ԴԱՎԻԹ - Արա, զգվեցրիր, կռիվդ արա, էլի, տրուբա, հա տրուբա...

ՄԱՐԳԱՐ - Լոպազ, սուս: Կորյուն... այ՛ Կորյուն:

ԿՈՐՅՈՒՆ - Ա դե հը՛...

ՄԱՐԳԱՐ - Տանը մե՞ծ հայելի ունե՞ք:

ԿՈՐՅՈՒՆ - Հա ինչի՞:

ՄԱՐԳԱՐ - Որ գնաս տուն, կկանգնես դեմն ու ուշադիր կնայես: Էնքան ես կրակելիս բերանդ բացել, որ հիմի բերանդ բաց ես ման գալիս:

Ծիծաղ է պայթում: Միմոնն էլ է թույլ ժպտում:

ԿՈՐՅՈՒՆ - *(գլուխը հանում է խրամատից, ծայն տալիս թուրքի կողմը):* Ահմա՛դ, այ՛ Ահմա՛դ, Մահմա՛դ բուդա դը՛ր... *(Ահմա՛դ, այ՛ Ահմա՛դ, Մահմա՛դն ո՛ր է):*

ԹՈՒՐՔԻ ՁԱՅՆ - Վազգեն, այ
Վազգեն... Իցի սյուրսմ, սուկա...

ԿՈՐՅՈՒՆ - Վայ, ես քո հավատն
անիծեմ, Ահմադ, դու Ղարաբա-
ղում ո՞ւմ ես կորցրել, որ էկել ես:
Թե բռնեցի, մեծ կտորդ ա-
կանջդ եմ թողնելու, իմացիր:

ՍԻՄՈՆ - Վերջ տուր... զենքդ ստու-
գիր:

ԿՈՐՅՈՒՆ - (կատակի տալով): Միշտ
պատրաստ, կամանդիր ջան:

**Թուրքերից մեկի նյարդերը տեղի
են տալիս, կրակում է: Տղամերը
պատասխանում են: Մարտ է
սկսվում: Տղամերն սկզբում չեն
մկատում, որ խրամատ է մտել
Մոնան: Նա վախեցած է, բայց
աշխատում է ցույց չտալ:**

ՄԱՐԳԱՐ - (մարտը չդադարեցնե-
լով): Վայ, էս ի՞նչ եղնիկ է: Անուշ
ջան, դու ո՞ւմն ես:

ՎԱՀՐԱՄ - Վո՛ւ-յի...

**Մոնան կուչ է եկել՝ երկու ձեռքով
գլուխը բռնած: Միմոնը հայաց-
քով սաստում Մարգարին, վտան-
գավոր դիրքից կնոջը քաշում է մի
կողմ՝ խրամատի խորքը:**

ՍԻՄՈՆ - Մի վախեցեք, մի վախե-
ցեք, կռացեք:

ՍՈՆԱ - Արդեն չեմ վախենում:

ՍԻՄՈՆ - (աչքը մարտադաշտից
չկտրելով): Էլի դո՞ւք եք, ի՞նչ
գործ ունեք էս Սողոմ-Գոմորի
մեջ:

ՍՈՆԱ - Այն ժամանակ չհասցրե-
ցինք, հիմա ծանոթանանք,

Հանրային ռադիոյի թղթակցու-
հի Սոնա Բարսեղյան:

ՍԻՄՈՆ - Զո պետն ինչո՞ւ ինքը չի
եկել, որ քեզ է ուղարկել էս կրա-
կի բերանը: Գոնն մարտի ժա-
մանակ չգայիք...

ՍՈՆԱ - Երբ եկա, կրակոց չկար:

ԱՐՄԵՆ - (մոտենում է): Ամայու
տանն է ապրում, կամանդիր,
գիտես:

ՍԻՄՈՆ - (արդեն ներողամիտ): Ա-
սացիր՝ անունդ ի՞նչ է:

ՍՈՆԱ - Սոնա:

ՍԻՄՈՆ - Թոռնիկիս անունից է...

Ասում ես՝ ինչի ես եկել դիրքեր:

ՍՈՆԱ - Լուր տանելու: Աշխարհը
ձեզնից լուր է ուզում իմանալ:
Ձեր մայրերը, կանայք, երեխա-
ներն ու թոռները լուր են ուզում ի-
մանալ: Դրա համար էլ եկել եմ:
(Միացնում է ծայնագրիչը:)

Պատմեք վերջին մարտի մասին:

ՍԻՄՈՆ - Ի՞նչ պատմեմ, այ բալա:
Կռիվ է, էլի... Դավիթ:

ԴԱՎԻԹ - (վազելով մոտենում է):
Հա, կամանդիր:

ՍԻՄՈՆ - Էս աղջկա հետ խոսիր:
Պատմիր, թե ոնց ենք կռվում...

Ինչ ուզում ես, պատմիր: Գի-

տես, որ կարգին խոսել չգիտեմ:

ԴԱՎԻԹ - Ոնց ասես: (Սոնային.)
Արի քեզ պատմեմ գնդակների
տակ պարելու իմ պատմությունը:

ՄԱՐԳԱՐ - (աչքով է անում): Գնաց
կաշը...

ՍՈՆԱ - *(միացրել է ծայնագրիչը):*

Պատմիր, Դավիթ:

ԴԱՎԻԹ - Գրական խոսեմ:

ՍՈՆԱ - Ոնց հարմար է:

ԴԱՎԻԹ - Ուրեմն, քվորս ասեմ, Ղարաբաղում գարունը շուտ է բացվում, ծառերը ծաղկում են այնպես, ասես սիրահարված աղջկա անուշ ժպիտ լինեն, նրանց բույրը տարածվում է և օդը լցվում է ծաղկափոշու հոտով:

ՄԱՐԳԱՐ - Ինչ էլ բառապաշար ունի մեռածը...

ԴԱՎԻԹ - *(անտեսելով նրան):* Թշնամին կրակում էր խելագարի պես: Իսկ մենք գնդակ չէինք փչացնում, զինամթերքը խնայում էինք: Ախր, ամեն գնդակը մեր ժողովրդի լղար մարմնից էր պոկվում: Մնացինք այդպես երկու ժամ: Ուզում էի գոռալ, ուզում էի մի ցատկով դուրս գալ խրամատից, հասնել թուրքին, բռնել կոկորդն ու էս ձեռքերովս խեղդել: *(Ձեռքերը առաջ է մեկնում, ասես ուզում է բռնել Սոնայի կոկորդը: Սոնան ետ է քաշվում ժպտալով:)* Սպասեցի էլի մի քիչ ու դարձա Սիմոնին. «Արի անսպասելի հարձակվենք: Թուրքը կարծում է, թե խեղձացել ենք, չի սպասում մեր հարվածին»: Սիմոնը թե՛ չէ, զոհ կտանք: Ասի՝ թե զոհ ենք տալու, էդ միակ զոհը թող ես լինեմ, էլ չեմ համ-

բերում, չեմ կարող թուրքի առաջ էսքան խեղձանալ: Ասի ու ինձնից անկախ դուրս թռա խրամատից: Գնդակների տակ սկսեցի պարել...

ՍՈՆԱ - Չվախեցա՞ր:

ԴԱՎԻԹ - *(ավելի է ոգևորվում):* Չէ, էնքան կատաղած էի աշխարհի, թշնամու, Սիմոնի ու իմ վրա, որ վախ չկար: Համ էլ գնդակը վախենում է քաջից:

ՄԱՐԳԱՐ - Քաջից չէ, շաշից: Մորդ աղոթքը պահեց քեզ, ոչ թե քաջությունդ:

ՍՈՆԱ - Հետո՞:

ԴԱՎԻԹ - Հետո Արսենը դուրս թռավ խրամատից, ինձ պառկեցրեց գետնին: Էրեսս կաավ հողին, քթիցս արուն էկավ: Էնպես որ, Արսենին մի կյանք եմ պարտք, ինքն էլ՝ արնոտ քիթ:

ԿՈՐՅՈՒՆ - Էդպիսի խելառությանը թուրքին չես հաղթի:

ԴԱՎԻԹ - Ախպեր ջան, որ մարդը խելառ չլինի, ո՞նց կդիմանա էստեղ: Ուրիշներն առուտուր են անում, Հայաստանի ունեցած-չունեցած պղինձը հավաքում, տանում, ծախում են թուրքերին, որ թուրքը գնդակ սարքած կրակի մեզ վրա, իսկ մենք թուրքի դեմ կանգնում ու հայրենիք ենք պահում:

ՍՈՆԱ - Բայց...

ԴԱՎԻԹ - Զուրս, թող ասելիքս ավարտեմ: Բայց, որ ասեն՝ քեզ

մի բեռ ոսկի ենք տալիս, Արցա-
խը թող, արի Էրևան, չեմ գնա:

ՍՈՆԱ- Ինչո՞ւ:

ԴԱՎԻԹ - Էս Քարակապ գյուղը,
գյուղի սուրբը դարձած Ամայուն
ո՞նց թողնեմ թուրքի բերան,
գնամ առոք-փառոք կյանք ա-
նեմ:

ՄԱՐԳԱՐ - Լոպագ, էն ջրհորի
պատմությունը պատմի:

ԴԱՎԻԹ - Ի՞նչ ես կպել՝ պատմի,
հա պատմի, կարո՞ղ ա, պատ-
մածներիս մեջ սուտ բան կա:
Թե սուտ կա, ասա, թե չէ՝ լո-
պագ: Լոպագը մորքուրդ ա:

ՎԱՀՐԱՄ - Վերջացրեք, արա՛:

ԿՈՐՅՈՒՆ - Այ Դավո ջան, բանի
տեղ մի դիր: Կարկուտն ա, ա-
ռանց մտածելու

խոսում ա:

ՍՈՆԱ - Էդ ի՞նչ ջրհորի պատմու-
թյուն է:

ԴԱՎԻԹ - (տրամադրությունն ըն-
կել է): Լավ, այ քուր, թող մնա
հետո:

ԱՐՄԵՆ - Սոնա ջան, Դավիթը հո մի
պատմություն չունի՞, որ պատմի:
Ծատ կա ու բոլորն էլ՝ ճիշտ:

ԴԱՎԻԹ - Մենակ էս ջահելի բե-
րանը դուզ խոսք կա, թե չէ բո-
լորդ...

ու գործն ավարտելով՝ կանգնում
է սեղանի մոտ: Տնից դուրս է գա-
լիս Կամոն, հեռակների վրա
ցատկոտելով մի կերպ հասնում
ու նստում է:

ԿԱՄՈ - Սոնան ո՞ր գնաց, Ամայի:

ԱՄԱՅԻ - Դիրքեր: (Մեկուսի:) Էդ
աղջիկն ի՞նչ էղավ:

ԿԱՄՈ - Ամայի ջան, քո իսկական
անունն ի՞նչ է:

ԱՄԱՅԻ - Հերիքնագ:

ԿԱՄՈ - (փորձում է Ղարաբաղի
բարբառով խոսել): Բա Ամային
հի՞նչ ա:

ԱՄԱՅԻ - Իմ կորած մինուձարը՝
Գևորգն էր պուժուր ժամանակ
ինձ էղպես ասում: Կրճատել էր
«Այ մայրիկըն, դարձրել Ամայի:
(Մեկուսի:) Տեսնես էրեխես ո՞ր
հանդում է, ո՞ր քարի կամ թփի
տակ:

ԿԱՄՈ - (ուզում է շեղել տխուր
մտքերից): Ճիշտն ասա, ոչ մե-
կին չեմ ասի, ջահել ժամանակ
ըսկի մարդուդ խաբած կա՞մ:

ԱՄԱՅԻ - Սարսաղ, գնդակը ոտ-
քիդ փոխարեն լեզուդ պտի ծա-
կեր:

ԿԱՄՈ - Մարդու չեմ ասի...

ԱՄԱՅԻ - Կամո տղա, իմացիր, որ
կյանքում ո՞չ իմ հողին եմ դավա-
ճանել, ո՞չ հավատիս, ո՞չ
մարդուս: Ու մեկ էլ թե էղպիսի
բան ասես, շատ կնեղանամ
քեզնից:

ԿԱՄՈ - Լավ, մի նեղանա, կատակ
էր:

Տեսարան 3

Ամայիի տան բակը: Ամային
ափսեները շարում է սեղանին,
լվացած զինվորական շորերն ու
վիրակապեր փռում է պարանին

ԱՄԱՅԻ - Լեղանալը չնեղացա, բայց մի բան պատմեմ: Մինչև էսօր էդ պատմության տերը սրանք են եղել (*ցույց է տալիս շուրթերը*), բայց հիմի էդ պատմությունը ոչ ոքի վնասել չի կարող: Թևանի անունը լսած կամ: Թևան Ստեփանյանի... (*Կամոն գլխով է անում:*) Թուրքն ինչ խաղ ասես խաղացել էր, որ դարաբաղցուն խաբեր, համոզեր ու Ղարաբաղը գրավեր: Տեսավ, որ համոզելով բան չի դուրս գալիս, ուժով էկավ: Բայց մեր տղամարդիկ ոտքի ելան, Թևանի հետևից գնացին: Մեր ձորի գյուղերից քշեցին թուրքերին: Զահել հարս էի՝ 17 տարեկան: Բժշկելը փոքրուց էի սովորել տատիցս: Էս ամբողջ ձորն ինձ գիտեր: Գևորգիս հերը Թևանի հետ էր ու ես մենակ էի տանը: Վախ չունեի, դուռս միշտ բաց էր: Թե Տերը մեկին բժշկելու շնորհք է տալիս, նա պիտի գոհություն հայտնի ու էդ շնորհքը ծառայեցնի մարդկանց...

ԿԱՄՈ - Հետո՞:

ԱՄԱՅԻ - Գիշերվա կեսին դուռը թակեցին: «Դուռը բաց էե,- ասացի: Երեք տղամարդ ներս եկան: Մեկը վիրավոր էր: «Քույրիկ,- թուրքերեն խոսեց տարեցը,- յարալու է ախպերս: Թե նրան փրկող լինի՝ դու ես: Կո՞վը առողջ տղամարդու հա-

մար է, վիրավորի համար կո՞վը վերջանում է: Օգնիր, ու Ալլահը թող քո նեղյալին հասնի»:
ԿԱՄՈ - Չասիր՝ Ալլահը ձեր դատաստանն անի, գնացեք:

ԱՄԱՅԻ - Իմ արիեստն է, բժիշկը հայ ու թուրք չի հարցնում... Չերկարացնեմ. վիրավորին թողեցին-գնացին: Թուրքը մնաց: Մահլամ դրեցի, մի շաբաթից ոտքի կանգնեց: Որ թուրքի ասկյար կար տանը, սաղ գյուղը գիտեր, բայց ոչ ոք ոչինչ չէր ասում, քանի որ վիրավորը հաշվից դուրս է...

ԿԱՄՈ - Հետո՞:

ԱՄԱՅԻ - Երբ ոտքի կանգնեց, վիրավորից փոխվեց թուրքի ու շնանալու փորձ անեց... մի գիշեր երբ փորձեց... հանեցի, այ, էս... (*Հագուստի տակից հանում է դաշույնը:*) Քրքջաց ու շարունակեց իրենը: Տեսա, որ ճարս կտրվեց, էս խանչալը դրեցի կողին ու սեղմեցի սրտի մեջ...

ԿԱՄՈ - Է՞:

ԱՄԱՅԻ - Գիշերով տարա, ձորում հորեցի: Անցավ չորս-հինգ ամիս, ախպերը գիշերով եկավ: Ես սուտ խոսեցի, Կամո տղա: Ասեցի՝ քո ախպորը բժշկել եմ մի շաբաթում: Ելել է իմ տնից ու էլ երեսը չեմ տեսել: (*Սեղանին հաց, պանիր է դնում, կենտրոնում՝ գրաֆիկով տնական օղի ու բաժակներ:*)

ԿԱՄՈ - Ամայի, հավատա, որ մորս
չափ սիրում եմ քեզ: Պատերազ-
մը բարով-խերով վերջանա՝
քեզ տանելու եմ Էրևան:

ԱՄԱՅԻ - Առանց էս հողի ես չկամ:

ԿԱՄՈ - Մի ամսով եմ տանելու:
Տանեմ, մի լավ բիծու հետ պսա-
կեմ ու էրկուսիդ բերեմ, թողնեմ
Քարակապում:

ԱՄԱՅԻ - Վերվարած տղա, թե հի-
մի պսակվեմ, փեսացուն մահը
պիտի լինի: Իմ հալիվորի քա-
ռասունքը դեռ չի լրացել... Ա-
սենք, ինչ եմ խոսում, քո գլխին
խելք չկա:

**Ծիծաղում են: Գալիս են Դավի-
թը, Սոնան, Կորյունն ու Մարգա-
րը՝ զենքերն ուսերին գցած:
Տեղավորվում են՝ ով որտեղ: Սո-
նան ձայնագրում է Դավիթին:
Մարգարը գնում է բեմից, հետո
բեմ է թռչում կոտրված գլոբուս,
հետևից՝ Մարգարը, որ գնդակի
պես խաղում է հետը:**

ԿՈՐՅՈՒՆ – (միանում է Մարգա-
րին): Էս որտեղից...

ՄԱՐԳԱՐ - Թփերի միջից գտա...
երևի դպրոցի տեղափոխության
ժամանակ ձեռքներից պոկվել,
ընկել է թփերի մեջ, կամ էլ
փչացած է եղել, շարտել են:
Բռնիր: (Հարվածում է:)

ԿՈՐՅՈՒՆ - (որսալով): Բայց արժե՞,
որ տշենք...

ՄԱՐԳԱՐ - Դու չգիտես, որ էս
գունդը ուժին է ենթարկվում: Ով
ուժ ունի, տիրում է նրան, ով ու-

ժեղ է, տշում է՝ ոնց ուզի... Դու
չտշես, ուրիշն է տշելու, տշի...

**Կորյունը գլոբուսը շարտում է
ձեռքով, այն հարվածելով Դավ-
թին, գլոբուսն է նրա ոտքերի
տակ:**

ԴԱՎԻԹ - Արա, հո էրեխա չե՞ք, թո-
ղեք, գործ ենք անում... Լրիվ
խելառել եք, արա...

ՄԱՐԳԱՐ - Լավ, լավ... Սոնա ջան,
խաղաղ ժամանակ լիներ ու իս-
կական գնդակ, կտեսնեիր, թե
Մարգարն ինչ պրիյուններ է ա-
նում գնդակով: Թե չէ Դավրն...
Գործ եմ անում: Լոպագանում
ես, էլի:

ԴԱՎԻԹ – (անտեսելով Մարգա-
րին): Էդ օրը իմ կյանքի ամե-
նասն օրերից մեկն է, բայց հենց
էդ օրվա մասին եմ ուզում
պատմել: Թե ինչի էր սև՝ կա-
սեմ: (Ամային այս ընթացքում ե-
կել-կանգնել է նրանց կողքին:)
Բարով, Ամայի ջան:

ԱՄԱՅԻ - Ինչի՞ ուշացաք: Ինչ կա,
տղերքը ոնց են:

ԴԱՎԻԹ - Այ քո ցավը տանեմ, մի-
լիցա հո չե՞ս, որ հարցաքննում
ես: Հերթով ասեմ. ուշացանք,
որովհետև Սիմոնը վախենում
էր՝ թշնամին թիկունքից խփի:
Երկրորդն էլ՝ ամեն ինչ լավ է:
Երրորդ հարցիդ պատասխանը՝
տղերքը բողկի պես են: Ես էլ, ը-
հի՛ր, էկել եմ, ավելի ձիշտ՝ մեր
քրոջն եմ բերել:

ԱՄԱՅԻ - (Սոնային): Դո՛ւ ինչի սոված-ծարավ քեզ դիրքերը գցեցիր: Մի նշխարք դնեիր բերանդ, նոր:

ՍՈՆԱ - Սոված չեմ, Ամայի ջան: Սիրտս խառնում է, երևի թունավորվել եմ:

ԱՄԱՅԻ - Սոված չե՞ս... Հա՛, քո մոր լուսը կուրանա: Մի բան իմացա՛ր, Սիմոնին հարցրի՛ր:

ՍՈՆԱ - Չէ, ժամանակ չեղավ: Տես: (Յույց է տալիս գնդակներից սարքած խաչը:)

ԱՄԱՅԻ - Մեղա՛ Աստծու, էդ չարից ո՞նց են բարի սարքել: (Դավիթին:) Բա տղերքը չե՞ն գալու, փլավը սառեց:

ԴԱՎԻԹ - Էլի նեղությո՛ւն ես քաշել: Տղերքը հաց կերել են, ինչի՞ ես տանջվել:

ԱՄԱՅԻ - Մեղա՛ Աստծու, տղա, ծաշ էփելը տանջանք է:

Սոնան ձայնագրելով, ժպիտը դենքին հետևում է նրանց խտասկցությանը:

ԴԱՎԻԹ - Մի նեղանա, Ամայի ջան, տղերքը չեն ուզում քեզ չարչարել:

ԱՄԱՅԻ - Մերը տղի համար ծաշ էփի՛ տանջանք է: Եկեք, նստեք: (Դավիթին նստեցնում է սեղանի մոտ, կանչում է Մարգարին ու Կորյունին: Կորյունը գլոբոսն զգուշությամբ տանում, դնում է դաշնամուրի կողքին ու Մար-

գարի հետ նստում է սեղանի մոտ:)

Սոնան անջատում է ձայնագրիչը, փորձում է ուտել, չի կարողանում:

ԱՄԱՅԻ - (աչքի տակով հետևում է Սոնային, կես-կատակ): Հերիք ա էլած-չելածդ բաց արած էս տղամարդկանց մեջ դես-դեն ընկնես: Բեզ ասեցի՝ գնա, մի կարգին շոր գցի հագդ:

Տղամարդիկ ծիծաղում են: Սոնան էլ ծիծաղում ու ներս է վազում:

ԴԱՎԻԹ - Այ մեր, բա դո՛ւ ինչի չես ուտում:

ԱՄԱՅԻ - (գոգնոցի ծայրով թաքուն սրբում է աչքերը): Ա՛յ բալա, Ամայու օրը հասել է: Երկնավոր Տերն ամեն օր ականջիս շնչում է. «Հերիքնազ, մեղավոր հոգի, օրդ մոտ էե,- ու ես Լրան ամեն օր խնդրում եմ, որ մի քիչ էլ թողնի՛ մնամ էս հողի վրա, գործերս ավարտեմ, ծագերիս նորից բնիս մեջ հավաքեմ, նոր...

Տղաները լուռ ուտում են: Սոնան գալիս է Ամայիի զգեստը հագին: Բոլորը մի պահ դադարում են ուտել ու նրան են նայում: Հետո նայում են Ամայիին ու փոթկում:

ԴԱՎԻԹ - (Սոնային գննելով): Այ, էս ուրիշ հաշիվ... չնայած ըսենց էլ վատը չես:

ՄԱՐԳԱՐ - Մի քիչ Ամայի դարձար:

ԿՈՐՅՈՒՆ - Արա, էս խեղճ աղջկանից ի՞նչ եք ուզում: Ամայու շորերը չի հագնում, աչքերով ուտում եք, հագնում ա, ծիծաղում եք: *(Սոնային.)* Մի վախենա, քուր, քեզ մի ձեռք քո հագով զինվորական շոր կտամ:

ԿԱՄՈ - *(բացում է աչքերը, նայում Սոնային ու երգում է):* Чучеламочела...

ԿՈՐՅՈՒՆ - *(օղի է լցնում բաժակները):* Ամայու քաշած թթի օղին թունդ կլինի: *(Կամոյին.)* Ախպեր, արի, արի մի բաժակ բան խմենք:

ԿԱՄՈ - Անուշ արեք, տղերք, խմելու սիրտ չկա:

ՄԱՐԳԱՐ - Դո՛ւ գիտես, ախպեր: *(Սեղանակիցներին.)* Էն անգամ խմեցինք, հարի՛ֆ Էդոն իրեն կորցրել էր: Դաժե իրա անունն էր մոռացել: Էրկու սուտկա քնեց, մինչև խելքը գլուխն էկավ: *(Կամոյին.)* Զեզ էլ լցնե՛մ մի քիչ:

ԿԱՄՈ - *(նայում է Ամայուն):* Հը՛...

Ամային գլխի շարժումով հավանություն է տալիս:

ԴԱՎԻԹ - Է, ժողովուրդ, ողջ ըլնենք: Մեր գործի հաջողության համար:

ԿԱՄՈ - Զո սասձով:

ՄԱՐԳԱՐ - *(Սոնային դուր գալու միտումով):* Այ ախպեր, սաղս էլ գիտենք, թե ինչի համար ենք է-

կել ու գիտենք, թե մեր գործը որն ա: Բայց ես ուզում եմ խմենք էս աղջկա կենացը, որ իր տաք տեղը թողել, էկել, հասել ա էստեղ: Կենացդ, Սոնա ջան:

ՍՈՆԱ - *(ամաչկոտ):* Լավ, էլի...

ԴԱՎԻԹ - *(Սոնային):* Ասում ես՝ սիրտդ խառնո՞ւմ է: *(Սոնան գլխի շարժումով հաստատում է:)* Բա որ թունավորվել ես, ինչի՞ թթի օղի չես խմում: Գիտե՛ս, ո՞նց է օգնում: Չէ՛, տղերք... *(Աչքով է անում սեղանակիցներին:)*

ՍՈՆԱ - Հա՛ որ...

ՄԱՐԳԱՐ - Հա, թթի օղին դեղ է:

ՍՈՆԱ - Ախր, կյանքիս մեջ էդպիսի թունդ խմիչք չեմ խմել:

ԿՈՐՅՈՒՆ - Մի օր պիտի փորձեիր՝ էդ մի օրը թող էսօր լինի:

ՍՈՆԱ - *(միանգամից խմում է, շունչը կտրվում է):* Էս ի՞նչ էր... սա ո՞նց եք խմում:

ՄԱՐԳԱՐ - Բա՛, պիտի խմեք, որ խմողների դադրն իմանաք: Հաց կեր:

ԿԱՄՈ - *(Դավիթին):* Լոպազ ախպեր, մի բան նվագի, լսենք:

ԴԱՎԻԹ - Ծվի՛:

ԿԱՄՈ - Չէ, դաշնամուր:

ԴԱՎԻԹ - Ես դաշնամուր նվագո՞ղ եմ: Հազար տարի մատս էդ գործիքին չի կպել:

ԿԱՄՈ - Ինչքան էլ վատ նվագես, գոհ կմնանք: Հո Ծոպենը չե՛ս, որ լավ չնվագես, ամոթ համարվի:

Դավիթը վատ է նվագում, բայց տղաներն ուրախ ծափ են տալիս: Կորյունը Ամայուն հրավիրում է պարի: Բոլորն են պարում: Նաև Սոնան:

ՍՈՆԱ - Պարեք, պարելով պիտի հաղթենք, պարեք... *(Հանկարծ կանգ է առնում ու որքան հնարավոր է հաստատուն քայլերով մոտենալով Կորյունին՝ գրկում է նրան:)*

ԿՈՐՅՈՒՆ - *(կանգ է առնում):* Յն...

ՍՈՆԱ - *(հիմա նա խոսում է ուրիշ մեկի հետ):* Չարմացմբ, որ քեզ գտել եմ: Ախր, դիրքից-դիրք անցնելով, ջոկատից-ջոկատ փնտրելով եկել, հասել եմ էստեղ ու...

ԿՈՐՅՈՒՆ - Այ քուր, քեզ ինչ եղավ:

ՍՈՆԱ - *(չի լսում նրան):* Թողեցիր, քաղաքից փախար, ինձանից փախար, բա ինքդ քեզանից... Մոռացել ես ինձ: *(Բռնում է Կորյունի օձիքից ու թափահարում:)* Ասա, մոռացել ես: Մի համոզիր քեզ ու աշխարհին, դու ինձ մոռանալ չես կարող: Ես էլ քեզ չեմ մոռացել: Տես, քո սիրած շորն եմ հագել, տես, քո սիրած կոնֆետներն են բերել, քո ժամացույցը: Էստեղ եմ հասել քեզ համար...

ԿՈՐՅՈՒՆ - Ես... ըրը... ախր...

ՍՈՆԱ - *(շշուկով):* Արի ամեն ինչ թողնենք ու գնանք: Մի հարցնի՛ ուր: Աշխարհը մեծ է: Ինչի՞ պիտի մենք հենց էս պատերազմի

մեջ մնանք... մի խաղաղ անկյուն կգտնենք ու մեր բույնը հյուսենք: Արի գնանք, խնդրում եմ:

ԴԱՎԻԹ - *(Սոնային զգուշորեն տանում, նստեցնում է սեղանի մոտ, Ամայուն):* Տեսնո՞ւմ ես, ինչ ուրախ ենք ապրում, ասեցինք՝ պատերազմից գողացած օր է, ասեցինք՝ մի քիչ ուրախանանք... Էն էլ մեր Սոնան...

ՍՈՆԱ - *(արդեն սթափվել է, զայրացած):* Սոնան՝ ինչ: Սոնան... Եկած-չեկած՝ բոլորդ աչքերդ չռել եք վրաս: Լայում եք, հայացքներով խժռում, թե հնար ու ճար ունենաք, հում-հում կուտեք: Լայում եք, խոսում եք, սեր եք բացատրում, սոխ եք նվիրում որպես ծաղկեփունջ: Ինչ է, կին չե՞ք տեսել, ոտք ու ձեռք չե՞ք տեսել: Կին եմ, էլի, աշխարհի ստեղծման օրից աշխարհի մեղքը ուսերիս տանող կին: Հիմա էլ Ամայու շորերն եմ հագել, ու էլի նայում եք... Չե՞ք հասկանում, որ մարդը մենակ մարմինը չէ, մարդուն ճանաչելու համար պիտի իմանաք՝ ինչ կա սրտում...

ԱՄԱՅԻ - *(մոտենում, գրկում է):* Հանդարտվիր, բալես, տղամարդը նրա համար է, որ նայի, կինը նրա համար է, որ նայեն ու խոսք ասեն... Կարգ է, մի նեղացիր: Հանգստացիր:

Սոնան փաթաթվում է Ամայուն ու լաց է լինում:

ԴԱՎԻԹ - (Ամայուն): Իսկ դու ասում ես՝ մեռնեմ:

ԱՄԱՅԻ - (հասկանալով, որ Դավիթն ուշադրությունը շեղելու համար է ասում, Սոնային նստեցնում է սեղանի մոտ, քմծիծաղում): Ա՛յ խելառ, բա որ մեռա, ի՞նչ պիտի անես:

ԴԱՎԻԹ - (լուրջ): Դժվար կապրեմ, Ամայի: Մորս ու հորս շուտ եմ կորցրել, որբ եմ մեծացել: Ընդունվեցի կոնսերվատորիա, չորրորդ կուրսից թողեցի: Աշխարհում հանկարծ ամեն ինչ սուտ թվաց աչքիս: Իմ մանկությունից, երիտասարդությունից ինձ էրկու զավակ մնաց, նրանց մերն ու այ՛, էս: (Ծոցից հանում է սրինգը:) Սրան էրեխեքիս չափ սիրում եմ, ասես կենդանի մարդ լինի՝ շատ լավ հասկանում ա ինձ... Հիմա գտել եմ մի նոր մեր, նա էլ թե. «Տերը ինձ կանչում ա, ասում ա՝ մեղավոր աղախին...»: (Ծիծաղելով:) Սոնա ջան, Աստծուն դիմողն ո՞ր պիտի նայի:

ՍՈՆԱ - Երկինք:

ԴԱՎԻԹ - Իսկ մեր Ամային փակում ա աչքերը, որ Աստծուն չտեսնի:

ԱՄԱՅԻ - (ներողամիտ ժպտով): Կինդ ու էրեխեքդ քո հույսին մնան, սովորել, խելոք գրքեր ես կարդացել ու չես հասկացել, որ ամեն մարդու Աստվածն իր

ներսում է ապրում: Ապրում է քեզ հետ ու ամեն վայրկյան քեզ ծանապարհ է ցույց տալիս, մեկ՝ որպես խղճի ծայն, մեկ՝ ընկերասիրություն, մեկ էլ որպես սեր՝ մարդ-արարածի նկատմամբ:

ԴԱՎԻԹ - (լրջանում է): Ասա՛ թուրքին էլ պիտի սիրեմ, էլի:

ԱՄԱՅԻ - Սովորական, խաղաղ թուրքին՝ հա: Խաղաղ, քեզ չվնասող թուրքին թե չսիրես էլ՝ մի ատիր, իսկ քո դեմ գենք վերցնողը, քո տունն ավերել ցանկացողը, քո երեխայի հացը կտրել կամեցողն արդեն խախտել է Աստծո պատվիրանը: Ես արդեն ոչ թե սիրո, այլ պատժի է արժանի: Ես արդեն մարդ չե՛, գազան է:

ԴԱՎԻԹ - Կասկածս փարատեցիր: Ոչ ոք ավելի լավ չէր բացատրի: (Վեր է կենում:) Ուշացանք, գնանք տղերքի մոտ:

ՍՈՆԱ - Դավիթ...

ԴԱՎԻԹ - Հա:

ՍՈՆԱ - (գրպանից հանում է Սամվելի նկարը): Կարո՞ղ է՝ տեսել ես, ծանաչում ես:

ԴԱՎԻԹ - (նայում է ուշադիր): Հա, ո՞նց չեմ ծանաչում: Լևիտան Սամոն ա: Բո ի՞նչն ա:

ՍՈՆԱ - Ամուսինս:

ԴԱՎԻԹ - Հաստամտ... Էստեղ էր... ո՞ր գնաց, չգիտեմ: Հանձնարարություն տվեցին, թե ինքը

գնաց, չգիտեմ, բայց մի ամիս առաջ ա գնացել: Սիմոնն ավելի լավ գիտի:

ՍՈՆԱ - Ի՞նչ գիտի, հո վատ բան չի պատահել:

ԴԱՎԻԹ - *(փորձում է կատակի տալ):* Չէ հա՛մ, պատերազմում ի՞նչ վատ բան պիտի պատահի: Մարդիկ պատերազմում կամ զոհվում են, կամ վիրավորվում: *(Զգալով, որ կատակը չստացվեց:)* Լսել եմ՝ իբր վիրավորվել ա մի տաս օր առաջ:

Ամային անխոս հասկացնում է Դավիթին, որ ավելին չասի:

ՍՈՆԱ - *(ծեռքը դնում է սրտին, երևում է թևին կապած տղամարդու խոշոր ժամացույցը):* Էլ... Ուրիշ ի՞նչ գիտես, ասա, Դավիթ, մի պահիր:

ԴԱՎԻԹ - Իմ ասածը հաստատ չէ, ականջի ծերով եմ լսել: Հո նրա անունն իզուր չե՛մ Լևիտան դրել: Նրա ձայնը, խոսքը... *(Տեսնելով, որ փաստարկը համոզիչ չէ, փոխում է խոսքը:)* Մի վախենա, բուր, վիրավորված մարդը լավանում ու շարք ա վերադառնում:

Հրաձգություն է սկսվում: Կորյունն ու Մարգարը վերցնում են զենքերն ու պատրաստվում են գնալ:

ՄԱՐԳԱՐ - Տղերքն են...

ԴԱՎԻԹ - Բոյ ա սկսվում: *(Հեռա-*

նում է փախչելու պես:)

ԱՄԱՅԻ - Դավիթ:

ԴԱՎԻԹ - *(հեռվից):* Հա՛մ...

ԱՄԱՅԻ - Ախր, մոռացաք, փլավը չտարաք...

ԴԱՎԻԹ - Լավ էլի, Ամայի ջան, ես փլավ տանող եմ:

ԱՄԱՅԻ - Թե չտանեք, երեսիս չնայեք: Բա է՛ն էրեխե՛քը...

Դավիթն ու Կորյունը գլխաքաշ ետ են գալիս, մրտաված պրիմճը վերցնում ու լուռ հեռանում են:

ԱՄԱՅԻ - *(մրմնջում է):* Աստված հետներդ: *(Սոնային.)* Այ, բալա, մտնենք տուն, հանգստացիր: Կինը պիտի չսիրի: Որ տղամարդուն սիրեց, ուրեմն մի բուռ հող զցեց բերանը:

ՍՈՆԱ - Ինչի՛:

ԱՄԱՅԻ - Սիրած տղամարդու համար կինն ամեն ինչ կանի: Սիրեց, ուրեմն նրա գերին կդառնա ու վայ է՛ն գերուն, որ կամավոր է գերի դարձել: *(Մրմնջում է քթի տակ:)* Վայ, հալիվոր, վայ... Դու գնացիր ու ապրում ես զով սարերի հովի մեջ, իսկ ինձ թողիր էս խելագար ծովի մեջ:

Սոնան ճնշված է Դավիթի հետ Մամվելի մասին խոսելուց հետո: Կամոն մռայլ է: Ամային հավաքում է սեղանը: Սոնան սկսում է օգնել Ամայիին, ավսեմ ձեռքից զցում-կոտրում է:

ՍՈՆԱ - Վայ, էս ի՞նչ է կատարվում ինձ հետ:

ԱՄԱՅԻ - (ներողամիտ): Դու գնա, նստիր Կամոյի մոտ:

Սոնան նստում է Կամոյի կողքին:

ԿԱՄՈ - (չի լսել Դավթի ու Սոնայի խոսակցությունը): Ախր, ասում եմ, կնիկն ինչ գործ ունի էստեղ: Դու լվացք չունես, հարթուկ չունես, տուն մաքրելու գործ չկամ: Մնայիր տանը, էլի:

ՍՈՆԱ - Իմ մասնագիտությունն էլ էս է: Լվացք անելու համար ջուր պիտի տաքացնես՝ կրակ չկա, հարթուկ անելու համար՝ հոսանք չկա: Ձեռքերս դողում են, պիտի ափսեները ջարդեմ... Տանը նստեմ՝ ինչ անեմ: Ամուսին էլ չկա, որ վրաս խոսի:

ԿԱՄՈ - Իմ մասնագիտությունն ա... Էդ կնկան վայել մասնագիտություն չի: Գաս, հասնես կրակի բերան, սրան-նրան ձայնագրես, թե՛ մասնագիտությունս էս ա:

ՍՈՆԱ - (դավադիր ժպտում է): Չէի՞ր ուզենա տնեցիներից լուր առնել, էրեխեքիդ ձայնը լսել:

ԿԱՄՈ - (երազկոտ): Կուզենայի պուժուրիս ձենը լսել: Մի տարեկան ա: Անունն Արցախ եմ դրել:

ՍՈՆԱ - Ուզում ես խոսք ասես ձերոնց, ձայնագրեմ, տանեմ, քո ձայնը, քո պատմածը ձերոնք լսեն: Գիտես, ինչքան կուրախանան:

ԿԱՄՈ - (մտածելուց հետո): Լավ:

ՍՈՆԱ - (ձայնագրիչը միացնելով): Սկսիր:

ԿԱՄՈ - (մաքրում է կոկորդը, իրեն կարգի է բերում, գլխից հանում է մահապարտի սև գլխաշորը, ձայնին արհեստական առույգություն տալով): Բարի օր կամ բարի իրկուն, Լիլո ջան: Հիմի կասես՝ մեր Կամոն գնաց ու ոչ մի խաբար չկա իրանից: Լավ եմ, շատ լավ: Ճիշտ ա, պատերազմ ա, բայց վախենալու բան չկա: Ես առողջ եմ, լավ... (Տնքում է, այլ տոնով:) Մի նեղվի, դու միշտ համբերող ու հասկացող ես էղել: Մարիամս արդեն տասնչորս տարեկան ա ու քեզ ամեն ինչով կօգնի: Մարիամ ջան, չնեղվես, պապադ շուտով կգա, բայց պիտի հաղթի՝ նոր գա... Էս մի խոսքն էլ պուժուրիս համար: (Ձայնը դողում է:) Արցախ, պապան ուտի պուպուղ, Արցախ... Երբ դու ծնվար, ես էլի տանը չէի, էլի ըստեղ էի: Հմի չես հասկանա, բայց մեծանաս, կիմանաս, որ քեզ համար եմ էկել Ղարաբաղ: Ուզում եմ, որ դու մեծանաս ազատ, անկախ ու թշնամուց չվախեցող երկրում: Առաջին բառդ ասել ես, չեմ լսել, առաջին քայլդ արել ես, չեմ տեսել... Որ ծնվելուդ խաբարն առա, տղերքով աչքալուսանք խմեցինք,

կենացդ խմեցինք... Էդ ժամանակ ինչ էի զգում... Եսիմ, ցավ... ափսոսանք, հպարտություն... Եսիմ... (Սոնային.) Անջատի, էլ չեմ կարա: (Ծրջվում է, արցունքը պահում:)

ՍՈՆԱ - Բա Ամային կին չէ:

ԿԱՄՈ - Վայ, ես նրա ցավը տանեմ: Լա աշխարհի ամենասիրուն կինն ա: Բայց նրա բանն ուրիշ ա: Լա էս հող ու ջրի ծնունդ ա: Լրա համար էս հող ու ջրից քաղցր բան չկա: Թե ձիշտն ասեմ՝ Ամային հենց էս հողն ու ջուրն ա: Դու նրա հետ ո՞ր ես համեմատվում:

ՍՈՆԱ - Բայց թե խեղճի սիրտը կտրված է: Ամուսինը պատահական գնդակի զոհ է դարձել, հարսն ու թոռները Ստեփանակերտում են, տղան՝ անհայտ կորած...

ԿԱՄՈ - Էդ Ամային, իսկ դու... իզուր ես քեզ պատերազմի բերանը քցել: Պատերազմն անխիղճ է:

ՍՈՆԱ - Ես որ մի հարյուր կիլոմետր այն կողմ՝ Լեռնավանում եմ ծնվել, ուրեմն էս հողն ու

ջուրն իմը չեն, էստեղ գալու, քո կողքին կանգնելու իրավունք չունեմ:

ԿԱՄՈ - Է, եսիմ, դու լրագրող ես, հետն էլ՝ կնիկ: Բո լեզվի դեմ ավտոմատն էլ ա անզոր, էլ ո՞ր մնաց՝ ես: (Ծիծաղում է:)

ՍՈՆԱ - (գրպանից հանում է Սամվելի լուսանկարը, ցույց է տալիս Կամոյին): Կամո, ծանաչո՞ւմ ես: Կարո՞ղ է՝ տեսած լինես:

ԿԱՄՈ - (նայում է կենտրոնացած): Ո՞վ ա: Լավ էլ սիրուն տղա է:

ՍՈՆԱ - Տեսել ես: Ասում են՝ էս կողմերում է եղել վերջերս:

ԿԱՄՈ - (ծանաչել է, բայց ցույց չի տալիս): Ոնց որ դեմքը ծանոթ ա, բայց տեղը չեմ բերում: Բո ինչն ա:

ՍՈՆԱ - Ամուսինս է: Արդեն երեք ամիս է՝ Ղարաբաղում է, բայց լուր չունեմ: Ասացին՝ Քարակապում են տեսել...

ԿԱՄՈ - Մի նեղվիր, այ քուր: Պատերազմ ա: Մարդը ասեղ չի, որ կորի ու չգտնվի: Մի մտածի, եթե էս կողմերում ա էղել, ոնց էլ ըլնի, նրանից մի լուր կիմանաս: Կամ ավելի ձիշտ՝ կգտնես իրան, մի մտածի:

Սոնան հուսալքված նստում է: Լռում են: Լսվում է կովի բառաչ: Կամոն զարմացած բարձրացնում է գլուխը: Բառաչը կրկնվում է:

ԿԱՄՈ - Էս կովը որտեղի՞ց: (*Ձեռքը ծակատին՝ նայում է:*) Հա՛, էլի, կո՛վ ա: Ոնց որ մեր տեղերքն են բերում: Ամայի՛, ա՛յ Ամայի:

ԱՄԱՅԻ - (*դուրս գալով*): Ի՞նչ է, Կամո ջան:

ԿԱՄՈ - Լայիր, կո՛վ ա, թե՛ աչքերս ինձ խաբում են:

ԱՄԱՅԻ - (*նայում է Կամոյի ցույց տված ուղղությամբ*): Կով է, որտեղի՞ց են գտել:

Քակ է մտնում 1-ին զինվորը:

1-ին ՁԻՆՎՈՐ - Բարև ձեզ, կովը որտե՞ղ կապենք:

ԱՄԱՅԻ - Ի՞նչ կով է, բալաս:

1-ին ՁԻՆՎՈՐ - Ձորի վերևում դիրք էինք պահում: Մեկ էլ թփերի մեջ խշխշոց լսվեց: Ուզեցինք կրակել... (*Ծիծաղելով*): Մեզ թվաց՝ թշնամին նոր գենք է հնարել, հետո հասկացանք, որ կով է: Տղերքն ուզեցին մորթել, Սիմոնը չթողեց: Ասաց՝ տարեք Ամայուն նվեր: (*Լսվում է կովի բառաչը*.) Անտերը գծի պես բառաչում, հա բառաչում ա:

2-րդ ՁԻՆՎՈՐ - (*ինքը չի երևում, լսվում է ծայնը*): Հանգիստ, հանգիստ... (*Բարկացած*.) Այ անտեր, հանգիստ, էլի:

Ամային ու 1-ին զինվորը դուրս են գալիս բեմից, Կամոն հեռակներին հենված նայում է ձայների ուղղությամբ:

ԱՄԱՅԻ ԶԱՅՆԸ - Ո՛ւմ կովն ես,

տերդ ո՛ր է: Հայի՛ ես, թե՛ թուրքի... Վախեցնի՛լ ես, բա ի՞նչ կանես, կվախենաս: Չորս կողմը դիվոտած կրակում են...

2-րդ ՁԻՆՎՈՐԻ ԶԱՅՆԸ - Մինչև բերեցինք, հոգիներս դուրս էկավ, բառաչում ու փախչում էր:

ԱՄԱՅԻ ԶԱՅՆԸ - Որ անլեզու է, չի հասկանում՝ պատերազմն ինչ է: Չի հասկանում, որ արյունը գետի պես է հոսում: Հանգիստ, հանգիստ, բալա ջան: Տես, մի քիչ շոյեցի, ու խեղճ անասունը հանգստացավ: Արի, արի գոմ մտի, հով տեղում կանգնի, մինչև գամ, կթեմ: (*Մտնում է տուն, դուրս է գալիս դույլը ձեռքին: Մտնային*.) Արի, արի օգնի:

ՍՈՆԱ - Կով կթել կսովորեցնեն:

ԱՄԱՅԻ - Կովից չէն վախենա:

ՍՈՆԱ - Չէ:

ԱՄԱՅԻ - Դե, գնանք:

Մտնան ու Ամային գնում են: 1-ին և 2-րդ ՁԻՆՎՈՐՆԵՐԸ գալիս, մատում են Կամոյի կողքին:

2-րդ ՁԻՆՎՈՐ - (*սիգարետ Կամոյին հյուրասիրելով*): Օ՛ֆ, կովելն ավելի հեշտ ա, քան կով քաշելը:

Գալիս է Ամային՝ կաթով դույլը ձեռքին, նրան հետևում է Մոնան, որ մոտենում է ծառից կախված լվացարանին ու լվացվում է:

ԱՄԱՅԻ - Խեղճ անասունը հանգստացավ: Ո՛վ իմանա՝ քանի օր կթող չէր եղել: Մոնան էլ հո չկթեց...

ՍՈՒԱ - *(կես-կատակ)*: Բա որ թշնամին կովին թունավորած ու մեր կողմը քշած լինի:

ԱՄԱՅԻ - Հը... Չէ, ո՞վ գիտե, որ բնավեր եղածի անասունն է: Կաթից ծաղկի անուշ հոտ է գալիս: *(Դույլը ձեռքին մտնում է ներս:)*

1-ին ԶԻՆՎՈՐ - *(ընկերոջը)*: Գնանք, Սիմոնն ասեց, որ շուտ վերադառնանք:

Տնից դուրս է գալիս Ամային:

2-րդ ԶԻՆՎՈՐ - *(Սոնային)*: Արսենը խնդրեց ասեմ, որ կարոտել ա ձեզ:

ՍՈՒԱ - *(ժպտալով ու ձեռքերը սրբելով)*: Խենթ է:

2-րդ ԶԻՆՎՈՐ - Խնդրեց որ... որ...

ՍՈՒԱ - Որ ի՞նչ:

2-րդ ԶԻՆՎՈՐ - *(անվճռական)*: Որ իր փոխարեն համբուրեմ ձեր ձեռքը: *(Համբուրում է նրա ձեռքն ու արագ հեռանում է:)*

ՍՈՒԱ - Բոլորը խենթ են...

ԿԱՄՈ - Պատերազմը մարդուն շատ ա փոխում: Մեկին դարձնում ա փափուկ, մեկելին, քո ասած՝ խենթ, երրորդին՝ վախկոտ ա սարքում, չորրորդին՝ սիրահարված:

ԱՄԱՅԻ - *(մեկուսի)*: Ամեն ինչի սկիզբը Աստված է ու հող: Աստված ստեղծում է, հողը՝ ծածկում, պարտակում:

ԿԱՄՈ - Էդ ի՞նչ ես խոսում, Ամայի:

ԱՄԱՅԻ - Հենչ, իմ, քո, աշխարհի սկիզբն ու վերջն եմ չափում:

ԿԱՄՈ - Ինչքան չափես, մեկ ա, հաստ ու բարակ մի գին են: Արի, կողքիս նստի:

ԱՄԱՅԻ - Սպասի, կաթը կրակին եմ դրել, բերեմ՝ խմեք: *(Սոնային.)* Ես խմեցի, բան էլ չեղավ: *(Երկու բաժակ կաթ է բերում:)* Խմեք: Էս պատերազմը մարդուց ավելի շատ հավքին, բուսին ու կենդանուն վնաս տվեց: Պատկերացնո՞ւմ ես ծոփ վիճակը, որի ականջի տակ թնդանոթ են կրակում:

ՍՈՒԱ - Ինչի՞, ծոփն ի՞նչ է լինում:

ԱՄԱՅԻ - Նոր էր սկսվել պատերազմը, կրակոցները նոր էին մեր կողմերը հասել, մի առավոտ դուրս եկա ու ի՞նչ տեսնեմ. դշերը սատկել, թափվել են ծառերից: Նայեցի՝ վերք չկա, գնդակ չի կպել: Մտքովս անցավ, թե հիվանդություն է կպել: Բայց հետո, շատ ուշ գլխի ընկա, որ պատերազմի ձենն է նրանց սպանել, թոփ ու թնդանոթի ձենը:

ԿԱՄՈ - Ամայի, դու էլ մարդկանց թողած, ծոերի մասին ես մտածում:

ԱՄԱՅԻ - Այ բալա, մարդն էդքան մեղք չէ: Մարդն ինքն է էդ ձեները հանում, գիտե՞ պատերազմն ինչ է: Իսկ ծառը, թուփը, թռչունը, մրջյունը, ծաղիկը չգիտեն ու սարսափից կոտորվում են:

ՍՈՒԱ - Ծառն է՛լ...

ԱՄԱՅԻ - Ծառն էլ է դողում վախից:
ԿԱՄՈ - Էդքան բանը չգիտեմ,
 բայց գիտեմ, որ էս պատե-
 րազմն արդար է:

**Սոնան տաք կաթի բաժակը ա-
 մուր բռնել է, ասես ձեռքերը
 մրսում են և ուզում է տաքացնել:**

ԱՄԱՅԻ - Արդար է, բայց քեզ հա-
 մար:

ԿԱՄՈ - Էս հողի համար արդար
 չէ:

ԱՄԱՅԻ - Թե՛ն էս հողի, թե՛ն նրա տի-
 րոջ համար արդար է:

ԿԱՄՈ - Դե, ուրեմն թող մի քիչ էլ
 էս հողի անլեզու զավակները
 դիմանան:

Սոնան միացնում է ձայնագրիչը:

ԱՄԱՅԻ - (ուշադրություն չի դարձ-
 նում): Հանդ ու սարի, հավք ու
 ծառի համար դժվար է, բայց
 նրանցից ամեն մեկն իր գործին
 է: Թռչունը ո՛չ ձու ածելն է մոռա-
 նում, ո՛չ ճուտ հանելը: Մի սև
 հավ ունեմ: Քսան հատից էդ
 մեկն է մնացել: Մի ամիս առաջ
 կորավ: Մտածեցի՝ պատերազ-
 մը դրան էլ կուլ տվեց: Երկու օր
 առաջ տեսնեմ՝ դուրս է գալիս
 թփերի միջից, հետևից՝ տասը
 ճուտ:

ՍՈՆԱ - Վայ:

ԱՄԱՅԻ - Բա՛, տեսել է, որ իր ցեղը
 վերանում է, տեսել է, որ մարդու
 վրա հույս դնել չի լինի, գնացել,
 մտել է թփերի մեջ, մեկից տաս

է դարձել ու եկել, կանգնել է մեր
 առաջ: Իսկ դու ասում ես՝ կեն-
 դանին խելք չունի:

**Ամային տուն է մտնում: Կրակոց-
 ների ձայներն ուժգնանում են:**

ԿԱՄՈ - (հենակներն առնում է թևի
 տակ, ոտքի կանգնում): Ա՛խ,
 ղնց կուզեի տղերքի կողքին լի-
 նել: Դուք էլ տարել, ավտոմատս
 պահել եք: Վախենում եք: Ինչի,
 ես գիժ եմ, որ վախենում եք...

ՍՈՆԱ - (վախվորաձ, որ նուպան
 կերկնվի): Չէ, Կամո ջան, երբ
 ուզես՝ զենքդ կտամ, մի նեղվի:

ԿԱՄՈ - Պահո՛, արևն էս ո՛ր
 հասավ: Գնամ դեղերս խմեմ,
 թե չէ Ամային վայս կտա:

Տեսարան 4

**Գիշեր: Կրակոցներ են լավում: Ա-
 մային լամպը ձեռքին դուրս է
 գալիս տնից, մթան մեջ խարխա-
 փելով փնտրում է իր միմուճա-
 րին՝ Գևորգին:**

ԱՄԱՅԻ - Գևորգ, Գևորգ ջան...
 Քոռանա մերդ, Գևորգ ջան: Քո-
 ռանա թշնամու աչքը, որ մար-
 դու չի թողնում էս աշխարհի ու
 էս հողի հետ հաշտ կենա: Իմ
 լիքն ու շեն տնից ի՛նչ մնաց: Հա-
 լիվորը թուրքի գնդակին զոհ
 գնաց մեր արտում, Գևորգս...
 Գևորգիս մոր աչքը քոռանա, որ
 չի քոռանում: Պապի որսորդա-
 կանն առավ, ո՛ր գնաց: Իրեք

ամիս եղավ՝ լուր չունեմ ու սևս ներս, կարմիրս դուրս՝ սպասում եմ: Ծիծաղում եմ, խոսում, բայց սիրտս քրքրված է, բալա...

Տեսարան 5

Խրամատում: Միմոնը հեռադիտակով նայում է թշնամու կողմը: **Դավիթի շուրջը հավաքվել են տղաները:** Մոնան էլ է դիրքում՝ զինվորական երկարաճաքերով ու բուշլատով: Հարմար պահ է փնտրում Միմոնին մտենալու համար: Արսենն էլ առիթը բաց չի թողնում նրա կողքին հայտնվելու համար:

ԴԱՎԻԹ - Հավերից վախեցող մեկը գնում ա բժշկի մոտ: «Բժիշկ, ինձ թվում ա՝ ես կուտ եմ ու հավերը կուտեն ինձ»: Սրան մի էրկու շաբաթի չափ բուժում են: Դուրս գրելուց առաջ բժիշկը նրան հարց ա տալի. «Հիմի հասկացա՞ր, որ դու կուտ չես, ու հավերը քեզ չեն ուտի»: «Իհարկե, բժիշկ,- պատասխանում ա ու մտածկոտ շարունակում:- Որ ես կուտ չեմ, դա ես գիտեմ, իսկ հավերը գիտե՞ն, որ ես կուտ չեմ ու ինձ չեն կարա ուտեն»:

Ծիծաղ: Թշնամու կողմից երգի ձայն է գալիս:

ԴԱՎԻԹ - (գոռում է): Սասն քյաս, այա՛... (Ձայնդ կտրիիր, արա):

Մի պահ լռում է թուրքի ձայնը, հետո նորից է շարունակվում բայաթին:

ՄԱՐԳԱՐ - Թյո՛ն... ոռնում ա: Սիմոն, Տրուբին ասա, թող դրա ձենը կտրի: (Միմոնը չի արձագանքում, բացում է քարտեզը, ինչ-որ բան ուսումնասիրում:) Սիմոն:

ՍԻՄՈՆ - Ձեր անեկդոտը պատմեք: Երգում է, թող երգի, քեզ ի՞նչ:

ՄԱՐԳԱՐ - Ըտենց չեն երգում, է:

ԿՈՐՅՈՒՆ - Բա՛...

ՄԱՐԳԱՐ - Երգե՛մ: (Ֆիդայական երգ է երգում, թուրքի երգի ձայնը կտրվում է:)

ՎԱՀՐԱՄ - Մալադեց:

ՍՈՆԱ - (մոտենալով՝ վարանոտ): Սիմոն...

ՍԻՄՈՆ - Սոնա ջան, մենակ չասես՝ ինտերվյու տուր:

ՍՈՆԱ - Չէ, էս անգամ ուրիշ բան պիտի հարցնեմ: Երկու օր է՝ ուզում եմ հարցնել, հարմար չի լինում: (Ցույց է տալիս Սամվելի լուսանկարը:) Կարո՞ղ է՝ ձանաչում ես... գիտե՞ս՝ որտեղ է:

Արսենը նայում է լուսանկարին ու զարմացած սևեռվում Միմոնին:

ՍԻՄՈՆ - (շեղ հայացք է նետում լուսանկարին): Զո ի՞նչն է:

ՍՈՆԱ - (զգալով, որ նա տեղեկություն ունի Սամվելից): Ամուսինս է... որտե՞ղ է:

ՍԻՄՈՆ - (իբր՝ անտարբեր): Չգիտեմ:

ՍՈՆԱ - Սիմոն, լսել եմ՝ վիրավոր-

վել է: Ասա՝ ի՞նչ գիտես, մի թաքցրու:

ՍԻՄՈՆ - *(մտորելուց հետո):* Դու էլ ես զինվոր, չէ՞... *(Սոնան գլխով է անում:)* Դե որ զինվոր ես, զինվորի պես էլ դիմացիր: *(խորը շունչ է քաշում, ասում է՝ ասես ծանր բեռից է ազատվում):* Չոհվել է:

ՍՈՆԱ - *(փլվում գետնին, քարանում է):* Ե՛րբ...

ՍԻՄՈՆ - Մի տաս օր առաջ: Տարել են Հայաստան, թաղել Եռաբլուրում: Չոհվել է հերոսի պես: Դու... հպարտանալու տեղ ունես:

Սոնան անշարժ է, հետո կանգնում է, մի կողմ է հրում զինվորին, վերցնում է նրա ինքնաձիգն ու սկսում է կրակել թշնամու ուղղությամբ: Կրակում է առանց դադարի: Դավիթը չի լսել, որ Սիմոնը Սոնային հայտնել է ամուսնու մահվան բոթը և զարմացած մոտենում է Սոնային:

ԴԱՎԻԹ - Բեզ ի՞նչ էղավ: Ինչի՞ ես իզուր տեղը շների մեջ քար շարտում:

Սիմոնը ձեռքի շարժումով կանգնեցնում է Դավիթին: Սոնան կրակում է ողջ պահուցակը, շարունակում է սեղանած պահել ինքնաձիգի ձգանը: Վահրամը նրա ձեռքից առնում է ինքնաձիգը: Սոնան նստում է խրամատի հատակին: Լաց չի լինում, լուռ ճոճվում է նստած տեղում: Հետո վեր է կենում տեղից, ծոցագրպանում

պահած տուպրակը հանում ու միջի կոնֆետները, սափրվելու սայրերը, անձեռոցիկները բաժանում է տղաներին:

ՍՈՆԱ - Նրա սիրածներն են, Երևանից էի բերել: Նրա սիրած ժամացույցն էի բերել, որ իրեն տայի: *(Ցույց է տալիս թևին կապած ժամացույցը:)* Նրա սիրած կոնֆետներն էի բերել ու նրա սիրած շորն էի հագել...

Տղաները Սոնայի տվածները վերցրել, շփոթահար կանգնել են: Արսենը հայացքը չի կտրում Սոնայից:

ՄԱՐԳԱՐ - Բոլորս էլ էստեղ ենք մնալու... էս քարերի մեջ ի՞նչ կա: Ավելի լավ է նահանջենք:

ՍԻՄՈՆ - Մարգար... *(Նայում է փորձող հայացքով:)* Կամոն Վիետնամի ցավով է տառապում, դու էլ նահանջացավ կպար:

ՄԱՐԳԱՐ - Չէ, կամանդիր, նահանջացավ չէ, բայց կարելի է, չէ՞, ավելի հարմար դիրք գրավել ու էս քարերն ու Զարակապը ժամանակավոր թողնել:

ՍԻՄՈՆ - Չէ, Մարգար, չի կարելի նախ էն պատճառով, որ էս տեղը ամբողջ ռազմաձակատի համար կարևոր դիրք ունի, հետո էլ՝ հրաման չկա, երրորդ՝ էս քարերը գուցե անուն չունեն, բայց պատմություն ունեն:

ՄԱՐԳԱՐ - Մեր երկրի բոլոր քա-

րերն էլ պատմություն ունեն, հետո՞ ինչ:

ՍԻՄՈՆ - Սրանք հատկապես ունեն: Ու էդ պատմությունը կարևոր է: Թե քարի մեջ մտնել կարողանաս, թե քարի լեզուն հասկանաս, դարերի ընթացքում իր համար թափած արյան պատմությունը կպատմի քեզ:

ՄԱՐԳԱՐ - Այ կամանդիր, էդքան գրագետ չեմ, մենակ իմ պուլիմյոտի լեզուն լավ գիտեմ:

ՍԻՄՈՆ - Մարգար, անփոխարինելի գնդացրորդ ես, բայց քո չհասկացած բաների մասին սիրում ես վիժել: Ասում ես՝ Քարակապի մեջ ինչ կա: Ասում ես՝ էս հողը տանք: Չէ, էս ամեն մի քարը ինձ ու քեզ պես մի տղա է: Հա, ժամանակի մեջ հայրենիքի համար, հայրենիքի սիրո համար քարացած տղա: Համ էլ էս պատարագմը սրտի ու հոգու պատերազմ է, իսկ մենք՝ կամավորներ: Ոչ մեկն ինձ ու քեզ չի ստիպել, որ գանք էստեղ...

ԿՈՐՅՈՒՆ - Ա՛յ կամանդիր, Կարկուտն էդ բաներից ինչ ա հասկանում: Ինքն ա ու իր պուլիմյոտը: Թե պուլիմյոտը ձեռից առնես, ագռավներն աչքերը կհանեն:

ՄԱՐԳԱՐ - Ա՛, դու սուս, հա՛:

ՍԻՄՈՆ - Տղերք, իզուր տեղը գնդակ մի փչացրեք, թուրքը

կրակում ա իր վախը հաղթահարելու համար: Մեկ ու մեջ կրակեք:

Կրակոցի ձայները պակասում են: Սոնան, դադարից օգտվելով, նորից մոտենում է Սիմոնին: Հանկարծ Կորյունը բռնում է թևն ու կռանում:

ՄԱՐԳԱՐ - Կպմվ, ախպեր:

ԿՈՐՅՈՒՆ - *(ցավը զսպելով):* Հա:

Սոնան փորձում է վիրակապել, բայց ձեռքերը դողում են:

ՎԱՀՐԱՄ - *(զգուշորեն մի կողմ է հրում նրան):* Սպասի... *(Վարժ վիրակապում է: Կորյունը շարժում է վիրակապած թևը:)* Մի...

ԿՈՐՅՈՒՆ - Ոնց որ չի ցավում: Ուզում եմ տեսնեմ՝ կրակելուն չի՞ խանգարի: *(Էլի է փորձում:)* Չէ... ցավում ա, բայց ոնց որ շարժել կարողանում եմ...

ՍՈՆԱ - Սիմոն, որտեղ է զոհվել Սամվելը:

ՍԻՄՈՆ - Մարտակերտում էր: Եկավ էստեղ, հետո թե ինչը դուրը չեկավ, չիմացանք, թողեց գնաց: Գնաց Մարտակերտ ու... Ասեմ, որ անվախ տղա էր, ընկերոջն օգնության հասնող, հայրենասեր տղա: Դու հպարտանալու տեղ ունես ու նրա հիշատակը վառ պահելու պարտականություն:

Տեսարան 6

Իրիկնամուտ: Նստարանի վրա նստած Կամոն ասես արձան է: Քիչ անց վեր է կենում, առանց հեռակների կանգնում է: Մեկ մի ոտքին է հենվում, մեկ՝ մյուս: Փորձում է պպզել, բայց ցավը շամփրում է նրան: Այդ պահին բակ է մտնում Ամային, վազում, բռնում է նրա քևատակերից:

ԱՄԱՅԻ - Կամո ջան...

ԿԱՄՈ - *(Ամայու օգնությամբ ոտքի է կանգնում ու ցավը զսպելով փորձում է կատակել):* Հա ջան:

ԱՄԱՅԻ - Շատ ցավեց:

ԿԱՄՈ - Չէ հա: Մի քիչ Վիետնամ արեց:

ԱՄԱՅԻ - Բա որ ասում եմ՝ հիվանդանոց գնա:

ԿԱՄՈ - Եսիմ, է... *(Նստում է:)* Էրկու օր առաջ առանց կաստիլի ոչ մի բան անել չէի կարում, էսօր արդեն կանգնում եմ, համարյա պպզում, իսկ դու...

ԱՄԱՅԻ - Այ բալա, ախր գնդակը կմնա մսի մեջ: Տարիներ հետո՝ ամեն անգամ անձրևին ու ցրտին սպիներդ կմրմռան, վերքերդ կցավեն:

ԿԱՄՈ - Պատերազմը պրծնի՝ կգնամ, թող կտրատեն, թող Վիետնամ անեն՝ ինչքան ուզեն:

ԱՄԱՅԻ - *(ժպտալով):* Արևիդ մատաղ, Կամո ջան, հիմի նոր գլուխս հանգիստ վեր կդնեմ:

ԿԱՄՈ - Ընչի՛:

ԱՄԱՅԻ - Էս հողին, էս երկրին

տեր հայտնվեց: Դու ու ընկերներիդ վերջապես հասկացաք, որ եթե քեզ քո երկրի տերը չհամարես, նրան ուրիշը կտիրանա: Վերջապես հասկացաք, որ եթե զենք չվերցնես, արցունքի դիմաց քեզ հող չեն տա: Էս ղնց հասկացաք...

ԿԱՄՈ - Ամեն ինչ լացից էկավ, այ մեր:

ԱՄԱՅԻ - Լացի՛ց...

ԿԱՄՈ - Հա, լացից: Ամեն տարի ապրիլի 24-ին մեր դասասենյակի վարագույրները փակում-մթնեցնում էինք, մոմեր էինք վառում, Սևակ ու Սիամանթո արտասանում, Կոմիտաս էինք երգում ու լաց էինք լինում: Հիշողությամբ սնված և արտասուքով ջրված սերունդ ենք: Հմի աճել, պնդացել ու ծառ ենք դառել:

ԱՄԱՅԻ - Մենք էդ բաները չէինք հասկանում, բալա: Մեր աչքը վախեցած էր թուրքից, հրացանի ամեն տրաքոցի հետ սրտներս թաքտում էր:

ԿԱՄՈ - Հիմի ահ չկա: Էրեխեն, ինչքան էլ որբ ու ծեծված՝ մի օր հասակ ա առնում ու բռնում, ուլորում ա իրան խփող ձեռքը, դնում ա թիկունքին... Բա, աշխարհի օրենքն էդ ա...

Տնից դուրս է գալիս Սոնամ: Չինվորական հագուստով է, ուսերին բաճկոն է գցած:

ԿԱՄՈ - Հը, ո՞նց ես, քուրս:

ՍՈՆԱ - Լավ եմ: Ձայնագրիչը միացրել, փորձում էի հավաքել տեսած-լսածս: Աշխատեցի մի քիչ, աշխատեցի ու չիմացա՝ ոնց քնեցի: Ո՞ր մեկդ եք բաժկոնն ուսերիս օգել:

ԱՄԱՅԻ - Ձեր մերը քոռանա, որ ես եմ: Տուն-տեղ թողած, ջահելություն ու սեր մոռացած՝ էկել, էս սար ու քարի համար արյուն եք տալիս: Տեսա քնել ես, ասի՝ կմրսես: Բոռանամ ես, բալա...

ԿԱՄՈ - էլի սկսեցի՞ր:

ԱՄԱՅԻ - *(գոգնոցի ծայրով սրբում է աչքերը)*: Չի՞ լինի, որ մարդարարածն էս հողի վրա սիրով, կառուցելով ապրի:

ԿԱՄՈ - Մեր ջան, դե գնա թուրքին մարդավարի ասա, որ էս հողը իմ ապուպապի շիրիմներից ա գոյացել, ասա՝ էս հողն ինձ ա ծանաչում, ես էլ՝ իրան ու առանց իրար ապրել չենք կարող: Թուրքին ասա՝ դու քոնն ունեցիր, աչքդ ու ձեռքդ ուրիշի ունեցածին մի մեկնիր: Դու դրանց լեզուն լավ գիտես, գնա, ասա:

ՍՈՆԱ - Լավ էլ հասկացավ ու լսեց քեզ:

ԿԱՄՈ - Հը, Ամայի: *(Ամային լուռ է:)* Ինչի՞ չես խոսում, ասելիք չունե՞ս:

ԱՄԱՅԻ - Ասելու շատ բան կա, բայց Աստված մարդուն կարգին հարևան էլ պիտի տա:

ԿԱՄՈ - Բոլոր հարևաններն էլ մեկ են: Դու ես էրես տվել նրան: Էկել, մտել ա տունդ՝ ձեն չես հանել, ասել ես՝ բարի եկար, իմացել ես՝ հյուր ա: Առանց հարցնելու ունեցածդ վեկավել ա, ձեն չես հանել: Տեսել ա չես խոսում՝ համեստությունդ խեղճության տեղ ա ընդունել ու խփել ա զլխիդ:

ՍՈՆԱ - Խեղճ չես եղել: Բարությունդ խեղճություն են համարել:

ԿԱՄՈ - Մի հաշիվ ա: Էնպես որ, մենք ավելի մեղավոր ենք, քան մեր թշնամին: Թուրքի թրքության համար էլ ենք մենք մեղավոր: Թե առաջին անգամ ձեռք մեկնելիս մատները դաղեինք...

ԱՄԱՅԻ - Բալա, դու էլ չգիտես, թե ինչ ես խոսում: Իմ աշխարհը բարու վրա է սարքած: Իմ կյանքում քանի թուրք եմ բժշկել, թուրքի քանի հանգող ծրագ վառել...

ԿԱՄՈ - Դու բուժել ես, ինքն առողջացել ու վրեդ սուր ա քաշել ու կեղտոտ ձեռքերը մեկնել քո սրբությանը...

ԱՄԱՅԻ - Բայց ես կամ, ինքը՝ չէ: Աստված է դատավորը, Կամո տղա... Ծատ խոսեցինք, գնամ, խեղճ անասունին խոտ ու ջուր տամ, մեղք է: *(Գնում է գոմ:)*

ՍՈՆԱ - Ամային ուրիշ է, նրա մեջ վաղուց չարը հալվել, վերացել է: Հիմա նրա մեջ միայն բարին է ապրում:

ԿԱՄՈ - Իսկ իմ մեջ հիմի չարի ու բարու կռիվ ա: Ես հիմի ավելի շատ չարի կողմն եմ, քան բարու:

ՍՈՆԱ - Մի մթնիր ու մի չարանա, Կամո, նույնիսկ պատերազմի ժամանակ աշխարհը գեղեցիկ է, մարդը, որքան էլ չարացած, էլի իր մեծ մասով բարի է:

ԿԱՄՈ - Հը... (Դադար:) Սոնա, ախր շատ գեղեցիկ ես: Էս պատերազմի մեջ, էս ավերակված աշխարհի մեջ լինելու համար խելոելու չափ գեղեցիկ ես: Իսկ երբ զինվորը կին ա տեսնում, էն էլ՝ գեղեցիկ կին, փափկում, դառնում ա սովորական տղամարդ ու հեշտ ա պարտվում: Լավ կանես, էստեղից շուտ էթաս:

ՍՈՆԱ - Իսկ ի՞նչ անես, որ էսպես չի մնա: Ցավն ու վիշտը կխլեն մեր գեղեցկությունը: (Ներս է գնում:)

Կամոն խոր հոգոց է հանում ու հեռակներին հեռվելով՝ հետևում է նրան:

Տեսարան 7

Քակ են մտնում Արսենն ու 3-րդ զինվորը՝ Ամայիի պղնձի կանթերից բռնած:

ԱՐՍԵՆ - Էս ո՞ր են:

3-րդ ՁԻՆՎՈՐ - Տանը կլինեն:

ԱՐՍԵՆ - Ամայի...

3-րդ ՁԻՆՎՈՐ - Ամայի:

ԱՄԱՅԻ ԶԱՅԸ - Հա՛, մատաղ:

ԱՐՍԵՆ - Որտե՞ղ ես:

ԱՄԱՅԻ - Հո՞վ ա:

ԱՐՍԵՆ - Ես եմ, Արսենը:

ԱՄԱՅԻ - (գալիս է գոմի կողմից): Վայ, բալա, դո՛ւ ես: Ի՞նչ կա:

ԱՐՍԵՆ - Հե՛չ, կաթսան բերեցինք:

ԱՄԱՅԻ - Կերա՞ք փլավը: Համո՞վ էր:

3-րդ ՁԻՆՎՈՐ - Բա Համոյի էփած ծաշից չէ՞ր: Երկու օր առաջ փլավ էր էփել, ծամել չէր լինում, էնքան հում էր:

ԱՐՍԵՆ - Բա էն անգամվա միսը: Քաշում էինք, քաշում՝ չէր պոկվում, ոնց որ կաուչուկ լիներ: Բայց թե Համոյի դեմ խաղ չկա խփածը խփած է:

ԱՄԱՅԻ - Հա՛...

ԱՐՍԵՆ - Հա՛, նրա գնդակը գետնին չի ընկնում: Համոն ի՞նչ խոհարար, Համոն զինվոր է, դիպուկահար: Ուղղակի տղերքի խաթրի համար է ծաշ էփում:

ԱՄԱՅԻ - Թող Աստված նրա արևը պահի:

ԱՐՍԵՆ - Ամայի...

ԱՄԱՅԻ - Ասա, մատաղ:

ԱՐՍԵՆ - Ախր, որ ասեմ, վախենում եմ՝ բարկանաս:

ԱՄԱՅԻ - Թե բարկանալու բան լինի՝ կբարկանամ, ասես, թե չասես: Ասա:

ԱՐՍԵՆ - Պատերազմը քո պղնձին էլ հասավ:

ԱՄԱՅԻ - Ի՞նչ ես խոսում, տղա՛, բան ասա, բան հասկանանք:

3-րդ ԶԻՆՎՈՐ - Մի խոսքով...

ԱՐՄԵՆ - Դե, փլավը կերանք, պղինձը դրեցինք խրամատի եզրին: Թուրքն էլ տվեց, ծռեց:

ԱՄԱՅԻ - Վայ, քոռանամ ես, ախր, ափսոս էր:

ԱՐՄԵՆ - Պղինձն ինչ է, որ դրա համար քոռանա: Հենց գնացի Երևան, հետս մի էնպիսի կաթսա կբերեմ որ...

ԱՄԱՅԻ - Չէ, նորը դրանից չի լինի, Արսեն տղա: Էդ պղինձը հարյուր ու հիսուն տարեկան է:

ԱՐՄԵՆ - Հինը նորից լավն է:

ԱՄԱՅԻ - Հա, մատաղ: Գիտեն, քանի մարդ է կերակրել: Որքան երկար են օգտագործել ամանը, էնքան համով է նրա էփած ծաշը: Դրա համար էլ միշտ էդ պղնձով էի ծաշ եփում ձեզ համար:

ԱՐՄԵՆ - (կռանում, համբուրում է այտը): Չե՛ս նեղացել:

ԱՄԱՅԻ - (ծիծաղելով): Գնա՛, շաշ... տղերքը ո՛նց են:

ԱՐՄԵՆ - (բութ մատը վերև է պարզում): Ըհը: Բա Սոնան ո՛ր է, Ամայի ջան... Սիրտը կոտրվեց, չգիտեմ՝ ի՛նչ անեմ, որ մի քիչ մխիթարվի:

3-րդ Զինվորը **նստաբանին**
նստած ծխում է:

ԱՄԱՅԻ - Սոնա՛:

ՍՈՆԱՅԻ ԶԱՅՆԸ - Հա՛:

ԱՄԱՅԻ - Արի՛:

ՍՈՆԱ - (գալիս, տեսնում է Արսե-

նին, ուժ գործադրելով ժպտում է): Վայ, էս ինչի՞ ես եկել:

ԱՐՄԵՆ - Ամայու վիրավոր կաթսան եմ բերել:

Ամային վերցնում է կաթսան, զննում է, երևում է, որ խոսում է կաթսայի հետ:
Դադար:

ԱՐՄԵՆ - Եկա, որ մի անգամ էլ տեսնեմ քեզ:

ՍՈՆԱ - (ափով փակում է տղայի բերանը): Սո՛ւ: (Արսենը համբուրում է ձեռքը): Վաղը զենք բերող ուղղաթիռով Երևան եմ գնում:

ԱՐՄԵՆ - Այդպես էլ գիտեի: Մի խնդրանք ունեմ. զանգես մեր տուն, մորս ասես, որ ես լավ եմ: Տեսնում ես, չէ՞, որ շատ լավ եմ:

ՍՈՆԱ - Զանգեմ: Տուր համարը:

ԱՐՄԵՆ - (գրպանից հանում է թղթի կտորը): Գիտեմ, մաման հեռախոսը վախով կվերցնի: Դու նրան հանգստացրու, լավ:

ՍՈՆԱ - Ծա՛մ ես սիրում մորդ:

ԱՐՄԵՆ - Ո՛վ չի սիրում իր մորը: Մամայիս հետ շատ եմ կապված:

ՍՈՆԱ - Եթե ուզում ես՝ հանդիպեմ, ավելի մանրամասն պատմեմ քո մասին:

ԱՐՄԵՆ - Կանե՛ս:

ՍՈՆԱ - Ինչո՞ւ չէ:

ԱՐՄԵՆ - (հրձվանքով): Որ ասում եմ՝ քեզ շատ եմ սիրում, չես հավատում: Ասես հազար տարի ծանաչել եմ:

ՍՈՆԱ - Մի խենթանա, Արսեն: Իմ սիրտը վիրավոր է: Մի խենթանա, պատերազմ է:

ԱՐՍԵՆ - Կվերջանա:

ՍՈՆԱ - Երանի շուտ վերջանար:

3-րդ ՁԻՆՎՈՐ - *(անհամարձակ):*
Արսեն, չգնա՞նք:

ԱՐՍԵՆ - *(սթափվում է):* Գնանք: *(Սոնային նայում է կարոտով, սիրով, կես-կատակ բացականչում է:)* Գնամ, պատերազմի հերն անիծեմ:

3-րդ ՁԻՆՎՈՐ - *(ծզվում է Ամայիի առաջ, ապա դիմում է Սոնային):* Ցտեսություն:

ԱՄԱՅԻ - Բարին արևո, բալա:

Մոնան հայացքով ուղեկցում է տղաներին: Քիչ անց գլխապտույտ է ունենում, մի կերպ մատում է մատարանին:

ՍՈՆԱ - Վայ, էս ի՞նչ է...

ԱՄԱՅԻ - *(կաթսան թողնում, մոտենում է Սոնային):* Ի՞նչ եղավ, բալա:

ՍՈՆԱ - Հեչ, գլուխս էլի պտտվեց: Էս ի՞նչ բան է, չեմ հասկանում:

ԱՄԱՅԻ - Չհասկանալու ի՞նչ կա: Սոնա աղջիկ, դու էրկու հոգով ես:

ՍՈՆԱ - Ի՞նչ ես ասում, Ամայի, ես քսան տարվա չբեր եմ:

ԱՄԱՅԻ - *(ծիծաղում է):* Սոնա աղջիկ, ես էլ վաթսունհինգ տարվա հեքիմ եմ: Հերիքնագի աչքը ոչ մի անգամ չի խաբել: Արի, տեսնեմ... *(Շոշափում է Սոնայի փո-*

րը:) Մի ամսից խոխան կխաղա:

ՍՈՆԱ - *(ոչ այն է՝ ուրախ է, ոչ այն է՝ զարմացած, շոշափում է փորը):* Սամվել...:

ԱՄԱՅԻ - Քեզ զգույշ պահի, բալա: Էլ չգնաս դիրքեր, ծանր աշխատանք չանես, էլ բիստերը չլվանաս: Տեսնում եմ՝ զզվում ես:

ՍՈՆԱ - *(ավելի շատ իրեն, քան Ամայիին):* Պատերազմ է... ու մարդ պարտավոր է դիմանալ թե տխրությանը, թե ուրախությանը... պատերազմ է...

Տեսարան 8

Գիշեր է: Ամային դուրս է գալիս տնից, մատում է ծառի տակ:

ԱՄԱՅԻ - Այ հալիվոր, դիմանայիր, էլի: Հիմի էսքան ցավին մենակ ո՞նց դիմանամ: Գևորգիս ցավին դիմանամ, նրա էրեխեքի կարոտին, քո բացակայությամբ, թե՛ հող ու ջրի համար գլուխները դրած էս էրեխեքի տանջանքին... Վիրավորվում են՝ ոնց որ գյուլլեն իմ սիրտը մտնի, սոված են մնում՝ հաց ուտելս չի գալիս, մրսում են՝ իրենցից ավելի շատ եմ դողում: Թե հետս լինեիր, կյանքս մի քիչ հեշտ կլիներ: *(Քայլում է մոլոր, դուրս է գալիս բակից:)* Հավք ու հող, քար ու սար, դար ու դաշտ քնած են, իսկ ես քնել չեմ կարողանում: Էդպես տեղաշորից փախչում են նրանք, ում հետևից որ գալիս է

Գաբրիելը... Հը, Հերիքնազ աղ-
ջիկ, կարո՞ղ ա գնալուդ ժամա-
նակն է... (Խաչ է հանում
երեսին:) Ա՛խ, մարդ պիտի մեր
չլինի: Գևորգիս ցավը, նրա
կորստի ցավն ինձ առնում, տա-
նում է սար ու քար: Կամոյի ցա-
վը, Դավիթի ցավը, Սիմոնի,
Մարգարի... Գևորգի ցավն իմ
սրտի միջով է անցնում ու
սիրտս մզզում է, ասես բաց
վերք լինի: Հիմա էլ գումարվեց
Սոնայի դարդը: Ջահել կին է,
գլխին սև շոր գցեց: Ինչքան
ապրի էդպես, տուն ու տեղ թո-
ղած ինչքան մնա դիրքերում...
Հիմի էլ հղի է: Էրեխեն մխիթա-
րություն կլինի, չնայած անմարդ
կնկա համար... Ախր, կինը օ-
ջախ պիտի պահի, կինը պիտի
չթողնի, որ օջախը հանգչի:
Օ՛ֆ... Հալիվոր, տեսնես էդտեղ
է լավ, թե՛ էստեղ: Չես խոսում:
Ի՞նչ խոսես, ով գիտե՛ տեղդ լավ
է, որ ինձ մոռացել ես: Թե՛...
Ա՛խ, քեզ համար էլ քոռանամ...
(Լալիս է:) Մեղք էիր, առանց
դագաղի, առանց կարգին
պատիվ տալու թաղեցինք:
Մարդուն իր ունեցածից ու
ստեղծածից մի դագաղ է մնում:
Քեզ էդ էլ չհասավ: Ի՞նչ անեինք,
թուրքը կրակում ու կրակում էր
կատաղած... (Կրակոցի ձայներ
են լսվում:) Էլի սկսեցին կրակել:
Ահն առել է թուրքի սիրտն ու

կրակում է, գիշեր-ցերեկ կրա-
կում է: Չի ափսոսում Աստծո
ստեղծած էս սիրուն աշխարհը,
կրակում, փչացնում է... (Գալիս
է դեպի բակ: Կրակոցներ են
լսվում: Մի պահ ձգվում է, հետո
կուչ է գալիս, ձեռքը տանում է
սրտին:) Համ, էկամր... քեզ վա-
ղուց էի սպասում, ախր...

**Փվում է քարին: Մեռնում է լուռ:
Կարծես մտած է: Գալիս է Դա-
վիթը:**

ԴԱՎԻԹ - Էս ինչ երազ էր... Ասի՛
երկու գիշեր չեմ քնել, մի ժամ
հանգստանամ, էն էլ էս երազը..
Լավ երազ չէր, վատ երազ էր:
Ամային ասում ա. «Երազին հա-
վատաս՝ նշանակում է վազես
ստվերի հետևից, երազին հա-
վատաս՝ նշանակում ա քամու
հետևից վազես»: Լավ ա ասում,
բայց իմ տեսած երազը չար էր,
հաստատ: (Սկատում է քարին
նստած Ամայիին:) Այ մեր, քո
քունն է՛լ չի տանում: Վատ երազ
եմ տեսել, Հերիքնազ Ակունց, ու
սիրտս կծկվում է: Քնել չկարո-
ղացա, վեր կացա, եկա քո կող-
մը: Էն էլ, Փառք Աստծո,
տեսնում եմ՝ վատ չես: (Ստում
է Ամայիի կողքին:) Ուրեմն, Ա-
մայուս ասեմ, իբր էլի պատե-
րազմ է, ես ու դու մի մութ
տեղում ենք: Ջարգանդելու մութ
էր, ո՛չ արև, ո՛չ լուսին, ու հաս-
տատ երկրի վրա չէր... Դու

գնում էիր ու հետս չէիր խոսում: Ես գալիս էի քո հետևից, դու դառնում, խեթում էիր ինձ ու քայլում էիր: Հետս չէիր խոսում, բայց հասկացնում էիր, որ չգամ հետևիցդ... Հետո... ագռավի նման բան հայտնվեց երկնքից... ու ոնց ասեմ, չգիտեմ, քեզ վերցրեց ու տարավ: Վեր թռա, էլ քնել չկարողացա, եկա քո կողմը: Սիրտս վատ բան էր գուշակում, բայց ոնց որ... Հը՛, այ մեր, ինչի՛ չես խոսում: *(Նրա լռությունից զարմացած:)* Ամայի, ինչի՛ չես խոսում: *(Ծռշափում է Ամայուն, զարմացած ետ է քաշում ձեռքը:)* Արյո՛ն է... Ամայի՛... վիրավոր ես... *(Ամային թեքվում է կողքի:)* Մեռած է, թե՛ վիրավոր... *(Համոզվելով, որ մեռած է:)* Վայ՛ ձեր... տղամարդ եք՝ ինձ վրա կրակեք, խեղձ պառավի վրա՛ պատեց ձեր ուժը: Ամայի, բա առանց մոր ինչ արծվաբույն... բա սա անելու բան էր: Տղերք, էկե՛ք, Ամային զարկվեց...

ԿԱՄՈ - Ո՛նց... Ամայի, Ամայի...*(Հայտնվում է հենակների վրա ցատկոտելով:)*

ՍՈՆԱ, ԿԱՄՈՆ, ԷԼԻ քանի զինվորներ վագում, հավաքվում են Ամայիի մոտ:

ԴԱՎԻԹ - *(գլխի փաթաթանը հանելով):* Ամային զոհվեց: Իսկական զինվոր էր ու իսկական

հերոս զինվորի պես պիտի հողին հանձենք նրան:

Տեսարան 9

Բակում Սոնան ու Կամոն են:

ՍՈՆԱ - *(միացրել է ձայնագրիչը):* Թե Հայաստանի երկինքը երեկոյան էներգետիկ ճգնաժամի պատճառով է մութ լինում, Արցախյան ճակատամերձ այս գյուղում էլեկտրագծերն ավերվել են հրետակոծման ժամանակ: Ավերվել են նաև տները: Այս գյուղը երկու անգամ ձեռքից-ձեռք է անցել: Գյուղում խաղաղ բնակչություն չկա, բացի 80-ամյա Հերիքնազ Ակունցից, որին զինվորները փաղաքշաբար Ամայի՛ մայրիկ էին կոչում: Ամային էլ զինվոր էր, իր տնից չէր հեռանում, քանի որ լավ գիտեր, որ կռվող զինվորին թիկունքում սպասող մայր պիտի լինի: Բայց այս գիշեր զոհվեց նաև Ամային: Զոհվեց սեփական տան բակում, թշնամու արձակած գնդակից: *(Դադար՝ հուզմունքը զսպելու համար:)* Երբ նայում ես դիրքերից, չես մտածում, թե գյուղն ավերված է, թվում է՝ հիմա տնից դուրս է վազելու պորտը բաց մի տղա և, առանց շրջապատին ուշք դարձնելու, իրեն օգելու է այգի, որ տատից թաքուն արևածաղկի մի գլուխ թոցնի, կամ էլ խակ խնձորը ծո-

ցը լցրած վագի, խառնվի ընկերներին ու իջնի գետը լողալու: Նայում ես դիրքերից ու մտածում, թե գյուղը դատարկ չէ: (Կրակոցի ձայներ: Կռվողների աղմուկ: Սոնան ուշադրություն չի դարձնում:)

Դրա համար էլ հայ տղաներն այդքան հաստատուն են կանգնում թշնամու դիմաց: Այսօր մեր զինվորներն արդեն ետ են մղել թշնամու երրորդ գրոհը: Գրոհների արանքում զինվորական պատիվներով հողին են հանձնել Հերիքնազ Ակունցին, բայց Քարակապը հիմա ավելի կարևոր է ամեն մի զինվորի համար, քանի որ հիմա ընկած հերոսների գերեզմաններն են այնտեղ: Ու չնայած իջնում է մութը, սակայն թշնամին անընդհատ գրոհում է, քանի որ Քարակապն Արցախի դարպասն է:

Պայթյուն: Սոնան ու Կամոն թաքնվում են տան պատի մոտ: Կրակոցների ձայնը ուժգնանում է: Լսվում է նաև հեռակապի խոխոց, հայերեն և ադրբեջաներեն բացականչություններ:

ՁԱՅՆԵՐ - Վայ քո, արա՛... ախ... Աջ կողմը ուշադիր... Անա՛... Վայ քո անան... Կորյունին ասա, թող մինամյոտով խփի... Էրմանի... Կորյուն, խփի, արա Տրուբա՛, ծիշտ նշան բռնի... Մարգար... տղերք, Մարգարը զարկվավ...

ԿԱՄՈ - (լարված): Էրևում է՝ թունդ բոյ ա:

ՍՈՆԱ - Սիրտս չի համբերում, գնամ, տեսնեմ՝ ինչ կա ու գամ: (Ուզում է վազել:)

ԿԱՄՈ - (հասցնում է թնից բռնել): Ո՛ր, խելառ հո չէն:

ՍՈՆԱ - Կամո, գնամ ու գամ, էլի:

ԿԱՄՈ - Ասում եմ՝ հանգիստ տեղդ մնա: Գնալու ես՝ խանգարես, զենք չունես, կրակել չգիտես...

ՍՈՆԱ - Չեմ խանգարի, Կամո ջան:

ԿԱՄՈ - Էրևում է՝ տղերքի վիճակը լավ չէ: Պահածո տեղից ավտոմատս բեր:

ՍՈՆԱ - Դո՛ւ...

ԿԱՄՈ - (չոր ու հրամայական): Բեր:

Սոնան վազում, տնից բերում է ինքնաձիգը:

ՍՈՆԱ - Ի՞նչ ես ուզում անել:

ԿԱՄՈ - Ուռք չունեմ, որ տղերքին հասնեմ, կնստեմ էստեղ: Թե տղերքի ուժը չպատի ու թշնամին հասնի մեզ, ես էլ իմ դատաստանը կանեմ: Վստահ էղի, եթե պետք ըլնի՝ ինձ ու քեզ պաշտպանել կկարենամ: (Լսելով մարտի աղմուկը՝ կրակահերթ է տալիս:)

ՍՈՆԱ - Ի՞նչ ես անում:

ԿԱՄՈ - Ազդանշան եմ տալիս:

ՍՈՆԱ - Ի՞նչ ազդանշան...

ԿԱՄՈ - Իբր՝ օգնություն ա գալիս:

ՍՈՆԱ - Ո՛ր է օգնություն:

ԿԱՄՈ - Մերոնք գիտեն, որ օգ-

նություն չկա, բայց թշնամին չգիտի: Կմտածի՝ հայերն օգնություն են ստանում, կվախենա, իսկ կռվի ժամանակ որ վախն ընկավ գինվորի սիրտը...

ՍՈՆԱ - Բայց թշնամին ծանաչո՞ւմ է քո ազդանշանը:

ԿԱՄՈ - (ժպտալով): Էսքան ժամանակ իրար կողքի կռվում ենք: Ինձնից ու քեզնից լավ գիտի: (Երկու կարճ կրակահերթ է արձակում:)

ՍՈՆԱ - Ոնց որ կրակոցների ձայները պակասեցին:

ԿԱՄՈ - Ոնց որ...

Լավում են հեռակապի խառը ձայներ, բացականչություններ:

ՁԱՅՆԵՐ - Խփի, Սիմոն, մի թողեք, որ ուշքի գան...

- Հո՛վ ա ասալ՝ մի կրակեք...
- Արա, խչոյի թիկունքը պահի, խչոյի թիկունքը...
- Թորքը մտել ա ձորը, մտել ա ձորը, զգոյշ...
- Մի՛ իջի, մի՛ իջի...
- Արսեն, Արսեն...
- Թխի, թխի, զգոյշ...

Սոնան ու Կամոն կլանված լսում են գիշերային մարտի ձայները: Սոնան տնից բերում է նավթի լամպը:

Բեմի խորքում՝ կիսախավարի մեջ պատկերվում է ջոկատի խփվելը: Ռազմի ձայները մարում են: Լարված լռություն: Հետո

լավում է մոտեցող զրահամեքենայի աղմուկը: Մեքենայի զցած լույսի մեջ երևում է Դավիթը:

ՍՈՆԱ - (ընդառաջ գնալով): Հը՛, Դավիթ...

ԴԱՎԻԹ - (գլուխը վիրակապած է): Բարձունքը մերն է...

ԿԱՄՈ - Դավո, տղերքը... տղերքը ո՞նց են:

ԴԱՎԻԹ - Տղերքը չկան...

ԿԱՄՈ - Ի՞նչ...

ԴԱՎԻԹ - Թուրքին լցրինք ձորը... խփվեցին: Արսենը վերջին պահին տաքացավ, իջավ ձորը: Ինքն էլ...

Դավիթը նստում, գլխահակ ծխում է: Սոնան ծոցագրպանից հանում է Արսենի տված թուղթը, պատռում է: Դավիթը լացով փլվում է Կամոյի ուսին:

ՍՈՆԱ - Հիմա արդեն մորդ զանգելու կարիք չկա: Դու ինձնից շուտ կհասնես տուն:

ԴԱՎԻԹ - Նոր ջոկատ են ուղարկել Բարակապ... գնամ դիմավորեմ...

Դավիթն արագ հեռանում է: Կամոն կանգնած մայրում է նրա հետևից:

Տեսարան 10

Բակ: Սոնան, սև շորերը հագին, բակում գործ է անում: Դավիթն ու Կամոն նստարանին նստած մայրում են ճանապարհին:

Լավում է «Ուրալի» ձայնը: Բակ են մտնում ջոկատի գոհված տղաները: Արսենը նստում է դաշնամուրի մոտ ու փորձում է ինչ-որ բան նվագել: Մարգարը վազում-թռնում է Կորյունի շալակը: 1—ին Ձինվորը կռացել, փորձում է գլխարկով բզեզ բռնել, 2-րդ Ձինվորը 3-րդ Ձինվորի հետ տուն է մտնում, երկար ճերմակ սփռոց են բերում, գցում սեղանին: Սոնան սեղանի կենտրոնում դնում է Ամայիի ծռնված կաթսան ու շարում է ափսեներն ու պատառաքղները: 3-րդ Ձինվորը մերկանում է մեջքից վերև ու երկաթի տակառի միջի ջրով շփում է մարմինը: Սիմոնն ու Վահրամն ինչ-որ բանի մասին են խոսում: Աստիճանաբար բարձրանալով հնչում է Քոչարին: Ջոկատի տղաները Քոչարի են պարում: Դաշնամուրի մոտից քաշում, պարի մեջ են մտցնում Արսենին: Պարի ընթացքում նրանք հերթով անհետանում են «Ուրալի» լուսերի մեջ: Բեմը մի պահ մթնում, հետո աստիճանաբար լուսավորվում է: Ա-

մայու տան բակն է, բայց պատերազմի ավերածության հետքերը վերացած են: Մեր օերերն են: Սակայն նույնն է դաշնամուրը: Դաշնամուրի մոտ նորակոչիկ զինվոր է նստած: Փորձում է նվագել:

ՁԱՅՆ - Սամ... Սամվել:

ՍԱՄՎԵԼ - Հան, գալիս եմ:

ՁԱՅՆ - Ծուտ արա, հերթափոխը դիրքեր է բարձրանում: Ուշանում ենք:

ՍԱՄՎԵԼ - (տան կողմը ձայն տալով): Մամ...

Սոնան, արդեն տարեց կին՝ դուրս է գալիս տնից ու մոտենում է որդուն: Ուղղում է նրա հագուստը: Մի քանի վայրկյան նստում են դեմ-դիմաց ու վեր կենում: Սամվելը գրկում է մորը: Սոնան Սամվելի ձեռքին է կապում ժամացույցը:

ՍՈՆԱ - Հորդ ժամացույցն է:

ՁԱՅՆ - (անհամբեր) Սամո՛...

ՍԱՄՎԵԼ - Դե գալիս եմ, էլի՛:

Սամվելը համբուրում է մորն ու վազքով հեռանում:
Սոնան նրա հետևից ջուր է ցանում ու ձեռքերը ծալած քարանում է տեղում:



Անուշ ԱՍԼԻԲԵԿՅԱՆ

Պիեաի միջոցով փորձեցի բարձրա-
ձայնեղ 90-ականների, այսինքն՝ իմ
սերնդին բաժին հասած այն խնդիրնե-
րը, որոնք անկախությունից հետո մեզ
հետ բերել և հասցրել ենք մեր օրերը:
Գրելու գաղափարը վաղուց էր ծնվել,
կյանքի ամեն փուլում այն հասակ էր
ստնում ինձ հետ ու «հարստանում»
նոր հիասթափություններով: Ցավով
եմ նշում, որ պիեաի հիմքում գրեթե

իրական դեպքեր ու իրական հերոսներ են, իմ հասակակիցները: Ես գրում
էի, որպեսզի անկախությունից հետո ծնված սերնդին, 18-20-ամյա ընթեր-
ցող-հանդիսատեսին իրազեկեմ մեր անցած ուղու մասին, գուցե արդարա-
նամ նրանց առջև մեր չարածների համար, գրում էի նաև պատմելու,
զգուշացնելու համար, թե պատերազմը չի դադարում ավերել իր ավարտից
հետո անգամ, այլ շարունակվում է մարդկանց գիտակցության մեջ,
հիշողություններում և ճակատագրերում:

Եվ ահա, դեռ պիեաը լույս չտեսած, դեռ բեմ չելած, տեղի ունեցավ
անսպասելին, ապրիլյան քառօրյա պատերազմը պատուհասեց նաև այս ե-
րիտասարդներին ու պատանիներին, նրանցից ոմանց հերոսացնելով
մահվան գնով, մյուսների մեջ կտրուկ արթնացնելով ազգային ինքնագի-
տակցություն և ինքնազոհության ունակություն: Ավաղ, ու երանի չլինեք...

Միրոս վշտով, զայրույթով է լցված այն փաստից, որ մեր անկախության
սերնդի համար այլևս պատերազմը ո՛չ թե անցյալի պատմություն, այլ անձ-
նական վերապրված ցավ է: Այսպիսով «Մի լռիր, Ռեմի» պիեաը դառնում է
մի նոր «զայրացածների սերնդի»¹ ճիշ մեր օրերի մասին:

1 Նկատի ունեմ 1950-ականներին Անգլիայում ձևավորված
«Զայրացած երիտասարդներ» (անգլ. Angry young men) գրական ուղղությունը,
որի առաջնորդը դարձավ Ջոն Օգբորնը՝ իր «Ետ նայիր զայրացած» պիեաով:

ՄԻՆԻՍՏՐ, ՌԵՍԻ

Գրամա երեք գործողությամբ

Գործող անջինք

ՌԵՍԻ - 25-30 տարեկան, գեղեցիկ, տաղանդավոր երիտասարդ կին

Նրա ԱՄՈՒՄԻՆԸ - մոտ 30 տարեկան սիրիահայ երիտասարդ¹

ՌԵՄԻԻ ՀԱՅՐԸ, ՌԵՄԻԻ ՄԱՅՐԸ - ամենասովորական ամուսնական զույգ. նրանք վիրտուալ կերպարներ են

ՏՂԱ - 5-6 տարեկան, լռակյաց երեխա

ՖԼԵՅՏԱՀԱՐՈՒՀԻ - պրոֆեսիոնալ ֆլեյտահարուհի է, ցանկալի է, որ նման լինի ՌԵՄԻԻ դերակատարին, նույն տարիքի, որպեսզի զուգահեռ տարվի նրանց միջև

Նախընտրելի է, որ բեմում առկա լինի նաև ջազային կազմ՝ Ֆլեյտահարուհին, նաև կոնտրաբաս և դաշնամուր նվագողներ: Բեմից վեր՝ օդում ճոճվող այլ մի հարթության վրա, տրիոն ժամանակ առ ժամանակ կհնչեցնի ներկայացման լեյտմոտիվ դարձած հանդարտ, հոգեթով ջազը: Այն կհնչի իբրև հակաթեզ անելանելի, կենցաղային ու ճնշող իրականությանը, որում ակամա հայտնվել են հերոսները և կխորհրդանշի ոչ նյութական ոլորտի մշտական ներկայությունը բեմում, որից այնքան կտրվել են մարդիկ՝ առօրյա հոգսերի ու մշտապես զբաղվածության պատճառով: Ետնաբեմում կա նաև էկրան, որը ժամանակ առ ժամանակ ֆոտո և վիդեո վավերագրական նյութի միջոցով պատկերում է Հայաստանի այս կամ այն պատմական ժամանակահատվածը: Ինչպես նաև ՌԵՄԻԻ ծնողների իրականությունը՝ ինչպես վավերագրական ֆիլմ ՌԵՄԻԻ անցյալից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Տեսարան առաջին

Մինչև հանդիսատեսի բեմում տեղավորվելը հնչում է ջազային երաժշտություն: Վարագույրը բաց բեմ է: Մուր է: Հանդիսատեսի տեղավորվելուց քիչ անց ջազը ընդհատվում է, լավում են դաշնամուրի անկանոն, տագնապեցնող հնչյուններ, ֆլեյտայով հնչում է գամմա, աղմուկ, աղջիկ երեխայի լաց, ընդհատ-ընդհատ արտահայտություններ. «չեմ ուզում, հայրիկ» (երեխայի ձայնով), «դու կարող ես», «դու պարտավոր ես», «անտեր երկիր», «նետիր գնդակը» (տղամարդու ձայնով), «հայրիկ, ես քնել եմ ուզում»... Բեմը լուսավորվում է, ամենուրեք մեծ ու փոքր կապույտ գնդակներ կան: Չայները լռում են, բազմոցին պառկած երիտասարդ կինն ասես մղձավանջի մեջ քավալվում է, նա երազում խոսում է. «Հայրիկ, ես քնել եմ ուզում, մամ, մամ, ասա նրան, ես քնել եմ ուզում»: Չարթուցիչի ուժգին ձայն: Կինը վեր է թռչում: Ճոճաթոռում նստած երիտասարդ տղամարդը, ձեռքին տետր ու գրիչ, լուռ հետևում է կնոջը: Աղջիկը սկզբում ցնորված նայում է շուրջըրորը: Տղամարդը մոտենում է, ջուր է տալիս:

ԱՄՈՒՍԻՆ - Խմիր, խմիր ու հանգստացիր, հոգիս, զարթուցիչը ես էի լարել:

ՌԵՄԻ - Բայց դու գիտես, որ մանկուց ատում եմ զարթուցիչի ձայնը:

ԱՄՈՒՍԻՆ - (հոգատար փարվելով): Այո, բայց վերջերս դա քեզ մոտ հաճախ է կրկնվում, մղձավանջներ ես ունենում, ես էլ որոշեցի կոնկրետ մի ժամի արթնացնել քեզ, որ չտանջվես:

ՌԵՄԻ - Դու էլի գրառումներ ես անում, ես դարձել եմ քո պացիենտը, դա այնքան էլ լավ չէ... Գուցե կարծում ես՝ ես խենթ եմ:

ԱՄՈՒՍԻՆ - Չէ, ինչ ես ասում, սի-

րելիս, ես խաչբառ էի լրացնում, այ տես... (տետրի միջից հանում է խաչբառով թերթիկը) տես ու ասա՝ ո՞րն է աշխարհի ամենաբարձր ջրվեժը:

ՌԵՄԻ - (հրեն փորձելով կարգի բերել): Չեմ մտաբերում:

ԱՄՈՒՍԻՆ - Իսկ նրբ է առաջին անգամ հայերենով Ծեքսպիր բեմադրվել, և ո՞ր ստեղծագործությունը:

ՌԵՄԻ - Չգիտեմ: Կարծես թե չգիտեմ:

ԱՄՈՒՍԻՆ - Իսկապես չգիտես, հոգիս, չեղավ, անհարմար է, դու իմ կինն ես, դու չես կարող նման պարզունակ բաներ չի-

մանալ: Մի՞թե չես կարդացել «Վենետիկի վաճառականը»:

ՌԵՄԻ - Պարզունամկ: Վստամի ես, որ պարզունակ հարց է, դա խիստ մասնագիտական չէ՞, սիրելիս: *(Տղամարդու լռությունից տազնապելով:)* Ներիր, կարծում եմ, չգիտեմ:

ԱՄՈՒՍԻՆ - Կրկնիր, հոգիս, շեքսպիրյան երկերի հայկական բեմադրությունների պատմությունը սկսվում է 1866 թվականին՝ «Վենետիկի վաճառականը» պիեսի հատվածական բեմադրությամբ:

ՌԵՄԻ - Հեգնում ես:

ԱՄՈՒՍԻՆ - Կրկնիր՝ ասացի: *(Ռեմին վարսակալն է փնտրում:)* Ռեմի, երբեմն ինձ թվում է, որ դու դպրոց չես գնացել, նման բաները տարրական դասարաններում են անցնում:

ՌԵՄԻ - Չեմ կարծում:

ԱՄՈՒՍԻՆ - Ինչ ասացիր:

ՌԵՄԻ - Ասում եմ՝ դու այնքան էլ չես սխալվում, ութ տարեկան էի, երբ սկսվեց Արցախյան շարժումը, դու չգիտես՝ դա ինչ բան է, դու այստեղ չես ապրել: *(Տղամարդը գրառում է անում, նույնիսկ հայացքը չի բարձրացնում՝ ասես չկարևորելով Ռեմիի պատմությունը: Ռեմին վարսակալը գտնելով, մազերին ամրացնելով, ասես իմիջիայլոց հիշելով, հարդարում է անկողինը:)* Դպրոցները սկսեցին չջե-

ռուցվել, մենք նստում էիք սառը նստարանին՝ առանց վերարկուները և ձեռնոցները հանելու: Չէինք հասցնում գրքերը պայուսակից հանել, երբ արդեն զանգը հնչում էր: Կարող ես պատկերացնել:

ԱՄՈՒՍԻՆ - *(շարունակելով գրել):*

Այո, լսել եմ այդ մասին:

ՌԵՄԻ - Չէ, լսելն ուրիշ է, պետք էր ապրել այդ ամենը՝ հասկանալու համար: Ո՞վ էր մտածում դասի մասին: Ուսուցչուհին գալիս էր անտրամադիր, սառած մատներով: Աչքերիս առաջ են նրա մաշված քթերով կոշիկները, որոնք ջանում էր թաքցնել: Ասես քայլերը դնում էր ոչ թե առաջ, այլ հետ-հետ՝ ընկրկելով, որ մենք չտեսնեինք, թե ինչպես էին կոշիկները գրեթե մերկացնում նրա փայտացած բթամատերը: Չնայած ինքներս էինք հնոտիների մեջ ու այնքան քաղցած, որ ոչինչ չէինք հասկանում նրա ասածներից, մենք երազում էինք մի բատոն «Մարսի» կամ մեկ բաժակ տաք թեյի մասին:

ԱՄՈՒՍԻՆ - Դե լավ, մոռացիր, չէի ուզում քեզ վերադարձնել այդ տարիները:

ՌԵՄԻ - Չէ, ինչո՞ւ, դա իմ մանկությունն է, դաժան 90-ականները... դրանից չես փախչի, ես այդ հիշողությունները տանելու եմ մինչև կյանքիս վերջ: Էդ տարի-

ներից ինձ հետ բերել եմ նաև աչքերիս հիվանդությունը՝ մոմի լույսի տակ դասեր սովորելու, կարդալու սովորություն ունեի: Չէի կարող ինձ թույլ տալ դպրոցում բաց թողածը տանը չլրացնել:

ԱՄՈՒՍԻՆ - Բեզ սազում է ակնոց, Ռեմի, դու կարող ես չհանել աչքերիցդ նույնիսկ կարդալուց հետո:

ՌԵՄԻ - Մենք տուն էլ չէինք շտապում, ախր, տանը դպրոցից տաք չէր ու ուտելու բան չկար: Պատերազմ էր, լույսը մեկ ժամով էին միացնում: Մայրս հազիվ հասցնում էր եռուցիչը դույլով ջրի մեջ գցել ու թեյնիկը միացնել, որ հոսանքը անջատելուց հետո տաք թեյ ունենայինք: Իսկ դո՞ւ, այո, դո՞ւ, ի՞նչ էիր անում այդ ժամանակ:

ԱՄՈՒՍԻՆ - Դե, ես լավ չեմ հիշում, միգուցե...

ՌԵՄԻ - Չէէ՛... Մոռանալու բան չէ, ինչպես էին տղամարդիկ ամեն առավոտ տնից դուրս գալիս գլխիկոր՝ պատահական գործ կամ մի սահնակ փայտ հայթայթելու հույսով: Ծատերն իրենց գրադարանները այրեցին այդ տարիներին... *(Ամուսինը ուզում է ընդհատել՝ մի կծու խոսք ասելու համար, բայց Ռեմին շարունակում է:)* ...բայց ո՞չ մենք, հայրս ամեն անգամ վերադառնում էր ծառի ծյուղեր հավա-

քած: Իսկ գիշերը, մոմի լույսի ներքո, վառարանի շուրջ հավաքված՝ կարտոֆիլ էինք խորովում վառարանի վրա ու ահով լսում այրվող փայտերի վերջին ճարճատյունը: Գիտես, այդ կարտոֆիլից համեղ ոչինչ չեմ կերել երբեք:

ԱՄՈՒՍԻՆ - Այո, խորոված կարտոֆիլը համեղ բան է, բայց ավելի լավ է հիմա նախաճաշենք: Հաց եմ բովել, կարագ, մուրաբա, տաք թեյ կա, քեզ համար սուրճ կպատրաստեմ հիմա: Ռեմի, կանգ առ, արի ներկայով ապրենք:

ՌԵՄԻ - *(վեր կենալով՝ փարվում է ամուսնուն):* Դու այնքան հոգատար ես:

Մոտենում են ճաշասեղանին: Ռեմին թեյ ու սուրճ է պատրաստում: Նախաճաշում են:

ԱՄՈՒՍԻՆ - Իսկ ֆլեյտամն, ինչպե՞ս էիր կարողանում սառած մատներով...

ՌԵՄԻ - *(մատները ակամա թեյի բաժակի վրա տաքացնելով):* Այդ մասին չեմ ուզում հիշել, դու խոստացել էիր ֆլեյտայից չխոսել:

ԱՄՈՒՍԻՆ - *(ծեռքը վերցնելով տետրն ու գրիչը):* Բայց դու պետք է պատմես, որ ազատվես, դու պետք է ինձ վստահես, հոգիս, այլապես ամեն գիշեր նույն երազները կտեսնես, ո-

րոնց մասին խոսել չես ուզում: *(Ռեմին նյարդային շարժումներով սեղանն է հավաքում:)* Ռեմի, քեզ հետ եմ խոսում, արդեն երկու տարի է՝ ծանաչում ենք իրար, իսկ դու ինձ չես ուզում պատմել: Ինչո՞ւ չես մոտենում ֆլեյտային, դրված է պահարանում, որտեղ դրել ես մեր ամուսնության օրվանից և վրան փոշու հաստ շերտ է: Հայրդ ինձ պատմել էր, որ Աստծուց տրված տաղանդ ունեիր, որ նվագել ես հինգ տարեկանից ու մեծ, շատ մեծ հաջողությունների ես հասել: Ես ինձ ասաց, որ դու, գերազանցությամբ կոնսերվատորիան ավարտելուց հետո, հրավեր ստացար Լյուցեռնի կոնսերվատորիայում շարունակելու ուսումը: *(Ռեմին լուռ է: Հեզնական տոնի անցնելով:)* Դա մեր միակ գրույցն էր, հայրդ ինձ մեղադրեց քեզ քո կյանքի նպատակից զրկելու մեջ, չափազանց ծանր մեղադրանք է, այնպես չէ՞, Ռեմի:

Ռեմին շարունակում է հավաքել սեղանը: Տղամարդը նրան նստեցնում է կողքին:

ՌԵՄԻ - Մենք այդ մասին խոսել ենք, դա միայն հորս ենթադրությունն է: *(Տղամարդը հարցական նայում է նրան:)* Ինչ-որ բան այնպե՞ս չասացի, չէ՞, ներիր... Ես նյարդային եմ պար-

զապես, դու այնքան խելացի ես, այնքան հոգատար, դու փայլուն հոգեբան կաշխատեիր: *(Տղամարդու պաղ հայացքն ավելի է ծանրանում, Ռեմին՝ ավելի իրար խառնվելով:)* Ոչ, ոչ, ես ուզում էի ասել, չէ, իհարկե, դու կարող ես և չաշխատել...

ԱՄՈՒՄԻՆ - Ուրեմն օգնիր ինձ, Ռեմի, դու խոստացել ես, որ թույլ կտաս քեզ հետ պսիխոանալիզի սեանսներ անել, մինչև հոգեբանի աշխատանք կգտնեմ, իսկ դու համառում ես: Ինձ նայիր, Ռեմի, աչքերիս, ուշադիր նայիր, եթե սիրում ես ինձ... *(Բառերը շեշտելով, ծնշող հայացքը նրա աչքերին գամած:)* Ես կոչնչանամ իբրև մասնագետ, կժանգոտեմ, եթե այդ վարժանքները մեկի հետ չանեմ, ուզում ես, որ օտար կանանց հոգիները տնտղեմ: Ես հոգեբան եմ, մշտապես լավ մարզավիճակում պիտի լինեմ: Սիրիայում պացիենտներից դադար չունեի, հասկանո՞ւմ ես, իսկ այստեղ... Մի խոսքով, չեմ ուզում նորից սկսել: Ես քեզ սիրում եմ, ես ուզում եմ միայն քո հոգին կարդալ, ոչ մի ուրիշ կնոջ:

ՌԵՄԻ - Այո, այո, դու ճիշտ ես, բայց ես մտահոգ եմ, գուցե մի օր դադարե՞ս ինձ սիրել՝ իմ մեջ տեսնելով քո հիվանդին: Այնքան էլ հաճելի չէ, երբ ամուսինդ քո հոգեթերապեվտն է:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, Ռեմի, դու ինձ նեղացնում ես, Ռեմի... *(Բղավում է՝ ձեռքը սեղանին խփելով, հետո իրեն հավաքելով նայում է աղջկան:)* Ես կոպիտ չեի, ոչ, չմեղադրես, դու փորձեցիր ինձ ափերից հանել, բայց ես չեմ տրվի այդ պրովոկացիաներին: *(Մի կերպ ինքնատիրապետումը վերականգնելով:)* Դու իմ փոքրիկ աղջնակ, իմ քնքուշ փերի, տուր ինձ մատիկներդ, դրանք աշխատելու համար չեն: Թող այդ գործերը, ամեն բան, ինձ մոտ արի, այ այսպես, գրկիր ինձ: Իսկ հիմա խոսիր, հոգիս, ինչո՞ւ չես ուզում նորից նվագել:

ՌԵՄԻ - Լսիր, ես ամուսնացա քեզ հետ, քանի որ արվեստից հեռու մասնագիտություն ունես: Չէ, միայն դրա համար չէ, որ... դու գիտես, քեզ սիրահարվեցի ինքնամոռաց ու փառք տվեցի Աստծուն, որ դու երաժիշտ, նկարիչ, դե, էլ ինչ կա, դերասան ու դրա նման անհեթեթ մի բան չես:

ԱՄՈՒՍԻՆ - Այո, դու չեիր ասել, որ բեմ ես բարձրանում:

ՌԵՄԻ - Երբ Նինան՝ կուրսընկերուհիս, հիշում ես նրան, կանչեց իր ծննդյան օրվա երեկոյթին, ինձ ասել էր, որ սիրիահայ երիտասարդներ են լինելու, ասել էր՝ դուք նոր եք ներգաղթել Սիրիայից ու որ տեղացիներիս ուշադ-

րության և հոգածության կարիքն ունեք: Դա ինձ անչափ հուզեց, ու որոշեցի անապաման ներկա լինել ծնունդին: Բայց երբ քեզ տեսա, քո աչքերում ընկձվածություն կամ վախ չնշմարեցի, հակառակը: Ամուր ոգի, հպարտություն, իսկական հայկական հպարտություն տեսա: Ես հիացած էի... Ու գիտե՞ս, ինձ համար միևնույն էր՝ դու մեքենավար կլինես, հաշվապահ, թե վարորդ: Մենք զրուցում էինք հայրենասիրական թեմաներով, որ չնայած մեր երկրի փոքր լինելուն, մեր հոգիների արիությունն է անսահման: Ես ինքնամոռաց սիրահարվեցի քեզ:

ԱՄՈՒՍԻՆ - *(նրա ձեռքերը ափերի մեջ ձգվելով, դաժանացած):* Ուզում ես ասել, որ ուրախ ես, որ ես՝ լավագույն համալսարաններից մեկի շրջանավարտս, հոգեբանական գիտությունների թեկնածու, չորս լեզուների իմացությամբ, վարորդ եմ աշխատում մի հիմար հաստափորի մոտ, ով նույնիսկ իր անոնը գրագետ գրել չգիտի:

ՌԵՄԻ - Ի՞նչ ես, ասում, դա նկատի չունեի: Ուզում եմ ասել, որ հիմա չեմ տեսնում աչքերումդ այն հայրենասիրությունդ, որն ինձ գրավեց: Լսիր, լավ գիտես, որ այս ամենը ժամանակավոր է:

ԱՄՈՒՍԻՆ - Ասում ես՝ չես տես-

նում, հա՛մ, իսկ ի՛նչ ես տեսնում...
 Ոչ, Ռեմի, դու նույնիսկ չես կարող զրուցընկեր լինել, ամեն անգամ փչացնում ես լավ տրամադրությունս: Ռեմի, մայրդ չի սովորեցրել, որ պետք է տղամարդու հանդեպ նրբանկատ լինել և հարգել նրան, նույնիսկ ընկերուհիներդ չեն ասել այդ մասին: Այնտեղ՝ արևելքում, կնոջը ծնված օրվանից սովորեցնում են հաճոյանալ տղամարդուն: Հայերս այդպիսին չենք, իհարկե, մենք ենք մեր կանանց շարունակ մեծարում, սակայն եթե սիրիահայ ընտանիքում աղջիկ զավակ է ծնվում, հայ մայրերը նրան սովորեցնում են տնտեսություն վարել, եփել, կարել, ամուսնուն հոգ տանել, հարգել նրան, վերջապես, ո՛չ թե զայրացնել: Ռեմի, ինչո՞վ է զբաղվել քո մայրը: Ախր, դու ոչինչ անել չգիտես:

ՌԵՄԻ - *(անկեղծ, շփոթված):*
 Մայրս... մայրս ինձ սիրում էր, նա ինձ պաշտպանում էր, ուզում էր՝ խաղաղ ապրեմ...

ԱՄՈՒՍԻՆ - Իսկ ընկերուհիներդ, նրանք էլ քեզ պես անբան են:

ՌԵՄԻ - Բոլորը մեկնեցին, ովքեր կարող էին, հնարավորություն ունեին, փախան երկրից: Իմ դասընկերուհիներից մի քանի մտերիմներս հիմա Միացյալ Նահանգներում են ապրում, շատերը ընտանիքներով Ռու-

սաստան մեկնեցին, ավելի հաջողակները՝ Եվրոպա, ու գիտես, ասում են, անչափ երջանիկ են, քանի որ համապատասխան գնահատական են ստանում արածի դիմաց: *(Ավելի ու ավելի շփոթվելով):* Ասենք՝ դու վարորդ ես, դե ո՛չ, դու չէ, մեկը, որ աշխատում է տաքսի ծառայությունում ու ստանում ամեն օր հինգ հազար դրամ, դա ամերիկյան տասներկու դոլլարն է, չէ: Իսկ իմ ընկերուհու հայրը նույն բանն անելով այնտեղ՝ ամեն օր հարյուր դոլլար ունի: Գուցե մենք էլ գնանք:

ԱՄՈՒՍԻՆ - *(տեղից վեր ցատկելով ու թափելով ձեռքին ընկածը):*
 Դու ինձ ծաղրում ես, ասա, ծաղրում ես, հատուկ երկրորդ անգամ շեշտեցիր, որ վարորդ եմ: Ռեմի, ես այս կյանքի մասին չեմ երազել, ես կարող էի հիմա իմ կլինիկան ունենալ, իմ պացիենտները, ես հիմա գիտությունների դոկտոր պիտի լինեի, հարուստ ու երջանիկ կյանք վարեի:

ՌԵՄԻ - Ես միայն հարցրի՝ գուցե մենք էլ մեկնենք բախտ որոնելու:

ԱՄՈՒՍԻՆ - Ես դրա համար չեմ եկել, վերադարձել պապերիս հայրենիքը, որ փախչեմ բախտ որոնելու: Երբ այդ երկրորդ շանսն ինձ տրվեց, ես հասկացա, որ կշտկեմ ծնողներիս

սխալը ու կգամ Հայաստան՝ գիտելիքներս ու փորձս ազգիս ծառայեցնելու համար: (Մի պահ մտածելով:) Իսկ հիմա... գուցե դու ձիշտ ես, հոգիս, ես փոշմանել եմ, այո, փոշմանել եմ, ծնողներիս հետ Նահանգների պիտի մեկնեի, այնտեղ մորաքույրներ, հորաքույրներ ու բազմաթիվ զարմիկներ ունեմ: Գիտե՞ս, նաև մի բան հստակ հասկացա՝ որտեղ ծնվել ես, այնտեղ է հայրենիքդ: Սիրիայում ես մեծ հաջողություններ ունեի, հարգված բժիշկ էի և դեռ ինչերի պիտի հասնեի:

ՌԵՄԻ - Իսկ ինչպե՞ս պատահեց, որ Սիրիայում ծնվեցիր:

ԱՄՌՈՒՍԻՆ - Ապշում եմ, ասում են՝ կոնսերվատորիայում գերազանցությամբ ես սովորել, միթե պատմություն չգիտես: Ա՛խ, այո, այսինքն ասացիր, որ դպրոց չես գնացել գրեթե: 1915-ի մասին լսել ես, ասա, հոգիս:

ՌԵՄԻ - Վերջ տուր, ինձ նեղացնում ես, դա արդեն չափազանց է, դու դիպչում ես բոլորիս բաց վերքին, որ մխում է դեռ:

ԱՄՌՈՒՍԻՆ - Ուրեմն իմացիր, Ռեմի, երբ թուրքերը ջարդում էին անպաշտպան մի ազգի և քշում իրենց պատմական հայրենիքից, իմ ու քո պապերը անգն, արևի տակ ծարավից տոչորվելով, քայլում էին Դերի Չորի անպատով՝ փրկվելու հույսով: Ո-

մանք փրկվեցին, գիտե՞ս, չկա մի աշխարհամաս, որ հայ չլինի: Դու էլ, հավանաբար, արտերկրում հարազատներ ունես:

ՌԵՄԻ - Այո, ունեմ, ինչպես բոլոր հայերը:

ԱՄՌՈՒՍԻՆ - Ծատերը Դեր-Չորից շատ հեռու չգնացին, հաստատվեցին Սիրիայում, այն ամենաառաջին ու ամենամեծ հայկական գաղթօջախը դարձավ: Ես իմ կամքով չէ, որ ծնվել եմ օտար միջավայրում և կրում եմ այլ մշակույթի կնիքը, ինչի պատճառով այսօր իմ հայրենիքում ինձ չեմ զգում տանը: Այս անվերջ կիսատությունը: Ժիշտ է, մեր համայնքը Սիրիայում մեծ հարգանք ու պատիվ է վայելում, բայց մեկ է, օտար ես, այլազգի: Իսկ այստեղ, պարզվում է, խոսում ենք նույն լեզվով, նույն դավանանքն ունենք, բայց իրար չենք հասկանում: Ինչո՞ւ, Ռեմի, հոգիս, կարո՞ղ ես ասել, ինչո՞ւ:

ՌԵՄԻ - Մեզ դժվար ժամանակներ են բաժին հասել, բայց մենք ենք մեր երկրի ապավենը, ապագան, մենք հուսահատվելու իրավունք չունենք: Այ, դու կարող էիր արդեն խոսել արևելահայերեն, բայց՝ ոչ, դու համառորեն արևմտահայերենով ես խոսում: Դու պետք է ջանք թափես, այդպես չի լինի:

ԱՄՌՈՒՍԻՆ - Չէէէ, նա ոչինչ չի հասկանում:

ՌԵՄԻ - Ես, ես... Երևի դու ճիշտ ես, ինչ-որ տեղ ես խենթ եմ: (Փորձելով կատակել:) Բոլոր երաժիշտները գիտեն, որ ֆլեյտահարները՝ թեկուզ և նախկին, մի քիչ խենթ են, կամ...

ԱՄՈՒՍԻՆ - ...կամ մանկամիտ:

ՌԵՄԻ - Թող լինի այդպես... մանկամիտ՝ գուցե... Գիտե՞ս, ես մանկության կարոտ ունեմ: Ես մանկություն չեմ ունեցել, գուցե դա է պատճառը, որ սիրում եմ մանկական խաղալիքներ, իմ զնդակը: (Նյարդային ցնցում է ունենում:) Գնդակս, ո՞ր է զնդակս, տես՞լ ես, ուր է զնդակս, ասա, հո չե՞ս նետել:

ԱՄՈՒՍԻՆ - Մանկություն ասացիր, քեզ տարօրինակ չի՞ թվում, որ չես հղիանում: Դու բժշկի գնացել ես:

ՌԵՄԻ - (գունատվում է): Այո:

ԱՄՈՒՍԻՆ - Ե՛վ...

ՌԵՄԻ - Չգիտեմ:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի...

ՌԵՄԻ- Նրանք ասացին, որ իմ օրգանիզմում ինչ-որ խանգարումներ կան:

ԱՄՈՒՍԻՆ - Հետո՞, էլ ինչ ասացին, դե խոսիր, մի լռիր, Ռեմի:

ՌԵՄԻ - Չեմ հիշում, այսինքն, չգիտեմ՝ ինչպես է կոչվում, ասացին՝ վաղահասության տարիքում մրսաճության և թերսնման պատճառով է, գուցե նաև սթրեսի... (Ավելի հուզվե-

լով՝ արդարանալով:) Նրանք ասացին, որ հիմա մեր երկրում ամեն վեցերորդ զույգը նման խնդիրներ ունի, որ ես միակը չեմ... մի խոսքով... հավանաբար ես չեմ կարող երեխա ունենալ: (Նստում է կապույտ զնդակների մեջ:)

Տեսարան երկրորդ

Ռեմին նստած է հատակին՝ կապույտ զնդակների մեջ՝ բեմի հակառակ կողմում: Չեռքին ափաչափ ռետինե զնդակ կա, նա վախեցած աչքերով նայում է մի կետի: Տղամարդը ներս է մտնում, նրա հեռախոսը մտնելու պահին զանգում է: Չանգը Բախի հանրահայտ «Սկերցոն» է: Ռեմին սարսափած վեր է թռչում տեղից:

ՌԵՄԻ - Բախ, Սկերցո: Այս որտեղից է, սա ի՞նչ է, ո՞վ արեց: Հեռախոսդ է: Անջատիր, անջատիր, խնդրում եմ, կամ պատասխանիր անմիջապես: (Սարսափած թռչնի պես վազում է աջ ու ձախ՝ սայթաքելով կապույտ զնդակների վրա, ամուսինը անտարբեր հետևում է նրա տագնապին, ապա գրպանից հանելով նոթատետրը՝ գրառումներ է անում:) Ասա՛, ո՞ր է, ո՞ր է, խնդրում եմ, ինչո՞ւ չի դադարում զանգել: Դու ինձանից նեղացած ես երեկվանից, ես գիտեմ, դրա համար էլ հեռախոսիդ զանգը փոխել ես,

որ ինձ տանջեն: *(Տղամարդը գրպանից հանում է հեռախոսն ու անջատում, աղջիկը փարվում է նրան:)* Ծնորհակալ եմ, այնքան բան պետք է սովորեմ քեզանից... Ես անչափ աննրբանկատ գտնվեցի երեկ քո հանդեպ, ես բոլորովին այլ բան էի ուզում ասել, ուզում էի ասել, որ...

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, այսօր էլ տնից դուրս չես եկել:

ՌԵՄԻ - Ինձ մի տեսակ թույլ էի զգում:

ԱՄՈՒՍԻՆ - Ամբողջ քաղաքը ընկերուհուդ՝ Նինայի մենահամերգի ազդագրերի մեջ է:

ՌԵՄԻ - Չգիտեի այդ մասին, ուրախ եմ նրա համար:

ԱՄՈՒՍԻՆ - Կարող ես գնալ, եթե ուզում ես:

ՌԵՄԻ - Ուզում ես ինձ պատժել: Երեկ քեզ նեղացրի՞, մյո՞ղ պատճառով...

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, մոռացիր այդ մասին, դու մեղավոր չես: Այո, ես վրդովված եմ, բայց ո՛չ երեխայի պատճառով: Ինձ ինչ-որ կիսատություն է տանջում, կինս ինչ-որ բան ինձ չի ասում, քաղաքում ինչ-որ բան այնպես չէ, օդը չի հերիքում: Փախչելու ցանկություն ունեմ: *(Մի կերպ ազատվելով փողկապից՝ դեն է շարտում:)*

ՌԵՄԻ - Իսկ դու իմ մեծ գնդակը գտա՞ր:

ԱՄՈՒՍԻՆ - Ես պետք է աշխատեմ: *(Սառնարանից գարեջրի շիշը հանում, խմում է:)*

ՌԵՄԻ - Բայց նոր աշխատանքից եկար: Կճաշեն:

ԱՄՈՒՍԻՆ - Դու գիտես, որն է իմ իրական աշխատանքը, այդչարքաշ ստրկությունը իմ աշխատանքը համարել չեմ կարող՝ բարեբախտաբար: *(Նստում է ծոծաթոռին, գրպանից հանում նոթատետրը, թերթում է:)* Եթե դու ինձ հետ համագործակցեիր, մի բան փրկելի հնարավոր կլիներ:

ՌԵՄԻ - Ուզում ես Նինայի համերգին գնանք: Ես դասական երաժշտություն չեմ սիրում, բայց քեզ համար... միայն թե ասա՝ կապույտ գնդակս չե՞ս տեսել:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, նրանք քեզ թույլ չէին տալիս գնդակ խաղալ:

ՌԵՄԻ - Ոչ, պարզապես ժամանակ չէր մնում:

ԱՄՈՒՍԻՆ - Ինչո՞ւ, Ռեմի:

ՌԵՄԻ - *(գնդակների մեջ իր գնդակն է որոնում):* Հիմա, հիմա, միայն թե գնդակս գտնեմ ու կնվագեմ, պապ: *(Ամուսինը գնում է դեպի սառնարանը՝ երկրորդ շիշը վերցնելու համար: Ռեմին՝ փնտրտուքից ուժասպառ, նստում է գնդակների մեջ փոքրիկ աղջնակի դիրքով ու ինքն իրեն խոսում:)* Ես ստիպված էի ժամերով նվագել դաշնամուր, սկզբում սիրում էի, ինքս էի մի օր նրան խնդրել՝ ինձ

նվագել կսովորեցնեն, պապ: Լա ինձ սովորեցրեց դաշնամուր նվագել, երբ չորս տարեկան էի...

ԱՄՈՒՍԻՆ - *(վերադարձել, Ռեմիի թիկունքում կանգնած գոհացած գրառումներ է անում)*: Հետո՞, Ռեմի, դու ինչ-որ բան էիր պատմում:

ՌԵՄԻ - Հայրս երաժիշտ է, դու գիտես, այսինքն՝ է՛ր: Լա վիրտուոզ ֆլեյտահար էր, մի քանի երաժշտական գործիք էր նվագում, դաշնամուր էլ: Մայրս տեսաբան էր, երաժշտագետ, նա հայրիկի համար նոտաներ էր արտագրում:

ԱՄՈՒՍԻՆ - Հայրդ մի մատ չունի ձախ ձեռքի վրա:

ՌԵՄԻ - Այո, նա ասում է, որ դա զուտ պատահականություն է: Այնտեղ՝ սահմանին, երբեմն խրամատում նստած փայտից ձիուկ էր պատրաստում, որ ինձ բերեր նվեր, եթե իհարկե, չզոհվեր, վերադառնար:

ԱՄՈՒՍԻՆ - *(նստելով կողքին ու բռնելով նրա ձեռքը)*: Նրանից ձիուկ էիր խնդրել:

ՌԵՄԻ - Ոչ... Բայց նա գիտեր, որ կուրախանայի: Երբ պատերազմը սկսվեց, հայրիկն իր փառքի գագաթին էր, Ֆիլիարմոնիկ նվագախմբի մենակատար էր, հաճախ մենահամերգներ էր ունենում, մեկնում հյուրախաղերի:

ԱՄՈՒՍԻՆ - Լա բերեց ձիուկը:

ՌԵՄԻ - *(ինքնամոռաց, հարցն անտեսելով)*: Բայց օրեցօր տարածվող պատերազմի մասին լուրերը նրան գցում էին ռիթմից, մի օր գործիքը տուփում պահեց ու որոշեց մեկնել Արցախ: Մորս ասաց. «Հայրենիքը մեր տունն է, ինչպես տանս սահմաններն եմ հսկել մինչև այսօր, հիմա էլ երկրիս սահմաններում պիտի լինեմ, որ երեխաս հանգիստ քնի: Հայրենիքը միայն խոսք չէ, հայրենիքը գործողություն է»: Մայրս ուես ապշել էինք նրա հայրենասիրական պաթոսից, նա այդպիսին երբեք չէր եղել:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, Ռեմի, կանգ առ, ասում եմ՝ ձիուկը բերեց, հոգիս:

ՌԵՄԻ - Ի՞նչ ձիուկ, ի՞նչ կապ ունի ձիուկը, սիրելիս, բոլորը մի բռունցք էին դարձել, բոլորը տոգորված էին մի անպատմելի հայրենասիրությամբ: Նրանք որոշել էին վերականգնել պատմական ծշմարտությունը, չէ՞ որ Արցախը մերն է, ուրեմն պետք էր այն հետ բերել... Ախ, ձիուկը, այո՛, ո՛չ, ո՛չ, նա ձիուկը չբերեց:

ԱՄՈՒՍԻՆ - Բայց նա վերադարձավ, Ռեմի:

ՌԵՄԻ - Այո, վերադարձավ, բայց ձիուկը չէր հասցրել տաշել, ռումբի պայթյունից ուշադրությունը շեղվել էր, դանակը մատը վնասել էր: Հետո թարախակալել էր, ստիպված էին եղել

կտրել: Ու հետո նա չէր կարող նվագել:

ԱՄՈՒՍԻՆ - Լա՛մ է քեզ սովորեցրել նվագել:

նվագելու: *(Ոգևորվելով:)* Այդ օրը նույնիսկ տեսախցիկով վավերացրել է, երբ ես հասուն մանկան պես նստել էի դաշնամուրի առջև և ձևացրել էի, թե նվագում եմ: Կուզե՞ն տեսագրությունը ցույց տամ, այ, հիմա, սպասի՛ր, միայն թե գտնեմ:

ԱՄՈՒՍԻՆ - Ո՛չ, Ռեմի, մեկ ուրիշ անգամ:

ՌԵՄԻ - Չէ, չէ, ինձ դժվար չէ, հիմա կբերեմ:

Էկրանին փոքրիկ աղջիկը դաշնամուր է նվագում:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի:

ՌԵՄԻ - Այո, իհարկե: Մի ուրիշ անգամ: Մեկ ամիս չանցած նվագում էի: Ճիշտ եմ ասում: Գիտեմ, դա սարսափելի է կողքից՝ չորս տարեկան երեխան դաշնամուրի մոտ:

ԱՄՈՒՍԻՆ - Հավատում եմ, իսկ հետո՞, պատմի՛ր:

ՌԵՄԻ - Ես ավելի մեծ հաճույք զգում էի դաշնամուր նվագելուց, քան խաղալիքներից, չէի գնում բակ, նույնիսկ մոռանում էի ուտել: Վեց տարեկանում մենահամերգ ունեցա հարազատների ու բարեկամների համար: Նրանք ինձ երկար ծափահարում էին, նվերներ էին բերել՝

կոնֆետ, խաղալիքներ, ու ես հասկացա, որ սիրում եմ բեմը, բայց հատկապես նվերները՝ խաղալիքներն ու քաղցրավենիքը: Հայրս խաղալիքները թաքցրեց, որ դրանց վրա ժամանակ չվատնեմ: Լա շատ էր հպարտանում: Մեր մեկ սենյականոցում, որտեղ տան երեք անդամներից ոչ ոք իր անկյունը չունեի, մենք զզվեցրել էինք բոլորին դաշնամուրի ձայնով: *(Ծիծաղում է:)* Ինձ ամեն ինչ դուր էր գալիս, միայն չէի կարողանում տանել զարթուցիչի ձայնը, որն ամեն առավոտ ստիպում էր ինձ արթնանալ ու գործի անցնել:

ԱՄՈՒՍԻՆ - Տեսնում ես, այ այսպես, հոգիս, դու նույնիսկ ծիծաղում ես: Իսկ հետո, հետո՞ ինչ եղավ:

ՌԵՄԻ - Հետո արդեն հայտնի էի բակում, դպրոցում, ամենուրեք՝ իբրև հրաշամանուկ: Մայրս անհանգստանում էր, նրան թվում էր, թե ժամերով նվագելն ինձ համար տանջանք է, բայց ես ուզում էի հայրիկին գոհացնել, ես ուզում էի, որ նա շատ-շատ հպարտանա ինձնով, որ ես նրա նման լավ նվագեմ մի օր, որ նրա հետ մեկնեմ հյուրախաղերի: Իսկ հետո, արդեն գիտես, Արցախյան շարժումն էր, ամենուրեք խոսում էին սահմանում զոհվող հայորդիների մասին,

հայրենասիրական մեծ ոգեշնչում կար մթնոլորտում: Պատերազմն, ասես, չէր ավարտվում, ես տաս-տասներկու տարեկան էի արդեն և սովորել էի վիրավոր զինվոր, մահ, ազատամարտիկ, անկախություն, հայրենիք բառերը լսել ամեն օր: Այնքան էլ բան չէի հասկանում այս ամենից, բայց զգում էի, որ հպարտ եմ, որ հայ եմ: Ու մի օր հայրիկ էլ գնաց:

ԱՄՈՒՍԻՆ - (*հեզնանքով*): Այո, հիշում եմ, մարդիկ կյանքն են կորցրել այդ պատերազմում, իսկ նա՝ մատը:

ՌԵՄԻ - Երբ պատերազմից եկավ, շատ տխուր էր: Մենք հաղթել էինք, ազգը ցնծում էր, իսկ հայրս տխուր էր: Մի անգամ ասաց. «Երանի մեռած լինեի, ընկած լինեի թշնամու գնդակից, կամ, եթե այդքան բախտս չբերեց, որ հերոսի մահով մեռնեի, զոնե պատահական նոնակի վրա մասնատվեի, բայց հետ չգայի այսպես թշվառ»: Մենք կարկամեցինք: Իսկ նա պայթեց. «Գոնե հասկանում եք՝ երաժշտի համար ինչ է նշանակում կորցնել ցուցամատը: Ընդամենը մեկ մատ, ու ես քայլող դիակ եմ... Այն էլ ինչի՞ համար՝ ծիուկ էի տաշում, որպեսզի ուրախացնեմ դստերս, որպես մեր հաղթանակի վկա: Հիմա այն ինձ համար մահվան նշան է»:

Էկրանի վրա Ռեմիի հայրն է, անվերջ քթի տակ կրկնում է. «Այն էլ ինչի՞ համար՝ ծիուկ էի տաշում, որպեսզի ուրախացնեմ դստերս, որպես մեր հաղթանակի վկա: Հիմա այն ինձ համար մահվան նշան է»:

ԱՄՈՒՍԻՆ - Եվ սկսեցիր ֆլեյտա նվագել, որովհետև քեզ մեղավոր զգացիր նրա առջև:

ՌԵՄԻ - Պարզվեց՝ ես կարող էի, ինձ համար չափազանց հեշտ էր, հաճելի, խաղի պես մի բան: Ես սկզբում սկսեց մուշտուկից, օրերով, ամիսներով ինձ պարտադրում էր ծիշտ ձայն ստանալ ֆլեյտայի մուշտուկի վրա, նույնիսկ խոստացավ ոսկյա ֆլեյտա գնել, եթե լավ սովորեմ: Զարմանալի է, այնպես կապվեցի գործիքին, որ իմ ներքին ձայնը դարձավ, առանց ֆլեյտայի կյանք չունեի: (*Նշարդային շարժումներով ետ ու առաջ անում տան մեջ:*) Իմ ունակությունները տեսնելով՝ ավելի ու ավելի դաժանացավ հայրս, իրեն բռնակալի պես էր պահում: Զրկեց ինձ մնացած ազատ ժամանակից էլ, որը հարկավոր էր հանգստի համար: Ես աստիճանաբար կատարելագործվում էի, սակայն ներքին մի ըմբոստություն հետ էր վանում ինձ երաժշտությունից: Հիշում եմ, մի օր որոշեցի թաքնվել: Ես հոգնել էի, ուզում էի գնդակ խաղալ,

իսկ նա թաքցրել էր բոլոր խաղալիքները: Ես փնտրում էի տնով մեկ իմ կապույտ գնդակը, իսկ նա բղավում էր. «Ոչ մի գնդակ, ոչ մի կապույտ գնդակ»:

Ետնաբեմի Էկրանին միանում է աղքատիկ բնակարանի պատկեր, հայրն ու մայրը վիճում են:

«Հայր - Ոչ մի գնդակ, ոչ մի կապույտ գնդակ, լսում ես, աղջիկ:

Մայր - Մի բղավիր, դու նրան կվախեցնես:

Հայր - Մի խառնվիր մեր հարաբերություններին, երեխան չպիտի լսի, որ մայրը դիտողություն է անում հորը: Ես նրա ուսուցիչն եմ՝ ի վերջո:

Մայր - Բավական է, հասկացիր վերջապես, նա դեռ 12 տարեկան է, մենք նրան 4 տարեկանից զրկում ենք մանկությունից:

Հայր - Կին, լռիր, ասացի, ես հարգանք եմ պահանջում: Աղջիկը տաղանդ ունի, մենք պետք է հետևենք նրան: Ես ավելի մեծ բարձունքների կհասնեի, եթե իմ ծնողները ժամանակին հետևեին ինձ, պարտադրեին ավելի շատ նվագել: Ես չէի գիտակցում, որ անմիտ խաղերի վրա կորցրած ամեն վայրկյանը իմ ապագայից է խլում, իսկ նրանք:

Մայր - Աստծուց կրա՛կ ես ուզում, դու վիրտուոզ ֆլեյտահար ես, դու նվագում ես երկրի Համար Առաջին նվագախմբում:

Հայր - ...Էի, նվագում էի:

Մայր - Ես անհնարինն արեց քեզ երջանկացնելու համար, իսկ դու ավելին ես պահանջում: Մի քանի ամսում ֆլեյտա նվագել, գոնե հասկանում ես՝ դա ինչ գերմարդկային ջանք է ու նվիրում փոքրիկ երեխայի կողմից:

Հայր - Դրա համար էլ ասում եմ՝ նա հանձարեղ է, ես չեմ կարող թույլ տալ, որ կորչի:

Մայր - Դու քո չկայացած կյանքը երեխայի փխրուն ուսերին ես բարձել, ուշքի եկ, աղջնակը կարող է հիվանդանալ՝ ի վերջո: Նրա աչքերում այլևս ուրախություն չկա, օրուգիշեր տքնում է: Բավական չէր այս տխուր ու ցուրտ մանկությունը, որ բաժին հասավ նրա սերնդին, հիմա էլ քո կայացման հոգսն է իր ուսերին առել...

Հայր - Ձայնդ, անառակ, դուք ինձ ուզում եք կործանել, ուզում եք զրկել իմ վերջին հույսից: Որտե՞ղ ես, աղջիկ, որտե՞ղ ես թաքնվել, չես պրծնելու իմ ձեռքից, Ռեմի, դե, որտեղ ես, դեռ էտյուդները չենք նվագել, Ռեմի, Ռեմիիիի...»:

Էկրանը մարում է: Լուսավորվում է գրեթե ուշաքափ Ռեմին: Անուսինը նկատում է, որ Ռեմին ասես շնչահեղձ է լինում, զցում է տեսրն ու գրիչը:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի... Ռեմի, սթափ-

վիր, գնդակդ եմ բերել, վերցրո՛ւ, քեզ համար շատ, շաատ կապույտ գնդակներ կբերեմ: Ռեմի, դու դողում ես: (Ծփում է ձեռքերը:) Հիմա թեյ կբերեմ:

Տղամարդը տազնապած գնում է: Երբ վերադառնում է, տեսնում է՝ Ռեմին քնել է, իսկ էկրանին տեսարանը շարունակվում է:

«Մայր - Մի բղավիր, հանգստացիր վերջապես, արի մտածենք՝ ինչ անել, գուցե նա տնից փախել է:

Հայր - Թաքնվել է ավազակը, ես գիտեմ՝ որտեղ է թաքնվել, հիմա, սպասիր:

Հայրը կռանում է մահճակալի տակ, այնտեղ երեխան խորը քնել է: Նա քաշում է, երեխան վախից վեր թռչելով՝ բղավում է>: Միաժամանակ ամուսինը հավում է Ռեմիի ուսին, Ռեմին սարսափած վեր է թռչում:

Ռեմի - Ոոռոչ, ես քնել եմ ուզում, հայրիհիհիկ, ես չեմ ուզում նվագել:

«Էկրանին մայրը ամուսնուն ընդհանում է:

Մայր - Թող երեխային, նա ուժասպառ է, դու նրան հաշմանդամ կդարձնես:

Հայր - (հրում է կնոջը): Անկամներ, անողնաշարներ, ոչնչի չեք հասնի, դուք ոչ մի նպատակ չունեք այս կյանքում»:

Ռեմի - (էկրանից և բեմում՝ միաժամանակ): Մամաաաաաա...

Ռեմին ու ամուսինը փարվում են:

Տեսարան երրորդ

Երեկո է: Ռեմին բարձր տրամադրությամբ սեղան է պատրաստում: Նա տոնական է հագնված: Գալիս է ամուսինը:

Ռեմի - (առանց նրան կողմը նայելու): Ողջույն, սիրելիս, ինչ լավ է, որ այսօր չուշացար, ինչպե՞ս պատահեց:

ԱՄՈՒՍԻՆ - Ծատ գեղեցիկ ես այսօր:

Ռեմի - (սեթևեթելով): Ծնորհակալ եմ, դուք շատ ուշադիր եք, իսկ սեղանը նկատում ես, այո՞:

ԱՄՈՒՍԻՆ - (կոշիկներն ու բաժկոնը հանելով): Օօօ, հիասքանչ է, և ի՞նչ առիթ կա:

Ռեմի - Այսօր մեր ամուսնության առաջին ամյակն է: Մոռացել ես, ինչ է:

ԱՄՈՒՍԻՆ - Ներիր, ինչո՞ւ ինձ չհիշեցրիր, հոգիս, նույնիսկ ծաղիկներ չգնեցի:

Ռեմի - (վերջապես վազում է ամուսնուն ընդառաջ): Սա ի՞նչ է, ի՞նչ կապույտներ են, դու արյունվա ես, ընկել ես, քեզ վրա հարձակվել են:

ԱՄՈՒՍԻՆ - Ես չդիմացա ու այդ հաստավզին ասացի այն ամենը, ինչ մտածում էի:

ՌԵՄԻ - (*արտասվելով*): Տեր Աստված, արի գնանք հիվանդանոց, չէ, ի՞նչ եմ ասում, ի՞նչ եմ անում, ի՞նչ անենք: Ի՞նչ հաստավիզ, ո՞ւմ ես վիրավորել:

ԱՄՌՈՒՍԻՆ - Ռեմի, ուշքի արի, ոչինչ չի եղել, մի փոքր քաշքշուկ էր:

Ռեմին դուրս է վազում, գալիս է սափրատով, բամբակով ու վիրակապեքով:

ՌԵՄԻ - Ոստիկանություն է պետք դիմել:

ԱՄՌՈՒՍԻՆ - Ռեմի, նստիր ու մոռացիր այդ մասին: Ուժն ու իշխանությունը նրանց ձեռքին է: Նամեկ զանգով կգնի ոստիկանապետին էլ, դատավորին էլ:

ՌԵՄԻ - Տեր Աստված, ուզում ես ասել՝ դու նրա վրա՞ ես ձեռք բարձրացրել: Ախր, քեզ ի՞նչ մեղու կծեց, մենք կորած ենք:

ԱՄՌՈՒՍԻՆ - Ռեմի, այլևս լռել չէի կարող:

ՌԵՄԻ - (*տազնապահար հեռախոսագիրքն է փնտրում*): Այսքանով չենք պրծնի, ես նրանց գիտեմ, պետք է մի բան ձեռնարկել, կզանգեմ ընկերներիցս մեկին, նրա հայրը իրավաբան է:

ԱՄՌՈՒՍԻՆ - (*բղավում է*): Ռեմի, Ռեմի, դե բավական է քեզ երեխայի պես պահես: Չանգես իրավաբանին՝ ի՞նչ պատմես, հը, որ ամուսինդ չի կարողանում մի պատգամավորի վարորդ աշ-

խատել, ում մոտ մի կե՛րպ է աշխատանքի անցել: Որ նա արդեն մեկ տարի ամեն օր պարոնին Ազգային ժողով տանելու ճանապարհին ամեն տեսակ անօրիությունների ու հանցանքների լուռ վկա՞մն է դառնում, այո՞, որ այս անգամ որոշեց չդիմանա՞լ, որոշեց ափերից դուրս գալ, երբ դարձյալ ակամա ունկնդիրը դարձավ պարոնի հեռախոսազանգին իր նման մի անասունի, ում հերոսաբար պատմում էր իր հերթական արտերկրացի գոհի մասին: (*Նմանակելով պատգամավորին:*) «Ներդրում արեցի՞ր, դե հաջողություն, այլևս գործընկերներ չենք, եղբայր, այստեղ այդպես է, այս ոլորտի մոնոպոլիստը ես եմ, քիթդ մի խոթիր, չե՞ն ուզում՝ գնա, որտեղից եկել ես»: (*Վերքերը, ցավից ծամածռվելով, մշակելով:*) Նա իր հումորից գոհ հռհռում էր ձիվաղային ձայնով, շնչակտուր ու ծարպոտ վիզը թաշկինակով մի կերպ չորացնելով, և այդ պահին նրան սպանելու ցանկություն ունեցա: Ռեմի, նրանք ինձ կարող են մարդասպան դարձնել: Արդեն մի քանի ամիս է՝ նրա մոտ աշխատելու առաջին իսկ պահից, նրան սատկացնելու ցանկություն ունեմ: Աչքերիս դիմացը սևացավ, չգիտեմ՝ ինչպես մեքենան կանգնեցրի ու

հավաքեցի այդ ճաղատ խոզի դոշերը:

ՌԵՄԻ - Ախ, Աստված իմ:

ԱՄՈՒՍԻՆ - Դե, զանգիր, զանգիր ծանոթ իրավաբանին ու ասա, որ ամուսինդ ձեռք է բարձրացրել իր տիրոջ վրա, չէ, նա ձեռք է բարձրացրել իր պետության վրա, իր իշխանությունների, և ի՞նչ ես կարծում, ղ՞վ որտեղ կհայտնվի... *(Ռեմին մի կողմ է դրել հեռախոսագիրքը, ամուսնու ձեռքից վերցրել է բամբակն ու ինքն է մշակում վերաբերը՝ շոյելով նրան:)* Զգո՛ւյշ... Նա կարծում է. ես խոսել չգիտեմ, չէ՞ որ վարորդ եմ և պետք է միշտ լռեմ: Բայց այսօր չդիմացա: Երեսին շարտեցի, որ նրա նմաններն են պատճառը, որ համալսարանավարտները մատուցողներ ու վարորդներ են աշխատում: Իսկ նա, այդ թերուսը, Ազգային ժողովում օրենքներ է գրում, որոնք միայն ինձ ու քեզ են վերաբերվում, ո՛չ իր ընտանիքին կամ հարազատներին:

ՌԵՄԻ - Ինչո՞ւ, ինչո՞ւ խոսեցիր:

ԱՄՈՒՍԻՆ - Հիմա էլ դո՞ւ, ես հիմարի նման եմ, առհասարակ, անլեզու կենդանու նման եմ, ասա՛:

ՌԵՄԻ - Ոչ, բայց հուսով եմ, այդքանից ավել բան չասացիր:

ԱՄՈՒՍԻՆ - Ի տարբերություն քեզ, ես անողնաշար չեմ, և երբ համբերությունս ավարտվում է, ասում եմ, ինչ մտածում եմ:

ՌԵՄԻ - Դու ինձ վիրավորում ես, սիրելիս:

ԱՄՈՒՍԻՆ - Թքած, թքած ամեն ինչի ու բոլորի վրա: Ռեմի, դու էլ ես մեղավոր, եթե սկզբունքային լինեիր, պատմություն իմանալի՞ր՝ քո սեփական ազգի պատմությունը, թույլ չէիր տա, որ սրա նմանները նստած լինեն աթոռներին, որ սրանք էլ իրենց հերթին խամաճիկ դառնային իրենցից հզոր պետությունների ձեռքին, որ քո փոխարեն ուրիշ ազգերը որոշեն քո երկրի սահմանները, որ կասկածեն Եղեռնի իրողության վրա: Մենք ինքներս մեր ներսում ինքնագիտակցության եղեռն ենք ունեցել՝ էս հաստավիզ իշխանավորների կողմից սարքված, մեր անգիտության ու անկամության պատճառով:

ՌԵՄԻ - Ես ամեն ինչից հոգնել եմ:

ԱՄՈՒՍԻՆ - Ասացի, որ նրա նման խաբեբա, ավազակների պատճառով է, որ մեր երկիրը թշվառության շեմին է հասել: Ամեն տեղ էլ լավում են, համաձայն եմ, բայց լավելուն չափ կա, մի քիչ էլ պետք է ժողովրդի մասին մտածել: Ասացի, որ քո հայրն ու իր ընկերները դրա համար չեն սահմանին կռվել, զոհվել, որ այսօր նրանց երեխաները անհուսությունից գլխիկոր ման գան: Մենք սրան չէինք արժանի, Ռեմի:

ՌԵՄԻ - Նրա թիկնապահներն են քեզ այսպես նախշել:

ԱՄՌՈՒՍԻՆ - Բա չէ, էդ վախկոտը...

Հետևից մշտապես մի մեքենա լիքը մարդասպաններ է ման տալիս: Եթե պարզ ձակատ ես, էս թշվառներին ինչո՞ւ ես հետդ անգամ արտաքնոց քարշ տալիս, խղճով:

ՌԵՄԻ - Արի, արի սեղանին մոտենանք, մի բան կխմենք, հետո կզրուցենք: Դու պետք է խաղաղվես: Ամեն ինչից ելք կա:

ԱՄՌՈՒՍԻՆ - Իհարկե, ընթերենք, քանի որ սա մեր վերջին խրախճանքն է լինելու, ես անգործ եմ: *(Բացում է գինու շիշը, լցնում է բաժակները:)* Շնորհավորում եմ, Ռեմի, մեր համատեղ կյանքի առաջին ամյակի կապակցությամբ, մեզ ցանկանում եմ մեծ ապագա ու բազում այսպիսի տարիներ:

ՌԵՄԻ - Անեծքի պես է հնչում:

ԱՄՌՈՒՍԻՆ - Ինչո՞ւ, Ռեմի, արդյո՞ք մենք երջանիկ չենք:

ՌԵՄԻ - Անկասկած, մենք երջանիկ ենք, կարևորը՝ սիրում ենք իրար: Այնպես չէ՞, ասա: Եթե չլիներ մեր մեծ սերը, այս ամենին չէինք դիմանա: Ես էլ վաղվանից աշխատանք կփնտրեմ, չէ՞ որ թափուր աշխատատեղեր կան:

ԱՄՌՈՒՍԻՆ - Մոռացիր, Ռեմի, դու ոչինչ անել չգիտես, ես մի աշխատանքի ձար կանեմ, թերթե-

րում, ֆեյսբուքում, ամենուրեք մատուցողների, վաճառողների, ցրիչների, պահակների թափուր աշխատատեղեր կան:

ՌԵՄԻ - Գուցե լավն էլ սա էր, դու չէիր հարմարվում այդ դերի հետ: Լսիր, գուցե փորձե՞ն ինչոր բան քո մասնագիտությամբ որոնել, լավ մարզավիճակում ես, ես չեմ թողել, որ մոռանաս գիտելիքներդ, չէ՞: Աշխատանքի որոնման կայքերի հայտարարություններում փնտրիր հոգեբանի աշխատանք, այսօր այնքան հոգեբանական պրոբլեմներով մարդիկ կան, բավական է ֆեյսբուքով հայտարարել, և որքան ասես պացիենտներ կհայտնվեն:

ԱՄՌՈՒՍԻՆ - Կհայտնվեն, ո՞նց չէ, դու գիտես, որ մեր ազգը չի սիրում հոգեբանի դիմել, նրանք նախընտրում են հարևանուհիների հետ սուրժ խմելով կիսվել իրենց պատմություններով, քան գումար վատնել մասնագետի դիմելու համար, իսկ կլինիկաներում կոպեկներ են վարձատրում: Բացի այդ, ես կլինիկա ընդունվելու շանս չունեմ, նրանք արևմտահայերեն չեն հասկանում, ռուսերեն էլ չգիտեմ, մոռանում ես, ես սիրիահայ եմ, գաղթական:

ՌԵՄԻ - Նորից մի սկսիր: Գիտե՞ն ինչ մտածեցի, հիմա, երբ առավոտից իրիկուն աշխատավայ-

րում չես լինի, գուցե կզնանք միասին զբոսայգի, ինչպես այն ժամանակ, երբ դեռ չէինք ամուսնացել, պաղպաղակ կուտենք: *(Հանդիպելով ամուսնու անտարբերությանը՝ թեման փոխում է:)* Կեր, կսառչի, համեղ է:

ԱՄՈՒՍԻՆ - Օօօ, մի՞ն ես տապակել, նարինջով, շքեղություն է իրոք:

ՌԵՄԻ - Դե, այո, համացանցում գտա այս ֆրանսիական բաղադրատոմսը, մտածեցի, որ այսօր յուրահատուկ օր է ու...

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, ճիշտ ես արել, իհարկե, այսօր կարելի է, ես հիմա կզամ: *(Կաղալով գնում, վերադառնում է մոմակալներով, դնում է սեղանին, վառում է մոմերը: Ռեմին վերաբերմունք ցույց չի տալիս:)* Չեմ կարող ուտել, բերանս ցավում է ծամելուց: *(խմում է:)* Դու չուրախացար մոմերից:

ՌԵՄԻ - Ուրախացա, պարզապես մտահոգ եմ քեզ համար:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, քո լացկանությունն ինձ նյարդայնացնում է, ասացի՝ ոչինչ չի եղել, կանցնի: Ուզում ես մի՞ն ուտեմ, հիմա, ահա, տես, ուտում եմ, գոհ ես: *(Ցավից ծամածռվում է:)*

ՌԵՄԻ - Ոչ, ես մտածում եմ՝ ինչպես ենք ապրելու:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, Ռեմի... Ես վաղվանից կփնտրեմ, ամեն տեղ մի նոր աղբանոց կգտնվի ինձ պես հիմարների համար..

Ես ինչո՞ւ Հայաստան եկա:

ՌԵՄԻՆ փարվում նրան ու արցունքոտ աչքերով կամացուկ երգում է:

ՌԵՄԻ - Եռագույն դրոշ, մեր ազատության,

Ծածանվեց ընդդեմ բռնակալության,

ԱՄՈՒՍԻՆ - *(խմում ու ծայնակցում է).*

Եռագույն դրոշ, մեր ազատության, Ծածանվեց ընդդեմ բռնակալության...

Նա շարունակում է երգել ինքնամոռաց, իսկ Ռեմին խոսում է:

ՌԵՄԻ - Տանը, հեռուստացույցից, բակում, հրապարակում, ամենուրեք այդ երգն էին երգում: Արցախյան հաղթանակին հաջորդեց Սովետական միության փլուզումը, ապա մեր փառահեղ անկախացումը: Բոլորը հավատում էին, որ անկախանալուց հետո ամեն ինչ լավ է լինելու: Մենք տաքացնում էինք մեր սառած մատները փայտի վառարանի վրա, բայց գիտեինք, որ քիչ է մնացել, ուր որ է՝ լավ է լինելու, և երգում էինք անկախության մասին: Մեր ծնողները քարից հաց էին քամում, բայց հավատում էին անկախությանը: Իսկ ես մոմի լույսի տակ գիրք էի կարդում ու հավատում էի մեծ ապագային: Տասնվեց տարի է անցել այդ անկախությունից,

իսկ երազանքներն ինչպես ծնվում, այնպես էլ մեռնում են այստեղ:

ԱՄՈՒՍԻՆ - (արդեն հարբած, հեզ-նանքով): Ռեմի՞, քեզ ի՞նչ եղավ, որոշեցիր խոսել, հոգիս: Զեզ չի սազում, փոքրիկս, ավելի լավ է պարենք, չէ՞ որ այսօր մեր... մեր... տոնն է, Ռեմի, դու նույնիսկ մոմերի վրա չուրախացար, չէ՞ որ դա այնքան ռոռոռմանտիկիկիկ է:

ՌԵՄԻ - Ես տխրում եմ մոմերից, դրանք ինձ իմ սոված ու մրսած մանկության օրերն են հիշեցնում:

ԱՄՈՒՍԻՆ - Ասում եմ՝ չպարենք:

Հարբած տղամարդը փորձում է սեռական ուսուցողության ենթարկել կնոջը: Ռեմին հետ-հետ գնում է դեպի բազմոցը, տղամարդը ընկնում է բազմոցին ու քնում:

ՌԵՄԻ - Ես այնպես եմ հոգնել:

Քնում տարածվում են ջազի տխուր նոտաները:

Տեսարան չորրորդ

Ռեմին ամուսնու կողքին նստած է, նա արթնանում է:

ԱՄՈՒՍԻՆ - Գլուխս, գլուխս պայթում է: (Ռեմին անխոս բաժակ է մեկնում, նա խմում է:) Դե խոսիր, Ռեմի, մի լռիր, ասում եմ քո լռությունը:

ՌԵՄԻ - (վախեցած): Բարի լույս:

ԱՄՈՒՍԻՆ - (տեղից ելնելով): Այսօր էլ մղձավանջների իմ հերթն էր: Սուրճ կպատրաստես, խնդրում եմ:

ՌԵՄԻ - Արդեն պատրաստել եմ, հիմա կբերեմ:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, երեկ շատ աննրբանկատ եղա... չգիտեի, որ տխրում ես մոմերից:

ՌԵՄԻ - Փուչ բան է, մոմ է, հավվեց վերջացավ:

ԱՄՈՒՍԻՆ ԱՄՈՒՍԻՆ - Սիրում եմ քեզ հետ սուրճ խմել, գրուցիր, արի այսօր գրուցնեք, միայն թե մի լռիր, Ռեմի: Ներիր ինձ, հոգիս, ինքս էլ չեմ հասկանում՝ ինչ եմ անում, գիտես, հալեպահայերը շատ մեղմ մարդիկ են, հատկապես տղամարդիկ անչափ կնամեծար են, հոգատար իրենց մայրերի, քույրերի ու կանանց հանդեպ: Դե, դու հիշում ես, ես այսպիսին չէի: Անգորությունից մարդկային կերպարանքս կորցրել եմ: Մայրս ինձանից կիրաժարվեր, եթե տեսներ՝ ինչպես եմ կնոջս հետ վարվում:

ՌԵՄԻ - Ամեն ինչ հասկանում եմ, ես էլ լարված եմ:

ԱՄՈՒՍԻՆ - Այս ի՞նչ դեմքի արտահայտություն է, հոգիս, քեզ քնքուշ խոսքեր եմ ասում, իսկ դու նույնիսկ չես ժպտում:

ՌԵՄԻ - Ես պարզապես մտահոգ եմ:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, ասացի՝ գրու-
ցենք, չասացի՝ նյարդայնաց-
նենք իրար, մի տագնապիր,
քաղցած չեմ թողնի:

ՌԵՄԻ - (*ափերից դուրս գալով*): Ես
սովից չեմ վախենում, մենք
շատ ենք տեսել սոված օրեր,
հայրս երաժիշտ էր, ճգնաժամի
տարիներին ո՞ւմ էր պետք նրա
երաժշտությունը: Ես այլ բանե-
րի մասին էի մտածում:

ԱՄՈՒՍԻՆ - Սիրունիկ գուլսդ մի
ծանրաբեռնիր մտքերով, ի
դեպ, մուտքի մոտ մի փաթեթ
կա, գրքեր են, քեզ համար եմ
գնել, տեսա՞ր: Լավ կանես՝ կար-
դաս:

ՌԵՄԻ - (*հուզվելով*): Դու երեկ ես
գնել, ծեծված, ջարդված մտել
ես գրախանո՞թ:

ԱՄՈՒՍԻՆ - Ոչ, իհարկե, աշխա-
տանքի գնալուց առաջ էի մտել
գրախանութ, ծեծկռտութից հե-
տո նա մեքենայից դուրս
շարտեց գրքերը՝ բացականչե-
լով. «Էս մակուլատուրադ հետդ
տար, սենց էշություններ կար-
դալով ինչի՞ ես հասել...»:
(*Դարձյալ այլայլվելով*.) Հաս-
տագուլիս... անասուն:

ՌԵՄԻ - Նորից մի՛ վերհիշիր,
կկարդամ դրանք, խոստանում
եմ, քեզ նյարդայնանալ չի կա-
րելի:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, մոտ նստիր, մի
ուրախ բան պատմիր ինձ, հո-
գիս: (*Ռեմին լուռ է:*) Ի՞նչ է, ոչ մի

ուրախ բան չե՞ն կարող պատ-
մել, մի՞թե ամեն ինչ այդքան
մոռայլ է:

ՌԵՄԻ - Ասա, դու ինձ սիրո՞ւմ ես:

ԱՄՈՒՍԻՆ - Անհեթեթ հարց:

ՌԵՄԻ - Ամեն ինչ լավ կլինի, չէ՞, ա-
սա, որ լավ կլինի, իհարկե, ա-
վելի լավ կլիներ, եթե մենք
մանկիկ ունենայինք, ամեն ինչ
կփոխվեր:

ԱՄՈՒՍԻՆ - Վստահ չեմ, երեխա-
յին պահել է հարկավոր, իսկ
մենք չգիտենք, թե վաղն ինչ-
պես ենք տան վարձը տալու:
Ռեմի, ասա, դու նպատակներ
ունե՞ս, քեզ ինչ-որ բան հաճույք
պատճառո՞ւմ է, ինչ-որ բանի
մասին երազո՞ւմ ես:

ՌԵՄԻ - Երբ փոքր էի, ունեի, մի
ժամանակ ես երազել գիտեի:

Միանում է էկրանը:

«Մայր - Այսպես չի կարող շարու-
նակվել, բոլորս նյարդային
խանգարումների կհասնենք:
Թող նա իր դասերով զբաղվի,
ինձ հանգիստ տվեք: Ես չեմ կա-
րող ամբողջ օրը նոտագրելուց
հետո էլի ու էլի նոտաներ լսել:

Հայր - Ուրեմն ականջներդ փակիր:

Մայր - Դուք հեռացեք, այդպես էլ
իմ անկյունը, իմ աշխատասե-
ղանը չունեցա: Ես կին եմ վեր-
ջապես, կին, ով նույնիսկ
զարդասեղան չունի, մի տեղ, որ
կոսմետիկաս ու զարդերս շա-
րեմ:

Հայր - (շարունակելով պարապել): Աղբը նետիր, միևնույն է, դրանք քեզ չեն փրկի, դու պառավել ես անվերջ փնթփնթալուց: (Ցինիկ ծիծաղում է:)

Մայր- Ես չեմ կարող քնել:

Հայր - Ուրեմն գնա ընկերուհուդ հետ սուրճ խմելու:

Մայր - (կատաղած բղավում է): Սա պատուհաս է, սա կյանք չէ, ինչո՞ւ, ինչո՞ւ նրա անունը Ռեմի դրեցինք, պետք է դնեինք Մարիա, Լիլիա, Վերոնիկա, ինչ ուզում ես, բայց չէ՛կէ, դու պետք է հորինեիր, ռե-մի, դո ռե մի... «Էքսցենսորիկ է, իմ աղջիկը պիտի եզակի լինի, մեր անունը պետք է երաժշտական լինի», անուն չէր, թուղթուգիր էր:

Հայր - Ռեե՛ն միիի՛ի, հապա տես՝ որքան գեղեցիկ է հնչում, չնաշխարհիկ, ասես Օրփեոսի տավրից պոկված երկու զրնգուն նոտա, իմ դուստրը պետք է համաշխարհային բեմեր նվաճի, իմ պարծանքը, իմ Ռեմին»:

Հայրն ու երեխան մտնում են արտաքնոց ու դուռը փակում:

Ռեմի - Մենք դասերը շարունակում էինք արտաքնոցում, որ մայրիկին հանգիստ տայինք, դա շատ զվարճալի էր: Գիտե՞ս, ինձ դուր էր գալիս հայրիկի հետ ժամերով փակվել արտաքնոցում ու նվագել: Մեկ էլ գալիս էր մայրիկը. «Դուրս եկեք, ես կա-

րիք ունեմ»: «Գնա գրողի ծոցը, մենք արվեստ ենք արարում, այս աղջիկն այս սուրբ վայրում Մոցարտ է նվագում, իսկ դու ուզում եք կեղտոտե՛լ, սրբապիղծ»: Ու մենք ծիծաղից մեռնում էինք, հետո նվագում էինք էլի ու էլի: Նա հանձարեղ ֆլեյտահար էր:

ԱՄՈՒՍԻՆ - Դուք ամբողջ ընտանիքով հոգեբույժի կարիք ունեք:

Ռեմի- Սա արդեն անտանելի է:

ԱՄՈՒՍԻՆ - Պարզվում է՝ դուք լավ էլ երջանիկ էիք ձեր հավաքում, պարզվում է՝ այդ ես եմ քեզ զրկել թևերից, բռնությամբ դուրս բերել քո ամրոցից:

Ռեմի - Ես թույլ չեմ տա, հանգիստ թող ծնողներիս:

ԱՄՈՒՍԻՆ - Ծնողների՞դ, էն երկու կիսախելագարներին, որ քեզ փողո՞ց են նետել:

Ռեմի - Ծիշտ չէ:

ԱՄՈՒՍԻՆ - Զրկել են մանկությունից, երազանքներից, ինքնուրույնությունից:

Ռեմի - Ոչ, ծիշտ չէ, նրանք լավագույնն էին ուզում ինձ համար:

ԱՄՈՒՍԻՆ - Երևի այդպես էլ անշնորհակալ, կիսատ հորդ չգոհացրիր քո ձեռքբերումներով, նա էլ երեսիդ ժշմարտությունն ասաց ու փակեց տան դռները քթիդ առաջ...

Ռեմի - Ոչ, լսիր, դա ծիշտ չէ, բավական է, ինքս եմ այդպես որոշել, ինքս եմ նրանց թողել, բեմը

թողել ու եկել քեզ մոտ: (Դա-
դար:) Ուզում էիր լսել՝ ինչո՞ւ... Ես
այդ մասին շատ եմ մտածել,
բարդ է բացատրել: Հայրս մի օր
ուշ երեկոյան տուն վերադար-
ձավ, հարբած էր, տխուր: Լա-
կանչեց ինձ ու խնդրեց մի բան
նվագել: Ես պատրաստվում էի
տնից դուրս գալ, քեզ հետ
պետք է հանդիպեի, բայց նա
այնպիսի պարտադրող տոնով
խնդրեց, որ ականա ենթարկվե-
ցի, ինչպես այն ժամանակ, երբ
փոքր էի: Լա լսեց սկզբից մինչև
վերջ, այն է, ուզում էի փախչել,
մեկ էլ անսպասելի սկսեց հեկե-
կալ: Ես կարկամել էի: Լա զու-
խը առել էր ափերի մեջ ու
ցնցվում էր ողջ մարմնով: Գու-
ցե մեղավոր էր զգում իմ չիրա-
կանացած մանկության համար,
զուցե զղջում էր ինձ պատճա-
ռած դաժանությունների հա-
մար, զուցե իր կորցրած մատն
էր ողբում, դեռ չնվաճած բեմե-
րը, որոնք այլևս նրան հասու
չէին: Բայց ես ամեն ինչ, ամեն
ինչ ներել էի, կարևորն այն է, որ
նա տվել էր ինձ իր իմացածը,
այն ամենն, ինչ ուներ՝ իր
սիրտն ու հոգին: Թեև իր երա-
զանքները կիսատ էին: «Ռեմի,
Ռեմի,- հանկարծ խոսեց նա՝
արցունքները սրբելով,- դու ինձ
զերազանցեցիր»: Հետո մատը
կորցրած ձեռքով ֆլեյտաս
վերցրեց ու անսպասելիորեն

ծիծաղեց, ես նման ահասար-
սուռ ծիծաղ չէի լսել: Երբ դիվա-
կան ծիծաղն ավարտեց,
հանկարծ խոսեց գլխահակ. «Ա-
յո, ձիուկը չբերեցի, հերոս հայր
չստացվեց ինձանից, բայց փո-
խարենը հմտություններս քեզ
փոխանցեցի»: Այդ օրը ինձ հետ
ինչ-որ անասելի բան պատա-
հեց, ասես տարիների բեռ ու
մեղավորության զգացում կախ-
վեց վզիցս: Ես խլել էի հորս ճա-
կատագիրը, չէ՞ որ նա ինձ
համար էր քանդակում այդ ա-
նիծյալ ձիուկը... Լա իմ պատ-
ճառով զրկվեց ամեն ինչից: Ես
որոշեցի այլևս երբեք չնվագել:

ԱՄՈՒՍԻՆ - Սպասիր, սպասիր,
այդ օրն էր, որոշումդ կայացնե-
լու օրն էր, որ եկար ինձ մոտ,
ձի՛շտ եմ: Դու ուշացած եկար
ժամադրության, չափից ավելի
կարձ կարմիր շրջագեստով,
ալ շրթներկով: Մենք մի քանի
ամիս է՝ հանդիպում էինք, բայց
դու երբեք այդպես չէիր հագն-
վել: Դու այդ օրն ուրիշ էիր,
Ռեմի, այրվում էիր ներքին
կրակից, ինքնավստահ էիր, մի
տեսակ դիվական կայծ կար աչ-
քերումդ:

Ռեմի - Այո, ես այդ օրը որոշեցի
ազատվել մեղքի բեռից, որոշե-
ցի փոխել իմ կյանքը, հիշում
ես... Մենք միասին բարձրա-
ցանք ձեր տանիքը, ու այնտեղ
ես քեզ տրվեցի... Ես երջանիկ

էի և ներքուստ ինձ ուժեղ էի զգում, քանի որ որոշումներ էի կայացրել, մեկի փոխարեն՝ երկուսը, երկու ճակատագրական որոշում: Ասես վրեժ էի լուծում ճակատագրից:

Էկրանը միանում է:

«**Հայր** - Նա խենթ է, խենթ, անշնորհակալ, ես նրան սովորեցրի այն ամենն, ինչ գիտեի, այն ամենն, ինչ անգամ չգիտեի... Խոզ, ուրացող, անշնորհակալ, ինչ էր ուզածդ»:

ՌԵՄԻ - (*հայացքը՝ էկրանին*): Ամուսնանալ, պապ, ես ուզում եմ ընկերոջս հետ ամուսնանալ, երջանիկ լինել: Ես որոշել եմ թողնել բեմը, ես սիրում եմ նրան: (*Ամուսնուն.*) Ես այդ օրը քաջ էի ու անվախ, սեփական բախտիս տերն էի ինձ զգում վերջապես: Ես այնքան հանգիստ էի, որ դու երաժիշտ չես ու չես ստիպի ինձ նվագել:

ԱՄՈՒՍԻՆ - (*հեզնական*): Այ, դա ծիշտ է, իհարկե, չեմ ստիպի, միևնույն է, եթե գնաս աշխատանքի, ավելի շատ կծախսես, քան կստանաս, երաժիշտներին կոպեկներ են վճարում Հայաստանում, չէ՛:

ՌԵՄԻ - Բայց երաժշտությունը աշխատանք չէ, ինչպե՞ս չես հասկանում, դա հոգու կանչ է, կոչում, թռիչք: Ո՞նց բացատրեմ,

դու երաժիշտ չես, չես հասկանա... Ես ծանծրանում եմ տանը, համակարգչի առաջ նստելով, վիրտուալ աշխարհում ժամանակ սպանելով, ես պետք է զբաղմունք գտնեմ:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, դու ուզում ես նվագել: Դու ֆլեյտա՞ն ես կարոտել: (*Վազում, բերում է գործիքը:*) Դե, Ռեմի, բաց տուփը, համարձակ եղի՛ր, ինչպես այն օրը՝ իմ տանիքում, բաց ու սկսիր նվագել:

ՌԵՄԻ - Դու խոստացար, որ չես ստիպի նվագել: Ես այլ զբաղմունք նկատի ունեմ:

ԱՄՈՒՍԻՆ - Բայց քո աչքերում այնպիսի կարոտ ու թախիժ կա, Ռեմի, եթե ուզում ես նվագել, վերցրու այն:

ՌԵՄԻ - (*դողալով*): Ո՛չ:

ԱՄՈՒՍԻՆ - Բայց ես կարծում եմ՝ դու երազում ես այդ մասին, դու երազում ես թրև գալ ակումբից ակումբ, օրը տաս հազար դրամով, գիշերվա մեկին, երկուսին, հազարին... Ի՛մ կինը, պատկերացնո՞ւմ եք:

ՌԵՄԻ - Ի՞նչ է, Սիրիայում ավելի բարձր են վարձատրում:

ԱՄՈՒՍԻՆ - Սիրիայում կանայք չեն աշխատում, ուր մնաց՝ գիշերային ակումբում:

ՌԵՄԻ - Սա անտանելի է:

ԱՄՈՒՍԻՆ - Ինչո՞ւ, ուզում ես փչել ու կոնքերդ շարժել, գայթակղել

կուշտ ու հաստավիզ տղամարդկանց, ովքեր մի լավ հարբելուց հետո նաև կցանկանան քեզ անկողին քարշ տալ, դա է երազանքդ: Քանի որ ես չեմ կարողանում քեզ ապահովել քո երազած կյանքով:

ՌԵՄԻ - (լացելով): Վերջ տուր, բավական է, դու զառանցում ես, վերջ, ասացի: Իզուր պատմեցի քեզ... Դու իսկապես կորցնում ես մասնագիտական հմտություններդ...

ԱՄՈՒՍԻՆ - Ինձ չես խաբի, Ռեմի, աչքերդ մատնում են, գիտե՛ս, դրանք փայլատակում են,

դրանք խաղում են իրենց բներում գործիքիդ տեսքից միայն: *(Ռեմին հեկեկում է:)* Ուրեմն դուրս նետիր այդ գործիքը, եթե իրոք անկեղծ ես:

ՌԵՄԻ - Համաձայն եմ, ինքդ նետիր:

ԱՄՈՒՍԻՆ - Վստամի ես, որ պատրաստ ես դրան, ես այդպես էլ կվարվեմ: Տես, Ռեմի, դեմքդ բաց ու նայիր, ես նետում եմ: *(Ռեմին չի բացում դեմքը:)* Դե, ինչպես կուզես:

Ամուսինը վերցնում է ֆլեյտան ու անհետանում: Կուլիսներից հնչում է ֆլեյտայի սրտամոմոք մի ճիչ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԳ

Տեսարան առաջին

Ռեմին նստած է բազմոցին, բավական մեծ ժամկետով հղիությամբ:

Ամուսինը ծաղիկներ է բերել նրան: Տան կահավորանքը փոքր-ինչ փոխվել է, թեև ամեն ինչ էլի աղքատիկ է:

Չույզը լավ տրամադրություն ունի:

ՌԵՄԻ - Ծաղիկներ...

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, հոգիս, ինչո՞ւ ես զարմանում, այնքան ուրախ եմ, մենք որդի ենք ունենալու, փոքրիկ տղա: Ո՞վ կպատկերացներ, Ռեմի, ախր, բժիշկներն ասել էին, որ դու ունակ չես:

ՌԵՄԻ - Վստամի ես, դու այնքան էլ ուրախ չէիր այս ամիսներին:

ԱՄՈՒՍԻՆ - Անարդարացի ես իմ հանդեպ, այո, մտահոգ եմ եղել, բայց դա չի նշանակում, որ ուրախ չեմ, հենց նրա համար էլ ես այդքան աշխատում եմ, պացիենտներս օրեցօր ավելանում են:

ՌԵՄԻ - (ամբողջովին մայրությամբ տարված): Այո, նա ասես

Աստծո պարզևն է: Մենք նույնիսկ բուժվելու փող չունեինք, ամեն ինչ թողել էինք Աստծո հույսին, և Տերը բարեգութ եղավ մեր հանդեպ: Դա արդեն լավ նշան է: Վաղը, գուցե մյուս օրը պետք է ծննդաբերեմ, բայց դեռ չեմ հավատում այս հրաշքին:

ԱՄՈՒՍԻՆ - Չե՞ս կարծում, որ նրա համար անուն որոշելու պահն է: Ռեմի, իսկ դու առավոտյան վարժանք կատարե՞լ ես:

ՌԵՄԻ - Ո՛չ, սիրելիս, ես ալարում եմ, ես այնպես եմ ալարում շարժվել:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, դու գիրացել ես, հոգիս, քեզ չի սազում, դա սարսափելի է: Դու ուտում ես և չես շարժվում, դու պետք է մարզանք անես:

ՌԵՄԻ - Դա չափազանց կոպիտ է քո կողմից: Ես ամեն բոպե կարող եմ ծննդաբերել:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, դեռ մի տասը օր կա, դու շատ ես դողում քեզ վրա, հասկացիր, դու հիվանդ չես, հղի ես:

ՌԵՄԻ - Անսիրտ մի եղիր, ես դժվարանում եմ նույնիսկ շնչել:

ԱՄՈՒՍԻՆ - Ծանթ, մենք նրան Ծանթ կանվանենք՝ այսինքն կայծակ, հուր, որ քեզ պես անդեմ չլինի: Հարվածի, ծայթի՝ հարկ եղած տեղը: Վեր կաց, Ռեմի: *(Ռեմին վեր է կենում մի կերպ:)* Ռեմի, ինձ հետ արի, գնանք պատշգամբ:

ՌԵՄԻ - Ո՛չ, առավոտ շուտ օդը շատ սառն է, և հետո այնքան շինարարական աղբ կա այնտեղ, ինձ տհաճ է:

ԱՄՈՒՍԻՆ - *(բռնում է նրա թևից ու տանում պատշգամբ):* Ռեմի, շինարարական աղբից ոչինչ քեզ չի պատահի, սա աղբ էլ չէ, սրանք քարեր են, որոնք գին ունեն, Ռեմի, և դեռ կարող ես պետք գալ, այդ պատճառով էլ չեմ գցում:

ՌԵՄԻ - Հասկանում եմ, բայց քարերից փոշու հոտ է գալիս, ինձ համար անտանելի է, դա կարող է երեխայի շնչուղիների վրա ազդել:

ԱՄՈՒՍԻՆ - Դու անհնազանդ ես դարձել, Ռեմի, կռացիր, կռացիր ու բարձրացրու այս քարերից մեկը: *(Ռեմին ծիծաղում է:)* Ռեմի, ես չեմ կատակում:

ՌԵՄԻ - Խելքդ թոցրե՞լ ես:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, չէ՞ որ հոգեբան եմ, մոռացել ես, դա բուժման մեթոդ է:

ՌԵՄԻ - Բայց նոր սացիր, որ ես հիվանդ չեմ: Գիտե՞ս ինչ, հիմա քո պացիենտներն ունես, ավելի լավ է ինձ հանգիստ թող:

ԱՄՈՒՍԻՆ - Դու ես քեզ հիվանդի պես պահում, Ռեմի, ինն ամիս շարունակ վախեցել ես, ինն ամիս շարունակ դողացել ես քո ու երեխայիդ վրա, դու նրան քեզ պես վախկոտ ես ձևավորել արդեն քո արգանդում: Եվ, բացի

այդ, նրա հանդեպ ավելի ուշադիր ես, քան իմ հանդեպ:

ՌԵՄԻ - (ծիծաղելով): Դու խանդում ես, միակ լավ լուրն այսօրվա մեջ:

ԱՄՈՒՍԻՆ - Ոչ, ոչ, Ռեմի, ես ուզում եմ որպես հոգեբան քեզ ազատել վախերից, դու պետք է հաղթահարես ցավի վախը, հիվանդանալու վախը, չտանելու, չկարողանալու վախը, չէ՞ որ պետք է ծննդաբերես, իսկ դա հեշտ բան չէ, գիտես:

ՌԵՄԻ - Ինչո՞ւ ես վախեցնում, առանց այդ էլ սարսափում եմ ծննդաբերելու մտքից: Միգուցե կեսարյան հատմամբ դիմենք:

ԱՄՈՒՍԻՆ - Այ, տեսնո՞ւմ ես, դարձյալ փախչում ես պատասխանատվությունից, ցավ, փորձություն տանելուց: Ռեմի, դու պետք է ուժեղանաս, դու ծնող ես դառալու, դու պետք է կարողանաս տանել երեխայիդ թե՛ երկունքի, թե՛ հետագա կյանքում պատճառած ցավերը:

ՌԵՄԻ - Ինձ թվում է՝ չափազանցում ես, ուժը ծնվում է երեխայի ծնվելու հետ, մայրական բնագոյ է: Եվ հետո, ես մենակ չեմ մեծացնելու նրան, դու ինձ հետ ես, չէ՞:

ԱՄՈՒՍԻՆ - Մենք արդեն տաս րուպեից ավելի քննարկում ենք այս քարը վերցնել-չվերցնելու հարցը:

ՌԵՄԻ - Վստահ եմ, որ կատակում

ես, բայց արդեն ծիծաղելի չէ: Ես չեմ կարող վտանգել մեր երեխայի կյանքը:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, ուրեմն դու ինձ չես սիրում այլևս, ես այդպես էլ գիտեի, քո ամբողջ ուշադրությունն ու հոգատարությունն այնտեղ է՝ դեռ չծնված երեխայիդ հետ: Դու ինձ կվանես այդպես քեզանից, զգուշացնում եմ:

Հուսահատված Ռեմին ընտրում է ամենափոքր քարը, դամոզալ փորձում է կռանալ, բայց այն չբարձրացրած, սկսվում են երկունքի ցավերը: Շտապօգնության մեքենայի ձայն: Մթնում է:

Տեսարան երկրորդ

Բենը լուսավորվում է: Նույն տունն է, կողքի սենյակից երեխայի լացի ձայն է գալիս, Ռեմիի ձեռքին կաթի շիշ կա: Բավական ժամանակ է անցել: Մտնում է տղամարդը՝ դեղատնից բերված տոպրակով:

ԱՄՈՒՍԻՆ - Ամեն ինչ սարսափելի թանկացել է: Դեղատուն մտնելը հանցագործություն է: Երեխայի մեկ ամսվա նպաստը մեկ օրում ծախսվեց դեղատանը: Երկիր չէ, այլ դժոխք:

ՌԵՄԻ - Վաղը մեր որդու մեկ ամսակն է:

ԱՄՈՒՍԻՆ - Որդուս մեկ ամսակին նստած եմ աղքատ ու հուսահատ, մի հիշեցրու, խնդրում եմ,

ես ինքնասիրություն ունեմ:

ՌԵՄԻ - (Ժպիտով): Շանթը դեռ փոքր է և չի վիրավորվի նվեր չստանալու համար:

ԱՄՈՒՍԻՆ - (աչքը համակարգչից չկտրելով): Չէէէ, ֆեյսբուքյան մեկ-երկու պացիենտով գոյություն չես պաշտպանի: *(Զիչ անց վեր է թռչում տեղից:)* Նրանք պատասխանել են նամակիս, պատկերացնում են, Ռեմի, ինձ հրավիրում են աշխատանքի Նահանգներում: *(Նրանք գրկախառնվում են:)* Վերջ այս թշվառ վիճակին, Ռեմի, վերջ, մենք կապրենք մարդավայել կյանքով:

ՌԵՄԻ - Ես ասում էի, չէ՛, երեխան իր հետ հաջողություն է բերում: Նա կգրոսնի կանաչ մարգագետիններում, սկյուռիկների հետ: Մեծ ապագա կունենա, ի տարբերություն մեզ: Գուցե Բոստոնի համալսարանի ուսանող դառնա: Սա ուղղակի հրաշք է, նվեր երեխայի մեկ ամյակի կապակցությամբ:

ԱՄՈՒՍԻՆ - (Ռեմիին վանելով): Չեղավ, չեղավ, Ռեմի, սպասիր, մի ոգևորվիր, նրանք միայն ինձ են հրավիրել:

ՌԵՄԻ - (կաթի շիշը ձեռքից ընկնում է): Այդպես չի լինում, դու մեզ լքում ես:

ԱՄՈՒՍԻՆ - Մի չափազանցրու, ես կմեկնեմ, կտեղավորվեմ, կսկսեմ աշխատել, ռիթմի մեջ կընկնեմ, ապա ձեզ կկանչեմ:

ՌԵՄԻ - (ապշահար): Եվ դա այն ժամանակ, երբ մեր երազանքն իրականացավ...

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, ես չեմ փախչում, այնտեղից գումար կուղարկեմ, դուք լավ կապրեք, երեխան մի փոքր կմեծանա ու կգաք: Ռեմի, դու, ինչ է, ուզում ես խոչընդոտել իմ հաջողությանը, այսքան տարի սրա-նրա մոտ նվաստանալով ինչ ասես չարեցի, իսկ հիմա ուզում ես զրկել իմ երազանքից:

ՌԵՄԻ - Ոչ, իհարկե:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, երեխան շատ փոքր է, չարժե վտանգել նրա խաղաղությունը, այ, եթե նա չլիներ: *(Ռեմիին վերցնում է երեխայի ծածկոցն ու սեղմում գրկում՝ ասես ցանկանալով պաշտպանել նրան:)* Ռեմի, ամառները կգամ, իսկ երբ երեխան դառնա, ասենք, երկու, երեք տարեկան, կամ չորս, դու կգաս նրա հետ: Նա արդեն քուլեջ կգնա, հետո դպրոց, հետո համալսարան, հետո արժանավայել կյանքով կապրի, մի ամերիկուհու հետ ամուսնանա գուցե: Ես ձեզ ամեն ամիս գումար կուղարկեմ, ամեն ինչ լավ կլինի:

ՌԵՄԻ - (հանդարտ քայլելով՝ հայացքը հանդիսասրահ ուղղած): Նրանք բոլորն էլ այդպես էին ասում, բոլորը, իմ մորաքույրնե-

րի ամուսինները, իմ հարևանների, իմ կուրսընկերների եղբայրներն ու քեռիները, նրանք բոլորն էլ մի օր գնացին, ու նրանցից շատերը չեկան: Մեր տղամարդիկ այնտեղ սովորեցին լավ կյանքին, իսկ նրանց կանայք և երեխաները աղքատ ու ծանր օրերը հիշեցնող բեռ դարձան իրենց համար և նրանք որոշեցին ամեն ինչ սկսել սպիտակ թղթից, ազատվել հիշողություններից, ամուսնանալ անցյալ չունեցող, անհոգ և ուրախ կանանց հետ:

ԱՄՈՒՍԻՆ - Զեզ չի հաջողվի ինձ էլ քեզ հետ այս ճահճում խորտակել:

ՌԵՄԻ - Դու կիսատ ես թողնում քո պացիենտի բուժումը: Ես դեռ ամեն ինչ չեմ պատմել իմ մասին: Իսկ քո հայրենասիրությունը, Դեր Զորի անապատում զոհված պապերիդ արյան կանչը, այսպես ես աշխարհին համոզելու ընդունել ցեղասպանությունը: Այսպես ես պահպանելու հայրենիքիդ անկախությունը:

ԱՄՈՒՍԻՆ - Ես կվերադառնամ այն ժամանակ, երբ կկարողանամ Հայրենիքիս օգտակար լինել: Իսկ այդ օրը կգա, հավատա:

Տղամարդը զայրացած հեռանում է: Կինն անօգնական ընկնում է բազմոցին: Կողքի սեմյակից սոված երեխայի սրտակեղեք լացի ձայնն է լսվում:

Տեսարան երրորդ

Երկուսով մտած են համակարգիչների առաջ, աչքերը համակարգչից չկտրելով:

ԱՄՈՒՍԻՆ - Նրանք հրավերն ու տոմսերը ուղարկել են, Ռեմի:

ՌԵՄԻ - Ֆանտաստիկ է:

ԱՄՈՒՍԻՆ - Կարո՞ղ ես այսօր երեխային հարևանուհուդ մոտ թողնել, ուզում եմ քեզ համար հրաժեշտի երեկո կազմակերպել:

ՌԵՄԻ - Դու ինձ, այնուամենայնիվ, հրաժեշտ ես տալիս:

ԱՄՈՒՍԻՆ - Ես ուզում եմ հաճելի զգացողություններ քեզ պարգևել, որոնք քեզ հետ կմնան մինչև գալս:

Մթնում է:

Լուսավորվում է, տղամարդը նորից համակարգչի առաջ է, կինը գալիս է երեկոյան հագուստով:

ԱՄՈՒՍԻՆ - Որքան գեղեցիկ ես, հոգիս:

ՌԵՄԻ - Երկրորդ անգամ եմ այս զգեստս հագնում, առաջին անգամ մենահամերգիս էի հագել: Պահարանում փոշոտվում է, մտածեցի՝ կարելի է նաև այսօր հագնել, որ քո հիշողության մեջ մնամ գեղեցիկ ու տոնական, մինչև մեր հաջորդ հանդիպում:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, ես համերգի տոմսեր եմ պատվիրել:

Մթնում է:

Գիշերային ակումբի լուսավորություն, Ռեմին և ամուսինը նստած են սեղանի շուրջ, խմում են: Լույսերը մարում են՝ հայտնվում է ջազային տրիոն, ֆլեյտահարուհին մվագում է ինքնամոռաց: Ռեմին գնցվում է:

- ԱՄՈՒՍԻՆ - Զեզ դուր չի գալիս:
- ՌԵՄԻ - Նա չափազանց լավ է նվագում:
- ԱՄՈՒՍԻՆ - Հապա ինչո՞ւ ես մոայլվել:
- ՌԵՄԻ - Ես մտածեցի, ես... Արի գնանք:
- ԱՄՈՒՍԻՆ - Ոչինչ չեմ լսում, ֆլեյտան խանգարում է, բարձր խոսիր:
- ՌԵՄԻ - Խնդրում եմ, գնանք:
- ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, քեզ ուզում էի հաճույք պատճառել, Ռեմի, անշնորհակալ մի եղիր, գումար եմ պարտքով վերցրել, ի վերջո, այս երեկոն քեզ նվիրելու համար:
- ՌԵՄԻ - Դա քո հոգեբանական վերջին թեստն էր, թե՛ էլի կան փորձություններ:

Ռեմին դուրս է վագում ակումբից: Ամուսինը հետևում է նրան: Ջազը հնչում է ավելի բարձր: Մթնում է:

Տեսարան չորրորդ

Տանը:

- ԱՄՈՒՍԻՆ - Դու կարոտամիստ զգացիր:
- ՌԵՄԻ - Դու դաժան վարվեցիր ինձ հետ:

ԱՄՈՒՍԻՆ - Հերթական անշնորհակալությունդ:

ՌԵՄԻ - Ես խղճացի այդ աղջկան:

ԱՄՈՒՍԻՆ - Ինչո՞ւ:

ՌԵՄԻ - Ես պատկերացրի, որ նա տխուր է, շատ տխուր, որ նա բոլորովին էլ չի ուզում գիշերային ակումբում նվագել, որ նա այնքան տաղանդավոր է, նա աստվածատուր տաղանդ ուներ, բեմական անսահման հմայք ու այնպիսի վարպետություն, նա մեծ բեմերի է արժանի:

ԱՄՈՒՍԻՆ - Սկսվեցե՞ց հեքիաթասացությունը, նորից ամեն ինչ հորինում ես: Ռեմի, արի, նստիր այստեղ, գուցե հաշտվե՞ն ծնողներիդ հետ, ախր, ոչ ոք չունես, ես մի քանի ամսով կբացակայեմ, իսկ քեզ ո՞վ կօգնի երեխային պահել:

ՌԵՄԻ - Ես նրան մանկապարտեզ կտանեմ:

ԱՄՈՒՍԻՆ - Ռեմի, քեզ դժվար կլինի, ծնողներդ կարգին մարդիկ են, դու նրանց երախտամոռի պես լքել ես, հաշտվիր նրանց հետ, նրանք քեզ կներեն:

Մթնում է:

Միանում է էկրանը, այնտեղ Ռեմիի ծնողներն են, ովքեր անջատում են տան լույսերը, փակում վարագույրները, ապա վերցնում են ճամպուկները և մի վերջին հայացք նետելով բնակարանին՝ կողպում են տան դուռը:

Լույս: Բեմում մույնպես ճամպուկներ են դրված:

ՌԵՄԻ - Երեկ ընկերուիս էր զանգել, ասաց, որ մերոնք մեկնեցին ընդմիշտ Ռուսաստանում ապրելու, հայրս հետաքրքրվել է, որ այնտեղ տարեցներիս

բարձր թոշակ են տալիս:

Ամուսինը անխոս գրկում է Ռեմին, վերցնում է ճամպրուկներն ու դուրս գալիս տնից: Մթություն:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

Նստած է Ռեմին, վուլգար է հագնված, սանրվածքը ևս փոխված է, նրա պահվածքը ցինիկ ու ձանձրացած կնոջ պահվածք է: Ամեն ինչից երևում է, որ տևական ժամանակ է անցել: Բեմի մյուս կողմում, ստվարաթղթե տուփերի դիմաց, հինգ-վեց տարեկան տղա է խաղում: Բեմում փայտե ձի կա, որին երբեմն մոտենում է երեխան, նստում է ու ճոճվում: Աջ ու ձախ թախքոված են մեծ ու փոքր կապույտ գնդակներ, որոնք քայլելիս անփութորեն ոտքով հրում է կինը: Ռեմին գրասեղանի դիմաց նստած նամակ է գրում:

ՌԵՄԻ - (Ժիծաղելով): Այս համակարգչային դարում թղթով ու գրիչով են նամակ գրում: Ինչպես այն ժամանակ, երբ շատ փոքրիկ էի, և մեր մուտքում փոստարկղ կար, փոստատար: Կարծում եմ, այսպես ավելի ազդեցիկ է: Ես նամակը կոնքեմ ծրարի մեջ ու փոստով կուղարկեմ Ռուսաստան՝ ծնողներիս, և հետո մայրս ու հայրս այնքան էլ գլուխ չեն հանում էլեկտրոնային փոստից, հաստատ չէին կարողանա կարդալ: Չգիտեմ, նրանք ինձ կհասկանան: *(Շարունակում է գրել:)* Մայրս գուցե ուրախանա, երբ իմանա, որ նամակն ինձանից է, իսկ հետո կտխրի, շատ կտխրի: Բայց հայրս... Նա ինձ երբեք չի ների

իմ թույլությունը, նա կարծում էր՝ ես ուժեղ եմ, նպատակասուլաց: Թքած, ես մեղավոր չեմ, ասում են՝ զավակները ծնողների մեղքերի պատասխանն են. չէ՞ որ նա էլ մեռնելու ցանկություն է ունեցել: Նա առհասարակ ողբերգական կերպար էր՝ իր կորցրած մատով, երաժշտից երաժշտության ուսուցչի վերածված հայրս... *(Շարունակում է գրել:)*

ՏՂԱ - Ռեմի, ես ուտել եմ ուզում:
Ռեմին ուշադրություն չի դարձնում, տղան շարունակում է խաղալ:

ՌԵՄԻ - Երբ փոքր էի, ինձ թվում էր՝ դա է ընտանիքը, որ ամեն տեղ էլ ծնողները վիճում են, իսկ

երբ հայրիկը սուր հեզնանքով մայրիկին ծաղրում էր, սկսում էի ինքս ինձ հուսադրել, որ ամեն ինչ լավ է: Մտածում էի՝ կատակում են, իսկ եթե կատակում են, ուրեմն հաշտ են: *(Ծիծաղում է: Նայելով սեղանին դրված իր ու ամուսնու լուսանկարին:)* Իսկ դու արդեն քանի տարի է՝ չկաս, ես չսխալվեցի... Տարօրինակ է, հազիվ երկու-երեք տարի ապրեցինք միասին, բայց ասես հարյուր տարի տևեց: Երկու տարում ծերացա քեզ հետ քսան տարով: *(Հեզնանքով:)* Հոգիս հանեցիր, հոգիս: Ի դեպ, քո բերած բոլոր գրքերը կարդացել եմ, իսկ դու նույնիսկ չվերադարձար, որ քննություն հանձնեմ: Ես ինչնո էի դիմանում այդքան երկար... *(Կտրուկ վեր է կենում:)* Իսկ դու, ինչպես միշտ, չես հիշում. չէ՞, այսօր ինչ օր է: *(Մոտենում է պահարանին, վերցնում պատրաստ դրված գինու շիշն ու երկու գավաթ: Մոտենում է սեղանին, բաժակները լցնում, մեկը դնում է լուսանկարի առջև, մյուսը վերցնում, ասպա բաժակներն իրար է զարկում:)* Կենացդ, սիրելիս, այսօր մեր ամուսնության ութերորդ տարեդարձն է: Չնայած դու երբեք էլ չես հիշել այդ օրը, բայց ես քեզ ներում եմ: *(Խմում է:)* Հինգերորդ տարին է, որ այս օրը նշում եմ լուսանկարիդ հետ,

չեմ էլ հասկանում, թե ինչու: Հատուկ այս կապակցությամբ եմ այսպես զուգվել, լավ է, հավանում ես: Չնայած այլևս այն չեմ, չէ՞, ով կպատկերացներ, երբ գնացիր, ես քսանն անց էի, իսկ հիմա երեսունի սահմանը հատել եմ: Ու ոչինչ, գիտես, ոչինչ էլ չի կատարվել, ուղղակի գնալով ավելի անհետաքրքիր է դառնում կյանքը: Այսօր առավոտյան հասկացա, որ արդեն հոգնել եմ քեզ սպասելուց: Հինգ տարին կլոր, գեղեցիկ թիվ է, չէ՞: Այդ առիթով քեզ համար մեծ, շատ մեծ անակնկալ եմ պատրաստել: Զեզ լուրը կհասնի, վատ լուրերն, առհասարակ, արագ են տարածվում: *(Ծիծաղում է:)* Մի անգամ մայրիկին ասացի՝ ինչնո չես բաժանվում հայրիկից, չէ՞ որ նա փչացրել է քո կյանքը: Մայրս զայրույթից շնչահեղձ եղավ: Նրա սերնդի համար դա մի անհասկանալի, սարսափելի արտահայտություն էր, հետո իրեն հավաքեց ու ասաց. «Ռեմի, դու կարծում ես, բաժանվելը լուծո՞ւմ է: Նա իմ ամուսինն է, իմ դստեր հայրը, ասել է թե՛ ճակատագրով իմ կեսը, կողակիցը: Նա էլ այդպիսին է, հետո ի՞նչ: Ռեմի, զխիցդ գցիր նման հիմարությունները, քանի որ նման մտքերով դու երբեք նորմալ ընտանիք չես ունենա»: Մամ,- ասացի,- դու սա

ընտանիք ես համարում, նորմալ ընտանիք: Մայրս բորբոքվեց. «Իսկ ի՞նչն է աննորմալ մեր ընտանիքում, կյանք է, ինչպես ամենուր, ի՞նչը քեզ դուր չի գալիս»:

Ձրույցը տեղափոխվում է էկրանին, այնտեղ Ռեմին է ու Մայրը:

«Ռեմի - Մամ, մի քեզ նայիր, դու քեզ վաղուց հայելում չես տեսել, դու տձև ես, գրավիչ չես որպես կին: Իսկ նա, նա նույնիսկ չի էլ մտածում, որ դու կին ես, որ քեզ կարելի է մեկ անգամ գոնե խանութ տանել, կամ ծաղիկ նվիրել, կամ օձանելիք, ու տենց պարզունակ բաներ:

Մայր - Ռեմի, ի՞նչ ես ուզում, որտեղից այսքան ըմբոստություն այս աղջկա մեջ:

Ռեմի - Մամ, դուք նույնիսկ իրար հետ չեք քնում, ինչպե՞ս կարող եք ապրել այս հավաքնում:

Մայր - Ռեմի, ամուսնական հարաբերություններում ամենակարևորը քնելը չէ: Լավ թե վատ, կինը պիտի ամուսին ունենա: Ինքդ էլ մտածիր, հատկապես մեր հասարակության մեջ կինը չի կարող անտեր մնալ: Ի՞նչ կասեն հարևանները: Եվ հետո՞ լավ տղամարդ չի լինում, տղամարդը տղամարդ է, էլի: Պետք է աչք փակել նրա արարքների վրա, կամ նրան վերաբերվել ինչպես անչափահաս

երեխայի, և ամեն ինչ տեղը կընկնի: Ռեմի, միշտ հիշիր մորդ պատգամը, աչք փակիր տղամարդու արարքների վրա և երբեք չխոսես»:

Էկրանը մարում է: Բեմում:

ՌԵՄԻ - Այո, հոգիս, մի ժամանակ ըմբոստ էի, իսկ դու ոչինչ չարեցիր, որ ես վերագտնեմ այն, դու միայն էքսպերիմենտներ էիր դնում վրաս՝ ինքնավստահությունս ավելի կոտրելով: (Թեքվելով դեպի էկրանը:) Իսկ դու, մամ, դու վախենում էիր փոփոխությունից և ինձ էլ սխալ դաստիարակեցիր:

ՏՂԱ - Ռեմի, դու ո՞ւմ հետ ես խոսում: (Ռեմին չի պատասխանում:) Ռեմի, այսօր աշխատանքի չե՞ս գնում:

ՌԵՄԻ - Ոչ, Ծանթ, այսօր՝ ոչ: Հնարավոր է, ինչ-որ ժամանակով բացակայեմ, երբ ուշանամ, կգնաս դիմացի հարևանուհու՝ Աննայի տուն, մինչև որ... Գիտե՞ս, դու տատիկ ու պապիկ ունես, գուցե նրանք գան քո հետևից, դու տատիկիդ անմիջապես կձանաչես, նա ինձ շատ նման է, ուղղակի ավելի տարիքով է:

Տղան ուշադրություն չի դարձնում:

Ռեմին բերում, սեղանին շարում է սրվակով դեղեր, պարան, ածե-

լի, դանակ, նստում է դիմացը, նայում է ամուսնու նկարին: Ապա այն մի կողմ շարտում: Վերցնում է հեռախոսը, զանգում հարևանուհուն:

ՌԵՄԻ - Աննա, ողջույն, լավ ես, կարո՞ղ ես այս գիշեր Շանթին քեզ մոտ տանել: Գիտես, կլինիկայում խառը վիճակ է, ստուգողներ են եկել: Գլխավորը գազազած է, զանգեց, շտապ կանչեց աշխատանքի: Այո: Ծնորհակալ եմ, ընկերուհիս, Աստված քեզ մի օր անպայման կվարձատրի քո բարության համար: Օ, այո, էլ մի ասա, քարտուղարուհու աշխատանքը հեշտ չէ, միշտ կախված ես շեֆիդ քմահաճույքից: Համբուրում եմ: Ոչ, ոչ, ինքս կբերեմ տղային: Առայժմ:

Ռեմիի հեռախոսը զանգում է:
Ռեմին վերցնում է բջջայինը՝
ձայնին անհոգ, թեթև երանգ հարողելով: Արդեն գիմին իր ազդեցությունն ունեցել է:

ՌԵՄԻ - Բարև, քաղցրս, ես էլ քեզ էի ուզում զանգել, ինչպե՞ս զգացիր: Ներիր, ո՛չ այսօր: Այս գիշեր չենք հանդիպի, ինձ վատ եմ զգում, մի համոզիր: Լսիր, Դոկ, մի հարց եմ ուզում տալ, կարո՞ղ ես հուշել ինքնասպանության ամենահեշտ մեթոդը: Չէ, չէ, դա ցավոտ է: Հաբե՞ր: Բայց այդպես փրկվելու հավա-

նականություն կա, չէ: Այո՞րո՞ղ, ուրեմն հարկավոր չէ: Վաննամ, ինչո՞ւ, տաք ջուր, թանկ հաճույք է մի բժշկի քարտուղարուհու համար (*ծիծաղում է*), բայց եթե արդյունավետ է... այո, կարելի է մի վերջին անգամ նման ճոխություն թույլ տալ, չէ... Այո, այո, այդպես ավելի արագ արնաքամ կլինի... Ծնորհակալ եմ, քաղցրս, կհանդիպենք դժոխքում: Ի՞նչ... Չէ հա, հո չեմ ցնդել, ի՞նչս է պակաս, ուղղակի որոշել եմ ինձ այլ ասպարեզում էլ փորձել. հոգեբանական դրամա եմ գրում իմ մասին (*ծիծաղում է*): Որոշեցիր անհանգստանալ ինձ համար, քեզ այդ դերը չի սազում, վերջ տուր, Դոկ: Առավոտյան, անկասկած, կհանդիպենք: Ամուր համբուրում եմ:

Ռեմին սեղանի վրայից ամեն ինչ լցնում է աղբարկղը, միայն ածելին է թողնում: Հազնում է կոշիկները, վերցնում է նամակը, շարժվում է դեպի դուրս, բայց կարծես մի բան հիշելով կանգ է առնում: Էկրանին Ռեմիի հայրն է: Նա նեղացած կիսադեմով նստած է մի անհասկանալի, թշվառ սենյակում և լուռ ծխում է: Ռեմին շրջվում է, նայում պատկերին.

ՌԵՄԻ - Դո՛ւ, հայրիկ: Դո՛ւ ինչ արեցիր ինձ հետ: Ինչո՞ւ ես այդպես մեղադրող հայացքով նայում ինձ: Այս կյանքում ամենաշատը

քեզ էի սիրում, պատկերացնում ես, խաղալիքներից, երաժշտությունից, մայրիկից՝ անգամ շատ: Դու ինձ համար ամեն ինչ էիր, քո կատակները ամենաձիճաղելի կատակներն էին աշխարհում, քո պատրաստած նախաճաշը՝ ամենահամեղ նախաճաշը, քեզ հետ խանութ գնալը ցանկացած ծամփորդությունից ավելի հետաքրքիր էր ինձ համար, Հայրիկ... Մենք առանց խոսքերի հասկանում էինք իրար, ես կարողանում էի կարդալ քո հոգին, քո տխրությունը զգում էի իմի պես: Ես գիշերները թաքուն լացում էի քո մատի համար, քո անզորության համար, ես մայրիկին մտքում մեղադրում էի քեզ չերջանկացնելու համար: Ես պատրաստ էի տանել քո դաժան պահանջկոտությունը, հայրիկ, քանի որ այն քոնն էր: *(Մոտենում է ծոճվող փայտե ձիուկին ու հենված՝ ծոճվելով, շարունակում է գլխիկոր:)* Իսկ դու, պապ, դու ինձ մեղադրեցիր քո դժբախտ լինելու մեջ, պարզվում է՝ ես եմ եղել քո դժբախտության պատճառը, քանի որ խրամատում ինձ համար էիր ձիուկ քանդակում: Ես երազանքներիս իրականացման շեմին էի, երբ քո չստացված կյանքի բեռը ուսերիս դրեցիր, այդքանից հետո ես անկարող

էի ապրել երաժշտությամբ, այն երաժշտությամբ, որը քեզնից էի ժառանգել, իսկ դու անգամ դա՛ չհասկացար: Ինչո՞ւ փակեցիր սիրտդ ու հոգիդ, ինչո՞ւ չհասկացար իմ զոհաբերությունը, դու նույնիսկ ամուսնությունս չօրհնեցիր, իսկ այն կարող էր վերջին ապաստանը դառնալ իմ փախուստի համար: Հա, երևի հենց այդ պատճառով էլ երջանիկ չեղա, ամուսինս էլ լքեց ինձ: Չի կարելի իրականությունից փախչելով՝ դավաճանել սեփական աստղին: Ու հիմա, հայրիկ... *(Ծրջվում է, որ գնա, բայց նորից ետ է գալիս ու ավելի զայրանալով՝ շարունակում է:)* Դու, այդ դու ինձ զլորեցիր այս անդունդը, միևնույն է, էլ չես հպարտանում ինձնով, էլ չես պատժում ինձ, ոչինչ չես պահանջում, ուրեմն ինչո՞ւ քարտուղարուհի չդառնայի, ինչո՞ւ չընդունեի իրականում իմ մասին մի վայրկյան էլ չանհանգստացող բժշկի սիրուհին դառնալու առաջարկը: Ինչ-որ մի բանով պետք էր լցնել դատարկությունը... Դու ինձ լքեցիր, ես էլ՝ իմ երեխային, ինչո՞ւ չախտի այդպես վարվեի, եթե դու այդպես վարվեցիր: Ես այս ամենից պարզապես ծանծրացա, հայրիկ, ուրեմն ինչո՞ւ շարունակեմ ապրել:

Ռեմին պատրաստվում է դուրս գալ: Ջայրացած հրում է ճոճվող ձին, սեղանից վերցնում է ծրարը, պայուսակը, երբ հանկարծ կողքից, որտեղ երեխան է նստած տուփերի առաջ, լսվում է ֆլեյտայի մուշտուկի ձայն: Ռեմին քարանում է: Նա նորից է ականջ դնում, նորից ու նորից լսվում է ձայնը: Ռեմին վազում է աղայի կողմը:

ՌԵՄԻ - Դա որտեղից քեզ, Ծանթ:

ՏՂԱ - Հայրիկի կոշիկների տուփերից գտա, տես, մի փայլուն փայտիկ էլ կա այստեղ:

ՌԵՄԻ - Ինձ տուր, Ծանթ, անհավանական է:

ՏՂԱ - Ոչ, Ռեմի, սա իմ գնացքի շչակն է՝ տու տո՛ւ, տու տո՛ւ, տե՛ս, ինչ նման է, տո՛ւր ինձ, ես եմ գտել:

Ռեմին խլում է երեխայի ձեռքից, իրար է միացնում ֆլեյտայի երկու մասերն ու կարտած շոյում է: Երեխան վախեցած նայում է մորը:

ՌԵՄԻ - Նա չէր նետել, հայրիկդ այն չէր նետել, Ծանթ, ուրեմն այդքան էլ վատը չէր, նա պարզապես իրեն դժբախտ էր զգում ու կիսատ: *(Վազում է, հատակից վերցնում ամուսնու լուսանկարն ու խոսում դրա հետ:)* Ես միշտ ասում էի ինքս ինձ. «Ռեմի, մի խոսիր, Ռեմի, պետք է լռել, հիշիր մայրիկիդ պատգամը, դու պետք է լռես, որ չկորցնես ընտանիքը»: Իսկ դու, սիրելիս, միշտ ասում էիր. «Մի լռիր, Ռեմի, երբ ես զայրացած եմ, քո լռությունն ինձ ավելի է ա-

փերից հանում»: Հետո եկավ ժամանակ, երբ ինքս ինձ ասացի. «Դե խոսիր վերջապես, Ռեմի, նա քեզնից գողացել է քեզ, նա վերածել է քեզ անդեմ խրտվիլակի»: Իսկ դու իրականում ուզում էիր, որ ես չլռեմ, որ գտնեմ ինքս ինձ, այնինչ ինքս էի ինձ դատապարտել, ես լռել էի ուզում: *(Անզոր ընկնում է բազմոցին, երեխան մոտ է վազում, անհամարձակ կանգնում է կողքին:)* Բայց այլևս չեմ լռի, Ծանթ, ես որոշեցի խոսել, էլ չեմ լռելու: Նրանք բոլորը, բոլորն ինձ խաբել են: *(Մեկուսի:)* Նրանք խաբել են քեզ, Ռեմի, լսո՛ւմ ես, լռել պետք չէր:

ՏՂԱ - Սա ի՞նչ է, Ռեմի:

ՌԵՄԻ - Ֆլեյտա, Ծանթ, դա աշխարհի ամենագեղեցիկ գործիքն է, նրա ձայնից անգամ դրախտի դռներն են բացվում:

Կույիսներից լսվում է ֆլեյտայի նվագ, հույսով ու հավատով լի մի երաժշտություն:

ՏՂԱ - Ինչ գեղեցիկ է, Ռեմի, ես ուզում եմ գնալ նրա հետևից, երբեք ոչինչ ավելի գեղեցիկ չեմ լսել:

ՌԵՄԻ - Ծանթ, դու գտար ինձ, դու ինձ կյանք նվիրեցիր, գիտե՛ս:

ՏՂԱ - Այդ է՛ս եմ քեզ ունեցել, թե՛ դու ինձ:

ՌԵՄԻ - *(Ծիծաղելով):* Փոքրիկս, Ծանթ, դու նույնիսկ չգիտես, թե ինչ կարևոր բան ես արել ինձ համար:

ՏՂԱ - Ուրեմն որոշեցիր չզնա՛լ, քեզ դո՛ր է գալիս ինձ հետ լինել: Իսկ տատիկն ու պապի՛կը, դու ասացիր, որ ես տատիկ ու պապիկ ունեմ, նրանք կգա՛ն իմ հետևից:

ՌԵՄԻ - Ոչ, Շանթ, ես որոշեցի ոչ մի տեղ էլ չզնալ, մեր տնից ավելի լավ տեղ չկա, այստեղ միայն աղբն է շատ ու կոշիկների տուփերը: *(Մեխանիկորեն սկսում է հավաքել տուփերը, հետո ձեռքն է ընկնում ծնողների նամակը, պատռում է ու նետում արկղի մեջ:)* Գիտե՞ս, մենք ինչ կանենք, մենք միասին այս տուփերը կայրենք բակում, մի մեծ խարույկ կսարքենք ու կլուսավորենք բակը: Հետո կպտտվենք այդ խարույկի շուրջ՝ գնացք-գնացք կխաղանք, ոնց որ երկու վագոն, իսկ երբ կրակը կբարձրանա, մենք կդառնանք ինքնաթիռներ ու կթռչենք դրա վրայով, հետ ու առաջ, մենք կհատենք բոլոր սահմանները: Կրակի վրա կայրենք բոլոր տխուր հիշողությունները: Մենք մի լավ կզվարձանանք, փոքրիկ:

ՏՂԱ - Իսկ հայրիկի կոշիկները, բա որ նա վերադառնա ու նեղանա մեզանից, որ այրել ենք տուփերը:

ՌԵՄԻ - Կարծում եմ, որ նա չի վերադառնա, մենք դա էլ կհաղթահարենք: Վստահ եմ, նա հիմա շատ ու շատ նոր կոշիկ-

ներ ունի, սրանց կարիքը չունի, թե չէ անպայման կգար սրանց հետևից, չէ՛:

ՏՂԱ - Երևի այո:

ՌԵՄԻ - Դե ի՛նչ, ուրեմն ինձ կօգնեն ազատվել անպետք իրերից:

ՏՂԱ - Պայմանավորվեցինք: Ինչ լավ է քեզ հետ խոսել... մամ:

ՌԵՄԻ - Մենք հիմա շատ կխոսենք, մենք այնքան խոսելու բան ունենք:

ՏՂԱ - Իսկ ինչո՞ւ առաջ չէիր խոսում:

ՌԵՄԻ - Երևի դժբախտ էի, չգիտեմ... Դու ինձ ասացիր մամ:

ՏՂԱ - *(վախեցած գլխի շարժումով լուռ հաստատում է):*

Հուզմունքից այլալված դենքով Ռեմին գիրկն է առնում երեխային ու առաջին անգամ մայրաբար նրան գուրգուրում է, համբույրներով պատում նրան՝ շնջալով. «Շանթ, փոքրիկս, արևա...»:

ՏՂԱ - Իսկ ինձ կսովորեցնեն ֆլեյտա նվագել, մամ:

ՌԵՄԻ - *(ասես շանթահարվում է, արցունքների միջից ծիծաղում է, հետո սկսում է հեկեկալ):* Չգիտեմ, Շանթ, մանկիկս, դեռ ոչինչ չգիտեմ... Մենք դեռ այնքան բան պետք է մտածենք, որոշենք: Մենք դեռ շատ բան պետք է վերագտնենք միասին...



Հրանտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

...Բանաստեղծության մեջ անգամ շարունակ հակված եմ արտացոլելու դրամատիկականն ու սահմանայինը, քանզի ըմբռնելի եղավ նախապես, որ լիարժեք գրականությունը նախևառաջ կայանում է խորքային ու ակներև դրամատիզմով՝ կյանքին գերազանցող, կենսադրամայի ստույգ դրդապատճառները նորովի ցուցանող: Ուստիև պոետական իմ գիրը ստեպստեպ լրանում է դրամատիկական պոեմներով ու չափածո դրամաներով, սակայն հեղինակային անբավարարվածության զգացումը համառորեն չի

լքում: Գուցե այն պատճառով, որ գեղարվեստական խոսքը շատ հաճախ կարիք ունի ցայահանջ երկրեղենության, - նա կյանքի խոսքի հետ լծորդվելու և համադրվելու ուժգին կարոտի մեջ է: Եվ երբ կա կեցության հրամայականը, այո, միառժամանակ, պետք է առջևից ընթանալու իրավունքը վերապահել կենսական խոսքին, իսկ ինքը՝ «մաքուր» գեղարվեստապատումը, նրա զգոն ուղեկցի դերակատարը կարող է լինել: Գրողը պատասխանատու է ժամանակի ինդիքների առջև նույնչափ, որքան յուրաքանչյուր պետական-քաղաքական ու այլ կարգավիճակի ազդեցիկ գործիչ, որքան էլ բացատրվի, թե գրողը չի գտնվում որոշումներ կայացնողների շարքերում: Իրականում ճշմարիտ ու զորեղ գրականության բերած վճիռները, թեև անուղղակի, շատ ավելի ներգործուն են... Եվ ինքնաբերաբար գրվեց այս պիեսը՝ մեծապես շեղվելով գրական իմ գոյադաշտի կանոններից, ուղղակի ներխուժելով ներկայի տիրույթ: Ինչպես յուրաքանչյուր «ինքնագիտակից» պիես, «Գիշերային դեղատունը» նույնպես կամենալու է իր բեմն ու իր թատերախումբը, որպեսզի բարձրաձայնյի կյանքի անունից ու կյանքի համար, և այն հիմնական կերպարների ու դեպքերի լեզվով, որոնք կերտվել են առավելա նախատիպերի ու իրական անցքերի հիման վրա: Մեր ներկայն նոր ու նախընտրելի կերպարներ է առաջադրում, և թատրոնը լավագույն տեղերից մեկն է, ուր նրանք կարող են լիակատար դրսևորվել: Նրանց պարզապես ընտրել ու հարթակ հանել է պետք:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԴԵՂԱՏՈՒՆ

(սոցիալ-քաղաքական դրամա)

Գործող անձինք

ՄԱՐՈՒՇ

ՄԻՀՐԱՆ

ԱՐԵՎԻԿ

ՏԱՐԵՑ ԶՈՒՅԳ՝ ԿԻՆ ԵՎ ՏՂԱՄԱՐԳ

ԹՄՐԱԳԵՂԻ ԳՆՈՐԳ

ԱԿՆՈՑԱՎՈՐ ԿԻՆ

«ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ» ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱԿԻՑ

ԳԻՆՈՎՅԱԾ ՏՂԱՄԱՐԳ

ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԳ

ՎԱՌ-ԿԱՐՄԻՐ ՇՐԹՆԵՐԿՈՎ ԱՂՋԻԿ

ՊԱՐՄԱՆՈՒՀԻ

ԵՐԻՏԱՄԱՐԳ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ

ՄՈՐՈՒՔՈՎ ՏՂԱՄԱՐԳ

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ

ՏՆՕՐԵՆ

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏԻԿԻՆ

ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԳ

ԿԻՔԵՐՄԱՐՏԻԿ ՀԱԿՈՔ

ՀԱՃԱԽՈՐԳՆԵՐ

ԵՐԿՈՒ ՈՍՏԻԿԱՆ

Գործողությունները տեղի են ունենում 21-րդ դարի 10-ական թվականներին, հայկական քաղաքում:

Բեմում ժամանակակից դեղատանը վայել կահավորանք է: Պատերին փակցված գովազդների հարևանությամբ աչքի է զարնում «Առողջ հոգին ու առողջ մարմինը անչափ սիրում են միմյանց» պատառը: Ներկայացման ընթացում երբեմն լսվում է. «Գուք ականջ դրեք ձեր մարմնի ձայներին և նրանք կհուշեն, թե ինչ է կամենում ձեր հոգին և որտեղ են թաքնված կյանքի իրական լույսերը»: Բայց ոչ ոք ասես չի լսում կրկնվող ուղերձը, յուրաքանչյուրը խաղում է իր դերը՝ չարձագանքելով հորդորին:

ՄԱՐՈՒԾ - *(կապույտ խալաթով):*

Չէ, Արևիկ ջան, դու չպետք է գիշերը մնաս դեղատանը, քո փոխարեն ես տնօրենին պատասխան կտամ: Տուն գնա ու մնա երեխայիդ մոտ: Հիվանդ փոքրիկը մոր կարիքն ունի:

ԱՐԵՎԻԿ - *(սպիտակ խալաթով):*

Մայրս երեխայի մոտ է: Նանարիս ջերմությունն արդեն իջել է 38... Վերջին ամսվա մեջ շատ եմ բացակայել, վախենամ՝ տնօրենը չցանկանա ինձ տեսնել դեղատանը: Եվ իրավացի կլինի. ո՞ւմ է պետք հաճախ բացակայող աշխատողը:

ՄԱՐՈՒԾ - Օրենքն ու արդարությունը փոքր երեխայամոր կողմն են: Հետո էլ՝ մորդ վրա պետք չէ հույս դնել, տարեց կին է, հիվանդ, ինքը խնամքի ու հոգատարության կարիք ունի: Եվ ամենակարևորը, Արև ջան, մենք ամեն ինչ անում ենք հանուն երեխաների... Աստված չանի, եթե երեխայիդ ջերմությունը նորից կտրուկ բարձրանա ու կողքին չլինես, հետո քեզ շատ մեղավոր կզգաս, իսկ նա մեծանալով՝ քեզ մեկ-մեկ կհիշեցնի, որ կողքին չէիր, երբ հիվանդ ջերմում էր:

ԱՐԵՎԻԿ - Նա դեռ չորս տարեկան չկա, կհիշի՞ որ...

ՄԱՐՈՒԾ - Չկասկածես: Ցավի հիշողությունը շատ ուժեղ է, հատկապես երեխաների մոտ:

Ներս է մտնում տարեց գույզը՝ իրար ձեռք բռնած ու ժպտերես: Մի պահ շրջապատը գննելուց հետո նրանք, միաժամանակ, համերաշխ ասում են:

ՏԱՐԵՑ ՉՈՒՅԳ - Ձեզ բարի երեկո:

ՄԱՐՈՒԾ, ԱՐԵՎԻԿ - Բարի երեկո:

ԱՐԵՎԻԿ - *(Մարուշին):* Մեր ամենահետաքրքիր ու հաճելի այցելություններից են: Հիմա փորձիր նրանց սպասարկել, համարիր, որ ես էստեղ չեմ:

ՄԱՐՈՒԾ - Լավ:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ամուսնուս հիշողության դեղը կտա՞ք... Ճիշտ է՝ էնքան էլ չի օգնում, բայց մենք դեռ փորձում ենք:

ՄԱՐՈՒԾ - Հիշողության դեղ... Ունե՞ք դեղատոմս:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Օ՛, ոչ: Ձեր դեղատանը գիտեն, թե մեզ ինչ է պետք, մենք վաղուց բժշկի մոտ չենք գնում... դեղատոմսի համար:

ՄԱՐՈՒԾ - *(Արևիկին):* Հիմա ի՞նչ պետք է անեմ...

ԱՐԵՎԻԿ - Լավ, ես կշարունակեմ: Վարդիթեր մայրիկ, հիմա... *(Դեղատուփից հաբեր է լցնում թղթե տոպրակի մեջ ու տալիս տարեց կնոջը:)* Ահա ձեր ամուսնու դեղը:

ՏԱՐԵՑ ԿԻՆ - Ծնորհակալ եմ, աղջիկս: Ամուսինս ասում է, որ մենք ամուսնացած ենք արդեն 40 տարի և մեր հարսանիքի քավորը եղել է Անդր վարժապետը: Ճիշտ չէ, մեր ամուսնությունն ընդամենը 15 տարեկան է:

Մենք ջահել զույգ ենք, իսկ մեր հարսանիքի քավորը... անունը չեմ հիշում, բայց վարժապետ Անդոն չէր: Դե լավ, ձեզ բարի գիշեր:

Տարեց զույգը դանդաղ հեռանում է: Չհասած մուտքին՝ վերադառնում են վաճառասեղանի մոտ:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Ներեցեք, քիչ մնաց մոռանայի... Կնոջս դեղը կտամք:

ԱՐԵՎԻԿ - Իհարկե, Հարութ հայրիկ, հիմա: *(Նույն դեղահարերից լցնում է նոր տոպրակի մեջ, տալիս տարեց տղամարդուն:)* Սա էլ՝ ձեր կնոջ դեղը:

ՏԱՐԵՑ ՏՂԱՄԱՐԴ - Ապրես, աղջիկս: Սա կօգնի, չէ՞, կնոջս՝ վերականգնել հիշողությունը... Նա ասում է, թե մեր հարսանիքին իմ նվիրած հարսնազգեստը մոխրագույն էր: Չէ, ինչ մոխրագույն... ձերմակ, գեղեցիկ, երկարափեշ զգեստ էր, գնել եմ քաղաքի կենտրոնական հանրախանութից: Դե լավ, մենք գնանք, դեռ պետք է մի քանի բարեկամների այցելենք:

ԱՐԵՎԻԿ - Բարի գիշեր և հաջողություն ձեզ: Ձեր հիշողությունը... *(Ընդհատում է խոսքը, Մարուշին:)* Ես որ նրանց հիմա դժբախտ չեմ համարի:

Տարեց զույգը գնում է:

ՄԱՐՈՒԾ - Ովքեր են, մեր քաղաքից են...

ԱՐԵՎԻԿ - Մեր քաղաքից են, արդեն 10 տարի ծերանոցում են ապրում, մեկ տարի առաջ էստեղ էլ ամուսնացան:

ՄԱՐՈՒԾ - Իսկ ո՞ր են նրանց նախկին ընտանիքները: Երեխաներ ունեն:

ԱՐԵՎԻԿ - Կինը վաղուց միայնակ է, առաջին ամուսնությունից, ասում են, տղա երեխա է ունցել, որը մահացել է 4 տարեկանում: Հետո չի ծննդաբերել, ամուսինը նրան թողել է: Իսկ տղամարդը երեք երեխա ունի՝ երկու որդի և աղջիկ: Կինը մահացել է 15 տարի առաջ: Հարութ հայրիկը մենակ է մնացել, չգիտեմ՝ զավակները չեն տիրություն անում, թե՛ հայրը չի ցանկանում նրանց խնամքին մնալ:

ՄԱՐՈՒԾ - Ոչ մի ծնող չէր ցանկանա զավակներից առանձին ապրել: Երևի նրանց վերաբերմունքը Հարութ հայրիկին չի գոհացրել, նա գերադասել է ծերանոցը: Տխուր է: Ո՞նց կարող է ընտանիքից դուրս մղվել ծնողին հարգելն ու սիրելը: Ախր, մեր զորությունը ավանդական, կայուն ընտանեկան-հարազատական կապերից է գալիս: Երբ քայքայվում են ընտանիքները, քայքայվում են ազգերն ու երկրները: Ես չե՛ իմաստուն մարդիկ են դա ասել:

ԱՐԵՎԻԿ - Ինչ ասեմ, նոր ժամանակներ, նոր բարքեր...

ՄԱՐՈՒԾ - Էդ նոր գեշ բարքերը

մենք ստեղծում՝ ժամանակների վրա ենք բարդում: Ժամանակը մենք ենք: (Դադար:) Ինչ դեղ տվեցիր նրանց:

ԱՐԵՎԻԿ - Սովորական վիտամիններ: Դրանք անվճար տալիս ենք նման դեպքերում:

ՄԱՐՈՒԾ - Տնօրենը գիտի:

ԱՐԵՎԻԿ - Հա, հազիվ համոզեցինք, որ էդպիսի իրավիճակներում դա լավ ելք է: Ինչ վճար վերցնես էդ... մոլորվածներից:

ՄԱՐՈՒԾ - Հետաքրքիր է, որ նրանք գիշերն են գալիս դեղերի համար: Հասկանում եմ՝ անքնություն ունեն, հիշողության խափանումներ և...

ԱՐԵՎԻԿ - ...Եվ մոտեցող մահվան շունչը: Եթե այսօր նորից հայտնվեն, չզարմանաս: Ուրիշ տեղ չունեն գնալու, ծերանոցն է ու մեր դեղատունը:

ՄԱՐՈՒԾ - Լավ, դու գնա, ուշանում ես, վազիր երեխայի մոտ: Ո՞նց ես տուն հասնելու, տաքսի կանչեմ...

ԱՐԵՎԻԿ - Ծնորհակալ եմ, պետք չէ, ոտքով տասը բոպեից տուն կհասնեմ: (Խալաթը հանում, հագնում է բաժկոնը: Հայելու առջև հարդարվում է՝ մազերն արձակելով:) Աղջիկս սիրում է, երբ մազերս արձակում եմ... Դե, ես գնամ, բարի գիշեր: (Մոտենում է դռանը:)

ՄԱՐՈՒԾ - Բարի գիշեր, Արև ջան, աղջկադ իմ կողմից պաշիկ ա-

րա և մադթիր արագ ապաքինում:

ԱՐԵՎԻԿ - Անպայման: (Մոտենալով Մարուշին:) Մարուշ մորքուր, գուցե զանգենք Ծուշիկին, որ քեզ ընկերակցի: Նրան չես հավանում, գիտեմ, բայց կգա ու կողքիդ կմնա գիշերը, չի մերժի, անհոգի աղջիկ չէ:

ՄԱՐՈՒԾ - Գուցե կգա... չեմ ուզում, նա, ո՞նց ասեմ, շատ է մատչելի, բոլորի հետ կարող է գործարքի մեջ մտնել: Ինչպես ասում են՝ ես նրա հետ մարտի չեմ գնա: Գիշերը՝ հատկապես: Հետո էլ՝ Ծուշիկին ինչո՞ւ անհանգստացնենք: Մենակ կհերթապահեմ, սրանից շատ ավելի ծանր գիշերներ եմ հերթապահել:

ԱՐԵՎԻԿ - Մենք դժվար հաճախորդներ ունենք, նրանք ոնց որ թե շատանում են գիշերը: Մեծ մասին դեռ չգիտեք:

ՄԱՐՈՒԾ - Անհոգ մնա, դիրքս լավ կպահեմ: Դե, վազիր, քիթդ էլ մի կախիր, Սարող անպայման կվերադառնա: Հետո ի՞նչ, որ վեց ամիս չի զանգել: Երևի գործերն էնքան էլ լավ չեն, քաշվում է... Կկարգավորի ու կգա: Զեզ նման արևից միայն հիմարը կիրաժարվի: Ոչ մեկը քեզ փոխարինել չի կարող:

ԱՐԵՎԻԿ - (թույլ ժպտում է): Զգիտեմ... Բարի գիշեր, Մարուշ մորքուր, հանգիստ հերթապահություն քեզ:

ՄԱՐՈՒԾ - Բարի գիշեր:

Արևիկը գնում է: Մարուշը կարգավորում է դեղատարակները՝ կամացույց երգելով՝ «Իմ փոքրիկ քաղաքում իմ մեծ սերն է ապրում...»: Ներս է մտնում թմրադեղի գնորդը:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Բարի երեկո... բոլորիդ, ձեր ցավը տանեմ...

ՄԱՐՈՒԾ - (ընդգծված զուսպ): Բարի երեկո:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Դուք ո՞վ կլինեք, քուրո ջան... Նոր աշխատող եք:

ՄԱՐՈՒԾ - Այո, ի՞նչ եք կամենում:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Իսկ կասե՞ք ձեր չքնաղ անունը:

ՄԱՐՈՒԾ - (չոր): Մարուշ:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Հոյականալ, հոյականալ... Դուք ծիշտ նկատեցիք, Մարուշ քույրիկ, ես կամենում եմ...

ՄԱՐՈՒԾ - Ի՞նչ:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - (ինչ-որ բան է շշնջում Մարուշին): Ընդամենը 10 սրվակ... մի շաբաթվա պաշարս...

ՄԱՐՈՒԾ - Դեղատոմս ունե՞ք:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Հիանալի հարց՝ դեղատոմս... Լիովին անկեղծ կլինեմ՝ ես ան-դե-ղատոմս եմ: Էդպիսին է իմ ներկա կարգավիճակը:

ՄԱՐՈՒԾ - Առանց դեղատոմսի, էն էլ կնքված, ԼՍԴ վաճառելը կտրականապես արգելվում է:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Կտրակա-

նապեն... Ճիշտն ասած՝ անդուր բառ է, մի տեսակ կացնային՝ կտրականապես...

ՄԱՐՈՒԾ - Կացնային չէ, օրինական է: Կբերեք դեղատոմսը՝ կստանաք թմրադեղը:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Ո՛նց չեմ սիրում, երբ «դեղատոմս» ու «գնել» բառերը հայտնվում են իրար կողք:

ՄԱՐՈՒԾ - Ինչ է, անվճար եք ստանում էդ դեղը:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Չէ, ի՞նչ անվճար, հաճախ նույնիսկ ավելին եմ տալիս... երբ փող է լինում մոտս: Տեսնեիր, թե Ծուշիկի աչքերը ո՞նց են կայծկտում նման պահերին... Հըմ, ասում եք՝ Ծուշիկը էսօր չի գա...

ՄԱՐՈՒԾ - Ծուշիկն աշխատանքի կլինի առավոտյան 9-ից:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Ծատ ուշ է, քուրո ջան, շատ ուշ... (Գլուխը կախ՝ մտածկոտ ու նյարդային ետ ու առաջ է քայլում: Կտրուկ կանգնում, աղերսանքով դիմում է Մարուշին:) Գոնե մի սրվակ... դրա փողն ունեմ: Կրկնակին, եռակին կտամ...

ՄԱՐՈՒԾ - Ոչ, ես նման անօրենություն չեմ անի: Գումարած, որ հիմա թմրադեղ տալով՝ կնպաստեմ ձեր հիվանդության խորացմանը: Նման սխալ թույլ չեմ տա, դա իմ սեփական կանոնագրքի մեջ չի մտնում:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Կանոնագիրք, ասել է թե՛ սկզբունք-

ներ... Իսկ ո՞ր սկզբունքով եք թույլ տալիս, որ ես տանջահար լինեմ մինչև առավոտյան 9-ը:

ՄԱՐՈՒԾ - Դեռ հարց է՝ էդ ժամին կատանա՞ք ձեր ուզածը, թե՞ ոչ:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳԼՈՐԴ - Ո՞նց թե, Շուշիկը ինձ կփրկի:

ՄԱՐՈՒԾ - Չի փրկի, դա իսկի էլ փրկություն չէ: Պետք է բուժվել, որ էսպիսի տհաժ իրավիճակում չհայտնվեք: Պետք է վերականգնեք ձեր խաթարված առողջությունը:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳԼՈՐԴ - Պետք է, պետք է... Ինձ պետք է էդ դեղի ընդամենը մեկ սրվակ, հիմա, միայն մեկ սրվակ: Ինչո՞ւ անգութ եք իմ նկատմամբ, ես ձեզ վատություն չեմ արել:

ՄԱՐՈՒԾ - Հիմա որ՝ անում եք: Գթության մասին էլ սխալ պատկերացում ունեք. եթե իմանայիք, թե ինչ է իսկական գթությունը... այն, որ հիմա ուզում եմ կիրառել ձեր հանդեպ...

ԹՄՐԱԴԵՂԻ ԳԼՈՐԴ - Լավ, քեզ հասկացա, դեռ էդքան չեմ բթացել, քուրո ջան: Կարո՞ղ եմ մի քանի րոպե նստել էստեղ, շունչ առնել ու նոր գնալ:

ՄԱՐՈՒԾ - Կարող եք: Հանգստացեք, վերադարձեք տուն, իսկ առավոտյան՝ ուղիղ դիսպանսեր: Սա է իմ պայմանը:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳԼՈՐԴ - Տո՛ւն, դիսպանսեր... Ծանրագույն բառեր:

Մարուշը վերսկսում է կիսատ թողած գործը: Թմրադեղի գնորդը անսպասելի ցատկում, անցնում է վաճառատեղանից այն կողմ, ճանկում մի դեղատուփ ու նետվում է դեպի դուռը: Բայց բախվում է ներս մտնող Միհրանին ու տապալվում գետնին: Մարուշը ապշած ու քարացած՝ հետևում է կատարվածին:

ՄԻՀՐԱՆ - Էս ո՞վ է... Էս ո՞ր է փոթորկի բերանն ընկած տակառի պես զլորվում: Վեր կաց, ընկեր, տեսնենք՝ ինչ եղավ քեզ: Կարո՞ղ ես ոտքի կանգնել:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳԼՈՐԴ - Հա... Դու էլ իմ բախտից տնկվեցիր դեմս... ախպերս: *(Վեր է կենում, մոայլ նայում Մարուշին, Միհրանին:)* Ձեր թույլտվությամբ ես գնամ, հա՛:

ՄԱՐՈՒԾ - *(սթափվելով):* Ոչ, վերադարձրեք դեղատուփը: Միհրան, օգիր, որ հետ գա:

ՄԻՀՐԱՆ - Մարո՞շ... հիմա էստե՞ղ ես աշխատում:

ՄԱՐՈՒԾ - Հա, Միհրան... հետ բեր էդ ձողոպրողին, խնդրում եմ:

ՄԻՀՐԱՆ - Ընկեր, առաջ: *(Փորձում է ձախորդին առաջ հրել, նա չլսելու է տալիս, ապա փորձում է պրկվել, ապարդյուն:)* Չէ, ընկեր, չես փախչի: Եթե Մարուշն ասել է, ուրեմն դեռ պետք ես էստեղ: Հիմա խելոք մոտեցիր վաճառատեղանին: Զգուշացնում եմ՝ փախուստի նոր փորձ չանես, թե չէ արդեն ստիպված

կլինեմ դիմել կարատեի կամ ուզուի... Ես դեռ լավ մարզավիճակում եմ:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Լավ, ախպերս, հասկացա, ձեռքերս էդքան ուժեղ մի ոլորի: *(Մարուշին է վերադարձնում դեղատուփը:)*

ՄԱՐՈՒԾ - Հիմա ո՞նց վարվենք ձեզ հետ... Լախ, ուզում էիք դեղատնային կարգը խախտել, ապա՝ ինձ կաշառել, իսկ վերջում գողության փորձ կատարեցիք:

ՄԻՀՐԱՆ - Ա՛, ունիվերսալ տղա է երևում, բազմաշնորհ...

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Խնդրում եմ, քուրո ջան, ինձ ուստիկանություն չհանձնեք:

ՄԱՐՈՒԾ - Չէ, ուստիկանության ժամանակը չէ, ձեզնով շտապ պետք է գբաղվի այլ ծառայություն: Միհրան, մի բռնեք:

Մարուշն ու Միհրանը առանձնաձևում, կամաց խորհրդակցում են՝ հետևելով քմրադեղի գնորդին: Մարուշը վերադառնում է իր տեղը, Միհրանը զանգում է բջջային:

ՄԻՀՐԱՆ - Այո, այո, տիկին Մարուշի հանձնարարությամբ... Լա այստեղ է: Ծատ լավ, սպասում ենք: *(Մարուշին.)* Զեզ իսկույն ծանաչեցին, ասացին՝ մեր հերոս բուժքույրն է, նրա խոսքը մերժել չենք կարող:

ՄԱՐՈՒԾ - Դե ի՞նչ հերոս, հերիք է, մարդիկ կորցրել են չափի զգացումը:

ՄԻՀՐԱՆ - Ճիշտն ասած, ես 03-ի էդ կնոջ հետ լրիվ համաձայն եմ. հերոս չես՝ ի՞նչ ես: Պատերազմի ժամանակ ծառայել ես բուժական գումարտակում, կորցրել ես ամուսնուդ՝ քաջ ու լուսահոգի Միերին, երկար տարիներ բուժքույրություն ես արել բանակի հոսպիտալներում, միայնակ մեծացրել ես... Մարուշ ջան, քանի՞ երեխա ունես, մոռացել եմ, կներես...

ՄԱՐՈՒԾ - Երեք:

ՄԻՀՐԱՆ - Միայնակ մեծացրել ես երեք երեխա:

ՄԱՐՈՒԾ - Չէ, էնքան էլ մենակ չեմ մեծացրել, օգնել են իմ ու Միերի ծնողները, օգնել են ընկերներ ու բարեկամներ, պետությունը, բարերարներ ու կազմակերպություններ, բոլորին երախտապարտ եմ: Բայց ընտանիքի հոր բացակայությունը զգացել ենք, էդ բաց տարածությունը ոչնչով չես լցնի... Թող ոչ մի կին չպարծենա, թե միայնակ կարող է երեխաներ մեծացնել ու դաստիարակել... համեստ աշխատավարձով ու նպաստով, էսպիսի դժվար պայմաններում...

Թմրադեղի գնորդը կրկին փորձում է փախուստի դիմել, սակայն Միհրանը վրա է հասնում և ճարպիկ հնարքով գետնում նրան:

ՄԻՀՐԱՆ - Ախր, ո՞ր ես ծողոպրում, այ ծակվող:

ՄԱՐՈՒԾ - Միհրան, մի վիրավորիր:

ՄԻՀՐԱՆ - Ասացին, չէ՞, հանգիստ տեղդ մնա:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Էս անգամ ուրիշ նպատակով եմ ուզում փախչել:

ՄԻՀՐԱՆ - Ինչ նպատակով...

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Ես ծանաչեցի նրան: (*Ցույց է տալիս Մարուշին:*) Պատերազմի օրերի հայտնի բուժքույրն է, ինձ էլ է վիրակապել ու խնամել դաշտային հոսպիտալում: Չեմ ուզում, որ ինձ ծանաչի...

ՄԻՀՐԱՆ - Մարո՛ւշ, քո նախկին վիրավորներից է...

Մարուշը մտտեմում է թմրադեղի գնորդին, ակնդետ նայում է նրան:

ՄԱՐՈՒԾ - Գարիկ... էս ինչ օրն ես ընկել: Վեր կաց:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - (*ոտքի է կանգնում, մեկուսի*): Ծանաչեց... էս ճնց խայտառակվեցի...

ՄԱՐՈՒԾ - Ականջատակիդ սպին մնացել է: Ծատ լուրջ էիր վիրավորված, բայց չէիր կորցնում քեզ, հաճոյախոսություններ էիր անում...

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Երանի չէր էն օրերին...

ՄԱՐՈՒԾ - Երանի՞... Էդ ինչ երանիի մասին ես խոսում: Մի մոլորեցրու քեզ ու ուրիշներին, մեր տղերքն ու հարազատներն էին զոհվում, մեր արյունն էր հոսում,

մեր բնակավայրերն էին ավերվում, մեր ազատությունն էր բռնադատվում... վերջապես՝ մեզ ուզում էին բնաջնջել: Էդ ամենի մեջ երանություն կա՞:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Բայց միասնական էինք ու հավատով, իրար հավասար էինք բոլորս, նույն նպատակին մղված...

ՄԱՐՈՒԾ - Ազատամարտի ժամանակ մենք էլ տականքներ ունեինք, դասալիքներ, վախկոտներ ու մորթապաշտներ, որ դուրս չէին գալիս նկուղներից կամ փախել էին երկրից: Փառք Աստծո, նրանք փոքրաթիվ էին, մեծամասնությունը կողք-կողքի մարտնչում էր: Բայց երանի մի տուր, մենք ոչնչացման ու հայրենագրկման վտանգի առաջ էինք կանգնած:

Ներսեմ մտնում «Շտապ օգնության» երեք աշխատակից:

ԲԺԻՇԿ - Ո՛վ է մեր հիվանդը:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Ես եմ: Բուժքույր Մարուշ, հիմա գնամ նրանց հետ, թե՛...

ՄԱՐՈՒԾ - Գնա, Գարիկ, քեզ շտապ բուժվել է պետք: Ամեն ինչ լավ կլինի, կգանք քեզ տեսության... չէ՞, Միհրան...

ՄԻՀՐԱՆ - Իհարկե, ժենգյալով հաց կբերենք:

ԹՄՐԱԴԵՂԻ ԳՆՈՐԴ - Դե լավ... Դու նույն ընտիր բուժքույրն ես: Գնացի...

Թմրադեղի գնորդը «Շտապ օգ-

նության» աշխատակիցների ուղեկցությամբ դուրս է գնում:

ՄԱՐԿԱԿԱՆ - Համոզված եմ՝ նա կբուժվի: Դիսպանսերից չի փախչի: *(Դադար:)* Իսկ դու ինչնու ես դեղատուն եկել, առողջական խնդիրներ ունեն:

ՄԻՀՐԱՆ - Ո՞նց ասեմ... գիշերներս ցերեկներից առանձնապես չեն տարբերվում: Արդեն տարուց ավելի է՝ ստեղծագործելու ցանկությունը կորել է: Նոր զբաղմունքի եմ անցել:

ՄԱՐԿԱԿԱՆ - Ի՞նչ զբաղմունք...

ՄԻՀՐԱՆ - Երեկոյան ժամերին մեքենայովս դուրս եմ գալիս տաքսի ծառայության:

ՄԱՐԿԱԿԱՆ - Ահա թե ինչ, գիշերները, ուրեմն, տաքսիստ, ցերեկը՝ նկարիչ:

ՄԻՀՐԱՆ - Ավելի ճիշտ՝ ցերեկը պարապ-սարապ, երեկոյան՝ տաքսիստ:

ՄԱՐԿԱԿԱՆ - Լավ չէ՞՝ էդ պարապ-սարապության փոխարեն ցերեկներն էլ տաքսիստություն անես, մինչև ձգնաժամդ անցնի:

ՄԻՀՐԱՆ - Ցերեկները մի տեսակ ամաչում եմ:

ՄԱՐԿԱԿԱՆ - Հասկանում եմ: Իսկ դասաժամերդ... Վերջին անգամ, երբ հանդիպեցինք, ասացիր, որ դասավանդում ես:

ՄԻՀՐԱՆ - Դա երեք տարի առաջ էր: Թողեցի, դուրս եկա: Գեղանկարչության բաժնի վարիչի հետ անհնար էր աշխատել,

տգետի ու կաշառակերի մեկն էր: Ես պնդում էի, որ ավելի լավ է 3-4 շնորհալի ուսանող ունենալ ու կենտրոնանալ նրանց զարգացման վրա, քան ընդունել 2 տասնյակ ապաշնորհ երեսեքի ու ժամանակ ու միջոցներ վատնել նրանց վրա: Գիտես՝ ինչ էր պատասխանում էդ ողորմելին. «Դու ժամանակակից մտածելակերպ չունես: Եթե քեզ չի բավարարում, հեռացիր»: Հեռացա:

ՄԱՐԿԱԿԱՆ - Երևում է՝ դեռ շատ ես զայրացած նրա վրա:

ՄԻՀՐԱՆ - Ո՞նց չզայրանամ, 10 տարուց ավելի է՝ էդ ստահակը վարիչություն է անում, բայց ոչ մի լավ ու հեռանկարային գեղանկարիչ, հատուկենտ շնորհալի ուսանողներն էլ կորչում են նրա ցածրակարգ վարժապետության մամլիչի տակ:

ՄԱՐԿԱԿԱՆ - Չգիտեմ, ես ձեր ասարերեզում լավ չեմ կողմնորոշվում, բայց քո պրոֆեսիոնալիզմին չեմ կասկածում:

ՄԻՀՐԱՆ - Ծատերը հաճույքով էդ պրոֆեսիոնալիզմն էլ ոտի տակ կտան:

ՄԱՐԿԱԿԱՆ - Էդքան հոռետես մի եղիր... ավելի հասկանալի հարցերից խոսենք: Եզրակացնում եմ, որ նկարներիդ վաճառքը նվազել է, և ընտանիքդ փորձում ես կերակրել տաքսիով, հա՞:

ՄԻՀՐԱՆ - Հիմա մենակ եմ ապրում, Մարուշ:

ՄԱՐՈՒԾ - Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել:

ՄԻՇՐԱՆ - Բաժանվեցինք: Կինս աղջկաս վերցրեց ու՝ թըրո՛ւ, Ամերիկա...

ՄԱՐՈՒԾ - Ցավում եմ... Իսկ տղամո:

ՄԻՇՐԱՆ - Բեռլինում է, կոնսերվատորիայում ստաժիրովկա է անցնում: Ասում է՝ կվերադառնամ ու կդառնամ Հայոց երկրի թիվ մեկ դիրիժորը:

ՄԱՐՈՒԾ - Ողջունելի երազանք...

Բայց անկեղծորեն ասա, Միհրան, հավատո՞ւմ ես, որ տղադ կվերադառնա:

ՄԻՇՐԱՆ - *(մի պահ մտածելով):*

Տղայիս որ հավատում եմ:

Շտապով ներս է մտնում ակնոցավոր, միջահասակ կինը և Մարուշին է մեկնում դեղատոմսը:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ԿԻՆ - Ունե՞ք էդ դեղից...

ՄԱՐՈՒԾ - Ունենք:

Ակնոցավոր կինը նայում է Միհրանին, ապա շշուկով խոսում է Մարուշի հետ: Վերջինս գլխով համաձայնության նշան է անում, վերցնում դեղատուփերից մեկը և տալիս է ակնոցավոր կնոջը: Նա արագ ուղղվում է դեպի դուռը, բայց վերադառնում է:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ԿԻՆ - *(Մարուշին՝ կամաց):* Գրեք իմ հեռախոսահամարն ու հասցեն, որ կակածներ չլինեն: Դուք նոր աշխատող եք:

ՄԱՐՈՒԾ - Պետք չէ, ես ձեզ վստահում եմ:

ԱԿՆՈՑԱՎՈՐ ԿԻՆ - Ծնորհակալ եմ: *(Գնում է:)*

ՄԻՇՐԱՆ - Արտակարգ դեպք է...

ՄԱՐՈՒԾ - Ոչ, շատ սովորական դեպք է: Կինը փող չունի, իսկ ամուսնուն շտապ դեղ է պետք, ասթմատիկ է: Պարտքով տվեցի դեղը, ասաց՝ փողը կտա մի շաբաթից, երբ ամուսնու թոշակը կտան: Դե գիտես, մարդիկ հաց ու մթերք են վերցնում պարտքով:

ՄԻՇՐԱՆ - Գիտեմ, իհարկե... ուրեմն ձեր դեղատունն է՛լ ունի «նիսյայի» տետր:

ՄԱՐՈՒԾ - Պարտքերի տները... Չգիտեմ՝ մեր աշխատակիցները պահում են նման տետր, ես որ չեմ պահում, մի տեսակ վիրավորական է... Մի շաբաթ է՝ էստեղ եմ, արդեն չորս հոգու պարտքով դեղ եմ տվել: Հերթապահության վերջում լրացնում եմ դրամարկը, որ պակաս գումար չգրանցվի: Ժամանակին, պատահել է, ես էլ եմ «նիսյա գրվել»:

Դադար:

ՄԻՇՐԱՆ - Հաշիվը պետք է պահել գրավոր, բա որ մոռացա՞ր:

ՄԱՐՈՒԾ - Նրանք հո պարտավոր են հիշել:

ՄԻՇՐԱՆ - Դե, մարդ են, կարող է և մոռանան, անգամ դիտավորյալ, հատկապես՝ կարիքի դրդմամբ:

ՄԱՐՈՒԾ - Լավ մարդը լավ է մնում

նաև թշվառության օրոք, իսկ այլանդակը նույնն է և անապահովության, և գերժոխության մեջ:

ՄԻՇՐԱՆ - Ճշմարիտ ես: Ոմանք ուղղակի մակերեսային տպավորությամբ ասում են, թե կարիքավորները չարացած ու անհուսալի մարդիկ են, իսկ ունևորները կիրթ ու բարեհոգի են: Ես տեսել եմ նրանց չարացածությունն ու գծուծությունը: *(Դադար:)* Մարուշ, չասիր, թե ինչու ես էստեղ, ինչո՞ւ ես լքել հոսպիտալը:

ՄԱՐՈՒԾ - Չեմ լքել... կուզենայի շարունակել ծառայությունս: Բայց հիսունս լրացավ ու ինձ զորացրեցին: Հիմա թոշակառու եմ, իսկ աշխատել պետք է:

ՄԻՇՐԱՆ - Այ քեզ բան... չէի ասի... Ուրեմն՝ արդեն հիսունն անց ես, իսկ տեսքից... ըմմ... հազիվ 40 ես երևում:

ՄԱՐՈՒԾ - Դե լավ, կատակներդ քեզ պահիր: Սովորական ընթացքով ծերանում եմ:

ՄԻՇՐԱՆ - Չէ, չէ, անկեղծորեն եմ ասում, դժվար կյանքն ասես վախեցել է մոտենալ քեզ ու աղավաղել դեմքդ ու մարմինդ: Դեռ հմայիչ ես, ցանկալի, կարող ես նորահարսի տեղ անցնել:

ՄԱՐՈՒԾ - *(դառը ժպտում է):* Երգիր, երգիր ու հաճոյախոսիր, քեզ թույլ եմ տալիս, արվեստագետ ես: Բայց հուսամ՝ գիտես չափը...

Ներս է մտնում գինովցած տղամարդը՝ երգելով՝ «Գիշերները, յարո ջան, թովռամ քո դոշին...»:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ - Բարև գիշերային հրեշտակներին: *(Ձարմացած նայելով Մարուշին):* Իսկ Ծուշիկը չկամ:

ՄԱՐՈՒԾ - Ոչ, էսօր ես եմ հերթապահում:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ - Մենամկ... Արևիկն էլ չկամ... մյուս հրեշտակը:

ՄԱՐՈՒԾ - Ոչ:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ - *(շողոմ ժպտալով Մարուշին):* Բայց դու էլ պակաս հրեշտակը չես: Լավ, քեզ հետ մի ուրիշ անգամ կուրախանանք... Կտամք էն բանից, մի 10 հաբ... Էս գիշեր դեռ երկուսի հետ զվարճանալու եմ: Գիշերները, յարո ջան, թովռամ է քո դոշին... *(Ձեռքը պարզում է Մարուշին շոյելու համար:)*

ՄԱՐՈՒԾ - *(ընկրկելով):* Ձեռքերդ հեռու, քեզ կարգին պահիր... զգուշացնում եմ...

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ - Թե չէ՝ ի՞նչ, վագրիկս... Նազ եք անում ձեզ ու ձեզ, իսկ հետո սողուկում եք տակս, հենց որ ցույց եմ տալիս, թե շռայլության ի՞նչ պաշար ունեմ: *(Ցույց է տալիս պիջակի ծոցագրպանը, որտեղ փողի տրցակ կա:)*

ՄԱՐՈՒԾ - Տականք... *(Դեղը պարզում է գինովցած տղամարդուն:)*

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ - Պապա-

յին մի նեղացրու, քեզ էնպիսի լավ բաներ կանեմ... (Ձեռքը մեկնում է դեպի Մարուշի կուրծքը: Մարուշը վաճառասեղանի տակից հանում է փայտե մուրձը, խփում նրա գլխին, նա ընկնում է հատակին:)

ՄԻՀՐԱՆ - Ինչ հոյակապ հարված... Դա էլ քո ինքնապաշտպանական զենքն է:

ՄԱՐՈՒԾ - Հա, սա լավ է աշխատում: Մահացու չէ ու դաստիարակիչ ուժ ունի:

ՄԻՀՐԱՆ - Եվ շատերին ես մինչև հիմա մրձահարել:

ՄԱՐՈՒԾ - Դե... մի տասնհինգը կլինեն...

ՄԻՀՐԱՆ - (ցույց տալով գինովցած տղամարդուն): Էսպիսիք էին...

ՄԱՐՈՒԾ - Ոչ միայն... Նրանց մեջ կային հրամանատարներ, նախարարներ, բիզնեսմեններ, դասախոսներ, անհուսալի սիրահարվածներ, պատահական կնամուղներ...

ՄԻՀՐԱՆ - Տպավորիչ ցանկ է: Իսկ դու մրձահարում ես միայն վավաշոտներին:

ՄԱՐՈՒԾ - Պատահել է, խփել եմ նաև նրանց, ովքեր անարդար են վարվել մարդկանց նկատմամբ, ասենք՝ չեն կատարել իրենց պաշտոնական պարտականությունները մեր քաղաքացիներին վերաբերող կենսական հարցերում, խաբել ու մոլորեցրել են նրանց:

ՄԻՀՐԱՆ - Հա, նման խաբեբանե-

րը շատ են, բոլորին քո մուրձը չի հերիքի: (Դադար: Ցույց տալով ընկածին:) Հիմա սրան ինչ ենք անելու, երբ ուշքի կգա...

ՄԱՐՈՒԾ - Երեք-չորս րոպեից ուշքի կգա, արդեն՝ մի փոքր խելոքացած: (Բաժակով ջուր է տալիս Միհրանին): Ծփիր երեսին, խնդրում եմ:

Միհրանը ջուրը շփում է գինովցած տղամարդու դեմքին:

ՄԻՀՐԱՆ - Մարուշ ջան, տեսնում եմ՝ վտանգավոր տեղամասում ես աշխատում, կմնամ էստեղ մինչև հերթապահությանդ ավարտը, քեզ մենակ պետք չէ թողնել:

ՄԱՐՈՒԾ - Չէ, Միհրան, գնա տուն, հանգստացիր, կեսգիշերն անց է... Ինձ հետ ոչինչ չի պատահի, մենակ գլուխ կհանեմ: Գնա տուն, շոյված եմ քո ուշադրությունից: (Երկիմաստ ժպտալով:) Իսկ քոնը ինչ կարգի ուշադրություն է, չլինի՞ դու էլ նկրտումներ ունես իմ հանդեպ, պարզապես ամեն ինչ արվեստով ու կիրթ ես անում, հը...

ՄԻՀՐԱՆ - Աստված սիրես, Մարուշ, ինչ նկրտումներ... Դե գիտես, գեղեցկության ու կանանց հանդեպ անտարբեր չեմ, արվեստագետի խառնվածք է, բայց քո պարագան լրիվ ուրիշ է: Քո հանդեպ ես ունեմ... բացառիկ ակնածանք:

ՄԱՐՈՒԾ - Ահա թե ինչ...

ՄԻՇՐԱՆ - Կարելի է ասել, որ մենք զինակիցներ ենք, միասին ծառայել ենք, չէ՞: Ես չեմ կարող քո նկատմամբ ետին մտքեր ունենալ:

ՄԱՐՈՒԾ - Ծնորհակալ եմ: Բայց լավ ասիր՝ զինակիցներ... ընդամենը երկու ամիս հասցրիր ծառայել մեզ հետ, համարձակ սանիտար էիր, առաջինը դու էիր գնում վիրավորներին հանելու մարտադաշտից: (*Դադար:*) Կոնտուզիադ հիմա ո՞նց է...

ՄԻՇՐԱՆ - Կոնտուզիա՞ս... ընտիր: Գլխացավեր ավելի հաճախ եմ ունենում, բայց դեռ հաղթահարում եմ:

ՄԱՐՈՒԾ - Լավ հիշում եմ ռմբակոծության էդ օրը... սարսափելի էր: Փառք Աստծո, ողջ մնացիր, իսկ մեր անձնակազմից Վահանը զոհվեց, Մարոն ծանր վիրավորվեց: Դա մեր ամենածանր օրն էր ողջ պատերազմի ընթացքում:

ՄԻՇՐԱՆ - Ո՞նց է հիմա Մարոն, վաղուց նրան չեմ տեսել:

ՄԱՐՈՒԾ - Կարելի ասել՝ ո՞նց որ մյուս հաշմանդամները: Կնոջ համար շատ ավելի դժվար է համակերպվել հաշմանդամությանը: (*Դադար:*)

ՄԻՇՐԱՆ - Հիշում եմ, բոլորին մեկ առ մեկ հիշում եմ, և զոհվածներին, և վիրավորներին... Բոլորի գծանկարները արել եմ, իմ արվեստանոցում են, մի օր ցույց կտամ քեզ:

ՄԱՐՈՒԾ - Այո՞... Ծատ կարևոր գործ ես արել, Միհրան:

Գինովցած տղամարդը ուշքի է գալիս, շշմած հայացքով նայում է շուրջը:

ՄԻՇՐԱՆ - (*մոտենալով նրան*): Դե, ո՞նց ես... սեքսուալ մանյակ...

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ - Գլուխս ցավում է: (*Նայում է Մարուշին:*) Ուժեղ է խփել:

ՄԻՇՐԱՆ - Բողոքում ես, գուցե բողոքի գիրքը տամ՝ գրառեն տպավորություններդ:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ - Դու ո՞վ ես:

ՄԻՇՐԱՆ - (*կեղծ պաշտոնական*): Ներկայանամ՝ Միհրան Գաբոյան: Ճանաչո՞ւմ ես:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ - (*ուշադիր նայելով*): Նկարիչը... (*Ծիծաղում է:*) Ուզում ես նկարել ինձ:

ՄԻՇՐԱՆ - Զո ի՞նչը նկարեմ, այցույ... Հիմա էս դեղատան անվտանգության աշխատակիցն եմ: Դու վտանգավոր տիպ ես:

ԳԻՆՈՎՑԱԾ ՏՂԱՄԱՐԴ - Ինչո՞ւ... որ ուզում էի նրա հետ մի քիչ սիլի-բիլի անել:

ՄԻՇՐԱՆ - Վարքդ վտանգավոր է հասարակական կարգին ու բարոյականությանը: Տիկին Մարուշ, ի՞նչ վճիռ ենք կայացնում սրա նկատմամբ, հանձնենք ոստիկանությամբ...

ՄԱՐՈՒԾ - Չէ, դեռ ոստիկանության սուբյեկտը չէ: Նրանով պետք է զբաղվի հասարակությունը:

ԳԻՆՈՎՅԱԾ ՏՂԱՄԱՐԴ - (քմծի-
ծաղով): Որտե՞ղ է էդ հասարա-
կությունը...

ՄԱՐՈՒԾ - (չլսելու տալով): Խոս-
տանո՞ւմ ես, որևէ կնոջ հանդեպ
ոտնձգություն չես անի:

ԳԻՆՈՎՅԱԾ ՏՂԱՄԱՐԴ - (մի պահ
չռած աչքերով նայում է Մարու-
շին, գլխով անում): Ըհը...

ՄԱՐՈՒԾ - Չէ, հստակ լեզվով ու
բարձրաձայն:

ԳԻՆՈՎՅԱԾ ՏՂԱՄԱՐԴ - Խոստա-
նում եմ:

ՄԱՐՈՒԾ - Դե, վերցրու քո էս էռեկ-
ցիոնը և՛ ուղիղ տուն: Եվ խոս-
տացիր, որ միայն կնոջդ հետ
կօզտագործես:

ԳԻՆՈՎՅԱԾ ՏՂԱՄԱՐԴ - (կա-
մաց): Ըհը... (Տեսնելով Մարուշի
խիստ հայացքը՝ բարձրաձայն):
Խոստանում եմ: (Վեր է կենում,
վճարում է, վերցնում փաթեթը):
Մանրը մնա ձեզ...

ՄԱՐՈՒԾ - (չոր): Վերցրեք ձեր ման-
րը:

ԳԻՆՈՎՅԱԾ ՏՂԱՄԱՐԴ - Եղածը
մի բան չէ, դա էլ թող լինի իմ...
փոխհատուցումը... (Մարուշը
ձեռքն է վերցնում փայտե մուր-
ժը): Լավ, լավ, ես մեղա...
(Ծտապ վերցնում է մանրը):
Կներեք... շնորհակալություն...
Բարի գիշեր ձեզ: (Գնում է):

ՄԻՀՐԱՆ - Առաջին անգամ եմ
տեսնում՝ զարկվես ու ասես
շնորհակալություն:

ՄԱՐՈՒԾ (կամացուկ ծիծաղում է):
Եթե կինն է տեղին բռնություն

գործադրում տղամարդու հան-
դեպ, դա երբեմն անսպասելի
դրական հետևանքներ է ունե-
նում:

ՄԻՀՐԱՆ - Իրո՞ք... չգիտեի: Չեմ
զարկվել երբևէ կնոջից, բայց մեկ-
մեկ հիստերիկայով հոգիս են
բռնաբարել: (Դադար): Մարուշ
ջան, գիտե՞ս՝ որքան է մեզ՝ նոր-
մալ տղամարդկանցս ոգևորում,
որ մեր զոհվածների այրիները
մնում են իրենց վերապահված
բարոյական բարձրության վրա:

ՄԱՐՈՒԾ - Եվ շատ եք տխրում,
երբ նրանք գլորվում են անբա-
րոյականության ճահիճը:

ՄԻՀՐԱՆ - Այո... Մեր շենքում զոհ-
վածի այրի կա, վերջերս է տե-
ղափոխվել, երևի հետքեր
մաքրելու համար... չգիտեմ:
Հարևաններն ասում են, որ ան-
ցած տարիներին ազատ
ֆոֆոում էր ու հաճախ դիմում
հղիության արհեստական ընդ-
հատման: Ասում են՝ նույնիսկ
տառապել է վեներական հի-
վանդությամբ...

ՄԱՐՈՒԾ - Նրանց դատապարտե-
լուց առաջ պետք է օգնել, բոլո-
րը չէ, որ ինքնուրույն կարող են
կրել այրիության փշոտ բեռը:
Դու չգիտես, թե հոգեկան ու ֆի-
զիկական ինչ ուժեր են պետք
քո ասած բարձրության վրա
մնալու համար:

ՄԻՀՐԱՆ - Արդարացնո՞ւմ ես
նրանց:

ՄԱՐՈՒԾ - Ոչ, բայց և չեմ ուզում

մեղադրել ու պարսավել, դա էն-
քան հեշտ է անելը... մեր քույ-
րերն են, պետք է նրանց ձեռքը
բռնել ու պահել ճիշտ ճանա-
պարհի վրա:

ՄԻՇՐԱՆ - Մի քանի տարի առաջ
ուզեցի մեկի ձեռքը բռնել ու ետ
պահել... Ասացի՝ նայիր քո
բախտակիցներից շատերին,
տես՝ ինչ խնկարկելի վարք են
դրսևորում: Ասաց՝ սրբանալու
ցանկություն չունեմ, ես սովո-
րական թույլ կի՛ն եմ:

ՄԱՐՈՒԾ - Գովելի պատասխան
չէ... Ոչ ես, ոչ ինձ նմանները
սրբանալու մտադրություն չու-
նենք: Պարզապես ապրում ենք
խղժի մտոք, հոգու մեր
պարտքն ենք կատարում: Եվ
հետո՝ շարքային հայ կի՛նը թույլ
չէ, նա շատ ուժեղ տեսակ է:

*Ներսես մտնում վայելուչ-պաշ-
տոնական հագնված տղամարդն
ու աղջիկը՝ սովորականից վառ
հարդարված-խնամված: Տղա-
մարդը կարմիր փողկապով է,
աղջիկը՝ վառ-կարմիր շրթներ-
կով: Աղջիկը մաստակ է ծամում
և հեզմախառն ժպիտով գնում
շուրջը:*

ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԴ -
Բարև ձեզ, Ծուշիկը չկա՞մ, չի՞ հեր-
թապահում էսօր:

ՄԱՐՈՒԾ - Ոչ, ես եմ հերթապա-
հում: Ինչո՞վ կարող եմ օգնել:

ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԴ -
Ըմմմ... նուրբ հարց է... Համե-
նայնդեպս, դիմեմ ձեզ, հուսամ՝

կընդառաջեք: Կարո՞ղ ենք ա-
ռանձնանալ:

*Մարուշը մի կողմ է քաշվում,
տղամարդը նրան ինչ-որ բան է
սկսում բացատրել՝ գրպանից հա-
նելով դրամապանակը և փորձե-
լով թղթադրամներ խցկել ձեռքը:*

ՄԱՐՈՒԾ - *(բարձրաձայն):* Սա ի՞նչ
լկտիություն է... Սա դեղատուն
է... Դուրս եկեք, շուտ, հեռացեք
էստեղից:

ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԴ -
Պետք չէ գոռալ, համաձայն չեք՝
հանգիստ մերժեք, ուրիշ տեղ
կգտնենք:

ՄԱՐՈՒԾ - Հեռացեք, արագ... Ամե-
նուր մի ապականեք, թողեք
մաքուր տեղեր մնան մեր շրջա-
պատում:

ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԴ -
Առանց աղմուկի, խնդրում եմ:
Մենք գնացինք: *(Նշան է անում
աղջկան, նրա հետ շարժվում
դեպի դուռը:)*

ՎԱՌԿԱՐՄԻՐ ԵՐԹԵՆԵՐԿՈՎ ԱՂՋԻԿ
- Երևի քիչ փող ես առաջակել,
պարոնս, որ չհամաձայնվեց...
Միշտ էդպես է՝ մեր ձախորդութ-
յունների ու դժբախտությունների
պատճառը տղամարդու ժլա-
տությունն է:

ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԴ -
Ձենդ, լկտված, ասել եմ՝ բե-
րանդ փակ կպահես: Ոչինչ, շու-
տով ես կփակեմ բերանդ ոնց
որ պետք է...

ՎԱՌԿԱՐՄԻՐ ԵՐԹԵՆԵՐԿՈՎ ԱՂՋԻԿ

- Ի՞նչ ասի որ... (Մարուշին.)
 Համ էլ փողոցայինը դու ես...
ԿԱՐՄԻՐ ՓՈՂԿԱՊՈՎ ՏՂԱՄԱՐԴ -
 Դե համը հանեցիր, լիրբ,
 կտրիր ձենդ՝ ասացի... (Աղջ-
 կան կոպտորեն հրում է առաջ:
 Մարուշին:) Ներող եղեք, բարի
 գիշեր:

Նրանք գնում են:

ՄԱՐՈՒԾ - Էս ի՞նչ այլասերվածությո-
 յուն է, դեղատունը հասարակաց
 տուն են ուզում սարքել:

**Շփոթահար ու վախվորած մերս
 է մտնում զզզված մազերով, լա-
 ցակումամբ պարմանուհին:**

ՊԱՐՄԱՆՈՒՇԻ - Ներեցեք, Արևի-
 կին կարելի է:

ՄԱՐՈՒԾ - Ի՞նչ է եղել, աղջիկս,
 Արևիկը տանն է: (Պարմանու-
 հին հեկեկալով շրջվում է, որ
 հեռանա:) Սպասիր, ո՞ր... Ի՞նչ է
 պատահել, ասա, ես կօգնեմ:

ՊԱՐՄԱՆՈՒՇԻ - (վերադառնալով):
 Կարո՞ղ եմ գիշերել էստեղ...
ՄԱՐՈՒԾ - Գիշերել էստեղ... տուն
 չունե՞ս:

ՊԱՐՄԱՆՈՒՇԻ - Ունեմ, բայց...

ՄԱՐՈՒԾ - Ի՞նչ՝ բայց:

ՊԱՐՄԱՆՈՒՇԻ - Հայրս էլի հար-
 բաժ եկավ ու կռիվ սարքեց, ծե-
 ծեց մորս, փոքր եղբորս ու
 ինձ... Արդեն քանի ամիս է՝ էս
 մղձավանջի մեջ ենք, էլ չեմ կա-
 րող, ինձ քնել-հանգստանալ է
 պետք: Հայրս ողջ գիշեր գոռո-
 ռում է ու հայիոյում: Ես սկսել եմ

հաճախ բացակայել դասերից...
ՄԱՐՈՒԾ - Հասկացա, աղջիկս,
 հարբեցող հոր հետ դժվար է
 համակերպվել:

ՊԱՐՄԱՆՈՒՇԻ - Հայրս հարբեցող
 չէր, շատ լավ, հոգատար հայ-
 րիկ էր... Էն օրից, ինչ աշխա-
 տանքը կորցրեց, իրեն տվեց
 հարբեցողությանը:

ՄԱՐՈՒԾ - (շոյելով աղջկա զու-
 խը): Ոչինչ, աղջիկս, պատա-
 հում է... Ծուտով հայրդ կգտնի
 նոր աշխատանք ու ամեն ինչ իր
 տեղը կընկնի: Անգործ տղա-
 մարդիկ հաճախ են էդ ձևով
 փորձում հաղթահարել իրենց
 ճգնաժամերը: Հայրդ վիրավո-
 րանքից ու անհարմարության
 զգացումից է խմում: Պետք է
 հասկանալ նրան և օգնել, որ
 շուտ աշխատանք գտնի:

ՊԱՐՄԱՆՈՒՇԻ - Հա՛... ամեն ինչ
 կնորմալանամ մեր տանը, ասում
 եք...

ՄԱՐՈՒԾ - Այո, աղջիկս, միասին
 կօգնենք ձեր հայրիկին: Իսկ հի-
 մա ետևի սենյակում հանգիստ
 քնիր, է՛ստեղ բազմոց կա:

**Մարուշը պարմանուհուն ուղեկ-
 ցում է ետնասենյակ և քիչ անց
 վերադառնում է:**

ՄԻՇԸՐԱՆ - Չէ, Մարուշ ջան, դու
 իսկապես վտանգավոր ու պա-
 տասխանատու տեղ ես աշխա-
 տանքի անցել:

**Ջանգում է Մարուշի բջջային հե-
 ռախտը:**

ՄԱՐՈՒԾ - Հա, Լարե ջան, ինչ կա էս ուշ ժամին... Լավ, մի անհանգստացիր, կփորձեմ կապվել Լաիրիկի հետ: *(Անջատում է հեռախոսը, մի փոքր տազնապաճ նայում Միհրանին:)*

ՄԻՀՐԱՆ - Ո՞վ էր...

ՄԱՐՈՒԾ - Հարսս է, լսել է, որ ժամեր առաջ դիվերսիա է եղել Լաիրիկենց դիրքերի ուղղությամբ: Փորձում է կապվել նրա հետ, հեռախոսը չի պատասխանում:

ՄԱՐՈՒԾ - Ո՞վ է Լաիրիկը:

ՄԱՐՈՒԾ - Տղաս: Վաշտի հրամանատար է, հիմա սահմանային դիրքերում է:

ՄԻՀՐԱՆ - Ներիր, մոռացել էի տղայիդ անունը: Ուրեմն արդեն սպա է... Դե, էլ ինչ ես սպասում, զանգիր, տես՝ ինչ կա:

ՄԱՐՈՒԾ - Երբ լարված իրավիճակ է, նա չի պատասխանում մեր զանգերին, ասում է՝ գործի պահին ու զինվորների ներկայությամբ պետք չէ տնային խոսակցություններ ունենալ հեռախոսով:

ՄԻՀՐԱՆ - Հեռախոսահամարն ասա՝ ես զանգեմ: Գուցե անձանոթ համար տեսնի՝ կարծի, թե ռազմական ստորաբաժանումներից են, պատասխանի:

ՄԱՐՈՒԾ - 205115

ՄԻՀՐԱՆ - *(հավաքում է համարը):* Այո, Լաիրի՞... Բարև, նախկին բուժսանիտար ու նկարիչ Միհրան Գաբոյանն է խոսում: Ո՞նց

եք, ո՞նց է վիճակը ձեզ մոտ... Խնդրում եմ՝ երկու բառով... Ուրեմն՝ ամեն ինչ կարգին է: Լավ, տղաս, հիմա մայրիկիդ մի երկու բառ ասա... Խնդրում եմ: *(Հեռախոսը տալիս է Մարուշին:)*

ՄԱՐՈՒԾ - Բարև, տղաս, լսվ էս...

Չէ, մեզ մոտ խուճապային տրամադրություն չկա, սովորականի պես անհանգստանում ենք... Իմ նախկին զինակիցն է, հայտնի ու տաղանդավոր նկարիչ... Դեղատանն ենք, հերթապահությանս օրն է... Լավ, Լաիրի ջան, քեզ լավ պահիր, բարևիր ընկերներիդ... Բարի գիշեր: *(Հեռախոսն անջատում է: Մտախոգ:)* Կրակոցների ձայները լսվում են հեռվից, երևում է՝ լարվածությունը նրանց դիրքերում լրիվ չի անցել: *(Դադար:)* Հոր տղան է, կրակի մեջ էլ խանդը չի թաքցնում: Հարցնում է՝ էդ ո՞վ է կողքիդ հեռվից-հեռու հայրություն անում ինձ:

ՄԻՀՐԱՆ - *(ծիծաղում է):* Խանդելու ոչ մի պատճառ չունի, բայց նրան հասկանում եմ: Հոր ձայնն է նրա մեջ հնչում...

Ներս է մտնում երիտասարդ զինվորականը՝ ձախ ձեռքը վիրակապած:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ -

Բարև ձեզ: Կներեք, Մարուշ մորքուր, Հրայրը ձեզ է ուզում, ասում է՝ կանչեք, թող ինքը գա,

վիրակապը փոխի, հերթապահ բուժքրոջը թույլ չի տալիս, բժշկին՝ նույնպես: Արնահոտություն է սկսվել...

ՄԱՐՈՒԾ - Ինչո՞ւ թույլ չի տալիս:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ - Հրայրն ինձ ասել է պատճառը, բայց ավելի լավ է՝ դուք նրանից լսեք: Փորձում են զոռով վիրակապել...

ՄԱՐՈՒԾ - Ովքե՞ր են հերթապահում:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ - Բժիշկ Դադայանը և բուժքույր Սուսաննան:

ՄԱՐՈՒԾ - Մի րոպե: *(Բջջայինով զանգում է:)* Բժիշկ, բարև ձեզ, ներեցեք, ինչ է կատարվում վիրավոր Հրայրի հետ... Գուցե նա նրա հետ հեռախոսով խոսեմ... Լավ, զալիս եմ... *(Անջատում է հեռախոսը:)* Միհրան, կարո՞ղ ես 15-20 րոպե հսկել դեղատուները, չեմ ուշանա, գիտես՝ հոսպիտալը մոտիկ է:

ՄԻՀՐԱՆ - Մարուշ ջան, դա ինչ հարց է: Գնա, Հրայրին էլ արագ ապաքինում մաղթիր իմ կողմից: *(Զինվորականին.)* Ձեռքիդ ինչ է եղել:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ - Բան չկա, անցնում է, մի երկու օրից դիրքեր կվերադառնամ:

ՄԱՐՈՒԾ - Հրայրն ու Գևորգը *(ցույց տալով զինվորականին)* նույն տեղում ու նույն ժամին են վիրավորվել, դիրքում, բայց մինչև վիրավորվելը դասակի

տղաների հետ լավ ջարդ են տվել դիվերսանտ թուրքերին:

ՄԻՀՐԱՆ - Ապրեք: Անփորձանք ծառայություն քեզ ու ընկերներիդ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ - Ծնորհակալություն, բարի գիշեր:

ՄԻՀՐԱՆ - Հաջողություն, տղաս:

ՄԱՐՈՒԾ - Միհրան, այցելուներին ասա՝ սպասեն, շուտ կգամ, սեղանին էլ գրքեր կան, կարդա, որ չձանձրանաս:

Մարուշն ու զինվորականը գնում են:

ՄԻՀՐԱՆ - *(դադարից հետո, մտախոհ):* Կին՝ զարմանահրաշ, հեքիաթային հայուհի: Առեղծվածային, հրաշք կանայք, որքան ցանկալի եք դուք, որքան անմատչելի: Թաքուն թե բացահայտ՝ միշտ ձեր երկրպագուն եմ, եթե անգամ լքում եք ինձ տեղի թե անտեղի: Կարծես շատ բան գիտեմ ձեր մասին, բայց ժամանակի ու փորձառության հետ հասկանում եմ, որ իմացությունս շարունակ նվազում է ձեր հոգևոր մեծության առաջ... Մեկը՝ Մարուշը, իսկական թագուհի, իսկ թագուհուն դ՛ր տղամարդը չի տեսնում... Բայց, Մարուշ ջան, թող սա մնա իմ մեծագույն գաղտնիքը... *(Շուրջն է նայում՝ վերագտնում իրեն ընթացիկ դեպքերի շղթայում:)* Էս դեղահոտ տարածքի տերը հիմա ես եմ... Բայց լավ արվես-

տանոց կլիներ, հա՛... *(Վերցնում է գրքերը, նստում բազմոցին:)*
 Ըհը... Հրանտ Մաթեոսյան, «Տերը»: Պարույր Սևակ, «Եղիցի լույս», 1969 թվի առաջին հրատարակությունը: Հետաքրքիր է՝ որտեղից Մարուշին էս գիրքը... երևի նվեր է ստացել: Ժամանակին շատ էի ուզում ունենալ էս գրքից, հիմա մոռացել եմ այդ ցանկության մասին: *(Թերթում է գիրքը:)* Ահա և իմ սիրած բանաստեղծությունը.

Աշխարհին, այո,
 մաքրություն է պետք՝
 Այն հերոսների
 տխրունակ տեսքով,
 Որոնք մեռնում են...
 անգործությունից...
 Նաև այն կանանց,
 որոնք մինչև մահ
 ճանաչում են լոկ մեկ
 տղամարդու...
 Իսկ երբ...

Ներս է մտնում մորուքով տղամարդը:

ՄԻՀՐԱՆ - Բարև ձեզ, ինչ կկամենաք:

ՄՈՐՈՒԹՈՎ ՏՂԱՄԱՐԴ - Աստծո բարին, ունե՞ք խղճի հաբեր:

ՄԻՀՐԱՆ - Խղճի հաբեր... *(Նայում է դեղադարակների կողմը:)*
 Ցավոք, վերջացել են, առաջիկա օրերին կստանանք, համեցեք:

ՄՈՐՈՒԹՈՎ ՏՂԱՄԱՐԴ - Իսկ բարության հաբեր:

ՄԻՀՐԱՆ - Նույնի կատարմամբ: Ինչպե՞ս դիմեմ ձեզ...

ՄՈՐՈՒԹՈՎ ՏՂԱՄԱՐԴ - Պարզ է՝ սիրո և ազնվության հաբերը նույնպես վերջացել են:

ՄԻՀՐԱՆ - Ոչ, սիրո հաբեր ունենք, նոր մեկին տվեցինք... հիմա կբերեմ: *(Անցնում է վաճառատեղանի ետև ու բերում դեղատուփ:)*

ՄՈՐՈՒԹՈՎ ՏՂԱՄԱՐԴ - *(թեթևակի հայացք է նետում տուփին):*
 Ոչ, դու սեռական սիրո հաբեր ես առաջարկում, իսկ իմ ասածը իսկական սիրո մասին է, հոգու սիրո: *(Ուսապարկից հանում է ձերմակ, մեծ տոպրակ, տալիս է Միհրանին:)* Ահա ձեզ խղճի հաբերը: *(Հանում է կապույտ տոպրակ:)* Ահա ձեզ բարության հաբերը: *(Հանում է վարդագույն տոպրակ:)* Ահա ձեզ սիրո հաբեր: *(Հանում է մանուշակագույն տոպրակ:)* Ահա ազնվության հաբերը: Բաժանիր կարիքավորներին, անվճար... չզլանաս, որդիս:

ՄԻՀՐԱՆ - Բայց կարիքավորները նյութական օգնության կարիք ունեն... նախևառաջ:

ՄՈՐՈՒԹՈՎ ՏՂԱՄԱՐԴ - Ոչ, որդիս, իմ խոսքը շատ ավելի հրատապ կարիքի մասին է՝ խղճի, բարության, սիրո ու ազնվության...

ՄԻՀՐԱՆ - Բայց ո՞նց իմանամ՝ ով է դրանց կարիքը զգում: Եթե սխալվեմ, մարդիկ կնեղանան

ինձնից: Կամ եթե դրանց կարիքն ունեցողը հրաժարվի, ո՞նց վարվեմ:

ՄՈՐՈՒՔՈՎ ՏՂԱՄԱՐԴ - Եթե իրոք մարդկանց ես բժշկում, թեկուզ դեղավաճառի մակարդակով, հնարը կգտնես: Հաջողություն քեզ, որդիս: (*Ծրջվում է, որ գնա:*)

ՄԻՇՐԱՆ - Բայց դուք ո՞վ եք...

ՄՈՐՈՒՔՈՎ ՏՂԱՄԱՐԴ - Եթե ցանկանաս, կհիշես: Հաջողություն քեզ, որդիս: (*Գնում է:*)

Միերանը տարակուսած հայացքով ուղեկցում է նրան մինչև դուռը, ապա տուրակները դնում է վաճառասեղանին:

ՄԻՇՐԱՆ - Տեսի՞լք էր, թե՛... գուցե Աստված էր, շատ է նման... Կարծես Աստված տեսել եմ, հիմա էլ նմանություն եմ գտնում: Ավելի շատ հավատացյալ Սուրենին էր նման: Չէ... Գուցե հայրս էր, հարություն առել, կերպարանափոխված եկել է ստուգի, թե ինչ վիճակում եմ: Քսան տարի առաջ է մահացել, հնարավոր է, էն աշխարհում շատ է փոխվել՝ հեշտ չէ ճանաչել... Չէ, ոնց որ հիմարություններ եմ դուրս տալիս, Մարուշին կհարցնեմ, երևի դեղատան օյինբազ հաճախորդներից է: (*Լստում է բազմոցին, վերցնում գիրքը:*) Աշխարհին, այո, մաքրություն է պետք...

Ներսեմ մտնում Արդարության 7 ցուցարարները:

ՄԻՇՐԱՆ - (*մեկուսի*): Սրանք էլ երևի սատանաներն են... չէ, շատ իրական ու մարդկային են երևում: (*Բարձրաձայն:*) Ովքե՞ր եք, ինչ եք ուզում:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - (*խմբովին*): Մենք Արդարության ցուցարարներն ենք: Մենք խաղաղ ցուցարարներ ենք...

Ցուցարարներից մեկը կանգնում է առջևում, մյուսները՝ երկու շարք են կազմում: Առջևի կանգնածը բարձրացնում է ցուցանակ՝ «Ի սկզբանե Արդարությունն էր»: Առաջին եռյակը պարզում է՝ «Արդարություն ամենեցուն»: Երկրորդ եռյակը՝ «Արդարների ժամանակը»:

ՄԻՇՐԱՆ - (*առջևում կանգնածին*): Դու նրանց առաջնորդն ես:

1-ին ՑՈՒՑԱՐԱՐ - Ոչ, ուղղակի էսօր ես եմ հերթապահում առաջին գծում: Վաղը ուրիշը կլինի: (*Հպարտ:*) Ամեն օր փոխվում ենք առաջին դիրքում:

ՄԻՇՐԱՆ - Ծատ չե՞ք շուտ-շուտ փոխվում:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - (*խմբովին*): Ոչ... ոչ...

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Հենց մեկը երկուերեք օր առաջին գծում կանգնում է, իրեն անփոխարինելի առաջնորդ է երևակայում, սկսում է արհամարհել մյուսներին ու կամայականություններ անել:

ՄԻՇՐԱՆ - Դե ասեք՝ ձեզ մոտ բացարձակ ժողովրդավարություն է, էլի...

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Չէ, դեռևս խնդիրներ ունենք էդ կապակցությամբ:

ՄԻՇՐԱՆ - Իսկ ինչո՞ւ գիշերն եք ցուցարարություն անում: (*Մեկուսի:*) Երևի սրանք էլ են անքնությանը տառապում:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Ցերեկները աշխատում ենք: Էս գործի համար առայժմ հարմար է գիշերը:

ՄԻՇՐԱՆ - Իսկ ձեզ հանգստանալ պետք չէ՞ գիշերը, հատկապես աշխատանքից հետո:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Առայժմ երկու օրը մեկ ենք դուրս գալիս ցույցերի, մեր ուժերը բավարարում են:

ՄԻՇՐԱՆ - Իսկ չե՞ք վախենում, որ հրապարակային ակտիվության համար ձեզ կհեռացնեն աշխատանքից, ավելին՝ կբռնանան ձեզ վրա:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - (*խմբովին*): Թույլ չենք տա... թույլ չենք տա...

ՄԻՇՐԱՆ - Բայց դուք քիչ եք, հաջողության չեք հասնի:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Շուտով մեր շարքերը կխտանան: Մարդկանց մեծամասնությունը կհասկանա, որ իրենց դժվարությունների ու հիմնախնդիրների առյուծի բաժինը արդարության պակասից է ծագում:

ՄԻՇՐԱՆ - Իսկ ինչո՞ւ ցույց չեք անում փողոցներում ու հրապարակներում, դեղատունը ի՞նչ ցույցի վայր է: Թեպետ, սպասեք, փիլիսոփայական տեսանկյունից դեղատունն էլ մի հրապարակ է, ուր շատ խնդիր-

ներ են ի ցույց հանվում:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Հա, ձիշտ ես...

Որտեղ բաց դուռ ենք տեսնում ու վառվող լույս, էստեղ մտնում ու բարձրաձայնում ենք մեր կարգախոսները:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - (*խմբովին*): Արդարություն՝ վերևից ներքև: Արդարություն՝ լայնք ու երկայնքով: Արդարություն՝ ամենուր: Արդարություն՝ ամենեցուն:

ՄԻՇՐԱՆ - Մեջս մի հին ու հաճելի զգացում արթնացավ: Վաղուց ցույցի չեմ մասնակցել: Հիշո՞ւմ եք՝ «Արդար պահանջ, ոչ մի նահանջ»:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - (*զվարթ*): Ո՞նց չենք հիշում, հիշում ենք, հիշում...

ՄԻՇՐԱՆ - Հրա՛ջք օրեր էին...

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Մերոնքական ես երևում, միացիր մեզ:

ՄԻՇՐԱՆ - Ես նկարիչ եմ, իմ ցույցը անում եմ նկարչությամբ: (*Մեկուսի՝ դահլիճին:*) Ասածս մի փոքր սուտ է հնչում, ախր, վաղուց չեմ նկարում: (*Ցուցարարներին.*) Բայց ձեր կարգախոսներից մեկը կարտագրեմ ու կփակցնեմ մեքենայիս հետնապակուն:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - Ո՞րը, ո՞ր կարգախոսը...

ՄԻՇՐԱՆ - Այ սա՛ «Արդարություն ամենեցուն»:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Գոհ ենք նաև դրա համար, եղբայր:

ՄԻՇՐԱՆ - Բայց, ձիշտն ասած,

ծեր կարգախոսները շատ ընդհանրական են, մի քանի անգամ լսելուց հետո մարդկանց ուղեղները դրանք կընդունեն որպես ծեծված խոսք ու պարապ ձայներ:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Ունենք նաև շատ կոնկրետ հարցադրումներ: Էսօր դրանք լավ հնչեցրինք օլիգարխներից մեկի դոլյակի բալում:

ՄԻՇՐԱՆ - Ո՞ր օլիգարխի, ի՞նչ էիք ասում:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Դե, էն օլիգարխ Փոփոշը, որ մենաշնորհ ունի ձավարեղենի ներկրման գործում: Տղերք, չկրկնե՞նք...

3-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Հա, բա ո՞նց, թող տեսնի, թե ոնց ենք ծնշում էդ կարգի տոգաճներին:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - Հա, հա, անցնենք գործի...

Ցուցարարները շրջանի մեջ են առնում Միհրանին և սկսում կրքոտ հնչեցնել իրենց հարցերը՝ իրարից խոսք խլելով ու չսպասելով պատասխանի:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Արդամր է, որ պատերազմում հաղթանակած ու ազատություն նվաճած ժողովրդի մեծ մասը շարունակում է ապրել կարիքի մեջ, իսկ մի բուռ մարդիկ հսկայական հարստություն են կուտակել ու զխկվում են զեխության մեջ...

2-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Արդամր է, որ վերններում տեղավորվածները

պետական միջոցներն են ծառայեցնում իրենց ու հարազատներին, իսկ շարքային քաղաքացիները հազիվ ստանում են իրենց փոքր հասանելիքը...

3-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Արդամր է, որ մեր սահմանները պաշտպանում են հասարակ քաղաքացիների որդիները, իսկ մեծագլուխների, օլիգարխների, խարդախ-ձարպիկների զավակները կամ ազատվում են բանակից, կամ ծառայում են տաքուկ ստորաբաժանումներում...

4-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - ...նույնիսկ ձևի համար, մի անգամ սահմանային դիրք չեն բարձրանում: Արդամր է, որ էդ կարգի լակոտները հետո փափուկ տեղավորվում են պետական հիմնարկներում, շատ արագ կարիերա անում ու չարախնդալով՝ իրենց կեղտոտ կամքն են թելադրում ազնիվ ու օրինական աշխատողների վրա...

5-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Արդամր է, որ շատ արժանավոր երիտասարդներ նորմալ գործ ու ուշադրություն չեն գտնում, նրանց մի մասը վիրավորված ու հուսաբեկ լքում է երկիրը, մեկնում օտար ափերում բախտ որոնելու...

6-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Արդամր է, որ բոլոր աղբյուրներից օգտվելու հնարավորություն ունեն իշխանավորներն ու նրանց մերձավորները, իսկ մյուսների առաջ բոլոր կարևոր դռները փակ են...

7-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Արդամր է, որ մե-

նաշնորհներով ասպարեզներ են զավթում, որ ազնիվ մրցակցության փոխարեն ուժեղանում են կեղտոտ գործարքներն ու հովանավորչությունը, ու վերններում շատանում են անարժանները: Նրանք ավելանում են իշխանությունում, կորչեն անարժանները:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Արդամր է, որ դեկավար օղակներում հիմնականում նստած են գործարար ունևորները՝ սերտաճելով պետության հետ. նրանց համակել է ազահության մոլուցքը, պետական-հասարակական լիարյուն գործիչները անկյուններ են քշված...

2-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Արդար չէ, որ ընտրությունների ժամանակ մեծաքանակ մարդիկ ազատ չեն քվեարկում, կաշառվում են, ենթարկվում թելադրանքների, նրանց կամքը բռնաբարվում է...

3-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Արդամր է, որ օրենքը գործում է շարքային քաղաքացիների համար, իսկ աստիճանավորներն ու ունևորները ապրում են՝ իրենց պատվի գործը համարելով շրջանցել օրինականությունը, բարոյականությունն ու հանրային շահերը...

4-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Արդար չէ, երբ մեզ ստիպում են ձայն չբարձրացնել հանուն արդարության ու ժշմարտության, իբր ջուր ենք լցնում թշնամու ջրաղացին, իսկ

իրենք վերններում գաղտնի մութ գործեր են անում մեր ընդհանուր ունեցվածքի, մեր հավասարության, իրավունքի, արժանապատվության ու առաջադիմության հաշվին...

5-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Արդամր է, որ մարդկանց մեծ մասը իրենց իրական ու հասանելի բարություն, իրենց ժառանգների լուսավոր ապագայի համար պայքարելու փոխարեն հարմարվում են, լռում, աչք փակում, հանդուրժում անարդարությունը, կաշառվում, վախենում, փոխզվիջումների գնում ստահակների հետ...

6-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Արդամր է, որ շատերին թվում է, թե ինքը անուժ մի մասնիկ է, ոչինչ չի կարող բարեփոխել, թե մեր ազգը փոքր է, պիտի հնազանդվի խոշորների կամքին, - և այդ մտայնությունը ո՛նց է տկարացնում շատերի ոգին...

7-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Արդամր է, որ այլանդակորեն մեծ պետական-իշխանական ապարատ է ձևավորվել մի փոքր երկրում, երբ իրական արդյունքներ ստեղծում են քչերը. սակավ են քրտնողները, ձրիակերները՝ շատ... արդամր է...

ՄԻՆՐԱՆ - Լավ, լավ, արդար չէ, գիտեմ... Էդ ամենը ասել եք Փոփոշի երեսին... թեև նա ինչ երես ունի որ...

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - Բա ոնց, էն էլ

ոնց, քիչ էր մնում աչքը հանելինք...

ՄԻՀՐԱՆ - Իսկական ռոմանտիկներ եք, բայց և ուժեղ եք, տեսնում եմ: Եվ ինչ պատասխանեց Փոփոշը:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Դե, նա պատասխան էլ չունի, քմծիծաղեց, հետո կանչեց իր հաստավիզ թիկնապահներին, սրանք էլ մեզ դուրս արեցին:

ՄԻՀՐԱՆ - Ուժո՛վ...

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Մի փոքր հրմշտոց եղավ... Մենք հակված չենք բախումների, մենք խաղաղ ցուցարարներ ենք: Մեր ոտքով դուրս եկանք նրա բակից:

2-ԲԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Իսկ երբ հսկա դարպասը փակեցին մեր քթի տակ, մենք հենց դարպասի մոտ մի լավ պարեցինք... Երևի Փոփոշը իր դղյակի պատուհանից նայում էր մեզ, գուցե արդեն առանց քմծիծաղի:

ՄԻՀՐԱՆ - Պարեցի՞ք...

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Հա, հիմա ցույց կտանք՝ ոնց ենք պարել: Ինչ կասեք, տղերք...

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - Պարենք, պարենք, թող նկարիչն էլ տեսնի:

Ցուցարարները, միացնելով բջջային հեռախոսի ոգեշունչ երաժշտությունը, պարում են՝ իրենց մեջ ներառելով Միհրանին: Ներս է մտնում դեղատան տնօրենը, զարմացած-զայրացած նայում է պարողներին:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - Միացիր մեզ, եղբայր, պարիր մեզ հետ...

ՏԼՕՐԵՆ - *(գոռում է):* Կանգնեք, վերջ տվեք, վերջացրեք...

Ցուցարարները և Միհրանը ընդհատում են պարը, զարմացած նայում տնօրենին:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Ինչ ես գոռում, ինչի՞ չես թողնում պարենք...

ՏԼՕՐԵՆ - Ովքե՞ր եք, էս ինչ հարսանիք եք սարքել էստեղ:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - Մենք Արդարության ցուցարարներն ենք, Փոփոշին ուղղված պարն ենք նորից պարում...

ՏԼՕՐԵՆ - Ինչ արդարության ցուցարարներ, ինչ Փոփոշ... Սա դեղատուն է, սա պարահրապարակ չէ, հապա մի ցրվեք էստեղից:

ՄԻՀՐԱՆ - Իսկ դուք ո՞վ կլինեք, պարոն...

ՏԼՕՐԵՆ - Ես դեղատան տնօրենն եմ, սեփականատերը: Իսկ դու ո՞վ կլինես...

ՄԻՀՐԱՆ - Ես նկարիչ Միհրան Գաբոյանն եմ, նաև ժամանակավորապես, ընդամենը մի հերթափոխով, էս դեղատան անվտանգության աշխատակիցը:

ՏԼՕՐԵՆ - Անվտանգության աշխատակիցը... Մենք նման հաստիք չունենք, կրճատել եմ, փոխարենը անվտանգության սարքեր եմ տեղադրել, տեսախցիկներով: *(Ցույց է տալիս առաստաղի*

տակ կախված տեսախցիկները: Նմանակելով Միհրանին:) Իսկ ձեզ ո՞վ կլինի նշանակած:

ՄԻՀՐԱՆ - Մարուշը: Էսօր ինքն է, չէ՞, դեղատան տիրուհին:

ՏՆՕՐԵՆ - Իսկ ո՞ր է նա... մյուս հերթապահն ո՞ր է...

ՄԻՀՐԱՆ - Մարուշը... մի երկու րոպեով դուրս եկավ մաքուր օդ, լավ չէր զգում...

ՏՆՕՐԵՆ - Ես կհեռացնեմ նրան աշխատանքից, մյուս հերթապահին էլ...

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - Թույլ չենք տա:

ՏՆՕՐԵՆ - Ի՞նչ... դուք ո՞վ եք, որ ինձ արգելեք... դուրս կորեք էստեղից...

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - Իյա՛... (Շրջապատում են տնօրենին:)

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Հայտարարում եմ կոնֆլիկտային իրավիճակ... Հանգիստ, հանգիստ, բոլորին է վերաբերում: (Տնօրենին.) Մենք էլ մեր իրավունքներն ունենք, թե՛ կարծում ես, քո իրավունքներն ավելի առաջնային են, քան մերը:

ՏՆՕՐԵՆ - Դուք հարսանիք եք սարքել դեղատանը, իմ տիրույթում ու դեռ իրավունքից եք խոսում...

2-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Դեղատոնն, իմ տիրույթ... էնքան էլ լավ չեն կապակցվում:

3-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Մենք նաև պարով ենք արդարության մեր ծայրը հասցնում մարդկանց:

ՏՆՕՐԵՆ - Գնացեք, դա արեք փողոցներում ու հրապարակներ-

րում, դեմ չեմ, թեև ձեզ լսողն ո՞վ է... Բայց դեղատունը չի կարելի սարքել բողոքի հրապարակ:

4-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Կրկին սխալվում եք, մեր խոսքը ազատ արտահայտելու իրավունք ունենք մեր երկրի յուրաքանչյուր քառակուսի մետրում, լինի այն պետական, թե մասնավոր:

5-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Բացի անձնական տարածքներից: Դրանց անձեռնմխելիության դեմ ոչինչ չունենք:

ՏՆՕՐԵՆ - Լավ, եթե Մարուշին հեռացնեմ գործից, դուք ի՞նչ պիտի անեք:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Հաճախորդներին կհանենք բողոքի ցույցի: Կամ կասենք, որ ժամկետանց դեղեր եք վաճառում ու հսկայական կորուստներ կկրես:

ՏՆՕՐԵՆ - Դա հերյուրանք է, մեզ մոտ ժամկետանց դեղեր չեն վաճառվում:

2-ՐԴ ՑՈՒՑԱՐԱՐ - Կդիմենք հարկայինին...

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - Ճիշտ է, ձիշտ է...

ՏՆՕՐԵՆ - Որ ի՞նչ, ի՞նչ պիտի անեն հարկահավաքները, նրանց հետ միշտ էլ լեզու եմ գտնում:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Մամուլին կհայտարարենք, որ լրիվ ցույց չեք տալիս ձեր ապրանքաշրջանառությունը, հարկերի կեսը չեք մուծում:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - Հա, հա, մեծ ստվեր ունեք...

Ի-ԻՆ ՅՈՒՅԱՐԱՐ - Ձեր մյուս դեղատներն էլ ստուգել կտանք: Հիմա քանիսն են դրանք...

ՏՆՕՐԵՆ - Լավ, լավ... հասկանանք իրար: Բան է՝ ասացի ջղայնության պահին, ո՞ւմ հետ չի պատահում: Մարուշը կշարունակի աշխատել:

ՅՈՒՅԱՐԱՐՆԵՐ - Հաստամտ...

ՏՆՕՐԵՆ - Հաստատ, խոսք եմ տալիս:

Ներս է մտնում Մարուշը, նրան չեն նկատում:

ՄԻՀՐԱՆ - Պարոն տնօրեն, ձեզ չէր խանգարի, եթե գոնե մեկ ամիս օգտագործեիք խղճի հաբեր: Համոզված եմ, էդ դեպքում ոչ թե Մարուշին հեռացնելու մտադրություն կունենայիք, այլ կավելացնեիք նրա աշխատավարձը:

ՏՆՕՐԵՆ - Ի՞նչ խղճի հաբեր, ի՞նչ աշխատավարձի բարձրացում... Հիմա էլ ձեռ եք առնում ինձ:

ՄԻՀՐԱՆ - Չէ, չէ, էս գիշեր ստացանք խղճի, բարության, սիրո ու ազնվության հաբեր... մի-մի տոպրակ: Ահա... *(Յույց է տալիս վաճառասեղանի վրա դրված չորս տոպրակները):*

ՏՆՕՐԵՆ - Էս ի՞նչ տոպրակներ են:

ՄԻՀՐԱՆ - Ասացի, չէ՞, խղճի, բարության, սիրո ու ազնվության հաբերով տոպրակներն են:

ՏՆՕՐԵՆ - *(բացում է տոպրակները, զննում է հաբերը):* Առաջին անգամ եմ տեսնում էսպիսի հաբեր: Երևում է՝ բարձր տեխ-

նոլոգիայով են պատրաստված: Ո՞վ է տվել:

ՄԻՀՐԱՆ - Ըմմմ... Աստված...

ՏՆՕՐԵՆ - Ուրեմն՝ որոշել ես ինձ ձեռ առնել: *(Նկատելով Մարուշին:)* Մոտ եկեք, տիկին Մարուշ: *(Մարուշը մոտենում է:)* Էս որտեղ էիք, էս ի՞նչ է կատարվում դեղատանը, ո՞ր է Արևիկը, էսօր նա պիտի հերթապահեր ձեզ հետ:

ՄԱՐՈՒԾ - Արևիկին ես տուն ուղարկեցի, երեխան բարձր ջերմությոն ունի:

ՏՆՕՐԵՆ - Հասկացա, իսկ ինչո՞ւ նրա փոխարեն Ծուշիկին չկանչեցիք:

ՄԱՐՈՒԾ - Չուզեցի, գերադասեցի մենակ...

ՏՆՕՐԵՆ - Լավ, էդ հանգամանքը հետո կպարզեմ: Իսկ էս նկարչից ի՞նչ անվտանգության աշխատակից, նրան ո՞նց կարող եք վստահել դեղատունը... թեկուզ մի երկու րոպեով: Բայց ավելի երկար բացակայեցիք, չէ՞...

ՄԱՐՈՒԾ - Ուղիղ 20 րոպե: Նրան վստահում եմ, իմ նախկին գինակից ընկերն է, թույլ չի տա, որ դեղատնից բան պակասի և... անկարգություններ լինեն:

ՄԻՀՐԱՆ - *(ուրախ):* Մարուշ ջան, ընդհակառակը, ավելացրել ենք, էն տոպրակները՝ բարձր տեխնոլոգիայով պատրաստված հաբերով, էն էլ ինչպիսի հաբեր՝ խղճի, բարության, սիրո, ազնվության... Պարոն տնօ-

րեն, չեք զղջա, փորձեք մեկական հար:

ՏԼՕՐԵՆ - Թող անհամ կատակներդ, ես դրանց կարիքը չունեմ, ինքդ փորձիր:

ՄԱՐՈՒԾ - Որտեղից էդ տոպրակները, Միհրան:

ՄԻՇՐԱՆ - Աստված է բերել... կամ նրա նման մեկը: Չգիտեմ, էդ հարցը ինձ համար էլ առեղծված է:

ՏԼՕՐԵՆ - *(Մարուշին):* Բայց չասացիք՝ որտեղ էիք, ինչո՞ւ եք լքել դեղատունը, հարգելի տիկին Մարուշ:

ՄԱՐՈՒԾ - Հոսպիտալից շտապ կանչեցին, գնացել էի վիրավոր զինվորի զլխի վիրակապը փոխելու:

ՏԼՕՐԵՆ - *(թեթև հեզանքով):* Ինչ է՝ հոսպիտալը առանց ձեզ վիրակապ չի փոխում:

ՄԱՐՈՒԾ - Էդ զինվորն իմ կարիքն ուներ:

ՏԼՕՐԵՆ - Անփոխարինելի եք, տիկին Մարուշ, անփոխարինելի... Լավ, իսկ ձեր անվտանգության աշխատակիցը ինչո՞ւ էր ստում, թե երկու թուղթով եք դուրս եկել մաքուր օդի:

ՄԻՇՐԱՆ - Դե, ձեզ ո՞նց ասեմ. Մարուշի համար ուրիշներին օգնելը մաքուր օդի պես մի բան է:

ՏԼՕՐԵՆ - Չեմ վիժում, հասկացա... Հիմա ի՞նչ ենք անում, ցուցարարներ, կարող ենք հեռանալ, որ դեղատունը շարունակի աշխատել նորմալ ռեժիմով, այցե-

լուներ ունենք, նրանց սպասարկել է պետք: *(Ցույց է տալիս մուտքի մոտ սպասող հաճախորդներին:)*

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Հիմա կարող ենք հանգիստ հեռանալ, ձիջտ է, տղերք...

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - Հա, կարող ենք գնալ...

ՏԼՕՐԵՆ - Դե, տիկին Մարուշ, հուսամ, որ ձեր հերթապահությունը կանցնի աշխատանքային նորմալ մթնոլորտում:

ՄԱՐՈՒԾ - Խնդիրներ չեն լինի:

ՏԼՕՐԵՆ - Իսկ դուք, հարգելի նկարիչ և... անվտանգության աշխատակից... և տիկին Մարուշի նախկին զինակից, հուսամ՝ մինչև առավոտյան ժամը 9-ը էստեղ նոր պարահրապարակ չեք բացի:

ՄԻՇՐԱՆ - Հուսացեք: Գիշերը մեկ անգամ են սրտանց պարում... դեղատանը:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Իսկ դուք՝ միշտ լեզու գտնող պարոն տնօրեն, տիկին Մարուշի ներկայությամբ վերահաստատեք, որ նրա նկատմամբ կարգապահական սույժ չեք կիրառի:

ՏԼՕՐԵՆ - Վերահաստատում եմ:

1-ԻՆ ՑՈՒՑԱՐԱՐ - Հիմա հանգիստ կարող ենք գնալ: Գնացի՞նք, տղերք:

ՄԻՇՐԱՆ - Սպասեք, մի թուղթ... *(Տոպրակները հանձնում է ցուցարարներին:)* Էս հարցը դուք ավելի լավ կարող եք լուծել, ձեզ

նման արդարամիտ ու համառ մարդիկ: Խնդրում եմ, էդ հաբերը բաժանեք նրանց, ովքեր չունեն խիղճ, բարություն, սիրո կարողություն ու ազնվություն:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ - Լավ, կանենք...

ՏՆՕՐԵՆ - (*հաճախորդներին*): Մոտեցեք, հիմա ձեզ կսպասարկեն, և ներող եղեք, որ մի փոքր ուշացրինք:

Տնօրենն ու ցուցարարները հեռանում են: Հաճախորդները մոտենում են վաճառատեղանին, Մարուշը արագ սպասարկում է, նրանք գնում են:

ՄԱՐՈՒԾ - Ի՞նչ վարչական տույժի մասին էր խոսքը:

ՄԻՀՐԱՆ - Քեզ բանավոր աշխատանքից ազատել ու կրկին վերականգնել են ցուցարարների շնորհիվ:

ՄԱՐՈՒԾ - Այո՛, էդպես հաճախ է պատահում ինձ հետ: Իսկ էդ հաբերը ո՞վ է բերել:

ՄԻՀՐԱՆ - Ազնիվ խոսք, Մարուշ ջան, չգիտեմ: Ես էլ կարծում էի, ձեր խփնված հաճախորդներից է:

ՄԱՐՈՒԾ - Լավ, մի օր կպարզվի: Էդ հաբերը երևի պլացերոյի համար են:

ՄԻՀՐԱՆ - Պլացերոն ի՞նչ է...

ՄԱՐՈՒԾ - Բժշկական հետաքրքիր մեթոդ է. կարծեցյալ հիվանդներին անվնաս հաբեր են տալիս ու ասում, որ դրանք իր անհանգստությունները վերացնեն-

լու համար են: Մարդիկ օգտագործում են և հիմնականում ազատվում ինչ-ինչ ցավերից: Այսինքն՝ հավատի վրա է հիմնված էդ մեթոդը:

ՄԻՀՐԱՆ - Լավ մեթոդ է... Էդ խորհրդավոր այցելուն պիտի բերեր նաև հավատի, հավատարմության, համբերության, ողջախոհության և նմանատիպ այլ հաբեր:

Ջանգում է դեղատան հեռախոսը:

ՄԱՐՈՒԾ - Գիշերային դեղատուն, լսում եմ ձեզ... Այո, ունենք... Բայց, ներեցեք, դեղերի առաքում չունենք... «Շտապ օգնություն» չէք ուզում կանչել... Հասկանում եմ... Մի րոպե, չանջատեք հեռախոսը: Միհրան, կարո՞ղ ես դեղ հասցնել հիվանդին, քո մեքենայով: Սրտային կաթիլներ է խնդրում ու քնաբեր: Հաշմանդամ է, ասում է՝ տանը մենակ է մնացել, տնեցիները գյուղ՝ հարսանիք են գնացել, վատ է զգում իրեն: «Շտապ օգնություն» էլ չի ուզում կանչել, ասում է՝ կտանեն հիվանդանոց, չի ուզում... Լա կվճարի:

ՄԻՀՐԱՆ - Իհարկե, Մարուշ ջան, կտանեն: Հասցեն ու դեղերը տուր:

ՄԱՐՈՒԾ - (*հեռախոսով*): Կասե՞ք ձեր հասցեն... (*Գրառում է*): Համբերեք, շուտով դեղերը կբե-

րեն: (Անջատում է հեռախոսը, արագ փաթեթավորում է դեղերը: Միհրանին.) Ահա, սա էլ՝ հասցեն:

ՄԻՀՐԱՆ - Գրիգոր Լուսավորչի 51, բն. 27... Լավ, գնացի:

ՄԱՐՈՒԾ - Երկրորդ մուտք, երրորդ հարկ... Կարծում եմ՝ չես մոլորվի:

ՄԻՀՐԱՆ - Անհոգ մնա, էդ փողոցը լավ գիտեմ, ժամանակին հաճախ էի ժամադրվում Լուսավորչի վերին խաչմերուկի մոտ:

ՄԱՐՈՒԾ - Ուրեմն՝ էդ վերիուշերով էլ գնա: Սպասում եմ վերադարձիդ:

ՄԻՀՐԱՆ - Ծուտ կգամ: (Շտապ դուրս է գնում):

ՄԱՐՈՒԾ - (զանգում է): Նարե, դեռ արթո՞ն ես... Չկարողացա շուտ տեղյակ պահել, մի քիչ խառն էի, խոսեցի Նաիրիի հետ... Լավ է, երկու օրից կգա: Երեխեքը քնած են... Դու էլ քնիր, բարի գիշեր: (Նոր հեռախոսահամար է հավաքում:) Արևիկ ջան, ո՞նց է երեխան... Ամեն ինչ կարգին է մեզ մոտ, մի անհանգստացիր... Բարի գիշեր:

Մարուշը կամաց երգում է՝ «Իմ փոքրիկ քաղաքում իմ մեծ սերն է ապրում...» և զննում դեղադրակները: Ներս է խուժում սև դիմակով երիտասարդը, ատրճառակը ուղղում է Մարուշի վրա:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ինչքան փող կա, տվեք, շուտ, ժամանակ չկա:

ՄԱՐՈՒԾ - Խելացի կարգադրություն չեք անում, երիտասարդ:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ոչ մի խոսք, արագ:

Մարուշը հանում է դրամարկղի և իր դրամապանակի փողերը, դնում է վաճառասեղանին:

ՄԱՐՈՒԾ - Էնքան էլ մեծ գումար չէ կողոպուտի համար, ընդամենը 63 հազար դրամ:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Էլ չկամ...

ՄԱՐՈՒԾ - Չկա, եղածը սա է: (Ուշադիր նայում է իրեն ուղղված ատրճառակին ու... ծիծաղում:)

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ինչո՞ւ եք ծիծաղում... Ինձ վրա՞ եք ծիծաղում...

ՄԱՐՈՒԾ - Չէ, ատրճառակիդ, էդ խաղալիքո՞վ ես կողոպուտի եկել:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - (խուժապահար): Ո՞նց իմացաք:

ՄԱՐՈՒԾ - Պատերազմի տարիներին առիթ եմ ունեցել շփվելու իսկական զենքի հետ: Էդ խաղալիքից թոռս էլ ունի:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Հա, սա խաղալիք է... իսկականով էսպիսի բան չեմ անի: (Ատրճառակը դնում է գրպանը:)

ՄԱՐՈՒԾ - Բայց արածդ տգեղ է ու անօրինական: Կարող են պատժել քրեական հոդվածով:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Պատժե՛լ... փողը կվերցնեմ ու կգնամ

ու ոչ ոք ինձ չի բացահայտի...
ես դիմակով եմ:

ՄԱՐՈՒԾ - Պիտի ասեմ, որ դեղատունը տեսանկարահանվում է, դու հիմա էնտեղ ես: *(Յույց է տալիս տեսախցիկները:)*

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ես դիմակով եմ, ինձ չեն ծանաչի:

ՄԱՐՈՒԾ - Գիտես, թե քրեագիտությունը որքան զարգացած է, ուզենան՝ քեզ արագ կգտնեն:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Չեմ կարծում, թե 63 հազարի համար էդքան հարայիրոց անեն:

ՄԱՐՈՒԾ - Տնօրենը՝ որպես տուժող կողմ, կպահանջի ու կանեն: Եթե կողոպուտը չեն բացահայտում, նոր կողոպուտները շատանում են:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ես ուրիշ կողոպուտի մտադրություն չունեմ:

ՄԱՐՈՒԾ - Լավ, ասենք՝ տվեցի էս փողը, ինչի՞ վրա ես ծախսելու: Զո կողմից գողացված ու արդեն կեղտոտված փողերը...

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Իսկ մաքուր փող լինում է:

ՄԱՐՈՒԾ - Լինում է՝ ազնվորեն վաստակածը: Կասես, ինչի ես էստեղ հայտնվել:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Արժե՞ ասել...

ՄԱՐՈՒԾ - Ասա, գուցե դա օգնի...

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ընկերուհուս համար ուզում եմ թանկարժեք զարդ գնել:

ՄԱՐՈՒԾ - Ուրեմն՝ դեռ նշանված էլ չես, այո՞:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Այո:

ՄԱՐՈՒԾ - Իսկ մտադիր ես ամուսնանալ նրա հետ:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ծատ եմ ուզում, բայց ընկերուհիս ձգձգում է, ասում է՝ դեռ պատրաստ չես... Ուզում եմ նրան ապացուցել, որ կարող եմ լավ նշանդրեք ու հարսանիք անել, կարգին նվերներով, առանց ծնողներիս օգնության, նրանք թոշակառուներ են:

ՄԱՐՈՒԾ - Այսինքն՝ քո ամուսնության հիմքն ուզում ես գողությանմբ դնել... Ընկերուհուդ ուզածն այն է, որ ամեն ինչ անես քո վաստակով, աշխատես, ոչ թե գողանաս: Աշխատում ես:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Հա, բայց քիչ եմ վաստակում, դեռևս...

ՄԱՐՈՒԾ - Ուրեմն այսպես՝ քո և ընկերուհուդ միջև առայժմ լիակատար փոխըմբռնում չկա, պետք է մի քիչ էլ համբերել, մինչև էդ պահը գա:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Իսկ եթե չգամ... Ես նրան սիրում եմ ու չեմ ուզում նրան կորցնել:

ՄԱՐՈՒԾ - Սիրուն երբեք գողություն ու այլ կեղտեր չխառնես: *(Դադար:)* Հիմա ինչպե՞ս վարվենք քեզ հետ:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Փողը պետք չէ, ես գնամ, հա՛...

Ներս ԵՆ մտնում երկու ուստիկան:
Դիմակավոր երիտասարդը հա-
նում է դիմակը:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - (կամաց): Դո՞ք կանչեցիք...

ՄԱՐՈՒԾ - (նույնպես կամաց): Ոչ, նրանք սովորականի պես շրջում են գիշերը աշխատող օբյեկտներով:

1-ին ՈՍՏԻԿԱՆ - Բարի երեկո: Ո՞նց եք, տիկին Մարուշ, ամեն ինչ կարգին է:

ՄԱՐՈՒԾ - Չեմ բողոքում:

2-րդ ՈՍՏԻԿԱՆ - Բարև ձեզ: Սա էն երիտասարդը չէ՞, որ մի ժամ առաջ պտտվում էր ներքևի սուպերմարկետի շուրջը:

ԴԻՄԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ի՞նչ սուպերմարկետ...

1-ին ՈՍՏԻԿԱՆ - Դու էիր, հա... Տիկին Մարուշ, ի՞նչ գործով է մտել դեղատուն:

ՄԱՐՈՒԾ - (կարծ երկմտանքից հետո): Դեղահաբեր են պետք... սիրած աղջկա համար: Մեր ունեցածը էնքան էլ արդյունավետ չէ, նրան դա էի բացատրում, բայց նա պնդում էր, որ էդ հաբերից տանք: Հիմա չի պնդում:

1-ին ՈՍՏԻԿԱՆ - Այսինքն՝ նա ուժով էր ուզում...

ՄԱՐՈՒԾ - Դե, էնքան էլ ուժով չէր... Երիտասարդ է, տաքարյուն, նպատակին ուզում է արագ հասնել: Ծուտով կամուսնանա... բայց կիրթ պահվածքի ու հա-

սարակական կարգի մասին էնքան էլ ծիշտ պատկերացում չունի: (Դադար): Կարո՞ղ եմ ձեզ մի բան խնդրել...

ՈՍՏԻԿԱՆՆԵՐ - Ի հարկե, տիկին Մարուշ, չէ՞ որ ձեր պահապան հրեշտակներն ենք:

ՄԱՐՈՒԾ - Էս երիտասարդին տարեք ու մի քիչ զրուցեք նրա հետ բարեկրթության, համբերատարության, օրինավորության, հասարակական կարգի թեմաներով, 15-20 րոպե զրուցեք, նա արագ կըմբռնի: Չրուցեք ու ազատ թողեք, լավ, նա անձնուրաց ամուսին է լինելու:

1-ին ՈՍՏԻԿԱՆ - Լավ, տիկին Մարուշ, նրան կլուսավորենք ու բաց կթողնենք, անհոգ եղեք: Դե, երիտասարդ, առաջ... Խաղաղ հերթապահություն ձեզ, տիկին Մարուշ:

ՄԱՐՈՒԾ - Ձեզ՝ նույնպես: Ծնորհակալ եմ: Հուսամ՝ հաջորդ այցին կպատմեք, թե ինչպես է անցել ձեր դասախոսությունը:

ՈՍՏԻԿԱՆՆԵՐ - Անպայման, ցտեսություն:

Ուստիկանները և դիմակով երիտասարդը գնում են: Ներս է մտնում Միհրանը՝ հարցական հայացքով ուղեկցելով հեռացողներին:

ՄԻՀՐԱՆ - Մարո՞ւշ, էլի արտակարգ դեպք... փայտե մուրճով...

ՄԱՐՈՒԾ - (ծիծաղում է): Չէ, խա-

ղալիք ատրճանակով... ուզեց կողոպտել... *(Տույց է տալիս թղթադրամները):* Դե, չհաջողեց սիրահարը...

ՄԻՇՐԱՆ - Ոստիկանները նրան կալանելի՞ն տարան:

ՄԱՐՈՒԾ - Չէ, դաստիարակչական գրույցի... Դեղերը տվեցի՞ր հիվանդին:

ՄԻՇՐԱՆ - Անշուշտ, էս էլ՝ վճարը: *(Փող է հանձնում Մարուշին:)* Տվեց նաև տաքսիի փողը, չվերցրի:

ՄԱՐՈՒԾ - Ապրես:

ՄԻՇՐԱՆ - Պատերազմի հաշմանդամ է, սայլակին գամված... Ասաց, որ ճանաչում է քեզ, ձեր նախկին վիրավորներից է, Ձախլիկ խեչո են ասում: Հիշո՞ւմ ես...

ՄԱՐՈՒԾ - Հա, Ձախլիկ խեչոն... խիզախ զինվոր էր: Ծրջապատումից դուրս էր եկել թշնամու մի դասակ ոչնչացնելով: Ծնորհակալ եմ, օգնեցիր մեզ:

ՄԻՇՐԱՆ - Միշտ պատրաստ եմ, Մարուշ:

Միհրանը նստում է բազմոցին, վերսկսում ընթերցանությունը, բայց շուտով մնջում է: Ներս են մտնում գանգրահեր տիկինն ու կիսաճաղատ տղամարդը, տեսնելով մնջող Միհրանին՝ կամաց բարևում են Մարուշին և գրեթե անլսելի՝ գրույցի բռնվում նրա հետ: Քիչ անց Միհրանը «Կորեք, կորեք» բացականչելով՝ արթնանում ու ոտքի է կանգնում:

Մարուշն ու հաճախորդները ընդհատում են գրույցը:

ՄԱՐՈՒԾ - Ի՞նչ եղավ քեզ, Միհրան:

ՄԻՇՐԱՆ - Էլի նույն գեշ երազը տեսա:

ՄԱՐՈՒԾ - Ի՞նչ երազ է:

ՄԻՇՐԱՆ - Հռոռում ու քրքջում են՝ լպիրշ դեմքերով մարդիկ, մոտենում՝ քաշքշում են շորերս, ներկերս թափում են գլխիս, նկարներս ոտնատակ են տալիս...

ԳԱՆԳՐԱՇԵՐ ՏԻԿԻՆ - Դա նրանից է, որ դեպրեսիայի ու սթրեսի մեջ եք:

ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԴ - Եթե մեր դեղաբույսերն օգտագործեք ու ոչ թե էս թունաքիմիկատները *(ցույց է տալիս դեղադարակները)*, շատ արագ կլավանաք, մղձավանջային երազներ չեք տեսնի, կքնեք առողջ մանկան պես:

ՄԻՇՐԱՆ - *(քրթմնջալով):* Հա, էս դեպրեսիան, էս սթրեսը...

ԳԱՆԳՐԱՇԵՐ ՏԻԿԻՆ - Մարդկանց մեծ մասը տառապում է դրանցով, շատերը թաքցնում են, բժշկի չեն դիմում ու չունեն կարգին գիտելիք, որ մեր հայրենի խոտերով ապաքինեն իրենց:

ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԴ - Գիտես՝ ինչ գորավոր խոտեր կան մեր հանդերում. էլ ուրց ու դաղձ, էլ անթառամ ու առյուծագի...

ԳԱՆԳՐԱՇԵՐ ՏԻԿԻՆ - Էլ անանուխ

ու ազնվամորի, էլ եղեսպակ ու եղինջ...

ՄԱՐՈՒՇ - Էլ երիցուկ ու խավրժիլ, էլ մասուր ու մանանեխ...

ԳԱՆԳՐԱՇԵՐ ՏԻԿԻՆ - Էլ թրթնջուկ ու ավելուկ, էլ շրմշուղ ու շուշան...

ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԴ - Էլ սպանախ ու շաղգամ... ղր մեկն ասենք...

ԳԱՆԳՐԱՇԵՐ ՏԻԿԻՆ - Էն է՝ կովերն ու ոչխարներն են դրանք ուտում ու բոլորից առողջ են:

ՄԻՇՐԱՆ - (*ցույց տալով դեղադարակները*): Դուք դեմ եք էս դեղորայքին:

ԳԱՆԳՐԱՇԵՐ ՏԻԿԻՆ - Բացառությամբ մի քանի դեղի ու էս՝ խոտաբույսերի բաժնի, բայց սրանք գնողներն ու օգտագործողները քիչ են:

ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԴ - Ես ու կինս քարոզում ենք, որ մարդիկ նախ օգտագործեն դեղաբույսերը, բնական միջոցներով պահպանեն ու վերականգնեն առողջությունը, թե չէ սրանցով ավելի շուտ արագացնում են իրենց կործանումը:

ՄԻՇՐԱՆ - (*մեկուսի*): Զարոզիչներ... Ցուցարարների հետ հետաքրքիր ու նշանակալից ուժ կլինեն: Տնօրենն էստեղ լինե՛ր՝ լսե՛ր... (*Հաճախորդներին*): Ես հաշվի կառնեմ ձեր քարոզը:

ԳԱՆԳՐԱՇԵՐ ՏԻԿԻՆ - Եթե որոշեք անցնել դեղաբույսերի, համեցեք մեր տուն, ձեզ շատ բան

կարող ենք տալ անվճար, հատկապես, որ ձեզ ճանաչում ենք ու Մարուշի նախկին զինակիցն եք: Ձեր նկարները տեսել ենք պատկերասրահում, դուք հիանալի բնապատկերներ եք նկարում:

ՄԻՇՐԱՆ - Ծնորհակալ եմ: Կարծում եմ, մենք կհանդիպենք... ձեր տանը:

ԳԱՆԳՐԱՇԵՐ ՏԻԿԻՆ - Ուրախ կլինենք: Մեր հասցեն տիկին Մարուշը կտա:

ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԴ - Միասին մասուրի և ուրցի թեյ կխմենք:

ԳԱՆԳՐԱՇԵՐ ՏԻԿԻՆ - Դե, տիկին Մարուշ, մենք գնանք, շուտով լույսը կբացվի: Ձեզ լավ պահեք: Մի շաբաթից այցի կգանք ձեզ լավ պաշարով: Ցտեսություն:

ԿԻՍԱՃԱՂԱՏ ՏՂԱՄԱՐԴ - Մինչ նոր հանդիպում:

ՄԱՐՈՒՇ ԵՎ ՄԻՇՐԱՆ - Ցտեսություն, հաջողություն ձեզ:

Գանգրահեր տիկինն ու կիսաճաղատ տղամարդը գնում են:

ՄԻՇՐԱՆ - Ովքե՛ր են էդ մարդիկ, Մարուշ:

ՄԱՐՈՒՇ - Ուսուցիչներ են, մանկավարժներ: Զբաղվում են դեղաբույսերի հավաքչությամբ: Հարուստ գիտելիք ու փորձ ունեն էդ ասպարեզում: Գնում են մեր ալպյան գոտիները՝ նոր խոտեր հավաքելու: Դպրոցա-

կան արձակուրդները սկսվել են, նրանք, ինչպես միշտ, իրենց հանգիստը կանցկացնեն բնության գրկում:

ՄԻՇՐԱՆ - Իսկ ինչո՞ւ են եկել գիշերով:

ՄԱՐՈՒԾ - Ինձ համար չորացրած ուրց ու մասուր են բերել: Առավոտ վաղ են ծամփա ընկնում, ոտքով... մենք ընտանիքներով ենք բարեկամացել: Ամուսինը՝ Սարգիսը, երբ վիրավորվել էր, մեր դաշտային հոսպիտալում էր ապաքինվում: Գիտես, նման ծանոթությունները հաճախ բարեկամությամբ են շարունակվում:

ՄԻՇՐԱՆ - Կամ՝ սիրով...

ՄԱՐՈՒԾ - Իմ պարագայում նման բան չկա: Դու էլ պատերազմական շրջանից բարեկամներ ունես:

ՄԻՇՐԱՆ - Ունեմ, բայց նրանց թիվը նվազում է: *(Դադար:)* Չհասցրիր ասել՝ ո՞նց է վիրավորը, ինչո՞ւ էր քեզ կանչում:

ՄԱՐՈՒԾ - Հրա՛յրը... Գնացի՛ խաղաղվեց, վիրակապը փոխեցի, զրուցեցինք: Ասաց՝ բուժքրոջ բերանից ծխախոտի հոտ է գալիս, դրա համար մոտ չէր թողնում: Ավանդապահ տղա է:

ՄԻՇՐԱՆ - Իսկ բժշկին ինչո՞ւ չէր թողնում վիրակապել:

ՄԱՐՈՒԾ - Ասում էր՝ նրա բերանից էլ սպիրտի հոտ է գալիս... Բայց,

գիտեմ, բժիշկ Դադայանը երբեք հարբած չի լինում:

ՄԻՇՐԱՆ - Այ քեզ բժախնդիր զինվոր:

ՄԱՐՈՒԾ - Հա, բժախնդիր էր նաև էն ժամանակ, երբ թուրք դիվերսանտները մոտեցան նրանց դիրքերին: Առաջինը Հրայրն էր մարտի բռնվել: Ասում են՝ կռվել է մինչև վերջին փամփուշտը, վիրավոր վիճակում...

ՄԻՇՐԱՆ - Նրա ձեռքից քանի՞ ասկյար ոտքերը տնկեց...

ՄԱՐՈՒԾ - Ինքը չխոսեց էդ մասին, բժիշկն ասաց, որ երեքին հաստատ խփել է:

ՄԻՇՐԱՆ - Իսկ էդ ծխախոտի ու սպիրտի թեմայով խոսեցի՞ր գործընկերներիդ հետ:

ՄԱՐՈՒԾ - Խոսեցի, խոստացան զերծ մնալ նման հոտերից... տեսնենք:

Ներս է մտնում կիբերմարտիկ Հակոբը՝ նոքրուքով:

ԿԻԲԵՐՄԱՐՏԻԿ - Կներեք, վայ-ֆայ ունե՞ք... հա, բարև ձեզ:

ՄԻՇՐԱՆ - Տղա ջան, դուք դեղատուն եք մտել, ոչ թե ինտերնետ-ակումբ:

ՄԱՐՈՒԾ - Մի վայրկյան, Միհրան... Երիտասարդ, կարևոր գործով եք եկել:

ԿԻԲԵՐՄԱՐՏԻԿ - Հա, մորքուր ջան, մեր շենքում հոսանքը անջատվեց... հարևան շենքում եմ ապրում, տեսա՛ դուք աշխա-

տում եք, շտապեցի ձեզ մոտ: Ես հիմա մի ուժեղ օպերացիայի վրա եմ աշխատում՝ նրանց կայքերի դեմ, եթե էս դադարը երկարի, մեր խմբի աշխատանքը ջուրը կընկնի:

ՄԻՀՐԱՆ - Դու հաքբեր ես... (Մեկուսի:) Թե՛ ինտերնետային վիրուս է:

ԿԻՔԵՐՄԱՐՏԻԿ - Ես կիբերմարտիկ եմ, Հակոբ է անունս:

ՄԱՐՈՒԾ - Հակոբ ջան, վայֆայ կա մեզ մոտ, նստիր ու աշխատիր:

ԿԻՔԵՐՄԱՐՏԻԿ - Ծատ շնորհակալ եմ:

Հակոբը նստում է քազմոցին, տենդագին աշխատում է:

ՄԻՀՐԱՆ - (կամաց): Վայֆայն ինչու եք միացրել դեղատանը:

ՄԱՐՈՒԾ - Ես խնդրեցի տնօրենին: Աշխատողներս ենք օգտվում, հաճախորդները, երբ ուզում են շտապ ձշտել դեղերի անունները կամ դրանց դեղաբանական տվյալները: Դե, ժամանակից ինչո՞ւ հետ մնանք:

ՄԻՀՐԱՆ - Այ, դա չգիտեի, դու նաև արդիական մտածելակերպ ունես:

ՄԱՐՈՒԾ - (ժպտում է): Աղջիկս պլանշետ է նվեր ուղարկել ծննդյանս օրը, ես էլ ստիպված... արդիականացա: (Ցույց է տալիս պլանշետը):

ՄԻՀՐԱՆ - Ի՞նչ է անում աղջիկդ:

ՄԱՐՈՒԾ - Փոքրը... սովորում է

բժշկական համալսարանում, մի տարուց կավարտի, ակնաբուժության մեջ է հմտանում: Ասում է՝ մամ, մեր ակնաբուժական կլինիկան կստեղծենք, դու էլ կլինես իմ բուժքույրը:

ՄԻՀՐԱՆ - Ծատ ուժեղ նպատակ ունի, պիտի աջակցել:

ՄԱՐՈՒԾ - Հա, տեսնենք... Իր ուսումնական նյութերն ուղարկում է ինձ, ես էլ ազատ ժամանակս պլանշետով դրանք կարդում-յուրացնում եմ, ճիշտ որ՝ ուսանողի պես:

ՄԻՀՐԱՆ - Դե, դու մի լավ բժշկի գիտելիք ունես:

ՄԱՐՈՒԾ - Չէ, սովորելու էնքան քան կա: Հա, աղջիկս ասում է, որ մարդիկ պետք լավ տեսողություն ունենան... գիտե՞ս՝ ինչի համար: Ասում է՝ որ լավը իսկապես լավ տեսնեն, իսկ վատը՝ վատ:

ՄԻՀՐԱՆ - Թող նման ակնոց ստեղծի, ես էլ կկրեմ:

ՄԱՐՈՒԾ - Կարծում ես՝ հնարավոր է:

ՄԻՀՐԱՆ - Էս նոր տեխնոլոգիաներն էնպիսի թափով են զարգանում, որ շատ քան է սպասելի: Այ, ես կուզենայի էնպիսի սարք, որ ցույց տա հոգով իրար նման մարդկանց, լավ ու վատ հոգիները զանազանի... Իսկ մե՞ծ աղջիկդ ի՞նչ գործի է:

ՄԱՐՈՒԾ - Հայոց լեզվի ուսուցչուհի է: Ծատ է անհանգստանում,

որ մեր հայրենակիցները հայերեն գեղեցիկ լեզուն վատ են օգտագործում, շատերը օտար լեզուներով են խոսում իրենց հայրենիքում: Ասում է՝ սա մեր ամենամեծ ամոթն է:

ՄԻՇՐԱՆ - Լիովին համաձայն եմ աղջկադ հետ: Մեր կորուստների գլխավոր պատճառներից մեկը եղել է էդ օտարասիրությունը և օտարներին ապավինելը: *(Մոտենում է դռանը, նայում դուրս:)* Ծուտով լուսաբաց է, հորիզոնը շառագունում է: Ծատ եմ հուզվում էդ բոսոր բնապատկերից, պատանու պես եմ հուզվում... Միշտ ցանկացել եմ նկարել էս տեսարանը, բայց մի բան ինձ ետ է քաշում:

ՄԱՐՈՒԾ - Երևի էդ բոսորը քո ներսի գույնն է, չէ՞, Միհրան:

ՄԻՇՐԱՆ - Ճիշտ կռահեցիր, Մարուշ ջան, սուր աչք ունես:

ՄԱՐՈՒԾ - Բայց էդպես էլ չասացիր, թե ինչի համար ես եկել դեղատուն: Գուցե Ծուշիկը քեզ էլ է հրապուրել, հը՞...

ՄԻՇՐԱՆ - Չէ... Գիտե՞ս, միայնակ մարդիկ նման են լույսի վրա թռնող թիթեռների. գիշերը դեղատան լույսը վառ է, դուռն էլ՝ բաց...

ՄԱՐՈՒԾ - Ուրեմն՝ քեզ էստեղ է բերել միայնությունը, տրտմությունը, հուսալքությունը, մի խոսքով՝ խորը ընկճախտը:

ՄԻՇՐԱՆ - Այո, Մարուշ... Իմ ներսում ոնց որ համաշխարհային թախծի տոնահանդես է: *(Դադար:)* Բայց քո ներկայությամբ անցած գիշերային էս ժամերը անհետևանք չեն անցել, իմ ներսում ձնհալ եմ զգում հիմա... *(Ավելի է մոտենում Մարուշին:)* Ինչ կլինի, Մարուշ, որ միասին ծերանանք... այսուհետ...

ՄԱՐՈՒԾ - *(հետքայլ է անում):* Ինչ... դու լիւրջ ես խոսում: Արդեն ծրագրե՞ր ունես իմ վերաբերյալ...

ՄԻՇՐԱՆ - Չէ, Աստված սիրես, Մարուշ, ոչ մի ծրագիր... *(Դադար:)* Ծատ անսպասելի ու ինքնաբուխ ստացվեց առաջարկությունս... ներիր:

ՄԱՐՈՒԾ - Զեզ թվում է՝ ես կփոխեմ իմ հոգին, ձակատագիրս, պատիվս...

ՄԻՇՐԱՆ - Չի թվում, դու անշեղելի ես, Մարուշ:

ԿԻԲԵՐՄԱՐՏԻԿ - Առ քեզ, առ քեզ... ուռա, ջարդեցինք...

ՄԻՇՐԱՆ - *(մոտենում է կիբերմարտիկին):* Ինչքան ջարդեցիք:

ԿԻԲԵՐՄԱՐՏԻԿ - Արդեն 50-ից ավելի, և ինչպիսի կայքեր... Ամեն ինչ լավ եղավ: *(Նայում է դուրս:)* Ոնց որ մեր շենքի լույսը միացրել են: Ես գնամ՝ տանը շարունակեմ: Ծատ շնորհակալ եմ, մորքուր ջան, ձեզ էլ, պարոն, շնորհակալություն ու հաջողություն ձեզ:

ՄԱՐՈՒԾ, ՄԻՃՐԱՆ - Հաջողություն:

Կիրենաբարսիկը փակում է նոթբուքը և գնում: Ներս է մտնում Արևիկը՝ ժպտերես, ուրախ: Թռուցիկ բարևում է Միհրանին:

ԱՐԵՎԻԿ - Մարուշ մորքուր, ես եկա: Տեղս տեղ չէր տալիս, որ քեզ մենակ եմ թողել: *(Հագնում է սպիտակ խալաթը:)*

ՄԱՐՈՒԾ - Ինչո՞ւ ես եկել, հո ինձ չեն փախցնելու, դեղատունն էլ չեն թալանելու: Ասացի, չէ՞, մնա երեխայի մոտ... ո՞նց է աղջիկդ:

ԱՐԵՎԻԿ - Ծնորհակալ եմ, հիմա լավ է, ջերմությունն իջավ, հանգիստ քնած է: Մի լավ լուր էլ...

ՄԱՐՈՒԾ - Ի՞նչ լուր, Արև ջան:

ԱՐԵՎԻԿ - Սարոն գալիս է, մի շաբաթից: Չանգեց, ասում է՝ էլ արտագնա աշխատանքի չի գնա:

ՄԱՐՈՒԾ - Ծատ ուրախ եմ, աղջիկս: Ասում էի, չէ՞, որ անապաման կգա, ինչ էլ լինի՝ հետ կգա, ոնց կարող է քեզ նման արևին լքել: Բայց խոստացիր, որ նրան էլ չես նեղացնի, պահանջկոտությունդ կչափավորես: Թող էստեղ ինչքան կարողանում է՝ աշխատի: Հարազատ միջավայրում ապրելն ու աշխատելն անգին բան է:

ԱՐԵՎԻԿ - Դա արդեն հասկացել եմ, պետք լինի՝ ես կաշխատեմ, նրան էլ կպահեմ, աղջկաս էլ:

ՄԱՐՈՒԾ - Ապրես, այ, էդ տրամադրվածությունն արդեն բավական է, որ ամեն ինչ լավ ընթանա: *(Դադար:)* Արևիկ ջան, իմացիր, որ էս գիշեր ինձ ընկերակցել է նախկին զինակից ընկերս՝ նկարիչ Միհրան Գաբոյանը:

ԱՐԵՎԻԿ - Նա ամբողջ գիշեր էստե՞ղ էր:

ՄԱՐՈՒԾ - Այո:

ԱՐԵՎԻԿ - Այսինքն՝ նա փոխարինել է ինձ:

ՄԱՐՈՒԾ - Կարելի է էդպես ասել, բայց նա անվտանգության ծառայողի գործն էր անում:

ԱՐԵՎԻԿ - Ծնորհակալություն, պարոն Գաբոյան, ձեզ գիտեմ, մեկ-մեկ մտնում եք մեր դեղատուն, հատկապես ուշ ժամերին, բայց դեղ չեք գնում, ուրեմն՝ առողջական խնդիրներ չունեք:

ՄԻՃՐԱՆ - Ծնորհակալ եմ, որ ինձ նկատում եք: Դեռ դեղերի ժամանակը չի եկել: *(Դադար:)* Դե, ես գնամ, Մարուշ ջան: Գնամ արվեստանոց, կարծես թե մուսաս վերադառնում է:

ՄԱՐՈՒԾ - Լավ կլիներ, նախ տուն գնալիդ հանգստանալու, անհանգիստ ու աղմկոտ գիշեր ես անցկացրել: Գուցե հակաընկճախտային հաբեր տամ:

ՄԻՃՐԱՆ - Չէ, շնորհակալ եմ, ես հաբեր չեմ օգտագործում, մորս

պես, նա թեև բուժաշխատող էր, կյանքում դեղ չխմեց ու երկար ապրեց, 90 տարուց ավելի: Երբ վատ էր զգում, ոտքերի տաք լուգանք էր ընդունում միայն... Աստված նրա հոգին լուսավորի:

ՄԱՐՈՒԾ - Դու է՛լ ես էդպես վարվում, երբ վատ ես զգում:

ՄԻՇՐԱՆ - Այո:

ՄԱՐՈՒԾ - Ուրեմն՝ ունեք ձեր ընտանեկան ավանդույթը: Դե, շնորհակալ եմ, Միհրան, գիշերային ընկերակցության համար:

ՄԻՇՐԱՆ - Ինչ շնորհակալություն, Մարուշ ջան, էդ ես եմ քեզ երախտապարտ: Գնամ, լավ հսկեք դեղատունը: Հա, եթե ցուցարարները հաջորդ գիշեր երևան, ինձ կանչեք: Գնամ, բարի լույս ձեզ:

ՄԱՐՈՒԾ, ԱՐԵՎԻԿ - Բարի լույս, հաջողություն:

Միհրանը կեսճամփա վերադառնում է:

ՄԻՇՐԱՆ - Մարուշ ջան, խնդրում եմ, մոռացիր, ինչ որ քիչ առաջ ասացի:

ՄԱՐՈՒԾ - Ինչը...

ՄԻՇՐԱՆ - Միասին ծերանալը:

ՄԱՐՈՒԾ - Արդեն մոռացել եմ, անհոգ մնա: Դու ավելի ժիշտ ու հրատապ գործեր ունես, նկատի ունեմ նկարչությամբ զբաղվելը և վերամիավորվելը ընտանիքիդ հետ:

ՄԻՇՐԱՆ - Առաջինն արդեն սկսված է, ժիշտ է՝ դեռ մտովի, իսկ երկրորդը... շատ դժվար հարց է, չգիտեմ՝ ինչ կլինի:

ՄԱՐՈՒԾ - Կինդ ու աղջիկդ կվերադառնան, տղադ՝ նույնպես: Թեև ազատ, բայց հուսալի, նվիրյալ մարդ ես, նրանք քեզ մենության չեն մատնի:

ՄԻՇՐԱՆ - Տա Աստված... Իմ նոր նկարը, գիտես՝ ինչ է լինելու...

ՄԱՐՈՒԾ - Ինչ:

ՄԻՇՐԱՆ - Պիտի նկարեմ քո խոշոր, գունագեղ դիմանկարը՝ բոսոր հորիզոնի ֆոնին: Բայց պիտի կարողանամ ցույց տալ, որ քո ներսի լույսն ավելին է ու իշխող, քան՝ շրջապատինը: Դու լուսեղեն մարդ ես, Մարուշ... ոնց որ ամենքիս մայրն ու քույրը լինես: Դու հավատով ու համոզիչ հուսադրում ես մեզ, իսկ դա այնքան պետք է միայնակներիս, հուսալքվածներիս... Շնորհակալ եմ քեզ, որ հնարավորություն տվեցիր՝ քեզ լիովին ծանաչելու և կյանքի իմաստը վերագտնելու համար:

ՄԱՐՈՒԾ - (ծիծաղում է): Երգիր, երգիր... ուզում ես երես տալ ինձ: Լինելու բան չէ... Լավ, հաջողություն քեզ, երբ նկարը պատրաստ լինի, իմաց տուր՝ զանք տեսնելու:

ՄԻՇՐԱՆ - Անպայման: Տղայիդ է՛լ՝ Լաիրիին էլ կբերես հետդ: Արևիկն էլ թող գա:

ՄԱՐՈՒԾ - Պայմանավորվեցինք:
Ցտեսություն:

ԱՐԵՎԻԿ - Ցտեսություն:

ՄԻՀՐԱՆ - Մինչ նոր հանդիպում
կյանքի հրապարակներում և
արվեստի հրաշալի աշխարհում:

**Միհրանը գնում է: Ետնասենյա-
կից գալիս է պարմանուհին:**

ԱՐԵՎԻԿ - Դո՛ւ... էլի էստեղ ես
քնել:

**Պարմանուհին մեղավոր ժպի-
տով գլխով է անում:**

ՄԱՐՈՒԾ - Ո՞նց քնեցիր, բալես:

ՊԱՐՄԱՆՈՒԿԻ - Ծնորհակալությո-
ւն, լավ, նույնիսկ լավ երազ-
ներ տեսա:

ՄԱՐՈՒԾ - Ապրես, երազից
սկսվող կյանքը հուսադրող ու
ոգևորիչ է լինում:

Ներս է մտնում տնօրենը:

ՏԵՕՐԵՆ - Բարի լույս բոլորիդ: Դե,
ո՞նց անցավ հերթապահությու-
նը...

ՄԱՐՈՒԾ - Լավ: Կարելի է ասել՝
հաջող: Բավարար վաճառք է ե-
ղել և... ունենք մարդկային
ձեռքբերումներ:

ՏԵՕՐԵՆ - Մարդկային ձեռքբե-
րումներ... այսինքն...

ՄԱՐՈՒԾ - Դե, ո՞նց ասեմ... դա չես
ձևակերպի պարզ խոսքերով:

ՏԵՕՐԵՆ - Լավ... Տեսնում եմ՝
Արևիկը պոստ է վերադարձել:
(Պարմանուհուն.) Օրիորդ, քեզ
էլի եմ տեսել էստեղ ու գիտեմ՝
դու գնորդ չես:

ՄԱՐՈՒԾ - Նա մեր ասած մարդ-
կային ձեռքբերումներից է:

ՏԵՕՐԵՆ - Կռահում եմ: (Դադար:)
Լավ, հետո կխոսենք էս թեմա-
յով: Իսկ ո՞ր է մեր անվտան-
գության աշխատակիցը... ձեր
զինակիցը, տիկին Մարուշ:

ՄԱՐՈՒԾ - Նա ավարտեց իր գոր-
ծը և գնաց... նկարելու:

ՏԵՕՐԵՆ - Եվ ինչպե՞ս ապահովեց
ձեր անվտանգությունը:

ՄԱՐՈՒԾ - Հիանալի, գոհ եմ նրա
ծառայությունից: Ասացի՝ միայն
ձեռքբերումներ ունենք:

ՏԵՕՐԵՆ - Էնպես եք ասում, ասես
նրան պիտի պարզևատրեմ:

ՄԱՐՈՒԾ - Դրա կարիքը չկա: Ավե-
լի տեղին է, երբ ինքներս ենք
մեզ պարզևատրում օգտակար
ու գեղեցիկ արարքների հա-
մար:

**Ներս է մտնում տարեց զույգը՝ իրար ձեռք բռնած: Ուրախ դիմավորում են
նրանց: Բենը ողողվում է բոսորագույն լույսերով:**

հունվար-փետրվար, 2016թ.

Դրամատուրգիա

գրական-գեղարվեստական հանդես

ISSN 1829-0701

© «Դրամատուրգիա», 2016
Տպագրվել է պետական աջակցությամբ

Խմբագիր՝
ԿԱՐԻՆԵ ԽՈՒՐՄԻՆՅԱՆ

Կազմը և էջադրումը՝
ՆԱՌԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Նյութերն ընդունվում են մեքենագիր կամ շարվածքով:
Բնագրերը չեն վերադարձվում:

**Հանդեսում տպագրված պիեսների բեմադրությամբ շահագրգիռ
թատրոնները դրանց օգտագործման թույլտվության համար
դիմեն անմիջական իրավասուերերին՝ հեղինակներին:**

Խմբագրության հասցեն՝
Երևան, Օրբելի 18/6, հեռ. 22-76-08

Ստորագրված է տպագրության 09.06.2016
Գինը՝ պայմանագրային:

Գրանցման վկայական՝ 01Մ 000089

Չափը՝ 70x100, 1/16: Ծավալը՝ 11.5 տպ. մամուլ:
Թ-ուղիքը և տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 500 օրինակ:

Տպագրվել է
«Վան ԱՐՅԱՆ» ՍՊԸ-ը՝
ՀԳՄ «Լ. Զ. ՍՈՒՐՄԵԼՅԱՆ» տպագրատանը: